

**ՄԵԾԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԱՐԵԱԼ  
ՀԱՄԱՌՕՏ ՀԱԲԱՔՈՒՄՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՅԱՂԱԳՍ ԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ  
ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ԸՆԴԴԷՄ ՀԵՐՁՈՒԹՈՂԱՑ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՔ**

**ԳԼՈՒԽ Ա.**

**Արդ ես ողորմելիս Վարդան վարդապետս եւ նուաստացեալս ի գործառնութենէ բարեաց...**

**ԳԼՈՒԽ Բ.**

**Խօսք եւ պատուէր գրոցս առ այնոսիկ որք հանդերձեալ են յապագայսն ժառանգել զսա:**

**ԳԼՈՒԽ Գ.**

**[ՈՒՂԻՂ ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ]**

**ԳԼՈՒԽ Դ.**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ] ԱՍՏՈՒԹՈՒԹԵԱՆՆ  
, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ**

**ԳԼՈՒԽ Ե.**

**[ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԹՈՒԹԵԱՆՆ,  
ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ]**

**ԳԼՈՒԽ Է.**

**[ՎԵՐՍՏԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ  
ԱՍՏՈՒԹՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ]**

**ԳԼՈՒԽ Ը .**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՆՈՅԱ ՈՐՔ ԱՊԱԿԱՆՑՈՒ ԱՍԱՑԻՆ ԶԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ  
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԱՆԳՈՍՆԵԼԻ ԿԻՐՔ ԵՏՈՒՆ ՆՄԱ ՈՐ Է ԿԵՐԱԿՐՈՑ ԵՒ ԸՄՊԵԼԵԱՑ ԱԽՏԱԲԱՐ  
ՀՈՍՈՒՄՆ, ՎԱ՛Յ Է ՆՈՅԱ**

**ԳԼՈՒԽ Թ.**

**ԱՅԼ ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՄԵԿՆՉԱՑՆ**

**ԳԼՈՒԽ Ժ**

**ՎԱՍՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ, ԶԻ ԵՐԵԿՈՒՆՆ ՊԱՐՏ Է ՈՒՏԵԼ**

**ԳԼՈՒԽ ԺԱ.**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ, ԶԻ ՊԱՐՏ Է Ի ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ՏԱԻՆԵԼ Ի ՎԵՑՆ ՅՈՒՆՎԱՐԻ ԱՄՍՈՅ**

**ԳԼՈՒԽ ԺԲ.**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՆՈՑԱ ՈՐՔ ԱՍԵՆ ԹԷ ՏԷՐՆ ՄԵՐ ԶԳԱՌՆ ՈՉ ԵԿԵՐ ՅԵՐԵԿՈՅԻՆ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ**

**ԳԼՈՒԽ ԺԳ.**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՆԽՄՈՐ ԵՒ ԱՆՋՈՒՐ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ,**

**ԳԼՈՒԽ ԺԴ.**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶԽԱՉԵՑԱՐՆ ԱՍԵԼ ԱՄԵՆԱՅՆ ԱԻՈՒՐ Ի ԴԷՄՍ ՈՐԴԻՈՅ**

**ԳԼՈՒԽ ԺԵ.**

**[ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ ՎԱՍՆ ՈՒՐԲԱԹԱՋԵԼԻ ԶԻ ՍՈՒՏ Է ՅԱՄԵՆԱՅՆԻ]**

**ԳԼՈՒԽ ԺԶ.**

**ՎԱՍՆ ԶԱՏԿԻ ՄԱՏԱԴԻ, ԶԻ ԲԱՐԻ Է ԵՒ ԶԷ ԽՈՏԱՆ**

## ԳԼՈՒԽ Ա.

Արդ ես ողորմելիս Վարդան վարդապետս եւ նուաստացեալս ի գործառնութենէ բարեաց, յետինս ուսումնասիրաց եւ որդիս մօր մերս նորոյն Սիոնի, ցանկութեամբ եւ մեծ սիրով հաւատոյ յուսանիլն մեր զԱստուածաշունչ Կտակարանս, հաւաքեցի զայս աստուածաբնակ տառս ընդդէմ երկաբնակաց եւ ամենայն հերձուածողաց, ուր եւ գտանէի վկայութիւն ի նուրբ գիրս եւ մեկնիչս կամ ի Թուխտ գիրս եւ կամ ի հաւաքման սրբոց հայրապետաց եւ բարեփառ հարցն մերոց զոր արարեալ են ընդդէմ ամենայն հերձուածողացն: Նաեւ դարձեալ յաստուածապահ հայրապետական Աթոռս մեր Հայոց, որ կոչի Հռոմկլայ, ուր գտաք ժողովեալ զհաւաքման գիրս եւ թուխտս սրբոց հայրապետաց եւ մաքրափայլ վարդապետացն Հայոց զոր արարեալ են ընդդէմ հերձուածողացն իւրաքանչիւր ժամանակս ուղիղ դաւանութիւն հաւատոյս՝ հետեւելով առաջին սրբոց հարցն, յորս աշխատեալ իմ արարի ծայրաքաղ համառօտ, միայն զաստոյ վկայութիւնս առեալ առանց աւելորդ բանի: Եւ կատարեցի զսա ի թուականիս Հայոց ՌԾ եւ Ղին (1205), ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի, եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի յըՌուբինեանց եւ Ջաքարիայի յաղթող հզօրապետութեան ի կողմն հիւսիսոյ: Եւ արարի քեզ առ ձեռն պատրաստ գէն, ով սիրելի, ընդդէմ թերավարժ՝ երկմիտ քննողաց, քանզի խոցիւր հոգիս յորժամ սիրողք բաժանման տգիտաբար խօսէին վասն երկու բնութեան եւ կամ վասն այլոց խորհրդոց. եւ այս ետ ձեռնարկել մեզ յայս բան, որ ի վեր է քան զկար մեր: Եւ արդ՝ յերեսս անկեալ պաղատեմ ամենեցուն որք օգտիք ի սմանէ, յիշեսջիք անմոռաց զեղկելի զՎարդան վարդապետս, եւ զծնօղս իմ եւ զերիս հարազատսն իմ եւ զուսուցիչն իմ, եւ հայցեցէք զթողութիւն

յանցանաց մերոց ի Քրիստոսէ յԱստուծոյ մերմէ, զի եւ դուք արժանի լինիք անբաւ ողորմութեան նորա յահագին ատենին: Եւ որ գրէ սա եւ նորոգէ, աղաչեմ գրել եւ զսակաւ բանս յիշատակիս մերոյ եւ որք լսեն մեզ եւ գրենն՝ գրեսցի անուն նոցա անջինջ առաջի Աստուծոյ:

## **ԳԼՈՒԽ Բ.**

Խօսք եւ պատուէր գրոցս առ այնոսիկ որք հանդերձեալ են յապագայսն ժառանգել զսա: Յանմատոյց լուսոյ կազմեալ են ճանապարհք իմ եւ ճառագայթարձակ հրաբորբոք ջահիւ պայծառացեալ են նրբագոյն շաւիղք իմ: Որ հաւատով եւ անթերի մտօք դիմէք առ իս՝ եկայք ուրախութեամբ զհետ ծագման լուսոյ իմոյ եւ տարայց զձեզ ի քաղաքն իմ սուրբ. ցնծալով խայտացէք եւ մտէք ուրախութեամբ ընդ դրունս նորա, զի ընտիր են շինուածք նորա եւ շափիւղայ են քարինք պարսպի, ի Լիբանանէ են փայտք նորա եւ արաբացի ոսկի հող նորա, եւ ի սկզբանէ ընտրեցան մանկունք նորա, մաքուր են ճանապարհք նորա, եւ Աստուծով սրբեցան շաւիղք նորա: Մաքրեա զսիրտ քո յերթալդ քո, եւ տես զփառս քաղաքին իմոյ՝ խորանք որ ոչ շարժեսցին ցիցք նորա եւ անկոխելի են պղծոց հրապարակք նորա: Դուստր եմ հօրն լուսոյ եւ տեսանեմ հանապազ զերեսս ծննդեան եւ բղխման նորա եւ համարձակիմ առ նա: Որք ցանկայք տեսանել զնա՝ բազկօք ձերօք

բարձե՛ք զիս եւ ի վերայ սրտից ձերոց կառուցե՛ք զիս: Բարձր բարբառով ընթերցիր զիս եւ պահեա ի միտ քո զոր ուսար յինէն. ընկալ յինէն զլոյս եւ առանց երեսաց ամօթոյ մտիր առ Տէր քո եւ շրջեա համարձակ յանաչառ յահագին հրապարակս նորա: Պայծառ են քան զարեգակն եւ զլուսին դամբարք իմ, եւ որ հետեւի ինձ` պայծառասցին միտք նորա եւ առաջի աթոռոյն տեսցէ զիս: Քան զլերինս եւ բլուրս հաստատուն է հիմն իմ եւ բարձր է քան զկամարս երկնից զլուխ իմ: Ունիմ առ իս զամենայն մարգարէս եւ զառաքեալս, եւ գումարեալ եմ առ իս զհայրապետս եւ զվարդապետս անթիւս: Եկայք առ իս մանկունք նորոյ՞ Սիոնի` սիրողք Աստուծոյ եւ ցանկացողք Օրինաց նորա, եւ ուսարուք զիս առաջնորդք եւ ժողովուրդք, եւ տարայց զձեզ առ երկնաւոր Հայրն իմ. առ իս է բնակեալ Աստուած Հայր իմ քաղաք հանգստեան Հոգւոյ եւ Որդւոյ նորա. կարմրագոյն է ծաղիկն եւ անձառելի է հոտ նորա: Ընկալ զիս ի հաւատս սրտի քո եւ յուսովք քովք բարձ զիս, քաղցր եմ ի քիմս հոգւոյ քո եւ պարարտ է համ իմ ի ծամելիս քո` թէ կարողանաս հաւատով ճաշակել զիս: Բանալի եմ սրտի քո, որդեակ իմ, եւ ի բազումս բաւէ զօրութիւն իմ: Բայց դու հերձուածողաց մի շնորհեր զիս, զի թերահաւատից հակառակ եմ ես. շատ ողբաս` թէ տաս զիս, զի աղբով ծածկեսցեն զանգին մարգարիտս իմ: Որդեակ, հաւատարիմ արանց պարգեւեա զիս եւ տգէտ որ խնդրէ` մի արգելուր զիս եւ փոխանակ իմ գրաւական ընկալ զուղիղ հաւատս նոցա: Տես, որդեակ, մի մոռանար զսէր իմ, այլ շրթամբք քովք սիրով միշտ համբուրեա զիս, եւ ի սենեակս մտաց քոց բնակեցո զիս, ճարտասան եւ ուղղադաւան իմաստնոց շնորհեա զիս որք կարող են պախարակել զհերձուածողսն ի ձեռն ճշմարիտ լուսոյ իմոյ:

Պատասխանի ժառագողնացն:

Վայ ինձ, թէ ձրի կամ ընդ վայր ի տգէտս եւ ի թերահաւատս տամ զքեզ, հաւատ եւ յոյս իմ. այլ հետ ելիցին իմոց յուղղափառ եկեղեցւոյ Հայաստանեաց, պսակ շնորհաց թողից զքեզ: Բայց որչափ եմ մարմնով յաշխարհի հաւատովս ի հոգիս եւ ի միտս ծրարեալ պահեմ զքեզ նարդոս, կինամոն, քրքում եւ [ս] տաշխ իմ. իսկ ի բաժանիլ հոգւոյս ի մարմնոյս` անհնար է ինձ որոշիլ եւ կամ հեռանալ ի քէն, քանզի լոյս գիտութեան քո եւ անձառ շնորհք քո հաւատով եւ յուսով անխզելի կապեալ եւ միացեալ է ի հոգի եւ ի միտս իմ, եւ ընդ մարմնոյս կապեալ ի գուբ գերեզմանիս իջուցանեմ զքեզ, զի պահեսցես գերազանց եւ յստակ լուսով զհողացեալ մարմինս իմ. իսկ յօրն ահագին եւ յատեանն սարսափելի առաջի անաչառ դատաւորին դու պսակեսցես ոսկեճաճանչ եւ արեգակնափայլ լուսով քով զզլուխ իմ, ամէն:



## ԳԼՈՒԽ Գ.

### [ՈՒՂԻՂ ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ]

Հաւատով խոստովանիմ գիամագոյ զԱմենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի, անսկիզբն եւ անվախճան, որ գոյացոյց յոչնչէ զեղեալքս ամենայն, զՀայր պատճառ Որդոյ ծննդեամբ Հոգւոյ բղխմամբ անսկզբնաբար եւ անժամանակապէս: Բայց սակայն վասն եեան ոչ տամք նմա աւագութիւն առաւել քան Որդւոյ եւ Հոգոյ, այլ համագոյ եւ հաւասար դաւանենք երեք անձինք կատարեալք եւ մի բնութիւն եւ մի Աստուածութիւն եւ մի կամք եւ նախախնամութիւն եւ մի արարչագործ գաւրութիւն: Հայր յամենայնի կատարեալ վասն զի ոչ ոք է նախ քան զնա հրամանատու կամ իշխան նմա, ոչ ժամանակ եւ ոչ արարած, անսկիզբն եւ պատճառ ամենայնի ինքնաթագաւոր, ինքնիշխան, լոյս եւ կեանք եւ ամենայն որ ինչ ի անուանի: Եւ Որդի ծնեալ յէութենէ եւ ի բնութենէ Հաւր, յամենայնի անպատոււմն առանց հատուածի եւ միջոցի, յամենայնի հաւասար եւ նման Հաւր, անորոշելի եւ անախտ ծնունդ որպէս լոյս յարեգակն է, բան ի մտաց եւ գետ յաղբերէ յաւէտ անհատաբար, անբաղդատելի եւ գերազանցեալ քան զաւրինակս:

Եւ Հոգին Սուրբ կենդանարար, բղխումն յէութենէ եւ ի բնութենէ Հաւր, անսկիզբն եւ անմիջոց ժամանակի, անձն կատարեալ, յամենայնի հաւասար եւ նման Հաւր, քանզի ելանէ միշտ ի Հաւրէ եւ առնու յՈրդւոյ, զի ամենայն որ ինչ Հաւր եւ Որդւոյ է՝ Հոգոյ է, բաց ի հայրութենէն եւ յորդիութենէն, եւ ամենայն որ ինչ Հոգւոյ եւ Հաւր է՝ Որդոյ է, բաց ի հայրութենէն եւ յելողութենէն եւ ամենայն որ ինչ Որդոյ եւ Հոգոյ է՝ Հաւր է, բաց յորդիութենէն եւ յելողութենէն:

Արդ, այս ոչ հատանէ զբնութիւնն, այլ զանձնաւորութիւնն ամբողջ պահէ, զոր պարտ է յառաջ քան զմիաւորելն բաժանել եւ նախ քան զբաժանելն միաւորել, եւ արագապէս ասել՝ երեք եւ մի, մի եւ երեք, որպէս արեգակն զի է նիւթ եւ լոյս եւ հուր, եւ մարդս է հոգի եւ բան եւ միտք, որք են երեք եւ մի, եւ մի եւ երեք: Եւ որպէս սոքա ոչ են կատարեալք թէ յերիցն մի ինչ պակաս լինի, այսպէս եւ Հայր ոչ է կատարեալ, յորժամ Հոգի եւ Որդի ոչ լինին առ նա, կամ նուազ գոլ ասին քան զնա: Քանզի Հայր ոչ է եւ ոչ ասի յառաջ քան զՈրդի եւ զՀոգի եւ ոչ քթթելական մի, զի թէ կրսեր կամ նուաստ իմանաս զՈրդի եւ զՀոգի քան զՀայր սակս պատճառ գոլոյն՝ թշնամանեցեր զՀայրն քան թէ պատուեցեր, զի անդ ոչ մտանէ կրսերութիւն եւ աւագութիւն, կամ մեծութիւն եւ փոքրկութիւն, այլ միշտ յաւէտակից հաւասարք եւ նմանք միմեանց:

Արդ՝ է Հայր միշտ Հայր անծին, զի ոչ յումեքէ, եւ ծնող Որդոյ. եւ Որդի միշտ որդի եւ ոչ ծնող, անհատաբար ծնունդ ի Հաւրէ եւ ոչ բղխումն. եւ Հոգին Սուրբ միշտ Հոգի յաւէտ եւ աննուագ բղխումն ի Հաւրէ եւ ոչ ծնունդ, փառակից Որդոյ եւ ոչ եղբայր: Եւ որպէս Հայր յամենայնի ամենայնի կատարեալ է, նոյնպէս եւ Որդի եւ Հոգի յամենայնի հաւասար են նմա, ի լուսոյն լոյսք, ի բարոյն բարիք, ի կենացն կեանք, յարարչէն արարիչք, մի կամք եւ մի թագաւորութիւն եւ իշխանութիւն, մի մեծութիւն եւ պատիւ, մի ճոխութիւն եւ մի. Աստուածութիւն փառաւորեալ անլռելի երեքսրբեան ձայնի ի հոգեղէն հրեղինացն եւ ի մարմնեղէն հողեղինացս, այժմ եւ յանսպառ յաւիտեանս. ամէն:

## ԳԼՈՒԽ Դ.

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱԹՅԱՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ , ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ

Դաւիթ ասէ.

«Ետուն ի կերակուր ինձ լեղի» : «Ինձ» ասէ եւ ոչ մեր:

«Ծակեցին զձեռս իմ», եւ ոչ զմերս: «Խորհեցան չար ի վերայ իմ» ասէ, եւ ոչ մեր:

Սողոմոն ասէ.

«Մի է եղբաւորորդին իմ, մի է ծնողին իւրոյ»: «Մի է» ասէ եւ ոչ երկուս:

Երեմիա ասէ

«Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս»: Ոչ երկու բնութիւնք յիշէ եւ ոչ երկու քրիստոսք:

«Արկցուք փայտ ի հաց նորա» եւ ոչ՝ նոցա:

Եսայիաս ասէ.

«Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի»: «Որդի» ասէ, եւ ոչ՝ որդիք, եւ բնութիւնք ինչ ոչ յիշէ:

«Մանուկ ծնաւ մեզ»: Մանուկ ասաց, եւ ոչ մանկունք:

«Զթիկունս իմ ետու ի հարուածս»: «Զթիկունս իմ» ասէ, եւ ոչ զմերս:

«Մէք նորա վիրաւքն բժշկեցաք»: «Նորա» ասէ, եւ ոչ նոցա:

Բարուք ասէ.



«Յետ այսորիկ Աստուած յերկրի երեւեցի»։ Ոչ երեւեցեն ասէ, զի մի է բանն հանդերձ ամեցելովն ի մէնջ։

Միքիաս ասէ.

Բեղդահէմ ի քէն ելցէ ինձ իշխան եւ ելք նորա ի սկզբանէ աշխարհի։ Մի իշխան ասէ՝ զԲանն մարմնովն միացելով, եւ ոչ երկուս։ Յաւուրն երրորդի յարիցուք ամաջի նորա։ «Նորա» ասէ, եւ ոչ նոցա։

Ջաքարիաս ասէ.

Ահա թագաւոր քո գայ հեզ հեծեալ յէշ եւ յաւանակ իշոյ : Մի թագաւոր ասէ, եւ ոչ բնութիւնք յիշէ, եւ ոչ թագաւորք։

Ամբակում ասէ.

«Ելեր դու ի կառս քո», եւ ոչ՝ դուք, այլ՝ «դու» Բանդ Աստուած քո միացեալ մարմնովդ ելեր ի կառս խաչին։

Վկայութիւնք սուրբ հրեշտակապետին

«Որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է եւ Որդի Աստուծոյ»։ «Որդի» ասէ, եւ ոչ որդիք, եւ ոչ բնութիւնք ինչ յիշէ։

«Եւ ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ»։ Ոչ բնութիւն յիշէ, այլ դա ասէ որ ծնաւ մարմնով։

Վկայութիւնք Սիմէոնի ծերոյն սրբոյ.

«Արդ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում», ասէ երանելի ծերն Սիմէոն։ Ոչ բնութիւնք ինչ քննեմ, եւ զքառասնաւրեայ տղայդ Արարիչ եւ որպէս կապող եւ արձակող հաւասար Հաւր դաւանեմ, քանզի Աստուած ես անսկիզբն, որ վասն մեր մարդ եղեր ճշմարիտ եւ յերկրի երեւեցար։

Վկայութիւն Յոհաննու Մկրտչին.

«Ահաւասիկ գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի»։ Ոչ է պարտ բնութիւնք քննել ասէ, այլ զոր տեսանէք մարմնով՝ դա է, որ աստուածացեալ մարմնով իւրով ի խաչին բառնայ զմեղս աշխարհի։

Վկայէ ամենաբարին Հայր.

«Ղա է Որդի իմ սիրելի»։ Տե՛ս, երկաբնակ , եւ ուսիր ի Հաւրէ, որ ոչ բաժանէ, եւ ոչ բնութիւն ինչ յիշէ, այլ «դա է Որդի իմ», ասէ, զոր տեսանէք մարդ, զի անճառ միացեալ է ընդ Բանին իմոյ։

Վկայութիւնք Յիսուսի Քրիստոսի ի վերայ իւր.

«Ես եւ Հայր իմ մի ենք»: «Ես» ասէ, զոր տեսանէք մարմնով ի միջի ձերում:

«Որ ետես զիս՝ ետես զՀայր»: Եւ այն զի մարմնով տեսին զնա, եւ չիք բնութեանց քննութիւն:

«Ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ», ասէ. եւ զՈրդին Աստուծոյ գուշակէ վասն մի գոլոյն, զի Բանն էջ յերկնից: «Տեսանիցէք զՈրդի մարդոյ զի ելանիցէ ուր էր զառաջինն», զի Բանն որ միացաւ ի մարմնի՝ «Որդի մարդոյ» կոչէ, զի նա էր յառաջ ընդ Հաւր եւ երեւեցաւ մարմնով:

Վկայութիւնք սուրբ առաքելոցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ Պետրոս ասէ.

«Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ »: «Դու», ասէ, մարմինդ զոր տեսանեմ, որ անձառ խառնեալ եւ միացեալ ես ընդ Բանիդ Աստուծոյ: Տե՛ս երկաբնակ, վասն այնր ընկալաւ անձառ երանութիւն, զի ոչ բնութիւն յիշեաց եւ ոչ բաժնեաց:

Թումաս.

«Տէր իմ եւ Աստուած իմ»:

Ջտիգաւ հարեալ կողն շաւշափեալ Տէր եւ Աստուած հաւասար Հաւր դաւանեաց զնա վասն Բանին միանալոյն, եւ երանեցան ի Տեառնէ որք այսպէս հաւատացին եւ հաւատան եւ զբնութիւն ոչ քննեն բաժանելով:

Յոհաննէս ասէ.

«Ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց »: Ջմարմինն շաւշափեալ Բան ասաց զնա՝ վասն անբաժանելի միանալոյն ընդ Բանին Աստուծոյ:

Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաք որում եւ ականատես եղաք:

Ջմարմինն տեսանելով զԲանն ասաց տեսեալ, ոչ բնութիւն յիշեաց եւ ոչ բաժանեաց: «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս, մինչեւ զՈրդին իւր միածին ետ»: Ջմարմինն միածին Որդի Հաւր կոչէ վասն միանալոյն ընդ Բանին Աստուծոյ, զի Բանն մարմնով կրեաց վասն մեր զամենայն:

Պաւղոս ասէ.

«Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա»:

Մի որդոյ ասէ եւ բնութիւնք ոչ յիշէ: «Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց»: Ջոր վերագոյնն Որդի Աստուծոյ ասաց զմարմին որ ի խաչին վասն մեր մեռաւ, զի միացեալ էր ընդ Բանն Աստուած անորոշելի :

Յայտնութեամբ մեծին Աստուծոյ: ԶԲանն մարմին եղեալ անբաժանելի մարմնովն՝ մեծ Աստուած ասաց զնա հաւասար Հաւր յաթոռ Որդի Աստուծոյ փառաց:

«Որ միայն ունի զանմահութիւն»:

Միայն միով բնութեամբ ասէ հաւասար Հաւր է Յիսուս Քրիստոս անմահութեամբ եւ ամենայնիւ, եւ բաժանումն բնութեանց ոչ յիշէ, թշնամիք եւ կռուակիցք բնակեալք ի միասին:

Մի Տէր Յիսուս Քրիստոս:

«Եւ Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նոյն ինքն եւ յաւիտեան »:

Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք.

Սեղբեստրոս ասէ.

Յիրաւի պարտիս հաւանել զի գիտասցես ի սոցունց յերկուց բնութեանց միացելոց մինն անկեալ ընդ թշնամանաւք, եւ միւսն՝ ո՛չ:

Հրէայն Յոբնաղ ասէ.

Անհնար է ի միում երկու ինչ գոլ, մինն ի ներքոյ լինել անվնաս եւ միւսն խաչեալ:

Սեղբեստրոս ասէ.

Թէ ցուցից արիւնակաւ հաւանի՞ս:

Կոստանդիանոս կայսրն ասէ.

Յակամայ եւ կռփանաւք հաւանեալ ունի, թէ ցուցցէս երկու ինչ որ միացեալ են բնութեամբ՝ մինն չարչարեալ եւ միւսն ազատ մնացեալ:

Սեղբեստրոս ասէ.

ԶԹագաւորական ծիրանիդ ի ցոյց առից: Ասր էր սա խառնեալ ընդ արիւն խնծաւղի, եւ գոյն ծիրանի ետ նմա ի փոխելն մատամբք լեալ առէջ ասրն կրեաց զշրջումն եւ ոչ ծիրանին: Այսպէս իմա. ասրն մարդն է, եւ ծիրանին Աստուած Բանն միացեալ ի մարմինն եւ ի չարչարանսն, եւ ինքն յայնցանէ ոչ կրեաց:

Իսկ թագաւորն եւ ամենեցուն աղաղակեցելոյ ասելով կարի եւս ճշմարիտ լինել արիւնակիդ որ ասրն անկեալ լինի ընդ չարչարանաւք, եւ ծիրանի գոյնն դաւանեաց զնա, քանզի աստուածացեալ էր անբաժանելի միաւորութեամբ ընդ Աստուած Բանն: Եւ երանեցան ի Տեառնէ որք այսպէս հաւատան եւ բնութիւնք ոչ քննեն:

Թագաւորն ասէ.

Հաւանիմ:

Սեղբեստրոս.

Այլ ցուցից եւ դու լուր: Կարո՞ղ է ծառ ընդունել յինքեան զճառագայթս արեգականն ի հատանելն:

Թագաւորն ասէ.

Հնար է:

Սեղբեստրոս.

Իսկ ի հատանելն նմա ոչ տեսեալ զվէրն եւ կաթոց ճառագայթն յառաջ ընդունի քան զփայտին ընդունելն, եւ փայլակն անդ գոլով ոչ հատանիլ կարէ: Սոյնպէս եւ Աստուածութիւնն ոչ որոնել կարիւր եւ ոչ հատանիլ: Իսկ մարմինն անկեալ ընդ չարչարանաւք որպէս եւ փայտն որ եւ կապեալ կարիւր եւ ունել: Արդ զայս ասացի սակաւ ցոյցս, բայց անձառ է յամենայնի:

Յուլիայ Հռոմայ հայրապետի վկայութիւնք ի թղթն որ առ Դիոնէսիոս.

Մի՛ պատճառս տացեն բաժանողացն՝ երկուս ասելով բնութիւնս. մի՛ բաժաներ զմարմնոյն բնութիւնն յԱստուծոյ բնութենէն, զի չէր, ասէ, հնար զբոլորն Որդի մարդոյ կոչել զվայր իջեալն յերկնից, եւ ոչ Որդի Աստուծոյ՝ զծնիցեալն ի կնոջէ, թէ բաժանիւր յերկուս բնութիւնս:

Նորին՝ յետ սակաւուց.

Ասեն, որպէս լսեմ, երկուս բնութիւնս. այս զի Յոհաննէս մի ցուցեալ բնութիւնս, «Բանն մարմին եղել», ասէ, որպէս զի Աստուածութիւն ճշմարտութեամբ մարմնովն մի է եւ յերկուս բնութիւնս ոչ բաժանի:

Նորին.

Ոչ մի անջատումն բերի յաստուածային գիրս՝ Բանին եւ մարմնոյն, քանզի որպէս մարդ յերկուց տեսակաց մի է բնութեամբ, նոյնպէս եւ ի նմանութիւն մարդկան եղեալն Քրիստոս մի է բնութեամբ:

Նորին.

Իբր զի գովեալ է յամենայնի ի Մարիամայն ծնեալ Աստուած անյեղլի մարմնաւորութեամբն, եւ մի բնութիւն եւ մի անձն եւ դէմ անձառ միաւորութեամբ ի վեր քան միտս եղականաց:

Նորին. Պաւղոս ասէ.

Իւրով անշփոթ, անհատ, ամենակատար ունակութեամբն էառ յինքն զկցորդութիւն որպէս համազգեաց պարգեւեաց մեզ:

Նորին.

Քանզի մի բնութիւն եւ պարզութիւն եւ թագաւորութիւն Յիսուս աստուածայեւտական Բանին ընդ մեզ մարդանալոյն զմեր նուաստութիւնս ընդ իւրոց ծայրագունիցն աստուածայնոցն միացուցեալ բնութիւն:

Նորին.

Մարդ Յիսուս ոչ մարդ Յիսուս, քանզի այրացելոյն Աստուծոյ մարդ Յիսուս. իսկ մնացելոյն առ Հաւր եւ ընդ Հաւր յանբաժանելի փառս աստուածութեան իւրոյ ոչ մարդ Յիսուս, այլ գեր ի վերոյ քան զմարդ:

Նորին.

Քան զամենայն աստուածաբանութեան յայտնութիւն ընդ մեզ Յիսուս աստուածաստեղծութիւն է, եւ անճառելի ամենայն բանի եւ անգիտելի մտաց:

Նորին.

Աստուածայեւտականն Յիսուս կենսատու մահուամբն երիս տիւս եւ երիս գիշերս եկաց ի գերեզմանի:

Տեսանե՞ս, աստուածայեւտական ասէ զկախեալն զփայտէ, այսինքն՝ Աստուած աստուծոց:

Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի վկայութիւնք ընդդէմ Սամոստացոյն.

Զթիկունս իմ ետու ի հարուածս եւ զծնաւտս իմ յապտակս: Ո՞վ իցէ սա եթէ ոչ որ եթուք յերկիր եւ արար կաւ ի թքոյն, եւ կաւովն եբաց զաչս կուրին:

Նորին.

Զինուորքն զպատմուճան նորա ոչ կարացին պատառել. իսկ հերետիկոսք զՈրդին Աստուծոյ պատառել կամելով եւ բաժանել յերկուս զայն որ միայն անբաժանելին է եւ անքննելին Քրիստոս:

Տե՛ս, երկաբնակ, որ յերկուս բնութիւնս բաժանեն, պատառել կամին զՈրդին Աստուծոյ զՅիսուս Քրիստոս:

Նորին.

Նա ետ նոցա մեղր եւ նոքա ետուն նմա լեղի նա՝ մանանայ եւ նոքա՝ քացախ. եւ ի սուրբ խաչին կախեցին զայն որ զոչնչէ կախեաց զերկինս որ է կեանք ամենայն կենդանեաց:

Տես, երկաբնակ բաժանող, զԱրարիչն ասէ կախեալ ի խաչին:

Նորին.

Չէր մարդ որ խաչեցաւ, այլ սուրբ Միածինն Յիսուս Քրիստոս Բանն եւ Որդին Հաւր: Տեսանե՞ս, զԲանն Հաւր ասաց կախեալ զխաչէն, եւ ոչ սոսկ մարդ:

Նորին.

ԶԲանն Աստուած խոստովանիմք մարդ եղեալ ճշմարտապէս առանց ամենայն երկդիմութեան: Իզնատիոսի Անտիոքու եպիսկոպոսի որ եւ Աստուածագգեացն, ի թղթէն որ առ Պողիկարպոս. Ակն կալ այնմ որ ոչ ունի ժամանակ, անտեսանելին որ վասն մեր տեսաւ, անչարչարելին որ վասն մեր չարչարեցաւ:

Նորին՝ յԵփեսացոց թղթէն.

Մի է բժիշկ հոգոց եւ մարմնոց ձերոց, անեղանելին եւ եղականն, Աստուածն եւ Որդին մարդոյ, մինն որ միաւորեցաւ, ի վեր քան զմիտս եղականաց, ի Մարիամայ եւ ի Հաւրէ անչարչարելի եւ չարչարելի վասն մեր Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած մեր:

Նորին՝ ի Զմիւռնոյ թղթէն.

Զաւրացեալ էք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս որ է Որդի Ղաւթի ըստ մարմնոյ, եւ Որդի Աստուծոյ բնութեամբ եւ զաւրութեամբ. եւ որ այսմ ոչ հաւատայ՝ ուրացող է եւ զգեցեալ է զմահ:

Նորին.

Կորեան, սատակեցան, ճարակ հրոյ եղեն ոյք բաժանեն զՔրիստոսի միացեալ բնութիւնն, քանզի դառն կսկիծ վտանգէ զհոգիս, յորժամ լսեն զկորուստ հերձուածողացն որք ասեն այլ եւ այլ բնութիւնք զՔրիստոսէ:

Նորին.

Որ զխաչելութիւն նորա եւ զչարչարանս եւ զծնունդն ամաւթ համարի՝ եղիցի քեզ իբրեւ զհակառակորդն սատանայ, թէպէտ եւ զամենայն բարեգործութիւնս կատարեսցէ:

Նորին՝ ի թղթէն որ առ քաղաքն Փիլիպպեայ.

Ընդէ՞ր սոսկ մարդ իմանաս զՔրիստոս, եթէ Աստուած է որ միացաւ եւ եղեւ յերկուցն մի, որ է բնութեամբ անբաժանելի եւ անփոփոխելի:

Երանոսի հետեւողի առաքելոցն.

Որք հերձնուն եւ պատառեն զմինն՝ զՂոբովամու պատուհասն ընկալցին: Քանզի ընդունայն եւ

սնտոիք են որք երկու բնութիւնս ասեն բաժանեալ եւ ուրանան զԱստուծոյ փրկութիւնն, զոր ի մարդանալն իւրում շնորհեաց մեզ:

Նորին՝ յետ սակաւուց.

Որ եկն եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյն գործեաց, մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապականութեան որ աներեւոյթ է ի մէնջ, եղեւ տեսանելի, զի ըստ ամենայն մասին կցորդութիւն առցուք զանապականութիւն:

Ի հաւատոյ բանէն Երանոսի Լոկդանայ եպիսկոպոսի.

Անջատեալ են բարք նոցա յԱստուծոյ եւ ոչ գիտելով զի սորա Բանն Միածինն որ միշտ ընդ մարդկութեանս միաւորեալ եւ ընդ սմա զանկեալ ընդ իւրում ստեղծուածիս:

Նորին.

Զհերձուածս գործեն որ զմեծափառաւորեալ մարմինն Քրիստոսի բաժանեն եւ հատակոտորեն:

Նորին.

Եսայի ասէ. «Մերձեցալլ առ կին իմ մարգարէ եւ ծնաւ որդի սքանչելի» «խորհրդակից, Աստուած հզաւր իշխան» քարոզելով զմիութիւն Բանին առ ի ստեղծուածն իւր յայտնէին, քանզի Բանն մարմին եղեւ եւ Որդին Աստուծոյ՝ Որդի մարդոյ:

Գրիգորի Սքանչելագործի վկայութիւնք.

Որ այլ ասէ զախտակրեալն, եւ այլ՝ զոչ ախտակրեալն, եւ ոչ խոստովանի զնոյն ինքն զանախտակիրն՝ Աստուած մարմնով իւրով ախտակրել, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի: Քանզի Աստուած մարմնացեալ բոլորովին լրութեամբ, ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի ի Կուսէն յայտնեալ:

Նորին՝ յետ սակաւուց.

Է՛ Աստուած ճշմարիտ ի մարմնի երեւեալ, եւ կատարեալ՝ աստուածային կատարելութեամբն: Ո՛չ երկուս բնութիւնս, ո՛չ երկուս կամս, ո՛չ երկուս դէմս. զի եւ ո՛չ ասեմք չորս երկրպագեալս՝ զԱստուածն եւ զՈրդին Աստուծոյ, զմարդն եւ զՀոգին Սուրբ, վասն որոյ նզովեմք զայնպիսի ամբարշտեալսն:

Նորին.

Զիա՞րդ ասիցէ ոք այլայլելի զՔրիստոս՝ իւր Տեառն ասացեալ է. Ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ. զի ոչ հոգի նորա թողու ի դժոխս եւ ոչ մարմինն նորա ետես զապականութիւն:

Նորին.

Թէ որ ասէ մարդ սոսկ զՔրիստոս՝ բաժանելով յԱստուածութենէն, եւ ոչ խոստովանեսցի մի բնութիւն զՔրիստոս, նզովեալ եղիցի:

Դիոնեսիոսի Աթենացոյ եպիսկոպոսի վկայութիւնք.

Աստուած Բանն ճշմարիտ հաղորդութեամբ ըստ ամենեցունց նմանութեան եղեալ առանց մեղաց, եւ առ մեր խոնարհութիւնս միացեալ հանդերձ մի Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն եղեւ մի դէմ, մի բնութիւն. Աստուած մարդ երեւեալ ի կնոջէ, եւ ոչ ի մարդ բնակեալ կամ վերառեալ զմարդն ըստ շնորհի արժանաւորութեան, որպէս Սամոստացոյն թուեցաւ:

Նորին.

Որք երկու բնութիւն ասեն, հարկ է նոցա զմինն երկրպագելի ասել եւ զմիւսն՝ ո՛չ զմինն՝ մարդկային եւ զմիւսն՝ աստուածային, յաստուածայինն մկրտիլ, իսկ ի մարդկայինն՝ ո՛չ:

Ուտիլալ] Հռոմայ հայրապետի վկայութիւնք.

Որ որ բաժանէ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ ասէ այլ զԱստուած Բանն, եւ այլ՝ եղեալն մարդ, եւ ոչ խոստովանի զմի եւ զնոյն ինքն, այնպիսին նզովեալ եղիցի:

Նորին՝ յետ սակաւուց.

Որ զատուցանէ զմի Տէրն մեր Յիսուս Քրիստոս յերկուս բնութիւնս, նզովեալ եղիցի:

Պետրոսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք.

Քանզի Մարիամ ծնաւ զմարմնացեալ Բանն Աստուած զմի եւ զնոյն ոչ այլ ի այլ. քաւ լիցի:

Նորին.

Եւ զի է՝ Աստուած եւ մարմինն մի բնութիւն եւ մի դէմ, նա որ կամաւ տայր զանձն եւ յաւժարութեամբ հոգոյն նոյն ինքն Աստուած անբաժանելի եւ յաղաւթելն անմեկնելի:

Նորին.

Որ ասէ զկնի միաւորութեանն անբաժանելոյ երկուս բնութիւնս կամ երկուս կերպարանս կամ երկուս որդիս՝ ա՛յլ որ ի Հաւրէ եւ ա՛յլ որ ի Մարիամայ, քանզի խելագարեցան եւ արհամարհեցին զՀայրն երկու որդովքն, միովն որ ի բնութենէն եւ միւսովն եկամտին, եւ յայս մուծին չորրորդութիւն եւ մոռացան զՍուրբ Երրորդութիւնն, ըստ նոցա բանիցն նոր աստուած երկրպագի ի Մարիամայ սկիզբն



առեալ. թէ այդպէս է, ապա կորեան ամենայն ազգ, թէ մարդոյ խաչի երկրպագեն, եւ զմարմին եւ զարիւն մարդոյ ճաշակեն:

Փելիկիայ Հռոմայ հայրապետի վկայութիւնք.

Բայց նզովենք որք ախտակիր զԱստուածութիւնն ասեն, եւ որք սոսկ մարդ զխաչեցեալն Քրիստոս, եւ ոչ բոլոր էութեամբ Աստուած:

Նորին.

Զգոյշ եղերուք յամբարշտացն, որք ասեն զԱստուածն եւ զմարդն ծնեալ ի Կուսէն եւ բովանդակեն երկուս թուով, ասեն մինն` ծնեալ, եւ միւսն` ոչ: Այլ մեք ասենք մի Աստուած թանձրամած ծնեալ, որ բաժանէ` նզովեալ եղիցի:

Նորին.

Որ ի ծնունդն եւ յապտակսն ի խաչին եւ ի գերեզմանին յանապական Յարութեանն եւ ի Համբարձումն բաժանէ երկուս, նզովեալ եղիցի:

Բարսամա ասէք.

Զհաց պատարագին ո՞րպէս ասէք Աստուած, ասա ինձ զստոյգն:

Կէլեստիանոս Հռոմայ հայրապետն ասէ.

Ասեն եւ հաւատամ զհաց պատարագին Աստուած բովանդակ, առանց ապականութեան, խառնեալ Աստուած Բանն ընդ մարդկութիւնս, եւ եղեւ մի բնութիւն:

Ոնորալ] Հռոմայ հայրապետի.

Զի փորձէ առ կրից չարչարանաց Աստուածութիւնն ոչ մերկ եւ անմարմին, այլ վասն անձառ միաւորութեան մարմնոյն եւ աստուածային բնութեանն, վասն որոյ մի կամք եւ մի բնութիւն խոստովանիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի այլ եւ այլ կամք ոչ եղեն ի Փրկչին մերոյ:

Աթանասի Աղեքսանդրու հայրապետի` ի թղթ որ առ Յոբիանոս թագաւորն.

Եւ արդ` մի յաւէտ խոստովանիմք եւ ասենք Բանին բնութիւն եւ անձնաւորութիւն, կատարելապէս մարդացեալ. եւ որ այսպէս ոչ ասէ` աստուածամարտ է եւ հակառակ սուրբ հարցն:

Առ նոյն.

Նախ Տէր ընդ կուսի աստուածաբար, ապա նոյն ինքն ի նմանէ: Որ երկուս բնութիւնս կամ երկուս

դէմս ասէ, փոխանակ Երրորդութեանն՝ չորրորդութեան երկիրպագանէ: Որպէս չէ հնար զթագաւորն եւ զծիրանիսն երկուս թագաւորս ասել, նոյնպէս անհնար է զԲանն Աստուած եւ զիր մարմինն երկուս բնութիւնս ասել:

Նորին ընդդէմ Ապողինարի.

Արդ՝ յամենայն Աստուածաշունչ Կտակարանս մի բնութիւն ասացաւ մարմնացելոյ Բանին Աստուծոյ: Քանզի աւետարանիչն ոչ ասաց, թէ Բանն Աստուած եղեւ, այլ թէ «Աստուած էր Բանն»: Միշտ է՛ր, ասէ, Աստուած. եւ սա նոյնս Աստուած՝ եղեւ մարմինն, զի մարմին նորա եղիցի Աստուած Բան ըստ Թումայի, որ զմարմինն «Տէր իմ եւ Աստուած» ասաց: Վասն որոյ եւ խոստովանիմք մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացաւ եւ երկրպագի մարմինն ի հրեշտակաց, եւ ոչ որպէս արիանոսքն որք ոմն եւ ոմն ասեն:

Նորին.

Ի Սուրբ Հոգոյն ստեղծաւ մարմինն ի Կուսէն, որ բաժանէ զԲանն ի մարմնոյն, ուրանայ զշնորհն որ նովաւ տուաւ մեզ, վասն զի զնոյն մարմինն ընդ աջմէ Հաւր տեսաւ երանելին Ստեփաննոս : Վասն որոյ ոչ ասեմք ցԲանն՝ «Ի բաց լեր ի մարմնոյդ, զի քեզ երկրպագեսցուք»: Արդ, ի ժամ խաչելութեան դողաց երկիր քանզի Բանն միացեալ էր ընդ մարմնոյն ի վերայ խաչին:

Նորին՝ ընդդէմ Սամոստացոյն.

Որք երկու բնութիւնս ի Քրիստոս իմանան յետ միանալոյն, ծառայ ընդ տեսառն կամին դասել եւ զԵրրորդութիւնն՝ չորրորդութիւն առնել: Վասն որոյ մի բնութիւն պարտ է իմանալ եւ ասել Աստուծոյ Բանին մարմնացելոյ. եւ թէ ոք այլ եւ այլ ասէ ոմն եւ ոմն, նզովեալ եղիցի:

Նորին.

Գիտեմք զՔրիստոս ծնեալ ի զաւակէ Ղաւթի. զնա ասացին Աստուած զնա՝ մարդ. զնա՝ Որդի Աստուծոյ, զնա՝ Որդի մարդոյ. զնոյն՝ յերկնէ, զնոյն՝ յերկրէ. զնա՝ չարչարելի, զնա՝ անչարչարելի: Ո՛չ ոմն եւ ոմն, ո՛չ երկուս դէմս, ո՛չ երկուս բնութիւնս:

Նորին առ Դելփիոս եպիսկոպոս.

Զգործս Հաւր ի ձեռն մարմնոյն գործէր, քանզի ձեռամբ յարոյց զջերմոտն եւ ձայնիւ՝ զմեռեալն: Վասնզի լոյս աստուածութեանն փայլեալ զփոփոխելի մարմնովն եւ անդէն հրաշաբուսեալ յարգանդին, մանուկ պարզեալ եւ մաքրեալ եւ ձգեալ ի ծայրս Աստուածութեանն, եւ ընդ նմին եղեւ անբովանդակելի:

Նորին.

Խոստովանիմ զնա Աստուած եւ Որդի Աստուծոյ ըստ Հոգոյ եւ Որդի մարդոյ ըստ մարմնոյ. մի բնութիւն եւ մի դէմ Բանին Աստուծոյ որ մարմնացաւ:

Նորին՝ առ Կորնթացոց եպիսկոպոս.

Բանն որ ի մարմինն էր, ի վեր քան զբնութիւն մարմնոյ մահկանացուի արար զմարմինն իւր անմահ եւ անապական, զի զգեցեալ եւ միացուցեալ իւր զմարմինն Բանին Աստուծոյ:

Նորին՝ ընդդէմ Արիոսի.

Բանն ունէր զմարմնոյն տկարութիւն որպէս զիւր, վասն զի նորա էր մարմինն եւ նովաւ լինէր աստուածագործութիւնն. զի թէ Աստուծոյ Բանին գործքն ոչ էր ի ձեռն մարմնոյն լեալ, ոչ էր աստուածացեալ մարդն:

Նորին.

Քանզի եւ թուքն գոյր աստուածային, թէպէտ մարդկաւրէն վարէր ի բժշկութիւնն, եւ ոտքն մարդկային աստուածաբար ճեմէր ի վերայ ծովուն, քանզի Բանն միացեալ էր ի մարմնի անշփոթ եւ անբաժանելի:

Նորին ի Յայտնութեան ճառէն.

Աստուածային կամքն միայն էր ի Փրկչին մարմինն յետ միանալոյն, եւ մարդկային կամք եւ խորհուրդք անհետ լեալ էր յաստուածային մարմնոյն եւ մարդանալ Բանին:

Նորին՝ ի բանն Պետրոսի.

Քրիստոսի չարչարելն մարմնով՝ ոչ իւրական բնութեան Բանին, այլ մարմնոյն բնութեան չարչարանքն ծանիցի. բայց թէ այլում էր մարմինն այլում ասելի էր եւ զչարչարանսն: Ապա թէ «Բանն մարմին եղէ» եւ Բանին էր մարմինն, հարկ է Բանին ասել զչարչարանսն, քանզի վասն անքակ միութեանն Բանն ինքեան համարէր զիւրոյ մարմնոյն չարչարանս ըստ այնմ «զի՞ հարկանես զիս» եւ «ետու զթիկունս իմ ի հարուածս»:

Նորին.

Սնոտիք են որ աստուածութեան նորա ասեն զչարչարանս, զի Աստուած ի ձեռն մամնոյն ո՛չ չարչարեցաւ, այլ ի ձեռն Աստուծոյ ի մարմնում եղեն չարչարանքն: Իսկ վասն անքակ միանալոյն

Բանն ինքեան համարի զհիրոյ մարմնոյն չարչարանս. արդ հրաժարէ ի չարչարանացն որպէս մարդ, եւ էութեամբ Աստուած գոլով անմահ, յաւժարութեամբ ընկալաւ զչարչարանս:

Նորին.

Յորժամ թոյլ տայր Բանն մարմնոյն նա կրէր զհւրն, եւ ոչ որպէս մեք ակամայ. եւ ուսուցանէ զքեզ քաղցն որ յետ քառասուն աւուրն, յորժամ թոյլ ետ:

**ԳԼՈՒԽ Ե.**

**[ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ,  
ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ]**

Նորին՝ ի խնդրոյ Եպիկտիտոնի Կորնթացոց եպիսկոպոսի.

Իսկ այս հուր բարկութեան ուստի՞ ել եւ բղխեաց. եւ կամ ո՞ր դժոխք զգայռեցան ասել մի բնութիւն, որ ի Մարիամայ մարմինն էր եւ Բանին Աստուծոյ:

Պարտ է իմաստութեամբ իմանալ զբանս թէ է՞ր աղագաւ ասէ զայս սուրբն Աթանաս: Եւ դու մի՛ կարծեր, սիրելի, թէ զոր վերագոյն շինեաց ընդդէմ երկաբնակացն, աստ քակել ձեռնարկէ, եւ ինքն ինքեան հակառակ յառնէ, եւ երկու բնութիւնս հաստատէ, ընդ որս կռուէր զամենայն ժամանակս իւր, որ քա՛վ եւ մի՛ լիցի:

Արդ՝ հարկ եղեւ դնել աստ զայս բանս զի զհտասցես թէ ընդէ՛ր ասաց Աթանաս, թէ ո՛չ է պարտ մի բնութիւն ասել Բանին Աստուծոյ, եւ որ ի Մարիամայ մարմինն էր: Քանզի լսեն զայս տգէտք որք ոչ իմանան զմիտս բանին եւ ասեն հակառակութեամբ ըստ երկաբնակ բարուցն զոր ունին, թէ Աթանաս նզովէ եւ դժոխք կոչէ զասացողսն մի բնութիւն: Բայց դու ուսի՛ր, սիրելի, զիմաստ եւ զխորհուրդ բանիս: Արդ՝ Վաղենտիանոս եւ Մարկեղ, Մանի եւ Եւտիքէս եւ այլք բազումք ի հերձուածողացն ասացին թէ յերկնից եբեր Տէրն զմարմինն, եւ թէ առ աչաւք շրջեցաւ Տէրն յաշխարհի, եւ թէ մարմինն յառաջ քան զլինելն աշխարհի առ Աստուած էր հաւասար Բանին, եւ յաւետակից նմա, եւ մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն: Ասէ սուրբն Աթանաս ընդդէմ նոցա թէ, ո՜վ դուք չարք: Սուրբ հարքն ի Նիկիա զԲանն հաւասարն Հաւրն ասացին, եւ մի բնութիւն Բանին եւ Հաւր սահմանեցին, եւ յետոյ առ զմարմինն ի Սրբոյ Կուսէն եւ անճառ միացաւ ընդ նմա անբաժանելի, այսպէս ասացին եւ ամենայն սուրբ հարքն: Ջի թէ մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն յառաջ քան զառնուլն զնա ի Մարիամայ ապա ավելորդ էր յիշել զՄարիամ եւ ասել թէ ի նմանէ ծնաւ. եւ կամ ի՞նչ հարկ էր բերել զայն մարմինն եւ կրկին զգենուլ զնա ի Մարիամայ, այլ պարտ էր երեւել նմա մարդ իւր բնութենակից մարմնովն առանց ի Մարիամայ ծնանելոյ եւ ոչ զգենուլ զիւր բնութիւնն կրկին:

Դարձեալ ասեն հերձուածողքն, թէ յորժամ մի բնութիւն ասենք Բանին եւ մարմնոյն յառաջ քան զառնուլն զնա ի Մարիամայ, յայնժամ մնայ Երրորդութիւնն՝ երրորդութիւն. իսկ թէ ի Մարիամայ ասենք առեալ զմարմինն՝ Երրորդութիւնն լինի չորրորդութիւն: Եւ ուստի փախչել կամին, ի նմին կործանին տգիտութեամբ, զի թէ մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն յառաջ քան զլինելն աշխարհի, եւ էր յաւետակից եւ հաւասար մարմինն՝ Բանին, ո՜վ դուք չարք, այս է՛ չորրորդութիւն. զի որպէս ընկեր առ ընկեր հաւասար ասէք զմարմինն Բանին Հաւր նախ քան զառնուլն զնա ի Սրբոյ Կուսէն եւ ոչ ասէք կրսեր քան զԲանն, եւ կամ ի վերջին ժամանակս առեալ զնա Բանին ի Մարիամայ կուսէ:

Արդ՝ գիտացի՛ր, սիրելի, վասն այսոցիկ ասաց սուրբն Աթանաս, թէ. Այս հուրս ուստի՞ բղխեաց եւ կամ ո՞ր դժոխք սզայռեցան յորովայնէ չար վիշապին, որք ասացին, թէ Մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն յառաջ քան զլինելն աշխարհի եւ մարմինն առ Աստուած էր միշտ նախ քան ծնունդն ի Կուսէն:

Կիրողի Աղեքսանդրու հայրապետի՝ ի ժողովն Եփեսոսի ասացեալ ընդդէմ Նեստորի.

Որ ոչ խոստովանեսցի մի Տէր զՅիսուս եւ մի բնութիւն եւ Աստուածածին՝ զկոյսն Մարիամ, նզովեալ եղիցի:

Որ ոք զՏեր մեր Յիսուս բաժանէ յերկուս երեսս յետ միանալոյն, եւ մերձաւորութիւն, պատիւ եւ ճոխութիւն տացէ նմա, եւ ո՛չ միութիւն բնութեամբ, նզովեալ եղիցի:

Եթէ ոք իշխեսցէ ասել աստուածազգեաց մարդ զՔրիստոս, եւ ո՛չ Աստուած ճշմարիտ եւ մի Որդի բնութեամբ, նզովեալ եղիցի:

Եթէ ոք յերկուս դէմս եւ յերկուս զաւրութիւնս բաժանեսցէ զբանս սուրբ աւետարանչացն, եւ կամ որ վասն Քրիստոսի ի սրբոցն ասացեալ է, եւ կամ որ ինքն Քրիստոս վասն իւր ասացեալ է եւ զոմանս մարդոյն առանձինն իմանայցէ եւ զոմանս՝ Բանին որ ի Հաւրէ, նզովեալ եղիցի:

Եթէ ոք ո՛չ խոստովանեսցի զԲանն որ Աստուծոյ խաչեալ մարմնով, եւ զմահ ճաշակեալ մարմնով, որ է կենդանի եւ կենդանարար, նզովեալ եղիցի:

Սեկունդոս Եպիսկոպոս ասէ.

Արժա՞ն է յետ միանալոյն երկուս ասել բնութիւնս, թէ ոչ:

Պատասխան Կիրողի.

Յետ միաւորութեանն ոչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց եւ ոչ յերկուս որդիս բաժանեմք զանբաժանելին, այլ մի՝ որպէս սուրբ հարքն ասացին:Տե՛ս, երկաբնակ, ի պատասխանոյս յայտ է, թէ որ երկու բնութիւն ասեն ի Քրիստոս, ի հարկէ երկու որդի եւ երկու կամս ասեն:Առ նոյն.Ասեն հերձուածողքն, թէ որ մի բնութիւն ասէ, հարկ է շփոթել եւ ի ներքս գողանալ զբնութիւն մարդոյս. բայց անգիտացան զուղիղսն , թէ ըստ ճշմարտութեանն ասի մի բնութիւն:Նորին՝ առ Ջեւգէոս քահանայ.Մի բնութիւն թէ մարմնոյ՝ հոգեւորի եւ իմանալոյ եւ բանականի, սակայն միաւորութիւն խոստովանեցելոյ, ոչ մեկուսին, այլ է մի բնութիւն եւ մի Որդի:Նորին՝ ի թղթէն որ առ Թէոդոս թագաւորն.Թէպէտ եւ յաննմանից նոյնպէս առ միմեանս, սակայն մի բնութիւն եւ մի Որդի ասեմք հանդերձ առեցելովն:Նորին՝ ի Պարապմանց գրոց.Միաւորեալ եւ մի համարեալ ընդ մարմնոյն իւրացուցեալ

զնորայսն, միաւորեալ ընդ նմա զիր բնութեանցն ներգործութիւնսն: Թէ որոշես զբնութիւնսն, բացագնասցեն ընդ նմա եւ երկաքանչիւր յատուկքն բնաւորաբար: Գրէ Նեստոր. Մարդն աստուածացաւ շնորհաւք՝ յետ խաչին եւ չարչարանացն: Գրէ Կիւրեղ. Ես մարդ աստուածացեալ ոչ քարոզեմք, կամ Աստուած եւ մարդ, այլ Աստուած մարդացեալ խոստովանիմ, քանզի ոչ իբրեւ ի մեզ բնակէ Աստուած ի Քրիստոս, զի Աստուած էր բնութեամբ եւ երեւեցաւ մարդ ճշմարիտ: Նորին՝ վասն մի բնութեան. Այսպիսի գոլ զմիաւորութիւն Էմանուէլին. քանզի իւրացուցանէ Հոգին զամենայն ինչ մարմնոյն, թէպէտ եւ հատանիցի սրով մարմինն, ցաւակից լինի որպէս իւրոյ մարմնոյ չարչարեցելոյ, բայց ինքն յիր բնութիւնն ոչ ինչ կրեսցէ. ի վերայ եկելոցն այսպէս ասեմք եւ ի վերայ Էմանուէլի զմիաւորութիւնն քանզի միաւորեցելոյ ընդ մարմնոյ ցաւակից լինի հոգին: Իսկ Բանն Աստուած ոչ լինի զգայակից չարչարանացն, քանզի անչարչարելի է Աստուածութիւնն: Հարցումն առ Կիւրեղ. Միացա՞նք Քրիստոսի բնութիւնքն թէ միաւորեցան: Պատասխանէ Կիւրեղ. Միաւորեցան, այսինքն խառնեցան անշփոթելի, ըստ որում նոր խառնումն ասացաւ ի գրոց. ոչ բաժանի Բանն յիւրմէ մարմնոյն, զիտէ մահ ճաշակեալ վասն մեր Աստուծոյ Բանն: Նորին՝ յետ սակաւուց. Ո՞ գայցէ այսպիսի բախած եւ անուսումն երկուս ասել զմի Որդի, եւ մի նորա բնութիւն գոլ ասեմք, եւ զմարդկայինսն եւ զաստուածայինսն ի միում դիմի առաւելուցուք: Նորին. Ընդ իւր միաւորեաց զմարմինն, մի ներգործութեամբ աստուածավայելչականաւ յիւրսն Եհան ի փառսն, ուստի եւ զերկու կոյրսն լուսաւորէր մերձաւորութեամբ ձեռինն, որպէս զոքանչին Պետրոսի բժշկելն ձեռն դնելովն աստուածային բնութեան միազաւր ցուցեալ զիւրոյ մարմնոյն ներգործութիւնն. եւ մարմինն ունի զամենայն ներգործութիւն կենդանարար Բանին, եւ գործէ զգործ Հաւր, քանզի յաստուածայինսն հարստացեալ անճառաբար որպէս անպատմելի միացեալ ընդ Բանին: Նորին. Քանզի բաժանի ո՛չ բնաւ Քրիստոս, այլ է մի Որդի ըստ միոյ բնութեան եւ ճշմարիտ մարմնացելոյ: Քանզի «Եղեւ մարմին Բանն» ըստ Յոհաննու, մի Որդի եւ մի գոլ բնութիւն նորա ասեմք. եւ որ երկուս բնութիւնս ի Քրիստոս իմանայ յետ միաւորութեան՝ մարդապաշտ են եւ ոչ աստուածապաշտ: Նորին. Չարահնարութեամբ բաժանեն յերկուս զմինն զբնութեամբ եւ ճշմարտապէս մարդացեալն: Նորին ի թղթէն որ առ Ակակ Մելետինոյ եպիսկոպոս. Աստուածային գիրք ի Կուսէն ասեն առեալ զմարմինն Բանին Աստուծոյ, սակայն է՝ մի յերկուց բնութեանց միաւորեալ ի բաց բարձեալ երկուց հատմանցն: Նորին. Որպէս հրացեալ ոսկի եւ կռանահարեալ նիւթ ոսկոյն ընդունի զհարումն, եւ ոչ հուրն որ միացեալ է ընդ ոսկին, թէպէտ եւ ժամանակաւ գտանին միաւորեալք, այսպէս եւ Բանն Աստուած ընդ իւրոյ մարմնոյն նա եւ ի վեր քան զաւրինակս: Նորին՝ ի Գանձէն. Ոչ եթէ բնութիւնն զնա հարկէր, այլ ինքն շարժէր զբնութիւնն. ասէ՝ «Անձն իմ խռովեալ է»: Նորին՝ յԱւետարանին մեկնութենէն. Ջքաղցն, զծարաւն, զվաստակելն յորժամ կամէր՝ կրէր. զերկիւղն եւ զտրտմութիւնն, ի չարչարանսն մերձեալ, կամաւ

կոչէր յինքն. նոյնպէս եւ զտգիտութիւնն՝ առ ի մեր վարդապետութիւն, զի մեք ի մեր աղաւթելն ի կամս Աստուծոյ թողցուք զկամս մեր եւ զհայցելին:Նորին. Որ այլ ասէ զախտակրեալն, եւ այլ՝ զոչ ախտակրեալն, եւ ոչ ասէ զանախտակիրն Աստուած ախտակրեալ իւրով մարմնովն ի վերայ խաչին, որ է Քրիստոս աստուածութեամբն անչարչարելի եւ չարչարելի՝ մարմնովն, այնպիսին նզովեալ եղիցի:Նորին.Խաչեցելումն եւ մեռեցելումն մարմնի եւ Աստուած էր Բանն որ կցորդ էր չարչարանացն, թէպէտ եւ անչարչարելի էր որպէս եւ Աստուած: Վասն այնորիկ կեամք վասն որոյ միայն էր ի մեռեալս ազատ, զի ոչ յաղթեցաւ ի մահուանէ, թէպէտ եւ կրեաց զնա:

## ԳԼՈՒԽ Զ.

### **[ԴԱՐՁԵԱԼ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ]**

Գրիգոր Աստուածաբանի՝ ի թղթէն որ առ Կլոդոնոս.Բնութիւնք երկուք, քանզի Աստուած եւ մարդ, քանզի հոգի եւ մարմին:Ասաց Ապողինար.Թէ Աստուած Բանն ի Կուսէն զմարմինն միայն առեալ առանց հոգոյ եւ մտաց:Հարկի Աստուածաբան եւ գրէ.Բնութիւնք երկուք: Այսինքն՝ կատարեալք, Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ: Քանզի մարդոյն կատարելութիւնն ի հոգւոյ եւ ի մարմնոյ է, քանզի ասէ իսկ, թէ հոգի եւ մարմին. զի ոչ կարէ մարդ առանց հոգոյ գոյանալ, եւ Բանն Աստուած առ ի մէնջ զհոգի եւ զմարմին եւ ընդ ինքեան միացոյց եւ ոչ ըստ չար կարծեացն Ապողինարի, բայց որդիք ոչ երկուք եւ ոչ աստուածք: Արդ՝ Աստուած եւ մարդ ասաց, զի մի կարծեսցեն յերկուս բաժանել զմի եւ զնոյն Քրիստոսն դնէ թէ ոչ երկու որդիք եւ ոչ երկու աստուածք, քանզի եւ աստ ոչ երկու մարդ, թէպէտ եւ Պաւղոս ներքին եւ արտաքին ասէ:Տեսանե՞ս. թէպէտ եւ երկուք է մարդս ըստ առաքելոյ բանի՝ հոգի եւ մարմին, ասէ վարդապետս, բայց ոչ ասի երկու բնութիւն, այլ մի մարդ եւ մի բնութիւն վկայեալ յարտաքնոցն եւ ի վարդապետաց եկեղեցոյ նոյնպէս ասացին եւ ցուցին մեզ զմարդանալ Բանին Աստուծոյ յերկուց աւտար բնութեանց մի եղեալ անշփոթ, այլ եւ այլ, յորոց Փրկիչն: Եւ արդ՝ մի՞թէ ոչ նոյն է, այսինքն՝ մի երեւելին եւ աներեւոյթն, անժամանակն եւ որ ընդ ժամանակաւ. ոչ այլ ոք եւ այլ, այս՝ մի՛ լիցի, երկոքեան մի:Տե՛ս, նախ յամաւթ արար զԱպողինար որ



ընդ մարմինս միայն ասաց միանալ Բանին Աստուծոյ, եւ երկու բնութիւն ասաց, այսինքն՝ Աստուած կատարեալ եւ միացաւ ընդ կատարեալ բնութիւն մարդոյս ընդ հոգի, ընդ միտս եւ ընդ մարմին: Ահա երկու բնութիւն անթերիք՝ Աստուծոյն եւ մարդոյն, նախ աստարք ի միմեանց, իսկ յարգանդի Կուսին Մարիամու մի եղեւ բնութիւն անշփոթ, ըստ որում եւ ասէ վարդապետ թէ երկոքեան մի են՝ խառնելովն Աստուծոյ եւ մարդանալով եւ մարդոյն աստուածանալով: Արդ՝ եբարձ գերկութեանն կարծիս զոր ասաց ընդդէմ Ապողինարի, վասն որոյ խառնեալ եւ մի լեալ ասէ: Արդ, բերեմ քեզ այլ վկայ սոյն բանիս որով հաւանել ունիս: Բարսեղ եւ Գրիգոր Աստուածաբան երբեմն ի բնութեան խնդիրս եղեալ ասեն. Ոչ մի ասեմք բնութիւն յաղագս զմիւսն կորուսանելոյ, եւ ոչ երկուս ասեմք բաժանեալս, այլ յերկուց բնութեանցն մի եղեալ ասեմք զՔրիստոս անբաժանելի, մի անձն, եւ մի պատկեր, եւ մի բնութիւն, սքանչելի միաւորութեամբ ի վեր քան զմիտս եղելոց:Նորին՝ ի նոյն Կլոդոնոսի ճառէն.Եթէ ոք իբր ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործեալ, այլ ոչ ըստ բնութեան միաւորեալ եւ ստեղծեալ ընդ նմին, եղիցի ունայն ի լաւագոյն զաւրութենէն. եւ որ յետ մկրտութեանն որդեգրութեանն արժանանալ ասէ, նզովեալ եղիցի :Նորին՝ ի նոյն Կլոդոնոսի ճառէն, ընդդէմ Ապողինարի. Եթէ ոք յանմիտ մարդ յուսացաւ՝ անմիտ է, քանզի ոչ առեալն անբժշկելի է. եթէ կէսն սղալեաց՝ Ադամայ կէսն առաւ եւ ապրեցաւ, եւ եթէ բովանդակն սղալեաց՝ բովանդակն առաւ եւ ապրեցաւ:Ապողինար ասէ.Այլ արդ, բաւական էր աստուածութիւնն փոխանակ մտաց:Աստուածաբանն ասէ.Զի՞նչ առ իս այն զի աստուածութիւնն հանդերձ մարմնովն ոչ է մարդ, այլ եւ ոչ թէ զհոգի միայն առ, եւ ոչ երկոքեանն առանց մտացն, որք եւ մարդ պահեն զմարդն, եւ մեծագոյն զաստուածութիւնն, զի զիս կատարելապէս գործեսցէ:Տե՛ս երկաբնակ, այս եղեւ պատճառ ասել նախ երկու բնութիւն, զի ցուցցէ թէ Աստուած ընդ բոլոր մարդս միացաւ ընդ միտս, ընդ հոգի եւ ընդ մարմին, եւ եղեւ մի. զի մեք կատարեալ առցուք զփրկութիւն, եւ ոչ ընդ մարմինս միայն՝ ըստ չար կարծեացն Ապողինարի:Նորին՝ յՈրդոյ ճառէն.Խառնեցաւ ընդ Աստուածութիւնն եւ եղեւ մի՝ վեհագունին յաղթելով:Նորին՝ ի Զատկին ճառէն.Աւծելոյ աստուածութեամբն եղելոյ որպէս որ էաւծ, եւ համարձակիմ ասել զոյգ աստուած:Նորին.Կարաւտացաք Աստուծոյ մարդանալոյ եւ մեռանելոյ:Նորին.Մերովս ախտակրութեամբ ախտակրէ Աստուած եղեալ մարդ:Նորին ի բանէն զոր ասէ վասն գործոցն Քրիստոսի.Սքանչելիսն որ պատմի ի գիրսն Մատթէոսի զոր գործեաց թագաւորն Քրիստոս յորժամ ընդ մարմին մարդկան խառնեցաւ:Նորին՝ յետ սակաւուց.Տղայ է, ոչ երկիր պագանէ մարդոյն թագաւորի որ երեւեցաւ համագոյ Աստուածութեանն Բանին երկնաւորի. հատ իսկ կամ Բանն ի Հաւրէ մեծէ կամ ի Բանէն զկերպարան մարդկան եւ զթանձրութիւն մեր, քանզի Աստուած էր, այլ մարմնացաւ Բանն Հաւր:Նորին.Քաղցնոյր, բայց ի հինգ նկանակէն զհինգ հազարսն կերակրէր. Բանն թանձրանայ, անտեսանելին տեսանի, անշաւշափելին շաւշափի:Նորին.Ո՛վ նոր խառնմանս,

ո~վ սքանչելի խառնուածոյս:Նորին.Որ զի ճշմարտութիւնն որպէս մի, եւ ոչ բազմութեամբ վասն զի ճշմարտութիւնն մի է, երկուութիւն` ի բազումս պատառեալ:Նորին.Առաջի քո ածեմ զՔրիստոսի խոնարհումն, զանչարչարելին, զչարչարանսն, զխաչն, զբեւեռսն:Նորին.Եթէ տակաւին արարածոյ երկիր պագանէի եւ յարարած մկրտէի ոչ եւս աստուածանայի զառաջին ծնունդն փոփոխեալ:

Նորին.

Եկեալ Աստուած հանդերձ առեցելովն մի երկուց ընդդիմակացն մարմնոյ եւ հոգոյ, յորոց մինն Աստուած եւ միւսն աստուածացաւ, քանզի որովք ոչ ի ստորինս էր, նոքաւք ի վեր չոգաւ:

Նորին.

Արին Աստուծոյ լսելով եւ չարչարանս եւ մահ, մի' ի վայր անկցիս անաստուածաբար, իբր Աստուծոյ ջատագով, այլ առանց ամաւթոյ կեր զհացն, արբ զարիւնն, եթէ կենացն փափագիցես. զի շիթք դուզնաքեայ արեանն զաշխարհս ամենայն վերստին ստեղծանէ եւ լինի նա խախաց կաթին ամենայն մարդկան:

Նորին.

Ջամենայն կիրս աստուածաբար կրեաց, զի կարող էր զինչ եւ կամէր վկայ` զի յետ քառասուն աւուրն ապա քաղցեաւ, քանզի կամաւք եկեալ ի չարչարանս անչարչարելին, եւ իւր համարի զիւրոյ մարմնոյն չարչարանսն:

Բարսեղի` ընդդէմ երկաբնակացն վկայութիւնք.

Ի. եւ Գ. Սաղմոսին մեկնութենէն.

Կարողակից արար զմարմինն Աստուածութեանն, եւ ի մի զաւրութիւն զաւրացոյց:

Նորին.

Մարմինն բնութեամբ մարդկային, իսկ միաւորութեամբն Աստուածային եղել:

Նորին.

Բանն որ ասէ, թէ «Ողջոյն մի տայք ի ճանապարհի», կարծեմ թէ վասն հերձուածողացն ասէ, որք երկու բնութիւն ասեն զՔրիստոս, եւ ջրով եւ այլ խառնուածով ապականեն զսուրբ խորհուրդն:

Նորին` ընդդէմ Ապողինարի.

Որպէս ասր ներկեալ ծիրանի անհետ լինի սպիտակութիւնն, զի մի երկգոյն տեսողացն երեւեսցի, այլ միագոյն ծիրանի, այսպէս եւ մարդկային միտք եւ մարմին խառնեալ եւ ներկեալ աստուածային

բնութեամբն չէ հնար զնա երկատեսակ իմանալ կամ երկուս բնութիւնս կամ երկուս կամս առ ընթեր միմեանց եւ ի բաց բարձեալ ի նմանէ ամենայն մարդկային անձնիշխան կամք:

Ապողինար ասէ.

Անկարելի է երկուցն մի գոլ կատարելութեամ:

Բարսեղ ասէ.

Թէ ի մարդկանէ անկարելի է սակայն Աստուծոյ կարելի է յոյժ որպէս Կուսին ծնանելն ի վերայ ծովուն գնալն, եւ դրաւքն փակելովք մարմին թանձրամած ի ներքս մտեալ ի յոսկերաց հաստատեալ:

Նորին.

Բանն մարմին եղեալ եւ մարմնացեալ. նոյնպէս մարմինն աստուծացեալ եւ ոչ փոփոխեալ յանմարմնութիւն:

Գրիգորի Նիւսացոյ Բնութեանց գրոցն, որ վասն հոգոյ եւ մարմնոյ միաւորութեան.

Քանզի պատշաճի այսպիսի մաքուր բանս ի մարդկութիւնս, միաւորութիւն Աստուածն Բանի ըստ որում միաւորեալ՝ մնաց անշփոթ եւ անպարագրելի ոչ ըստ անձին յեղանակի. քանզի թուի եւ ախտակից լինել հոգոյն եւ մարմնոյն. իսկ Աստուած Բանն ոչինչ այլայլեցաւ ի կցորդութենէն որ առ մարմին եւ անձն, այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրոյն Աստուածութեանն, լինի նոքաւք մի, մնացեալ որ ինչ էր յառաջ: Նոր իմն է յեղանակս, եւ խառնի եւ մնայ անշփոթ. ոչ ախտակից եղեալ, այլ գործակից միայն:

Վկայ այսոցիկ եւ Պորփիրոս հակառակ Քրիստոսի շարժեալ զիւր լեզու, զի հզաւր են ի թշնամեացն վասն մեր վկայութիւնք. յերկրորդ բանին շարախառնիցն գրէ այսպէս.

Ոչ է ասել թէ անհնարին է էութեան իրիք առեալ ի լրումն այլ էութեան եւ լինել մասն էութեան մնալով ըստ իւրոյն բնութեան մի յետ լնլոյն զմիւսն էութիւն ընդ այլոյն լինել եւ զիւրն ամբողջ պահելով ոչ փոփոխեալ, այլ յորս մերձ լինի փոփոխէ յիւր ներգործութիւնն:

Եւ ասէ զայս յաղագս միաւորութեան հոգոյ եւ մարմնոյ: Իսկ թէ ի վերայ հոգոյ ճշմարիտ է բանս յաղագս անմարմնաւորութեան որչափ ի վերայ Աստուածն Բանի յաւէտ անբաղդատաբար ըստ ճշմարիտ անմարմնոյն որ հակառակ խնու զբերանս ձեռնարկողացն բամբասել զԱստուծոյ Բանին միաւորութիւնն առ մարդկութիւնն:

Նորին.

Քանզի են ոմանք որք չարաչար աչաւք զմի բնութիւնն որոշեն եւ բաժանեն. նոքա են բազմահայեաց աչք որ բազում հային եւ բնաւ ոչինչ տեսանեն:

Նորին՝ ընդդէմ Եւնոմէոսի.

Ներգործելն որպէս Աստուծոյ ճշմարտի ի ձեռն իւրոյ մարմնոյն ձայն եւ գործն մարդկաւրէն եկեալ յառաջ եւ Աստուածութիւնն ի ներքուստ ծածկեալ լինի:

Առ նոյն.

Մեք զմարմինն որով զչարչարանսն ընկալաւ ընդ աստուածային բնութեան խառնեալ, զայս ասեմք արարեալ որ ինչ է առողն:

Նորին՝ ի թղթն որ առ Թէոփիլոս Աղեքսանդրու հայրապետն.

Ամենայն որ ինչ տկար բնութեանն էր խառնեալ եւ եղեւ որ ինչ Աստուածութիւնն, քանզի անծանաւթն բնութեամբ ծնունդ ի վերայ ինքեան նորածեւեաց:

Հարցանէ Բարսեղ.

Զի՞նչ զանազանութիւն Բանին եւ մարմնոյն:

Պատասխանէ Գրիգոր.

Թէ զանազանութիւն աննմանութիւն, թէ աննմանութիւն ոչ պարզութիւն, թէ ոչ պարզութիւն ի բազմութիւն դրութիւն. վասն որոյ հարկ է մի բնութիւն խոստովանել զՔրիստոս եւ մի կամք եւ մի դէմ յետ միաւորութեան:

Նորին.

Իսկ Տէր ի Մարիամայ ծնեալ որով ամենայնին քննելով Աստուծոյ Բանին. բայց նզովեմք որք բնութեամբ չարչարելի ասեն զԱստուած եւ մարդ սոսկ զխաչեցեալն Քրիստոս, եւ ոչ բոլոր էութեամբ Աստուած:

Էհարց պատրիկն Մարինոս յաղագս երկու բնութեան: Պատասխանէ Գրիգոր.

Երկու բնութիւն եւ երկու ներգործութիւն աստար է յԱստուծոյ, զի հակառակ է բանդ. այլ զոր գրեալ են՝ ծանուցից քեզ: Մարմինն որով չարչարեցաւ ընդ աստուածային բնութիւնն խառնեալ, զայն ասեմք չարչարեալ ի ձեռն միաւորութեանն որ ինչ է առողին բնութիւն ընդ տկար եւ ապականացու բնութեան խառնեալ աստուածային բնութիւնն եւ եղեւ որ ինչ միշտ էր Աստուածութիւնն:

Նորին.

Ինքն էականս Տէրն ընդ համարաւ դատապարտելոցս եղանի, եւ պարագրողն զերկնային կամարն՝ խանձարրապատի եւ ի մտուր դնանի:

Նորին.

Բանն Աստուած ոչ յինքենէ էառ մարմին, եւ ոչ ինքն ընդունակ եղեւ նոցա տկարութեանն, այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրում Աստուածութեանն, լինի նոքաւք մի որպէս էր յառաջ քան զգալն յաշխարհս:

Նորին առ հարցումն Բարսեղի.

Բանն զմարմինն յիւր պատկեր փոփոխեաց միաւորութեամբն, զի ոչ ներէր Հայր աննմանոյ իւրոյ տալ զաթոռ իւր:

Տե՛ս, երկաբնակ, նման Հաւր ասէ զմարմինն, ապա հարկ է զի մի բնութիւն եղիցի Բանին եւ մարմնոյն, զի զանվրէպ նմանութիւնն առ Հայր կալցի, զի Հայր մի բնութիւն է:

Եփրեմի յԵրրորդութեանն ճառէն.

Ոչ յերկնից ասենք զՏեառնէ մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմինն, այլ ի սրբոյ Կուսէն Մարիամայ, եւ ոչ բաժանենք զԲանն յիւրմէ մարմնոյն յերկուս դէմս կամ երկուս բնութիւնս. եւ եղիցի մարդս մեզ արինակ, որ գոյացեալ է յերկուց՝ ի հոգոյ եւ ի մարմնոյ, եւ է մի դէմ եւ մի բնութիւն խառնեալ եւ անշփոթ մնացեալ:

Նորին՝ յԱւետարանին մեկնութենէն .

Ի մէջ թակուկացն շրջեաց զջուրն ի գինի ըստ ոչ բնութեան. նոյնպէս եւ զմեր բնութիւնս առ ի մէջ Կուսին, եւ շրջեաց յանապականութիւն եւ ուր Աստուածութիւնն յամենայն տեղիս ձգտի ի մարմինն:

Նորին.

Կոյսն զմարմինն ծնանելով՝ զԱստուած ծնաւ. Հրէայքն զմարմինն խաչելով՝ զԱստուած խաչեցին:

Նորին՝ Հաւատոյ բանէն.

ԶԲանն Հաւր որ ծնունդն է Հաւր յաւիտենից. թէ էրեկ ծնաւ ի Մարիամայ ըստ հրեշտակացն. Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ. նոյնպէս եւ զմարմնոյն ասէ Ծնեալ ի Հաւրէ. աղաղակեաց Հայր ի բարձանց՝ Ղա է Որդի իմ սիրելի: Տե՛ս, երկաբնակ, եւ որպէս Հայր ո՛չ բաժանեաց, նոյնպէս եւ դու մի՛ բաժաներ:

Նորին.

Բանն եւ Տէրն յաւիտենից եւ մարմին, որ եկն ի Մարիամայ, մի է եւ ոչ երկուս:

Նորին.

Այն որ ի սկզբանէ Աստուած, եւ այն որ երեկ ծնաւ՝ մի ծնունդ կատարեալ է. քանզի իբրեւ ծնաւ մարմին Բանին, եկն յայնժամ ծնաւ Բանն որ յաւիտենից էր ընդ մարմնոյն որ երեկ ծնաւ:

Նորին.

Ոչ մի ինչ բաժանումն Բանին եւ մարմնոյն. յաստուածային գիրս մի բնութիւն եւ մի զաւրութիւն, բոլորն Աստուած եւ բոլորն մարդ:

Նորին.

Ո՛վ սքանչելեացս որ ի ձեռն կաւեղինի հողոյս Արարիչն երկնի եւ երկրի ապտակեցաւ. քանզի զԱստուած Բանն տեսանենք կախեալ զփայտէ եւ սպանեալ վասն մեղաց մերոց:

Նորին՝ ի հաւատոյ բանէն.

Աստուած որ եկն տալ նոցա կեանս, կալան եւ կապեցին զնա զփայտէ. մարգարէքն որ կոտորեցան, ոչ կարացին խլել զքաղաքն սպանող, զի արարածք էին: Իսկ Աստուած որ խաչեցաւ ի մէջ նորա, կործանեաց զնա, վասն զի Արարիչ է ամենայնի. զբարբառն զոր արծակեաց Տէրն ի խաչին, լուան արարածք եւ ճիչ բարձին, զի ծանեան, եթէ նա՛ է հաստատիչ իւրեանց:

Նորին.

Շիջաւ արեգակն՝ ճրագն աշխարհի, զի խաչեցաւ լոյսն ամենայն արարածոցս:

Նորին.

Կապեցաւ եւ կծկեցաւ ի վերայ խաչին զաւրութիւնն այն որ կապեալ են ամենայն արարածք:

Նորին.

Աստուած է, որ ծնաւ ի Սրբոյ Կուսէն, վասն այնորիկ է սրբութեան աղբեր, եւ պահեցաւ միշտ կուսութիւնն, քանզի անապականութեան միշտ փափագեաց եւ եղեւ մայր անապականութեան:

## **ԳԼՈՒԽ Է.**

### **[ՎԵՐՍՏԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ]**

Եփրեմի յԱւետարանին մեկնութենէն.

Թողլիք զնա չարչարել այսպէս որոշեցաւ ի նմանէ ոչ իբրեւ այն զի հատցի ի նմանէ, այլ իբրեւ ծածկեալ է զաւրութեամբ իւրով ի սպանելոյն եւ ի սպանողացն: Արդ ի մահու անդ ո՛չ էր նա ընդ նմա, ո՛չ՝ վասն զի կամեցաւ ի բաց լինել ի նմանէ, այլ քանզի ոչ կարաց մահ մերժենալ որ կեանք էին սպանողք մահու:

Արդ, որք տգիտաբար միայն յերեսս բանիս հային եւ զխորսն ոչ իմանան՝ տկարանան հաւատով եւ գայթակղին, որպէս եւ տեսաք զոմանս: Սորին վասն եւ եղաք զլուծումն սորա Աստուծոյ խնամոցն ձեռնտուութեամբ, որով պախարակեցես զայնոսիկ որք անմտաբար անդուռն բերանով վարին սովաւ. որպէս եղաք զԱստուածաբանին յիւրում կարգին, զայն որ ասէ՝ Բնութիւնք երկուք, զԱթանասին յիւրում կարգին զայն որ ասէ՝ Ո՞ր դժոխք սգայռեցան ասել մի բնութիւն Բանին Աստուծոյ եւ մարմնոյն որ ի Մարիամայ, եւ ցուցաք զպատճառ սոցա, զի լուիցես եւ ի միտ արցես թէ է՞ր աղագաւ զայս ինչ ասացին նոքա: Բայց դու տե՛ս զայլ վկայութիւնք Եփրեմի, որ գրեալ են նախ եւ սովաւ մի՛ գայթակղիր, քանզի ասէ՝ Աստուած է զոր ծնաւ Կոյսն, եւ Աստուած է զոր խաչեցին հրէայքն:

Արդ՝ այն որ ասէ՝ Թողիք զնա չարչարել, այսինքն Բանն Աստուած թոյլ ետ իւրում մարմնոյն կրել զիւրն վասն մեր յանցանացն եւ թոյլ ետ չարչարանացն զալ ի վերայ նորա. քանզի Բանն իւր կամաւք մատնեաց զանձն իւր ըստ այնմ Ես դնեմ զանձն իմ. այսպէս որոշեցաւ ի նմանէ: Արդ, ի մարմնոյն ոչ ասէ որոշելով, սիրելի, այլ ի չարչարանացն. զի Բանն Աստուած բնութեամբ անչարչարելի է, քանզի էր ի մարմինն միացեալ անբաժանելի, եւ էր ի չարչարանացն որոշեալ, բայց իւր համարէր զչարչարանսն վասն զի ի՛ւր էր մարմինն, ոչ իբրեւ այն զի հատցի ի նմանէ ոչ ասեմ ասէ զորոշելն հատանիլ կամ բաժանիլ Բանին ի մարմնոյն, որպէս երկաբնակքն որք առանց Բանին Աստուծոյ սոսկ մարդ չարչարեալ ասեմ վասն մեր, այլ իբրեւ ծածկեալ է զաւրութեամբ իւրով. ինքն մեկնէ զայս ասեմ ասէ որոշումն, քանզի Բանն Աստուած ծածկեցաւ ի մարմինն, եւ ոչ երեւեցոյց զմեծ եւ զանբաւ զաւրութիւն իւր. ի սպանելոյն յիւրում մարմնոյն ասէ, զոր թոյլ ետ Բանն իւր կամաւք սպանել վասն մեր, քանզի կրեաց զամենայն կիրս մարմինն, բայց ի մեղաց, կամաւք Բանին, որպէս եւ աղաւթելն առ Հայր՝ անցանել բաժակին, եւ քիրտն եւ այլն ամենայն. եւ ի սպանողացն, այսինքն՝ ի խաչահանուացն, քանզի իբրեւ զմարդ մահապարտ չարչարեցին զնա, զի կուրացաւ աչք հոգոյ նոցա ի չարէն ըստ առաքելոյ թէ էր ասէ «Ծանուցեալ ոչ արդեաւք զՏէրն փառաց ի խաչ հանէին»: Արդ, ի մահու անդ ոչ էր նա ընդ նմա, ոչ մեռաւ ասէ Բանն Աստուած ընդ մարմնոյն, զի Աստուած Բանն Հաւր բնութեամբ անմահ է եւ անչարչարելի, բայց վասն անձառ միութեանն Բանն ի՛ւր համարէր զչարչարանսն եւ զմահն, վասն զի ի՛ւր էր մարմինն, եւ աստուածացաւ մարմինն ի միանալ Բանին ընդ նմա յորովայնի Կուսին. սորին վասն եւ համարձակութեամբ ասեմք՝ Աստուած խաչեալ եւ անմահն վասն մեր մեռեալ մարմնով, ո՛չ՝ վասն զի կամեցաւ ի բաց լինել ի նմանէ ոչ ասեմ, ասէ թէ որոշեցաւ կամ մեկնեցաւ Բանն ի մարմնոյն, քաւ լիցի, քանզի անբաժանելի էր միացեալ ընդ նմա. բայց սակայն ո՛չ մեռաւ, քանզի Աստուած անմահ է բնութեամբ որպէս ասացաք, այլ քանզի ոչ կարաց մահ մերձենալ ուր



կեանք են սպանողք մահու, զիա՞րդ ասէ կարողանայր մահ հասանել յանմահն Աստուած որ վասն մեր մարդ եղեւ, եւ իւր աստուածացեալ մարմնովն եսպան զմահ, այլ որպէս ասացաք բազում անգամ, թէ խառնեցաւ Բանն ընդ մարմինն անշփոթ եւ աստուածացաւ մարմինն յամենայնի հաւասար Բանին, եւ Աստուած Բանն իւր միացեալ եւ աստուածացեալ մարմնովն տնաւրինաբար կամաւ կրեաց զչարչարանս եւ զմահ, եւ սպան զմահ իւր անմահ, անապական եւ կենդանարար մահուամբն, եւ ինքն Բանն գեր ի վերոյ մնաց քան զամենայն կիրս, բայց ի՛ւր համարեցաւ զամենայնըն, վասն զի ի՛ւր էր մարմինն եւ միացեալ էր բնութեամբ:

Եպիփանու յԸ. Սաղմոսին մեկնութենէն.

Առ զբնութիւնս մեր Միածին Որդին Աստուծոյ եւ միացոյց ընդ բնութիւն Աստուածութեան իւրոյ:

Նորին.

Բանն Աստուած հաւասար Հաւր անքակ միացոյց ընդ իւր զբնութիւնս մեր:

Նորին.՝ ի Հաւատոյ բանէն.

Այլ ինքն Բանն մարմին եղեալ ոչ փոփոխեաց զԱստուածութիւնն ի մարդկութիւն, եւ անճառ միացոյց զմարդկութիւնս յաստուծութիւն իւր, եւ մարդ ասեմ կատարեալ որ չափ եւ որ ինչ մարդ բայց ի մեղաց:

Նորին՝ ի Ե Ժ . Սաղմոսին մեկնութենէն. Ոչ թողցես զանձն իմ ի դժոխս

Յանդիմանէ սա զայնոսիկ որք ունին զաղանդն Սիմոնի կախարդի եւ ասեն երկուս որդիս, մինն՝ ըստ բնութեան եւ միւսն՝ ըստ շնորհաց, մինն անմահ եւ միւսն՝ մահկանացու:

Նորին՝ յԱկանց գրոց.

Քրիստոսի չարչարելն մարմնով ոչ Աստուծութեանն որիչ եւ մարդկութեանն մեկնելով, այլ ի միասին եւ ի նոյն Աստուածութեանն եւ մարդկութեանն մի Տէր մի Քրիստոս. արիւնն ոչ էր Յովսեփու, որով ներկեալ էր պատմուճանն, իսկ հանդերձ նորա էր. եւ արիւնն ոչ հասաւ ի մարմինն նորա, այլ ի պատմուճանն, իսկ ներկուածն ոչ ասի հանդերձին, այլ զգեցողին զնա. նոյնպէս եւ չարչարանքն ոչ հասին յԱստուածութիւն նորա, բայց Աստուածութեանն համարեալ եղեւ, զի Աստուծով եղիցի փրկութիւնն մեր, զի մի՛ յուսացուք ի մարդ, այլ Աստուած, զի գրեալ է՝ Անիծեալ է այր որ դնէ գոյս է իւր ի մարդ:

Նորին

Կարողակից արար գիողեղէն մարմինն Աստուածութեանն, եւ մի զաւրութիւն եւ մի Աստուածութիւն ժողովեաց:

Նորին ի Հաւատոյ բանէն.

Ինքն Աստուած եւ ինքն մարդ, ոչ շփոթեալ զերկոսեանն ի միասին խառնեաց, զերկրայինն ընդ աստուածայինն զաւրացոյց, ի մի Աստուածութիւն հաւաքեաց:

Նորին.

Ձոր արինակ սպիտակութիւն ասրոյ ներկեալ ծիրանի ոչ են երկու, այլ մի, թէպէտ եւ խառնուած է, նոյնպէս եւ միտք պայծառացեալք եւ աստուածացեալք մի են:

Նորին.

Որպէս ասիցէ ոք փոփոխելի գՔրիստոս կամ մասն մարդոյ առեալ. ինքն ասէ՝ Ջանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց իմոց. եւ կամ թէ առանց մտաց է մարմինն Քրիստոսի, զի հոգք եւ տրտմութիւնք կիրք է հոգւոյ եւ մտաց:

Յոհաննու Ոսկիբերանի՝ ի Ներբողական ճառէն որ յԱւետիս Սուրբ Կուսին, զոր ասաց ընդդէմ Արիոսի.

Այլ ես արինեմ ճշմարտութեամբ զՀայր որ միշտ մնաց Հայր: Արինեմ եւ զՈրդի, որ ի հայրական էութենէ անժամանակ ծագեցաւ: Արինեմ եւ զՀոգին Սուրբ, որ ելանէ ի Հաւրէ եւ մնայ յՈրդոջ, եւ խոստովանիմ զՔրիստոս՝ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ միով բնութեամբ եւ փառաւք եւ զաւրութեամբ, եւ քարոզեմ զբարձրագոյն Աստուածութիւն նորա եւ ոչ ամաւթ համարիմ զխոնարհագոյն մարդեղութիւն նորա, այլ ընդ Պետրոսի գոչեմ առ նա. Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանոյ :

Նորին՝ ի ճառէն , որ աղաւթէր Յիսուս ի լերինն.

Միով զաւրութեամբ զբազմատեսակ ախտսն բժշկեաց եւ զգանազան սքանչելիսն ի ձեռն միոյ ներգործութեան լնլով. քանզի գիտեմ զՔրիստոս քաղցեալ, եւ գիտեմ զՔրիստոս յերկուց նկանակաց զբազումս կերակրեալ. զի Քրիստոսդ անուն՝ ոչ Բանին է յատուկ եւ ոչ մարմնոյն, այլ երկուցն միացելոց եւ աստուածախառն գործելոյ զտնաւրինականքն:

Նորին.

Ի կնոջ ծնաւ, զի յանցեալն ի դրախտին ողորմեսցի. կոչեցաւ Որդի մարդոյ, զի զքեզ Որդի Աստուծոյ արասցէ. առ զմերս եւ ետ զիրն:

Նորին.

Տապանակ ասի եւ խորան ըստ Մովսիսական գրոց: Մարգարէիցն տառից ունկնդիր լիցուք, զի անապական ցուցին զմարմինն Տեառն եւ միով բնութեամբ, ոչ ուրանան զբնութիւնն եւ ոչ բաժանեն, այլ միութիւն ասեն անշփոթաբար, զի Դաւիթ ասէ. Ոչ թողու ոգի նորա ի դժոխս եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն. քանզի զՏէր փառաց մարդ սոսկ ասել` եւ ոչ դէք յանդգնին:

Նորին` ի Փիլիպեցոց թղթոյն մեկնութենէն.

Մի' շփոթեսցուք եւ մի' անջրպետ ի մէջ արկցուք, վասն զի միութիւն խոստովանիմ եւ ոչ քայքայութիւն ինչ կամ լուծումն այնր բնութեան յայս եւ կամ այս յայն, այլ մնացեալ ասեն եւ մի լեալ եւ զանձառ միութիւն:

Նորին.

Քանզի ըստ ճշմարտութեան մարդ եղեւ տնաւորինաբար Աստուծոյ Բանն, եւ անտեսանելին եղեւ տեսանելի` մնացեալ յանեղի բնութեանն: Եւ որ այս խառնուածոյս բաժանումն արասցէ` նզովեալ եղիցի:

Պրոկղի Կոստանդնու հայրապետի` ի ներբողինէ Կուսին .

Մի' պատառեր զտնաւորինական պատմութեանն, զի Արիոս հատանէ զէական բնութիւնն. դու զմիաւորութիւնն մի' բաժաներ, զի մի' բաժանեսցիս յԱստուծոյ:

Նորին.

Բանն մարմին եղեւ եւ ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց խառնակութեան մնաց միաւորութիւնն :

Ինքն ի ծոց Հաւր եւ յորովայնի Կուսին, ի խաչին բեւեռեալ եղեւ, եւ յաթոռ փառաց ոչ մերկանայր:

Նորին յետ սակաւուց.

Անվայրափակ Բանն որ ի ծոց Հաւր պարունակի փոքրիկն տղայիկ զսերոքէսն սասանեցուցեալ եւ ի Պիղատոսէ հարցափորձեալ:

Նորին.

Նոյն ինքն զմեծասքանչ զաւրութիւնն առնէր եւ նոյն ինքն ընդ չարչարանաւքն անկանէր, զի միութիւն ոչ լինի ի միութիւն երկուս զի թէ այսպէս բաժանեսցի, ոչ լինի միութիւն, այլ երկուութիւն:

Նորին. ընդդէմ Նեստորի

Եթէ Աստուծոյ անարգութիւն է յարգանդն գալ, ապա եւ հրեշտակաց անարգութիւն է մարդոյ սպասաւորել. բայց արդէ ական ըստ բնութեան անախտակիր՝ եղեւ ի ձեռն գթոյ յոքնախտակիր:

Նորին.

Ոչ ի նահատակութենէ եղեւ Աստուած՝ Քրիստոս, քաւ լիցի, այլ գթովն եղեւ մարդ՝ Աստուած ելով, որպէս հաւատամք զի ոչ մարդ աստուածացեալ քարոզեմ, այլ Աստուած մարդացեալ խոստովանիմք:

Նորին՝ ի ներբողիւնէն, զոր ասաց աւետարանիչն Ղուկաս.

Տես զդրացիս մեր զհերետիկոսս, թէ ո՞րչափ ախտացեալ են հայիոյութեամբ, եւ զի՛նչ չար կացցէ քան զաստուածամարտն լինել առ միաւորեալ աստուածագործ Որդւոյ միաւորութիւնն:

Յետ սակաւուց

Զփրկագործ տնաւրէնութեանն պատմէ զխորհուրդ ավետարանիչս Ղուկաս զԿուսին երկիւղածութիւնն, զաւետիսն Գաբրիէլի, զկերպարանն Աստուծոյ որ թափեաց զինքն ի ծառայակերպ: Զանփոփոխելի Աստուածութիւնն, զանխառնելի երկուց բնութեանցն հրաշափառապէս խառնումն, որ յետ միութեանն ոչ եւս երկու բնութիւն:

Նորին.

Ոչ լուաք ի սկզբանէ մկրտեալքս, եթէ երկու բնութիւն է Քրիստոս, այլ մի:

Նորին.

Քարոզել խորհեալ ենք եւ խայտառակեալ զասացողսն երկուս բնութիւնս զՔրիստոս, եւ խոստովանելով զմարմինն՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ զնոյն Աստուած ելով:

Նորին.

Մեղաւորաց եւ Հրէից, հանդերձ երկաբնակաւք, զգեհեանն խոստանայ, որք մարդ զնա պարզաբար ասեն, եւ ոչ Աստուած:

Նորին.

Մեզ քաւ լիցի միացեալ բնութեան Միածնին՝ ապականութիւն կամ շփոթումն ասել:

Ատտիկոսի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի.

Այսաւր Քրիստոս Տէր զմարդասիրութեան ծնելութիւնն ընկալաւ.

Բանն թափի անթափելի զբնութիւնն ունելով, անմարմին վասն քո մարմնանալ], փարադրողն զերկինս խանձարրապատի եւ ի մտւր դնանի:

Մարութայ Նփրկերտոյ եպիսկոպոսին, որ է Մուփարկինս.

Ձի թէպէտ եւ տեսանիցեն զնա խանձրրապատեալ եւ ի մտւր եղեալ, սակայն Տէր ճանաչիցեն զնա հրեշտակաց եւ աւծեալ Աստուած՝ միաւորութեամբ մարմնոյն:

Նորին՝ յետ սակաւուց.

Ձի որպէս անդ մորենին տունկ փշեղէն ընկալաւ զհուրն Աստուած եւ ոչ կիզաւ, նոյնպէս եւ բնութիւնս մեր, որ ի ներքոյ անկեալ էր փշոյ մեղաց, խառնեալ միացաւ ի բնութիւն հրոյ Բանին Աստուծոյ եւ ոչ շփոթեցաւ, այլ եղեւ որ ինչ առողին էր բնութիւն:

Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի՝ ի ճառէն որ յաստղն եւ ի մոզքն.

Մոզքն որք քննեցին զխորինս հայցուածովն իւրեանց ի ծնունդս Աստուածորդոյն լռութիւն պահեցին ընտրողապէս: Ընդէ՞ր ոչ այսպէս ծանր լինի խորհուրդ նորա առ քննողսն կամ զրպարտողսն որք աւծտեն զնա զազանապէս հարցուածաւքն իւրեանց:

Նորին՝ ի յետ սակաւուց.

Կայծակն հրեղէն զգեցաւ մարմինն եւ ել յաշխարհս, զի կիզցէ զորոմն սերմանեալ չարին:

Նորին՝ ի Յարութեան ճառէն.

Ձայսպիսի հրաշալի գործքս Միածնին ով պատառեսցէ եւ երկու բնութիւն լրբի ասել զՄիածնին:

Հիպողիտայ եպիսկոպոսէն

Իսկ որ երկու բնութիւն ասեն՝ գտանի ըստ նոցա մտացն չորս տեարս , այսինքն՝ չորրորդութիւն, եւ թէ յայս մասին յամառին՝ պարտին փառս տալ չորրորդութեանն, եւ պարտ է նոցա ասել՝ Փառք Հաւր եւ Որդոյ եւ միւս որդոյ եւ Հոգոյն Սրբոյ:

Նորին.

Ջմարդ առանց Աստուծոյ Բանին խոստովանել եւ ոչ դելք անգամ յանդգնին, որ եւ ինքեանք տազնապէին ասելով՝ Զի՞ կայ մեր եւ քո, Որդի Աստուծոյ, եւ աղաչէին իբրեւ զԱստուած:

Նորին.

Շունչ արարած է, եւ ո՛չ չարչարի եւ ո՛չ խոցի. որչափ եւս առաւել Բանն Աստուած, եւ որչափ չարչարեցին զմարմինն Աստուծոյ արարին զանարգանսն, քանզի զԲանն Աստուած մարդացեալ գիտեմք:

Թէոդորիտայ Անկիրիոյ եպիսկոպոսի վկայութիւնք.

Արդ, եթէ ըստ նոցա ամբարշտութեանն ապրի երկաքանչիւր բնութեանցն յատկութիւն, եւ արշաւակցեն իրերաց բնութիւնքն մինչեւ ցայժմ շարայարեալք Աստուած Բանն եւ որ ի Մարիամայն մարդ, ապա ըստ նոցա ասիցն ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհս եղեալ ի կնոջէ, ոչ թափեաց զինքն եւ ոչ աղքատացաւ փառակցին:

Նորին.

Անկարելի է դիտել գյատկութիւնն, եւ պահել զմիութիւնն, այլ կարծեալք միայն ասէ որոշեմ. ուրեմն նովին եւ զմիութիւնն լուծեր. քանզի զատուցեր ի միսմէն զմիսն. թէ միաւորես բանիւ մի՛ հատցես իմացութեամբ, եւ մի՛ ուրանար զմիաւորութիւնն, մի՛ երկու բնութիւնս զմտաւ ածցես Աստուծոյ, ի ծայրն հրաշագործեալ զմիաւորութիւնն հաւատայ սքանչելին եւ մի՛ քններ զեղեալն, ո՛չ մնայ հրաշափառ Բանն, եթէ ճանաչի կամ հասու լինի ի մէնջ:

Նորին.

Քանզի միացեալ ոչ երկու, այլ մի անուանի, եւ զայս խոստովանակից եղիցին որք մի բնութիւն խոստովանին, քանզի երկու բնութիւն ի մի եկեալ միացան անշփոթաբար՝ ո՛չ լուծեալք ի զմիմեանս:

Նորին.

Ջերկաբնակացն անմտութիւնսն յատակս ամենեցուն կացուցաք, քանզի մի է բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ. Աստուած Բանն մարմին եղեւ, եւ մնալովն Աստուած անհեղի ըստ բնութեան: Սակս այսորիկ ոչ բնութիւն մարդոյ հասարակականի ասացաւ անկիր արկեալ մարմին էմանուէլին, այլ մարմին Աստուծոյ Բանին. քանզի երանելի հարքն մեր միում մարմնացելոյ Բանին Աստուծոյ ասեն զաստուածայինս եւ զմարդկայինս, ոչ բաժանեն զնա յերկուս բնութիւնս եւ ոչ գյատուկսն առբաշխեն բնութեանցն յետ անճառ միաւորութեանն:

Նորին.

Քրիստոս ոչ երկու բնութիւն, զի մի՛ մարդապաշտութիւն կարծեսցի խորհուրդն, այլ մի է բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ զի յԱստուածիցէ մկրտութիւնն մեր:

Մելիտոնի եպիսկոպոսի, ի թղթէն որ առ Եւտրիպիսն.

Այս գրեցաւ վասն միանալոյ Բանին Աստուծոյ ընդ մեզ ծննդեամբ ի Սրբոյ Կուսէն՝ մի յերկուց միացեալ եւ անշփոթ մնացեալ անորիչ ի միմեանց, այլ միացեալ եւ մի լեալ անքակտելի:

Ջենոբայ եպիսկոպոսի.

Մեք ո՛չ ասեմք, եթէ մահ մարմնոյն միայն է, որպէս ո՛չ ասեմք, եթէ կեանք Բանին եւ մարմնոյն, եւ եթէ անարգանք եւ մահ Բանին եւ մարմնոյն:

Ապլիբեսի եպիսկոպոսի եւ մարտիրոսի.

Ի նմա էր մարմին հոգեւոր եւ ի նմա էր Աստուածութիւն անփոփոխելի, եւ այն որ չարչարեցաւ ոչ ապականացու, այլ անապականելի, եւ ասեմք որ նստի ընդ աջմէ Հաւր:

Փիլաքսոնի եպիսկոպոսի Արբոք քաղաքի.

Վասն զի սիրէր զպատկեր իւր՝ նմանեցաւ նմա. եւ վասն զի անսկիզբն է՝ ո՛չ դարձաւ ի մարմին, զի անապական է. ո՛չ ի ծնունդն երկուս եւ ո՛չ ի խաչելն երկուս:

Փիլաքսոնի Անկառացոյ.

Ճշմարտութիւնն ծանուցաւ, շնորհն եկն, կեանքն յայտնեցաւ Աստուծոյն Բան Աստուծոյն Որդի մարմին եղել անապական վասն մեր, զի զմեզ փրկեսցէ յամենայն ապականութենէ:

Ամփիլաքսոնի եպիսկոպոսի Յիկոնացոյ

Եթէ ոչ էր նորա ծնեալ մարմնապէս՝ եւ դու ծնանէիր հոգեպէս եթէ ոչ էր նորա կերպ ծառայի առեալ՝ դու ոչ էիր շահեալ զփառս որդեգրութեանն Տեառն չարչարանքն եւ մահն ծառային անմահութիւն եւ բարձրութիւն, եւ դու ի հայիոյութեան մեքենայս առնես զերախտիսն:

Սեբերիանոսի եպիսկոպոսի Գաբաղացոյ.

Մի՛ բաժաներ զԱստուածութիւնն ի մարմնոյն, զի մի՛ դու բաժանեսցիս յԱստուածութենէն որպէս զԱրիոս պատառեցան:

Ակակայ Մելետինոյ եպիսկոպոսի.

Քանզի ճշմարիտ մարմնանալն Քրիստոսի որ անապական եւ առանց մեղաց յԱստուածածնէն յաւելուած Որդոյ ոչ արար, այլ եկաց մնաց ներմարդութիւնն զինչ կամեցաւ եւ մարմնացաւ մինն յԵրրորդութենէն Բանն Աստուած:

Իսիդորոսի Ելիսոյտացոյ ի Ռ . թղթոյն.

Ընկալ ի քեզ որ յերկակացն է միութիւն անորոշ եւ անտարակցելի զի սալլյապէս յերկակաց ճշմարիտ միութեանցն զեռեակն առցես կատարեալ:

Ապղեայ Քերսոնի եպիսկոպոսի.

Անսկիզբն եւ անտեսանելին Աստուած եղանի մարդ ճշմարտապէս անորիշ եւ անյատկաբար միութեամբ ի մի դէմ միով ենթակացութեամբ, միով տարբերութեամբ:

Յովսեփայ Արծնոյ եպիսկոպոսի.

Նորուն աստուածայինքն վասն զի Աստուած էր բնութեամբ, նորուն եւ մարդկայինքն, վասն զի մարդ եղև ճշմարտապէս. ո՛չ անձնաւորութեամբ բաժանի եւ ո՛չ ընդ բնութեանցն թուով, եւ ո՛չ մասամբ որոշի:

Թիոփոնի եպիսկոպոսի Եթոպացոյ.

Անճառաբար երեւեալ մարդ ի ձեռն Հոգոյն Սրբոյ, նոյն ինքն սա Աստուած ճշմարիտ ըստ նախատեսացն քարոզութեան:

Մեծին Եղիառոնի՝ ի բանէն որ ասէ. Ղատաստանք Տեառն անդունդք բազումք.

Հրաշափառագոյն գործառնութիւն Էմանուէլն զջուրն լուանայ եւ մաքրէ աննիւթական եւ նիւթական խառնմամբ հրաշիւք աստուածայնովք:

Նորին՝ յետ սակաւուց.

Այսաւր ի ձեռն անապական արգանդի ճշմարտապէս մարդ յերկրի երեւեալ անփոփոխելի եւ անայլայլակ, անշփոթ եւ անորիշ միութիւն յերկակացն բաւանդակ մարդ նոյն ինքն բաւանդակն Աստուած:

Պանփլեայ յառ Սկիւթացին ճառէն.

Ապա թէ ըստ հաճութեան Հաւր եւ առաքման գՌրդի անմարմինն Աստուած մարմին զգեցաւ.



անբաժանաբար, որով եւ աշխարհի երեւեցաւ, զի՞նչ ասիցեն առ այս երկաբնակքն, զի Բանն մարմին եղեւ:

Ի թղթէն Առիստոիդայ փիլիսոփայի որ առ Մենանդրոս փիլիսոփայն.

Ջամենայն կիրս կրեալ ճշմարիտն հանդերձ մարմնովն, զոր հաճութեամբ Հաւր եւ Հոգոյն Սրբոյ առեալ միացոյց իւր մարմին ի Կուսէ Եբրայեցոյ սրբոյս Մարիամայ անձառաբար եւ անյատկական միութեամբ:

Ի թղթէն Պռենպոսի եպիսկոպոսի Կորնթոսի, որ ընդդէմ Սամուստացոյն թղթոցն .

Քանզի Բանն մարմին եղեւ որ ոչ էր ըստ բնութեանն Աստուա ծութեան, եւ զմեր բնութիւնս խառնեալ միացոյց ի բնութիւն Աստուածութեան իւրոյ՝ մի անձն եւ մի դէմ, անորոշ եւ անքակ միութեամբ, յերկակացն մի գոլով ըստ Պաւղոսի թէ արար զերկոսեանն մի, ըստ որում նորա ձեւս նոր իրակէ զբնութիւնս :

Ղահեղադեսայ եպիսկոպոսի.

Որ է Աստուած յԱստուծոյ, եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ ի ձեռն Հոգոյն Սրբոյ եւ ոչ փոխեաց զբնութիւն Աստուածութեանն:

Մեթոդի եպիսկոպոսի եւ մարտիրոսի՝ ի Համբարձման ճառէն.

Ջամենեսեան ձգեաց առ ինքն Փրկիչն եւ արարեալ կացոյց ստուգապէս յերկինս Միածին Աստուծոյն Բան յետ միաւորութեան իւրոյ ընդ մարմնոյն:

Շմաւոնի եպիսկոպոսի.

Որ յետ անձառ միաւորութեանն Քրիստոսի երկուս բնութիւնս ասեն՝ աւտար են յԱստուածութենէն, քանզի չիք դառն չարիք եւ մեծ հերձուած քան զայն որ ի խաչին կամ ի գերեզմանին բաժանեն զՔրիստոսի միացեալ բնութիւնն:

Եգէասի մեծ վկային Քրիստոսի.

Յամենայն հերձուածողաց զարշել արժան է, եւ յայնպիսեացն որ զՔրիստոսի միացեալ բնութիւնն յերկուս բաժանեն:

Մեծին Տեղէայրենոսի.

Որք երկու բնութիւնն ասեն, զնոսա նզովէ այն զաւրութիւնն, որ վասն աշխարհի մեռաւ:

Որոգիների.

Ո որք ի մահն Քրիստոսի ոչ մկրտին, զուր ի ջուր լուանին, զմիացեալ անբաժանելին երկուք ասեն. նոքա զրկեալ են ի շնորհաց լուսաւորութենէն, խաւարին եւ հոգի ոչ առնուն, այլ զբարկութիւնն Աստուծոյ:

Ամղիքոսի Յիկանացոյ.

Նոյն ինքն է թագաւոր եւ Աստուած եւ զկիրս տնաւորութեանն յանձն էառ. ընծայքն խորհրդոյ են նշանակք, մատուցանեն ոսկի, զի թագաւոր ճանաչեն զնա, եւ կնդրուկ՝ զի Աստուած գիտացին զնա, եւ զմուռ՝ վասն չարչարանաց նորա:

Եւսեբէ Մուսոյ եպիսկոպոսի.

Չարչարեցաւ վասն մեր մարմնով, եւ չարչարանք մարմնոյն նմա՝ համարին, ոչ եթէ զաւրութիւնն խոցեցաւ, եւ ոչ Աստուածութիւնն պատառեցաւ, քանզի ոչ մտին բեւեռքն յանմարմինն, այլ չարչարեցաւ մարմնովն զաւրութիւնն անչարչարելի, եւ մարմնոյն չարչարանքն զաւրութեանն համարին:

Կիպրիանոսի եպիսկոպոսի եւ վկայի Քրիստոսի.

Յոքունք եւ մեծամեծք պատահեցան, սիրելիք, աստուածային բարեգործութիւնքն. Հայրն զՈրդին առաքեաց, զի զմեզ նորոգեսցէ, եւ առաքեալ Որդին կամեցաւ Որդի Մարդոյ լինել, զի զմեզ որդիս Աստուծոյ կացուցէ. վիրաւորեցաւ, որպէս զի զմերսն բժշկեսցէ զվէրսն:

Երանելոյն Յովանու.

Ձերկեակն ծնանի եւ էակն եղանի որպէս ոչ էր տարակցեալ ի գոլոյն Աստուած անյայտն եւ պարզն, եւ անմարմինն ձեռաւք մարդկայնաւք փարի զմեղացն ի բաց կորզիչ կապանս ի խանձարուրս հիւսանի:

Վասն ժողովոյն Քաղկեդոնի.

Աղէքսանդրացիքն զՆեստոր աքսորեցին, իսկ ժողովեալքն ի Քաղկեդոն հաստատեցին ընդդէմ նոցա զՆեստորին՝ բռնադատեալք ի Մարկիանոսէ: Արդ, գրէ ժողովն Քաղկեդոնի, թէ ոչ եբարձ զբնութեանցն զանազանութիւն վասն միանալոյն, այլ առաւել ողջ պահեաց զհիւրութիւն երկաքանչիւրոյ բնութեանցն. իսկ բազումք աղաղակեցին, թէ ոչ հաւանիմք նորաձայն բանիցոյ, որ է ի Լեւոնի ի տումարէն, որ չար է քան զհայիոյութիւնն Նեստորի, քանզի ԻՇ ամ էր ի ժողովոյն Եփեսոսի մինչեւ ի ժողովն Քաղկեդոնի, եւ բազումք յեպիսկոպոսացն որ յԵփեսոսի ժողովն նզովեալ էին

գՆեստոր, եկեալ էին ի ժողովն Քաղկեդոնի: Ի Քաղկեդոն ասացին ուղղափառքն. Որ ոք ասէ գՔրիստոս երկու բնութիւն՝ նգովեալ եղիցի: Իսկ Նեստորականքն ասացին. Որ ոք ասէ գՔրիստոս մի բնութիւն՝ նգովեալ եղիցի: Միաբան ասացին ուղղափառքն. Որ ոք աւելի քարոզէ քան զերիս սուրբ ժողովսն՝ նգովեալ եղիցի յԱմենասուրբ Երրորդութենէն: Իսկ Մարկիանոս թագաւորն խնդրեաց ի ժողովոյն գիր եւ սահման հաւատոյ ըստ հայիոյութեան Լեւոնի. եւ եպիսկոպոսացն ասացեալ Ոչ է ումեք իշխանութիւն դնել սահման հաւատոյ, զի այն մեզ բաւական է որ ի Նիկիայ ի Կոստանդնուպոլիս եւ յԵփեսոս, եւ հրամայեաց թագաւորն զմիաբանեալ եպիսկոպոսունս եւ զիշխանս արկանել ի բանտ, եւ Յոբնադիոս ի մեջ անցեալ ծածկեաց զերկու որդիսն Լեւոնի եւ Նեստորի՝ երկու բնութիւնքն զոր սահմանեաց: Իսկ թագաւորն եւ կինն իւր եկին առ նոսա եւ եղեն չորս աւուրս, եւ սուրբքն ոչ հաւանեցան: Իսկ այլ ժողովն ոմանք յերկեղէ եւ ոմանք յակնառութենէ թագաւորին եւ կնոջ նորա Պողքերայ հաւանեալք յանձն առին զհերձուածն, եւ զոչ հաւանեալսն հրամայեաց թագաւորն յաքսորս առնուլ ընդ Դիոսկորոսի: Իսկ հաւանեալքն զղջացան յետոյ եւ գրեցին հերձուածոյ ապաշխարութիւն ի տախտակս կապարեայ, թէ պատառեցաք զցանկ հաւատոյ, եւ եղին ի տապանակին յագադեայ յեկեղացին Դեմեդեայ:

Եւ ի թագաւորելն Անաստասայ ասացին նմա, եւ նա հանեալ զտախտակսն ապաշաւեր լալով զքակտումն հաւատոյն: Եւ Ջենոն, եւ Անաստաս եւ Յուստիանոս կայսերք Հռոմոնց, եւ Ակակ եւ Մաքսիմոս հայրապետք Կոստանդնուպոլսի յիւրաքանչիւր ժամանակս նգովեցին զժողովն Քաղկեդոնի:

Ի չորեքտասան թղթոցն Ակակայ Կոստանդնուպոլսի հայրապետի եւ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետի, զոր յետ ժողովոյն Քաղկեդոնի գրեցին առ միմեանս:

Ակակայ՝ առ Պետրոս.

Հայր սուրբ Պետրոս Աղեքսանդրու հայրապետ, վէմ եւ հիմն եկեղեցոյ, որ հաստատուն կացեր ի հաւատս ուղիղս առաքելասահմանս, ընդ վայր նգովեցին զքեզ եւ շիջուցաք զճրագ հաւատոյ, քանզի մոլորեցաք ի ճշմարտութենէն եւ հետեւեցաք ստութեանն կորստական ճանապարհին: Հայր սուրբ, նմանեայ Տեառն քո անյիշաչարութեանն եւ ընկալ զդարձ զղջմանս իմոյ, եւ հաստատեա զիս ի հաւատս յոր դու անշարժ կացեր, քանզի նգովեմ զտունարն Լեւոնի որ ամբարշտութեամբ զերկուս բնութիւնս խոստովանի բաժանեալս, եւ զԵւտիքէս, եւ ընդունիմ զուղիղ հաւատս, զոր ի մոլորութենէ լեզուի իմոյ ուրացայ:

## Պետրոսի առ Ակակ

Այս երեսուն ամ է որ զհաւատն Քրիստոսի անխնայ սպանէք անհաւատութեամբ ձեռնարկութեամբ տունարին Լեւոնի երկու բաժանեալ բնութեամբքն հրէական ուրացութեամբն: Եւ դարձեալ խնդրես յինէն ապաշխարութիւն, եւ ես ոչ գիտեմ, թէ զի՛նչ արարից: Բայց յուսամ յողորմութիւն մարդասիրին Քրիստոսի. ընդունիմ զդարձ քո եւ լինիմ աղաւթակից քեզ: Արդ՝ քառասուն ար դու եւ ես պահաւք եւ ջերմ արտասուաւք եւ աղաւթիւք ապաշխարեսցուք վասն քո եւ վասն քահանայիցդ եւ վասն ժողովրդեանդ, եւ հաշտեսցուցուք զՔրիստոս, զոր ուրացայք: Եւ զայն քառասուն արն պատարագ մի՛ մատուցաներ, եւ թէ հարկէ ոք զքեզ՝ դու զհիւանդութիւն պատճառեա. եւ ի կատարել քառասուն արուրն մատո՛ պատարագ դու այդր եւ ես՝ աստ. եւ երեսեցի Քրիստոս քեզ մանկան կերպարանաւք եւ խաւսեցի ընդ քեզ զարժանն. եւ մի՛ յիշեսցես ի պատարագն զայնոսիկ որք ձեռնարկ արարին ի տունարն Լեւոնի հրէական ուրացութեամբն եւ ինքեանք անդարձ եւ անապաշաւ մեռան. քանզի ոչ ընդունի Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս զպատարագն վասն նոցա զդրունս արքայութեան:

## Ակակայ՝ առ Պետրոս.

Հնազանդեցայ հրամանաց քոց, հայր սուրբ, եւ ընկալայ կանոն ապաշխարութեան որպէս եւ սահմանեցեր զիս, եւ յորժամ մատուցանէի զպատարագն ահիւ եւ դողութեամբ, եւ յանկարծակի ծածկեաց զիս լոյս սաստիկ ընդ սեղանովն Աստուծոյ, եւ ըստ մարգարէութեան քո տեսի զՏէր մեր Յիսուս Քրիստոս ի մանկան կերպարան զգեցեալ պարեգաւտ կտաւի սպիտակ տեսի զնա եւ նշան բեւեռացն, եւ ինքն բազմեալ էր ի վերայ սկիհն եւ մաղզմային, եւ ես կարծէի, թէ չեմ յերկրի, եւ եբարձ յինէն զահ եւ զերկիւղ եւ լուայ ձայն որպէս ինքն Աստուած գիտէ որ ասէր ցիս. Քաջալերեցարուք քահանայք եւ ժողովուրդք, զի բարձի ի ձէնջ զնախատինս ուրացման ձեռնարկութեան տունարին Լեւոնի եւ ամբարշտի, եւ այլ ո՛չ եւս տեսի զնա, եւ ոչ զձայն նորա լուայ, եւ վասն այսորիկ փառաւորեցի զսքանչելագործն Աստուած, որ ապրեցոյց զիս ի ձեռն քո՝ բժշկելով զվերս անհաւատութեան յինէն: Եւ արդ յանձն արնեմ քեզ, հայր սուրբ, յիշել զիս անմոռաց յաղաւթս քո առ Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս, զոր սիրեցեր յամենայն զարութենէ քում եւ ոչ ուրացար զնա առաջի թագաւորաց, դատաւորաց եւ իշխանաց:

## Վասն Սիմէոնի Սիւնակեցին որ յԱնտիոք.

Արդ, ի թագաւորել միւս Յուստիանոսի կամեցաւ նա բառնալ զչար կարծիս ի միջոյ, եւ չար ոմանք ի նոյն հերձուած կացուցին զնա եւ ասեն ցնա, թէ եւ երանելին Սիմէոն Սիւնակեցին որ յԱնտիոք միաբանեալ է ընդ ժողովն Քաղկեդոնի: Եւ վաղվաղակի թագաւորն գրեաց առ նա թուղթ, զի ի նմանէ

իմասցի զճշմարիտն, զի էր նա հռչակեալ սքանչելեալք եւ ընդունի Հոգոյն Սրբոյ: Իսկ երանելի ծերն իմացեալ աստուածային իմաստութեամբն եւ ետ սպասաւորին զինքն ի վայր իջուցանել, եւ սպասաւորն զարմացաւ վասն իջանելոյ նորա, եւ եկեալ թղթաբերն եմուտ եւ երկիրպագեաց եւ սկսաւ խաւսել: Եւ ասէ ծերն. Տուր ցիս զառաքեալ թուղթն ի թագաւորէն: Իբրեւ առաւ եւ սակաւ ինչ ընթերցաւ՝ վաղվաղակի ի հուրն ընկեց զթուղթն եւ ասէ բարձր ձայնիւ. Անիծեալ Մարկիանոս եւ անիծեալ Ժողովն Քաղկեդոնի: Եւ թղթաբերն դարձաւ լի նախատանաւք, եւ թագաւորն ամաչեաց յոյժ:

Ի հաւատոյ թղթէն Անաստաս թագաւորին, որ յետ Ժողովոյն Քաղկեդոնի.

Մեք որպէս լուաք ի ճշմարիտ սուրբ հարցն, ոչ ասեմք երկու բնութիւնս, այլ յերկուցն մի բնութիւն, որ մարմնացաւ Աստուած Բանն խոստովանիմք:

Ի հաւատոյ թղթէն Ջենոն թագաւորին, որ յետ Ժողովոյն Քաղկեդոնի.

Քանզի ճշմարիտ մարմնաւորութիւն Որդոյն անապական էր առանց մեղաց, եւ Աստուածութիւն յաւելուած ոչ արար եւ երկուս ոչ գտաւ:

## **ԳԼՈՒԽ Ը .**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՍ ՆՈՑԱ ՈՐՔ ԱՊԱԿԱՆԱՑՈՒ ԱՍԱՑԻՆ ՋԱՆԱՊԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ  
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ԵՒ ԱՆԳՈՍՆԵԼԻ ԿԻՐՔ ԵՏՈՒՆ ՆՄԱ ՈՐ Է ԿԵՐԱԿՐՈՑ ԵՒ ԸՄՊԵԼԵԱՑ ԱԽՏԱԲԱՐ ՂՈՍԻՄՆ, ՎԱ՛Յ Է ՆՈՑԱ**

Երանոսի հետեւողի առաքելոցն աշակերտ էր Յոհաննու աւետարանչի.

Անարգեն զՈրդին Աստուծոյ եւ զմարմնոյ փրկութիւն ուրանան եւ վերստին ծնունդ նորա անպատուեն որք ոչ ասեն զնա լինել ընդունակ անապականութեան. քանզի եկն Որդին Աստուծոյ եւ զգեցաւ մարմին անապական յանապական Կուսէն Մարիամայ:

Աթանասի եպիսկոպոսի.

Ադամ զանմեղ մարմինն ի դատապարտութիւն եւ յապականութիւն արկ, իսկ զՔրիստոս զսա անապական եւ խաւիանիչ մահու եցոյց:

Նորին.

Ջի եթէ զմեղս եբարձ, որ մայր է ապականութեան, զի՞արդ ասեն ապականութիւն ի նմա:

Պետրոսի Հռոմայ հայրապետի.

Որք համարձակին ասել զմարմինն Տեառն ապականացու ի միաւորութեանն, այնպիսիքն՝ նզովեալ եղիցին:

Անտիոքու երկրորդ ժողովոյն.

Որ ասէ ճշմարտի Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի թէ ի միաւորութենէն մինչեւ զՅարութիւնն ապականացու էր, անփառաւոր եւ անկատար, եւ յետ յարութեանն փառաւորեցաւ եւ կատարեցաւ, եւ ոչ խոստովանի թէ որպէս զկնի Յարութիւնն, նզովեալ եղիցի:

Գրիգորի Աստուածաբանի՝ ի գատուցեալ ճառէն.

Հրեշտակապետին ողջոյնն առ Կոյսն՝ ինքն ողջոյնն Բանն Աստուած է. զի մտեալ ի յունկն լուծաւ յարգանդի եւ անդէն եւ անդ զապականացաւ մանունս որ յետ անիծիցն եղեւ վաղվաղակի փոխարկեալ յանապականութիւն զի ուր է Աստուած է զի եւս յիշի ապականութիւն. քանզի ապականութիւն ի մեղաց է, եւ որ մեղս ոչ արար զիա՞րդ առ նա մաւտ էր ապականութիւն:

Նորին.

Փորոտին ծածկելաւքն տնաւրէնութեանն անճառութիւն ի հալումն հոգեւոր:

Ի հակառակելն Ապողինարի՝ ասէ Բարսեղ.

Ես զծնունդն, զսնունդն, զկերակրելն, զչարչարանսն Աստուծոյ ասեմ. եւ Աստուած հեռի է յապականութեանց:

Նորին՝ յետ սակաւուց.

Ոչ փոփոխելի էր Քրիստոս մի՛ լիցի զի մի՛ մեղանչումն ի ներքս մտցէ յանմեղանչելին. իսկ թէ ապականութիւն կամ փոփոխումն էր ի նմա, ապա հարկ է նախ մեղացն լինել, որ մայր է սոցա չար է քան զսատանայ եւ զՀրէայսն, որ այսպէս խորհի:

Նորին.

Ջոր աւրինակ մարմինն Քրիստոսի ոչ ետես զապականութիւն, նոյնպէս եւ ոչ միտք նորա իմացան զմեղս:

Յոհաննու Ոսկիբերանի՝ ճառէն որ Վասն թլփատութեանն

Տեառն եւ քառասնաւրեայ գալստեանն ի տաճարն .

Յորժամ լսիցես թէ թլփատեցաւ՝ մի՛ ապականելի իրս կարծիցես, զի թէպէտ եւ եղեւ իբրեւ զմեզ մարդ, այլ ըստ ճշմարիտ խառնմանն անդր կացեալ է քան զմեր ապականելի կիրս եւ զկարծիս մարդկան, աստուածագործ մարմնովն:

Նորին.

Եցոյց զնշանս բեւեռացն եւ զխոցումն տիգին անապական յետ Յարութեանն, զի յամաթ արասցէ զհերետիկոսքն, քանզի եւ յառաջ քան զՅարութիւնն անապական էր: Իսկ որ ապականացու ասէ զմարմինն, եղիցի նզովեալ յԱմենասուրբ Երրորդութենէն:

Նորին.

Անապական է մարմինն Տեառն եւ անեղծական. իսկ թէ՛ վասն կերակրոյ ասես զնա ապականացու, նա եւ յետ Յարութեանն ճաշակեաց:

Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի.

Եթէ ըստ բնութեան մերոյ ծնեալ էր Քրիստոս, յիրաւի ոք ասէր ի նա ապականութիւն. իսկ թէ ի վեր է քան զամուսնութիւն, ապա յիրաւի ի վեր է քան զապականութիւն:

Նորին.

Մեզ քաւ լիցի վասն կամաւոր չարչարանացն եւ մահուն զոր կրեաց Քրիստոս՝ ապականութիւն ասել ի նմայ:

Կիրողի Աղեքսանդրու հայրապետի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն

Արդ՝ յամենայն զազրութեանց ի սուրբ էր մարմինն Քրիստոսի:

Հարցումն առ Կիրեղ.

Ապականութի՞ւն կրեաց Քրիստոս, թէ կիրս ապականութեան:

Պատասխանէ Կիրեղ.

Ոչ ապականութիւն եւ ոչ կիրս ապականութեան. զի թէպէտ եւ քաղցեաւ, որ է կիրք է ապականութեան, այլ ոչ ասի կիրք ապականութեան: Վկայէ ավետարանիչն. Յիսուս յետ քառասուն ատուրն, ասէ, ապա քաղցեաւ Մովսէսք եւ Եղիայ, պահեցին, բայց քաղցնուին իսկ Տէրն մեր ոչ քաղցեաւ՝ մինչեւ կամեցաւ: Ապա ուրեմն ոչ ասի Քրիստոսի կիրքն ապականութեան:

Նորին՝ Ղեւտականէն.

Ըստ նմանութեան մարմնոյ մեղաց, եւ ոչ ըստ նմին մեղաց. զի թէպէտ եւ առ զմեղաւք լցեալ մարմինս մեր, բայց ինքեան հաւասարեաց եւ զատեաց ի մեղաց եւ յապականութենէ, զի վճարեալ էր յայն զագրացեալ յարտաշնչութենէն, որ տանի զմեզ յոչ պատշաճսն:

Ապողինարի՝ յՂեւտականէն.

Մաքրութիւն որպէս բնաւորեալ է. աղտ ի կերակրոյ լինի եւ այն ի Քրիստոս ոչ եղեւ, եւ ի մէնջ՝ յաղագս շնորհին ի բաց բառնայ:

Եպիփանու Կիպրոսի եպիսկոպոսի.

Սրբողն Աստուած Բանն զգեցաւ մարմին անապական, յանապական Կուսէն Մարիամայ, եւ ընդ առնուլն՝ զործեաց զնոսա անապական:

Նորին

Քանզի առեալ զմահկանացու մարմինս մեր եւ զեղծանելի՝ միացոյց ընդ Աստուածութեանն եւ եցոյց անապական:

Եփրեմի ծառայի Աստուծոյ.

Աւտար է յապականութեանց ծնեալն զոր Կոյսն ծնաւ, քանզի անապականութեան միշտ փափագեաց եւ եղեւ մայր անապականութեան:

Փիլաքսոնի եպիսկոպոսի Աբոկ քաղաքի.

Մարմնացաւ ի սրբոյ Կուսէն Բանն Աստուած անփոփոխելի եւ առ ի նմանէ մարմին անապական եւ հոգի առանց մեղաց:

Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի.

Յետ յարութեանն հաղորդեցաւ կերակրոյ յանկարաւտ արքայութեանն, զի ծանիցես թէ եւ նախ քան զխաչն անկարաւտ էր եւ անապական. թէպէտ եւ կերակրեցաւ:

Ի հաւատոյ թղթէն, զոր գրեցին միաբան առ Թէոդոս թագաւորն

Այլ թէպէտ եւ կաթնասուն եղեւ եւ կրեաց զտրտմութիւն աշխատութեան, այլ ոչ ըստ այնմ ապականացու, զի նա եւ յանմարմնութեանն իբրեւ զմարդ կերակրիւր առ Աբրահամ եւ յետ յարութեան եկեր խորիսխ մեղու եւ ձկան խորովելոյ մասն, այլ ոչ եթէ վասն կերակրոյն ապականացո



դաւանեմք զնա, զի թէ վասն կերակրոյն ապականացու էր, ապա նախ քան զմամնանալն ապականացաւ էր, նոյնպէս եւ յետ յարութեանն, քաւ լիցի զայս խորհել. եւ թէ ըստ խոցմանն ապականացու է, ապա եւ ի միւսանգամ Քալստեանն, զի գրեալ է. Հայեսցին յոր խոցեցին:

Ի հաւատոյ թղթն Միսայէլի եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի հարցմանց Քաղկեդոնականացն.

Արդ՝ կարէ՞ք ասել կամ իշխէ՞ք հաստատել, թէ մարմինն Քրիստոսի ամենայնիւ որպէս մերս է, զի ծնաւ եւ կերակրեցաւ, զոր քաւ լիցի զայս ածել զմտաւ զի այս Աբիւռնացոյն է հերձուածս եւ Հրէիցն, որք ի Յուսէփայ կարծէին զնա ծնեալ, եւ թէ տարակուսիք ընդ անապական մարմին Բանին Աստուծոյ, նախ տարակուսեցէք ընդ կուսութեամբ յղութիւնն, զի ասէ՝ Ջայր ոչ գիտեմ, եւ ընդ անապական եւ անախտ ծնունդն. եւ թէ վասն կերակրոյն ասէք զնա ապականացու, ապա եւ յետ Յարութեան եկեր առաջի աշակերտաց իւրոց առ ի հաստատութիւն Յարութեան իւրոյ: Բանն Աստուած որ զնախաստեղծին մարմինն յերկրէ ստեղծ անապական յարգանդի Կուսին, զիա՞րդ ոչ կարէր ստեղծանել զիւր մարմինն անապական, եւ որ զԻսրայէլ յանապատն պահեաց անապական ի ծայրսն եւ ի զգեստսն, եւ ի հնոցին զմանկանցն զմարմինսն, եւ զհանդերձսն, եւ զԵփեսոսի մանկանցն որ յարեան, եւ զիւր մարմինն ոչ կարէր ամենայնիւ պահել անապական:

Անանիայի Հայոց վարդապետի.

Արդ՝ ոք ոչ խոստովանի զմարմինն Տեառն յետ միանալոյն անբաժանելի, անմահ եւ անապական, եւ չարչարելեաւն անչարչարելի, եւ մահուամբն անմահ, որում ամենայն ինչ կարելի է, որ այսպէս ոչ խոստովանի՝ նզովեալ եղիցի յԱմենասուրբ Երրորդութենէն:

Ի հաւատոյ թղթն Ներսիսի վերջնոյ Հայոց կաթողիկոսի, որ առ Մանիլ թագաւորն.

Ահա թէ ոք վասն ակամայ եւ անգոսնելի կրից ապականացու ասէ զնա, այսինքն՝ կերակրոց եւ ընպելեաց ախտաբար հոսմանց, այսմ ոչ հաղորդիմք, քանզի ապականութիւն մեղա՛ց է ծնունդ, եւ որ մեղս ոչ արար, ոչ տիրեաց նմա այսպիսի ապականութիւն: Վկայի ի Գիրս, թէ զկիրս [ոչ] ակամայ, այլ կամաւորաբար կրեաց, եւ այս կիրք ապականութեան ոչ կամաւ, այլ ակամայ եւ բռնութեամբ ներգործի ի մեզ, եւ որ զայս ասէ՝ յայտ առնէ թէ ոչ կիրքն նմա՛, այլ ինքն կրի՛ցն ծառայէր, եւ թէ այսպիսի ապականելի կրից ի ներքոյ անկեալ էր, ապա յայտ է թէ եւ մեղա՛ց, որ հայրն է ապականութեան. զոր մի՛ լիցի իմանալ կամ ասել ուղիղ հաւատացելոց: Իսկ թէ վասն հաստատութեան մարդանալոյն ասէ ոք զայս առ նա լինել, բաւական են յայտնի կիրքն որ գրեցան,

որք են անանգոսնելիք՝ քաղցն եւ ծարաւն, արտասուքն եւ վաստակելն, թէ ճշմարտապէս մարդ եղեւ եւ անգրելոցն եւ վատթարագունիցն ոչ կարաւտանալ ուղիղ խոստովանողացն զնա Աստուած ճշմարիտ:

Նորին՝ յերկրորդ թղթէն

Բնութիւնն Ադամայ մեղանչականն միացաւ ընդ Աստուածն Բանի եւ եղեւ անմեղ եւ անապական արտաքոյ անգոսնելի կրից, որպէս հրահալելին ի հուր մերձեալ ժանգ ապականութեան թէ ի իցե ի նմա՝ ծախեսցի. զի որոյ սկիզբն անապական ի կուսէ առանց սերման, եւ ի գերեզմանի մարմին նորա ոչ ետես զապականութիւն, հարկ եղեւ ի ծննդենէն մինչ ի մահն լինել անապական:

## **ԳԼՈՒԽ Թ.**

### **ԱՅԼ ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՄԵԿԵԶԱՑՆ**

Վասն աւուրն այնորիկ ոչ ոք գիտէ, ո՛չ Որդի, բայց միայն Հայր , եւ թէ ու՞ր եղիք գ՛րազար.

Այս որ քեզ անգէտ թուի, ասէ «Ջամենայն գոր ինչ ունի. Հայր՝ ի՛մ է » եւ «Ես եւ Հայր իմ մի եմք» եւ «Որ ետես զիս՝ ետես զՀայր »:

Տէր մեր Յիսուս Քրիստոս միշտ զաւգուտս լսողացն խաւսէր եւ ոչ տայր թոյլ յանաւգուտն ձեռնարկել ոք. վասն այնորիկ ոչ ասաց Տէրն մարդոյ զաւուրն եւ զկատարած աշխարհի, զի մի՛ ծուլացին. վասն այսորիկ փակէ ընդդէմ նոցա եւ առ Հայր ձգէ զբանն, զի այլ մի՛ նեղեսցի ի նոցանէ, զի չէր նոցա շահ անտի: Հարցին զսոյն բան եւ յետ յարութեան, թէ ի ժամանակի՞ աստ հասուցանելոց իցես

զարքայութիւնն Իսրայէլի, եւ ն[ա] ասէ. Ոչ է ձեզ գիտել զժամանակս զոր Հայր եղ յիւրում իշխանութեան : Նոյնպէս եւ Պաւղոս յորժամ ոչ համարեցաւ պատշաճ լսել մարդոյ զբանն յանճառութիւն փակեաց զնա: Արդ՝ գիտէ Որդի զաւրն որպէս Հայր, եւ ում կամի յայտնէ զնա: Մարդ կրկնայարկս եւ վերանայարկս շինէ եւ զորպէսն ոչ մոռանայ: Եւ որ տումարի հմուտ է՝ ի հարցանելն ասէ զամիսն եւ զաւրն եւ զժամանակն: Իսկ Տէրն եւ Աստուածն զոր արար՝ ոչ գիտէ, եւ կամ զոր զնահն յառաջն ասաց եւ զոր յարուցանէրն ի գերեզմանէն ոչ գիտէր. քաւ լիցի մեզ ածել զմտաւ: Իսկ յառաջագոյն ընդէ՞ր ճառեաց վասն աւերելոյ տաճարին եւ տիրելոյ զազանին վախճանի աշխարհի եւ իւրոյ զալստեանն եւ նստելոյ յաթոռ փառաց: Եւ, ո՞վ դու որդի մարդոյ, հայեաց ի քեզ եւ յորժամ դու քեզ անհաս մնաս, զբարձրն քան զքեզ մի՛ քններ, եւ մի՛ հալածեսցէ քնութիւն զմիտս քո, զի չար է հալածանք քննողաց քան զհալածանս չար թագաւորացն:

Ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հաւրէ իմմէ .

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասաց առ որդիսն Ջեբդեայ թէ իցեն որ ընթացան կամ ընթանան վաստակաւք առաւել քան զձեզ ի միտս Հաւր նկարեալ է նա վասն գործոց իւրոց, եւ նա փառաւորեսցէ զնա առաւել քան զձեզ: Եւ դարձեալ զի ես արդարադատ եմ եւ խնդիրդ անիրաւ է, զի առանց աշխատութեան կամիք առնուլ զնա. վասն որոյ Տէրն մեր եղ պսակ ի միջի անդ զխնդիրս նոցա եւ ասաց թէ որ առաքինանայ ի պատերազմի նորա, պսակեսցի նովաւ:

Հայր իմ մեծ է քան զիս.

Յարութեան նորա ոչ էին տեղեակք առաքեալք նորա, եւ զպատշաճ կարծիս ոչ ունէին վասն նորա եւ զՀայր մեծ համարէին քան զնա: Ասէ Յիսուս ի կարծիս նոցա. Հայր իմ մեծ է քան զիս. լուայք զի առ մեծագոյնն երթամ, պարտ է ձեզ ուրախանալ եւ ո՛չ տրտմել: Որպէս այն զոր ասաց ի կարծիս լսողացն համարիք թէ ոչ կարեմ աղաչել զՀայր առաքել երկոտասան գունդս հրեշտակաց, եւ ինքն յետս եհար զնոսա եզարկ զգետնի:

Հայր, եթե հնար է՝ անցցէ բաժակս

Որով եկն յոչէից եղեալքս ի լինելութիւն, ոչ հրաժարէր ի բաժակէն. որ ի մարմին միացաւ եւ ի կնոջէ ծնաւ վասն աշխարհի պատարագել, նա եւ սաստեաց Պետրոսի, թէ զԱստուծոյսն ո՛չ խորհիսք դու: Արդ՝ որ վասն սորին եկն՝ խնդրէր ազատիլ ի սմանէ. քաւ լիցի, այլ զի ցուցցէ թէ կամաւ Հաւր է մահ նորա որ վասն աշխարհի, քանզի Հայր մատնեաց զնա առ մեղս մեր: Եւ դարձեալ զի համարձակեսցի մահ կլանել զնա մահկանացու բնութեամբ որ կեանք էր զի պատարեսցէ զորովայն նորա:

Եւ դարձեալ զի ծանրացաւ արիւն նորա ի վերայ մեր, որ հեղավ ի վերայ խաչին, զի մի՛ պարծեսցուք թէ առանց ցաւոց փրկեաց զմեզ: Եւ դարձեալ զի գիտացես, որ կամաւ եւ ոչ ակամայ թոյլ ետ մարմնոյ իւրոյ կրել զկիրս առանց մեղաց, զի մի՛ կարծեալք թուեսցի ի մարդեղութեան նորա, այլ ճշմարիտ. սորին վասն եւ զարհուրի, հոգայ եւ տրտմի, քրտնի եւ աղաւթէ անցանել բաժակին:

Ոչ իմ կամքս , այլ քոյդ.

Այսինքն թէ ոչ է որոշեալ կամք իմ ի կամաց քոց, Հայր սուրբ, այլ որպէս բնութեամբ մի եմք, եւ ամենայն որ ինչ քո է՝ իմ է, նոյնպէս եւ մի է իմ եւ քո կամք, եւ ես եկի առնել զկամս քո:

Եւ դարձեալ զի մի՛ Որդոյ միայն շնորհս կալցուք, այլ եւ Հաւր որ առաքեաց զնա եւ բժշկեաց զմեզ:

Եւ դարձեալ զի Ադամ խափանեաց զկամս Արարչին իւրոյ, իսկ Արարիչ նորա խոնարհեալ կամաւ մարդացաւ, եւ խափանեաց զկամս մարմնոյ:

Աստուած իմ, Աստուած իմ , ընդէ՞ր թողեր զիս.

Ոչ եթէ ինքն թողաւ յԱստուծոյ Հաւրէ կամ յիւրմէ Աստուածութենէն, եւ վասն այնորիկ զարհուրեալ ի չարչարանացն զայս, այլ իբրեւ գլուխ փոխանակ մարմնոյ իւրոյ կարդայ առ Հայր: Քանզի մեք թողեալ էաք յԱստուծոյ անբաւ հեռագնացութեամբ, իսկ նա գլուխ մեր, եւ մեք անդամք նորա, միջնորդէ առ Հայր հաշտել ընդ մեզ իւր սուրբ եւ աստուածախառն պատարագաւն որ վասն մեր զենաւ ի խաչին, եւ բերանով Ադամայ եւ ի դիմաց բնութեանս աղաւթէ առ Հայր որ այնչափ ժամանակս անտես արար զազգս մարդկան:

Եւ դարձեալ զի վկայեսցէ մարգարէից իւրոց եւ կատարեսցէ զբան նոցա եւ ցուցցէ թէ ճշմարիտ մարդ եղեւ եւ ես անմեղս ի մահ եկի վասն առաջին մարդոյն:

Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղաւթէր առ այն, որ կարող էր փրկել զնա

Մերովս վասն մեր առ Հայր գոչէր, եւ նա ընկալաւ զմեզ եւ լսելի եղեւ. առ լաւութեանն վասն մեր մեռանել խնդրէր նա: Եւ զի կամք Հաւր էր՝ մահ նորա աղաչէ ոչ զի ապրեսցի ի մահուանէ, զի յայն իսկ եկեալ էր նա, եւ լսելի եղեւ առ լաւութեան, այն զի դարձան խաչահանունքն եւ եղեն քարոզք նորա: Արդ՝ կարծիս տայ, թէ Հաւր կարաւտ է նա. բայց ի յարութեան իւրում Հաւր բնաւ ոչ կարաւտացաւ նա, այլ անձամբ իւրով եղ զանձն իւր եւ նոյն ինքն Բանն Աստուած որ միացեալ էր ի մարմինն անբաժանելի առ ընկալաւ զնա:

Եւ արդ, հաւաքեցաք յոլով վկայութիւնս յամենայն յազգաց լուսաւորչացն բանից, որք հաւատոյ սիւնք էին, որպէս եւ ի սկզբան գրոյս ասացաք: Ղարծեալ ե՛կ, ով սիրելի, եւ որպէս նախ խոստացաք հաւաքեսցուք բազում վկայութիւնս եւ ի մերոց Հայաստանեաց աստուածաբնակ հայրապետացն եւ ի սրբազան հոգիընկալ վարդապետացն բանից, որք մաքրափայլ եւ գերիմաստ բանիւ արեգակնանման ջահաբորբոք լուսով հաւատոյ ուղիղ դաւանութեամբ շարագրեցին ճառս բազումս ի մարդէղութիւն Բանին Աստուծոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց: Եւ արդ սկիզբն արասցուք կամաւք Տեառն ուստի արժան է սկսանել՝ ի հաւրէն եւ ի Լուսաւորչէն մերմէ սրբոյն Գրիգորի աստուածագգեցէ:

Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի վկայութիւն.

Խոնարհեցաւ եւ խառնեցաւ Աստուածութիւնն ընդ մարդկութիւնս, եւ անմեռն՝ ընդ մեռելոսս:

Նորին.

Սկիզբն առնու անսկզբնականն, եւ զմարմինն մարդկային խառնեաց յԱստուածութիւնն իւր:

Նորին.

Փառք ամենատեառնն, որ վասն մեր մարդացաւ եւ միացաւ ի մարմնի բնութեամբ:

Նորին

Զմահկանացու մարմինս մեր խառնեաց յանապականութիւն Աստուածութեան իւրոյ:

Նորին.

Աստուածորդին խոնարհեցաւ յանարգութիւն մահու խաչի եւ թաղման:

Նորին Եւ դարձեալ թէ

Աստուծորդին մեռաւ, զի մեռեալս կեցուցէ:

Նորին.

Կորոյս զչարն եւ պարտաւորեաց զմեղս աստուածախառն մարմնովն:

Նորին՞

Խառնեաց միացոյց զմարմինն յԱստուածութեան իւրում:

Նորին եւ դարձեալ թէ .

Խառնեցեր զմարդկութիւն մեր յԱստուածութիւն քո:

Նորին.

Մարմնովն, զոր խառնեաց միացոյց յԱստուածութեանն, նմին մարմնով տացէ գյաղթութիւն:

Ի հաւատոյ թղթէն Սահակայ եւ Մաշտոցի, զոր գրեցին առ

Պրոկղ հայրապետ.

Կամաւք կամակարութեամբ եւ ոչ ակամայ կամաւք զանձն իւր Միածինն եղ եւ ինքն զինքն մատնեաց եւ ինքն զինքն ընկալաւ եւ զսուրբ մարմինն իւր ետ պաշար կենաց:

Նորին ի հաւատոյ բանէն

Ոչ լոկ մարդ իմանամք զՔրիստոս, որ ծնաւ ի Մարիամայ ըստ մարդադաւանիցն եւ կամ քնար բանին Աստուծոյ, այլ զԱստուած յԱստուծոյ խոստովանիմք, կատարեալ անդամաւք մարդացեալ յարգանդէ Կուսին, հոգով եւ մտաւք միացեալ ընդ մարմինն առանց յեղաշրջելոյ:

Նորին՝ յետ սակաւուց.

Բանն Աստուած Որդի մարդոյ կոչի վասն անքակ միաւորութեանն ըստ այնմ՝ « Ոչ ոք ել յերկինս թէ ոչ որ էջն յերկնից Որդին Մարդոյ»:

Նորին

Թէպէտ եւ յերկուց է միաւորութիւնն, այլ անքակտելի է Աստուածութիւնն եւ մարդկութիւնն մինչեւ ցխաչն եւ յաւիտեանս յաւիտենից:

Նորին.

Անմահ եւ մահկանացու առանց չարչարանաց, եւ չարչարելի զնոյն զմինն աներեւոյթ եւ երեւելի է իմանալ. Տէր եւ Որդի, Աստուած եւ մարդ:

Նորին.

Թէպէտ եւ չարչարեցաւ իբրեւ զմարդ Յիսուս, այլ նոյն ինքն իբրեւ զԱստուած բժշկեաց զպէսպէս հիւանդութիւնս մարդկան:

Ի հաւատոյ ճառէն Ղաւթի Հայոց փիլիսոփայի.

Բանն Աստուած կատարեալ մարմնացեալ կատարեալ մի անձն Աստուծոյ միջնորդ եւ մարդկան. խոստովանիմ մի անձն որպէս կոչումնդ ի վերայ ընդ մեզ Աստուած կարդացեալ, եւ զայն զմին Որդին Աստուծոյ եւ Որդի Մարդոյ, միով բնութեամբ Որդի Աստուծոյ, եւ Աստուած Որդի Մարդոյ, եւ մարդ միով երեսաւք առանձնապէս մի, այլ Որդի Աստուծոյ եւ մարդ եւ Որդի Մարդոյ եւ Աստուած մարդ եւ ընդ Բանին ըստ Բանին Որդի անդրանիկ Աստուծոյ, Աստուած Բան եւ ընդ մարմնոյն Որդի Մարդոյ:

Ի հաւատոյ ճառէն Մոլվիսէսի Հայոց քերթողահարն.

Մարդկայինն եւ աստուածային բնութիւնք, եւ որ յերկրէս եւ որ յերկնից եկեալ սակս յերկնայնումն ծածկելովն եւ ընկղմելովն. վասն զի առ Աստուածն Բան միաւորեցաւ, եւ նորին փառաց եւ բնութեան գտաւ հաղորդ, եւ առ նորին յարմարեցաւ շարժութիւն կամաց: Քանզի յաղթէ զաւրաւորն տկարագունին ընդ ինքեան զնա խառնելովն եւ միացուցանելովն միով բնութեամբ անշփոթ եւ անբաժանաբար ի վեր քան զմիտս եւ զբանս. եւ յետ անձառ միութեանն ոչ իշխեցից երկու բնութիւն ասել, այլ մի Որդի, մի նորա դէմ եւ մի բնութիւն, մի զաւրութիւն, մի կենդանութիւն:

Նորին՝ յետ սակաւուց.

Արդ՝ մեռանի ըստ մարմնոյ կենդանին յաւիտենական, զի իւր ինքեան էր մարդկայինն ըստ որում անքակ Բանն էր միացեալ ըստ նմին բանիւ. եւ անշնչացեալ մարմինն ի խաչին կենդանի էր Աստուածութեանն միաւորութեամբ, եւ մերկացեալ մարմնոյն շունչն իբր ոչ մերկացեալ Աստուածութեամբն, որ եւ ընդ նմա եւ ընդ մարմինն միացեալ էր ի գերեզմանին եւ ի դժոխս:

Ի մեծափառ Հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վարդապետի.

Հաւր հաւասար եւ Սուրբ Հոգոյն խորհրդակից Որդին ի կուսական յամենասուրբ յարգանդին զմաքրագործ ակն զայն ներգործեաց զմիաւորութիւն լոյս անպատումն եւ անմատոյց ի լուսաթաղանթ ի միջոյ Սուրբ Կուսին զմերս վերաշարժեալ շարախառնեաց զմարմին ընդ իւրում պարզական եւ անպարունակ բնութեանն միացեալ անորիշ եւ անշփոթ միութեամբ, եւ ընդ միանալ Բանին ընդ մարմնոյն բարձան ի նմանէ ամենայն կարիք եւ կիրք մարդկային բնութեանս եւ եղեւ, որ ինչ առողին էր բնութիւն:

Նորին՝ յետ սակաւուց.

Եւ խառնումն որպէս հուր ընդ ոսկի եւ ընդ երկաթոյ որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկեսցէ բնութիւն եւ հաւասարէ իւրում լուսոյն եւ կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ աւդ խառնեալ, եւ կամ որպէս հոգի եւ մարմին զի միաւորեալ են անշփոթ, եւ մի կոչի բնութիւն մարդոյս. այսպէս եւ Բանն Աստուած միաւորեալ ի վեր քան զմիտս եւ անշփոթ մնացեալ:

Նորին.

Աստուած Բանն տիրէ ի վերայ կրից մարմնոյն, եւ ոչ գունակ մեզ ի հարկէ կիրք տիրեն նմա, այլ յորժամ թոյլ տայր. եւ իւր միացեալ մարմնովն կրեաց զչարչարանսն, եւ Բանին կոչին կիրքն խոնարհականքն եւ բարձրագոյնքն, վասն զի ի'ւր էր մարմինն:

Նորին.

Արդ, կիրք բաժանականք եւ երեք ասին ի Քրիստոս՝ հոգոյն եւ մարմնոյն եւ Աստուածութեանն. եւ կիրք հոգոյն՝ երկնչելն, հոգալն եւ տրտմելն. եւ կիրք մարմնոյն՝ վաստակելն, քաղցնուլն եւ ծարաւելն եւ քիրտն. եւ կիր աստուածութեան՝ սաստելն ծովուն եւ հողմոյն, զցաւս բազումս բժշկել եւ զմեռեալս յարուցանել:

Ո՛վ դու հանճարեղ եւ իմաստուն բաժանող, թէ ի միութիւն Քրիստոսի բաժանումն բնութեանցն խորհիս, ապա հարկ է ըստ երից որոշել կրիցն, եւ երիս ասել բնութիւն, քանզի թիւ կրիցն զթիւ բնութեանցն ցուցանեն. բայց անտեղի է երից ասել բնութիւնս ըստ կրիցն որոշմանց, իսկ որ երկուս բաժանէ բնութիւնս: Արդ՝ զոր կամի ի բաց բառնալ ի բնութեանցն, թէ զմարմինն բառնայ՝ Եւտիքի հաւասարի, որ առ աչաւք ասէր զմարմին Քրիստոսի. թէ զհոգին ի բաց բառնայ՝ Ապողինարի հաւասարի, որ ասէր թէ զմարդկային հոգի ոչ էառ Քրիստոս. իսկ թէ զԱստուածութիւնն բառնայ՝ Հրէիցն նմանի, որք ասէին առ Քրիստոս թէ Ռու մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես:

Նորին.

Արդ, որպէս երիս անծինս որիշս իմանամք զԵրրորդութիւնն, բայց երիս աստուածս եւ երիս բնութիւնս ոչ ասենք, այլ մի՛, այսպէս եւ կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ իմանամք զՔրիստոս. իսկ երկուս անծինս եւ երկուս բնութիւնս անհնար է ասել, այլ մի անձն եւ մի բնութիւն:

Գրիգորի Նարեկացոյ Հայոց վարդապետի.

Իսկակիցն Հաւր աննուազ գոլով ընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի Աստուածածին Կուսին մաքրութեան յորում աճեցոյց զբոյսն աւրինութեան ի լուսասահման անդատաստանին անարատութեան ընդ ամենակատարն էութեան համասնեալ յանշրպետ միականութեան թափանց անցական խառնութեամբ յԱստուածութեանն ոգի բաղկացոյց զգոյութիւն շնչոյս հրաշապէս:

Նորին՝ յետք սակաւուց.

Անկարաւտ ի դիմաց ծնողին իւրոյ մտանէ ի սենեակ Կուսին արգանդի պարզաբար եւ ելեալ անտի յաւաւորաբար մարմին էապէս անորոշելի անթերի մարդկութեամբն եւ անպակաս Աստուածութեամբն:



Նորին.

Մի Որդի Հաւրն միայնոյ եւ Միածին, անդրանիկ Աստուածամայր Տիրածին Կուսին Արարիչն յեղականունն մարդ ելով սկզբնածինն:

Պետրոսի Հայոց քերթողի.

Քանզի Աստուած է եւ որպէս կամի՝ առնէ, թէպէտ եւ խոնարհի ի բաժակ մահու՝ անմահ էր. թէպէտ եւ չարչարի՝ այլ լուծիչ է չարչարանացն:

Նորին՝ յետ սակաւուց.

Արդ, այս ամենայն աստուածախառն գործ է, եւ ոչ մարդոյ լոկոյ. զի ծնաւ ի Կուսէ Աստուած թանձրացեալ բնութեամբ մարդոյ խառնեալ ընդ Աստուծոյ անքակտելի խառնունն:

Պաւղոսի Հայոց վարդապետի.

Արդ, ի նմա մերս, այլ ըստ նմա, եւ ոչ ըստ մտաց իմացեալ Բանն մարմնացեալ, եւ մնացեալ նոյնպէս մարմինն աստուածացեալ, եւ ոչ փոփոխեալ, բայց ոչ երկուց բնութեանց կամ երկուց դիմաց վարեցին հետք:

Նորին.

Ո՛վ դու երկաբնակ, ոչ ոք կարէ բաժանել զբանն ի գրոյն եւ ոչ զՔրիստոս յերկուս բնութիւնս: Արդ՝ զատո՛ զխաւարն ի լուսոյն, որ յԵգիպտոս կամ զարիւնն ի ջրոյն: Ահա մեծասքանչ հրաշք. նոյն խաւար՝ Իսրայէլի լոյս [եւ] Եգիպտացոց խաւար, եւ նոյն ջուր՝ Իսրայէլի ջուր եւ նոցա արիւն: Արդ՝ զսոսա իմացիր եւ բաժանեայ ի միմեանց, եւ ապա սկիզբն արա քննել եւ զատուցանել յերկուս զմի բնութիւնն Քրիստոսի:

Նորին.

Թէ Աստուած խոստովանիս զմարմինն, այլազգ չէ հնար, բայց թէ մի՛ յԵրրորդութենէն ասես զի մի չորրորդութիւն լինիցի եւ եթէ մի յԵրրորդութենէն, ապա մարմինն Բան է եւ Բանն մարմին. եւ թէ երկուք են եւ մարմինն Աստուած է, ապա չորք եղեն աստուածք, իսկ հարկ է զմինն ի բաց բառնալ:

Նորին.

Արիստոտէլ եւ Եռիպիդէս եւ այլք բազումք յարտաքնոցն տասն եւ մի բնութիւն ասացին զմարդն, եւ պարզ աստուածութիւնն՝ մի, որ լինի երկուտասան բնութիւն Քրիստոսի, ըստ խորհրդոյ երկաբնակացն: Արդ՝ ինքեանք գիտեն, որչափ եւ կամին բաժանեցեն: Իսկ Պաւղոս մի Տէր Յիսուս

Քրիստոս քարոզէ. ի Նիկիա՝ Հաւատամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս, ասացին եւ ոչ երկուս. Կոստանդնուպոլսին եւ Եփեսոսին՝ նզովեցին զասացողսն երկուս բնութիւնս:

Ի թղթոյ հաւատոյ Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի.

Ի վերջին ժամանակս Աստուածորդին կամաւք Հաւր եւ Սուրբ Հոգոյն վասն մերոյ փրկութեան ծնաւ աստուածավայելչաբար ի սրբոյ Կուսէն, ի վերայ երկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ միաւորութեամբ տնաւրէնութեանն, քաղցեաւ եւ ծարաւեցաւ ոչ սոսկ մարդոյն բնութեամբ տնաւրէնութեանն աստուածավայելչաբար:

Խոստովանութիւն Մանազկերտաւ] ժողովոյն.

Որ ոչ խոստովանի զմարմնացեալ Բանն Աստուած մի բնութիւն յետ անձառ միաւորութեանն որ յԱստուածութենէն եւ ի մարդկութենէն անշփոթ եւ անքակ միութիւն, նզովեալ եղիցի:

Ի գրոց, որ Կրաւնաւոր կոչի, ընդդէմ Նեստորի.

Աստուած մարդացեալ ասեմ, խառնեալ եւ մի լեալ ասեմ, ա՛ռ մարմին եւ անքակտելի միացոյց: Հայր ձայնէ. Ղա է Որդի իմ սիրելի զոր տեսանէք: ՅԱստուած թքին Հրէայքն, զԱստուած սպանին, եւ Աստուած էր որ եղաւ ի գերեզմանին:

Ի հաւատոյ թղթէն Մաթուսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց հրամանաւ Եզրի Հայոց կաթողիկոսի եւ այլ եպիսկոպոսացն առ Հերակլ արքայն Յունաց.

Քանզի որ ոչ խոստովանի Աստուած խաչեալ՝ ո՛չ խոստովանի Աստուած ի Կուսէ ծնեալ, ըստ Նեստորի . քանզի ո՛չ՝ ա՛յլ ոմն Յիսուս Քրիստոս եւ ա՛յլ ոմն Աստուած Բանն, այլ մի եւ նոյն Աստուած ծնիցեալ ի Կուսէն, նո՛յն անչարչարելի եւ նո՛յն չարչարելի իւրով մարմնովն, նոյն անմահ եւ նո՛յն մեռեալ:

Նոցին՝ յետ սակաւուց.

Որպէս աղքատացաւ մեծատունն վասն մեր, ասացեն մեզ որք բաժանեն զմարդն յԱստուծոյ Բանէն, եւ զմիացեալսն որոշեն որոշութեամբ բնութեանցն, եւ երկուս ոմանս ասեն զՔրիստոս, քանզի Բանն ի Հաւրէ ծնեալ յառաջ քան զյաւիտեանս մարդ եղել ըստ Յոհանու եւ բնակեաց ի մեզ, ի խանձարուրս պատեցաւ, ի մսուր եղաւ, ի գիրկս Մաւր գգուեցաւ, կաթն արատացաւ անապական, խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յարեաւ անապական որպէս յառաջն էր:

Ի հաւատոյ թղթն Սամուէլի Հայոց կաթողիկոսի, զոր գրեաց պատասխանի Թէոդորոսի Մելիտենոյ պատրիարգի.

Արդ, թէպէտ եւ հարքն առաջինք յիշեցին միայն հետս բնութեան վասն հաստատելոյ զտնաւրէնութիւնն թէ ճշմարտապէս մարդ եղեւ, եւ ոչ կարծեալք, եւ մարմնով իւրով կրեաց զամենայնրն վասն մեր, այլ ոչ ուրեք սահման հաւատոյ բնութիւնսն հաստատեցին:

Նորին՝ յետ սակաւուց.

Քանզի որպէս լոյս ճրագի ի լոյս արեգական միացեալ ոչ կարէ գործել զիւր ճառագայթցն զաւրութիւն, այսպէս մարդկային էութիւնն ընդ աստուածային խառնեալ եւ միացեալ անիբաց բառնալի ոչինչ առանձնապէս զիւրն ներգործէ զաւրութիւն, քանզի յամենայնի յաղթ զաւրաւորն տկարագունին:

Ի հաւատոյ թղթն Սամուէլի Հայոց վարդապետի, զոր գրեաց ընդդէմ երկաբնակացն ի խնդրոյ իշխանին, որ մականունն Ոսկեծեռն կոչիւր.

Ո՛վ վսեմականդ, հա՛րց ընդ երկաբնակսն, թէ ո՞ր բնութեանցն մեռաւ վասն մեր, Աստուծո՞յն, թէ մարդոյն: Իսկ թէ ասեն՝ Աստուծոյ բնութիւնն մեռաւ, ասա ցնոսա. Ո՞րպէս հնար է Աստուծոյ մեռանել. զի թէ զԱստուծոյ բնութիւնն մեռեալ ասէք՝ գտանիք աստուածաչարչար եւ աստուածասպանք, եւ լինիք հաղորդ Սոփոնացոց եւ Պանտուրացոց, որք յեյեղեալ ասացին զաստուածային բնութիւնն յոսկր եւ ի մարմին շրջեալ եւ բեւեռիլ եւ խոցիլ եւ մեռանիլ: Ապա թէ ասիցեն՝ Մարդոյն բնութիւնն մեռաւ, ասա ցնոսա, թէ Մարդոյ արեամբ փրկեցայք, եւ ոչ Աստուծոյ, եւ այն հանդիպեցաւ ձեզ, զոր ասէ մարգարէն, թէ Սուտ է փրկութիւն մարդոյ: Եւ դարծեալ հարց ցնոսա, թէ Մոզքն Աստուծոյ բնութեա՞նն երկիր պագին, թէ մարդոյն, եւ թէ ասեն՝ Աստուծոյ բնութեանն երկիր պագին, ասա ցնոսա. Կարող էին առնել զայդ եւ յաշխարհն իւրեանց. եւ թէ ասեն՝ Մարդոյն բնութեանն երկրպագին, ասա ցնոսա, թէ այդ կարի անտեղի է յայնքան հեռաւոր յաշխարհէ մեծաւ տառապանաւք վասն մարդոյ աշխատեալ եւ գալ:

Նորին՝ յետ սակաւուց.

Դարծեալ հարցից ցքեզ, երկաբնակ, որ սահմանես ի Քրիստոս երկու բնութիւն: Արդ՝ ասա ինձ. Երկրքեա՞նն երկրպագելիք են, թէ ոչ. թէ երկուց բնութեանցն երկրպագանես՝ հանդիպի քեզ Երրորդութիւնն՝ լինել չորրորդութիւն. իսկ թէ յատուկ մի բնութեանն երկրպագես՝ մինն արհամարհեալ լինի ի քէն, քանզի բնութիւնքն զոր խոստովանեցար ի Քրիստոս զմիւսն

արհամարհեցեր եւ զմիւսն պատուեցեր: Ղարծեալ հարցանեն ցքեզ, որ երկու բնութիւն ասես: Ասա ինձ. Յո՞ր բնութիւն մկրտիս, յաստուածայի՞նն, թէ ի մարդկայինն: Թէ աստուածային բնութիւնն ասես մկրտիլ՝ կայ քեզ հակառակ սուրբ առաքեալն, որ ասէ, թէ Որ ի Քրիստոս մկրտեցաք ի մահ անդր նորա մկրտեցաք, ապա զԱստուծոյ բնութիւնն ընդ մահուամբ արկանես եւ լինիս կցորդ հերժուածոյն Սովոնացւոց եւ Պանտուրացոց, որպէս նախ ասացաք: Իսկ թէ ի մարդոյն բնութիւնն ասես մկրտիլ, ապա ի զուր եւ ի տարապարտուց մկրտիս եւ ոչ յԱստուած, որ տայ կեանս եւ անմահութիւն:

Եւ դարձեալ թէ ասէք, որ Քրիստոսի երկու բնութիւն է եւ երկու կամք եւ Քրիստոս մի ի Սրբոյ Երրորդութենէ, ապա Երրորդութեանն երկու բնութիւն է եւ երկու կամք. եւ այս սկիզբն է հակառակութեան ի Սուրբ Երրորդութիւնն. զի որ Քրիստոսի երկու բնութիւն ասէ, եւ զգործսն զոր արար Քրիստոս՝ բաժանէ զոմն մարդոյն ասելով, եւ զոմն Աստուծոյ, ի հարկէ երկու կամք ասէ Քրիստոսի:

Նորին.

Եւ մեք որ ասենք, թէ Քրիստոս Աստուած է եւ մարդ, արդ շաղկապն, որ ի միջին է, որ է «եւն», ոչ է ցուցակ բնութեանց որպէս յորժամ ասենք հոգի եւ մարմին, եւ մարդս ոչ է երկու բնութիւն, այլ մի՛. քանզի եւն ոչ ցուցանէ երկուս բնութիւնս Աստուծոյ որ մարդացաւ վասն մեր, այլ բառիցն շաղկապ է՝ ի միմեանց զատանելով:

Ղարծեալ եւ ասի այս ի վերայ միոյ պարզ եւ փիւռ անձին որպէս այն որ ասէ զիր՝ «Աստուած անսկիզբն եւ անժամանակ» եւ արդ որպէս այս եւս ոչ ցուցանէ Աստուծոյ երկու բնութիւն, նոյնպէս յորժամ ասենք թէ Քրիստոս Աստուած է եւ մարդ. «եւն» որ ի մէջն է, երկու բնութիւն ոչ ցուցանէ:

Եւ դարձեալ զարմանալի է նոր վարդապետութիւնդ ձեր, զի անճառելի խոստովանիք զանձանցն միաւորութիւն անշփոթ, եւ զբնութեանցն միաւորութիւնն ոչ ասէք անճառելի եւ ոչ ընդունիք, եւ շփոթեալ ասէք, յորժամ մեք մի խոստովանիմք բնութիւն:

Արդ, անձն գոյութիւն է եւ բնութիւնն ի գոյութենէն. եւ անձն յայտնի է եւ պարաբառնայ զբնութիւն, իսկ բնութիւնն նուրբ է եւ անաւսր եւ անտեսանելի, եւ ոչ պարաբառնայ զգոյութիւնն, որ է անձն, քանզի նախ գոյութիւնն է եւ ապա՝ բնութիւնն ի նմանէ: Զի ոչ կարես բնութիւնն ինչ իմանալ կամ գտանել ուրեք, զի ոչ լինի, եթէ գոյաւոր անձն ոչ իցէ, զի նախ է գոյութիւն եւ ապա բնութիւն՝ ի գոյութենէ: Եւ քանզի գրեալ է, թէ Կերպարանն Հաւր զժառայի կերպ: Իսկ թէ բաժանես զբնութիւնսն զի մի՛ շփոթեսցին, նախ բաժանեա դու զանձինսն եւ զդէմսն, զի մի՛ շփոթեսցէ կամ ի բաց բարձցէ ծառային

կերպ զԱստուծոյ կերպն, զի առաքեալ կերպ եւ կերպ ասաց: Իսկ թէ դու հաւատով խոստովանիս մի անձն եւ մի դէմ անշփոթ, նոնպէս եւ ես հաւատով խոստովանիմ մի բնութիւն անշփոթ, զի դիւրագոյն է բնութեանցն միանալ եւ մնալ անշփոթ, զի անաւսր են, քան զանձանցն, զի անծինքն գոյաւորք են եւ յայտնիք. զի թէ կատարեալ եւ գոյաւոր անծինքն Աստուծոյն եւ մարդոյս յարգանդի Կուսին եղեն մի անձն եւ մի դէմ, եւ ոչ շփոթեցան, եւ ոչ երարծ մինն եւ զմիւսն, ապա եւս առաւել բնութիւնքն միացան յարգանդի Կուսին, աստուածայինն եւ մարդկայինն, եւ մնացին անշփոթ եւ անբաժանելի, զի անաւսրունք են քան զանծինսն: Բայց դարձեալ գիտացիր, երկաբնակ, զի երկու բնութիւնն զոր սահմանես ի վերայ Քրիստոսին քո, երկու դէմք եւ երկու անծինք լինին ի հարկէ. զի թէ բնութիւնքն երկուք են որիշք ի միմեանց, հարկ է եւ անձանցն լինել երկուք ի միմեանց որոշեալք, զի բնութիւնքն յանձանցն են, եւ բնութիւնն ոչ է եւ ոչ երեւի, թէ գոյաւոր անձն ոչ իցէ որ զբնութիւնն յայտնի երեւեցուցանէ: Խոստովանիս երկու բնութիւն ի Քրիստոսն քո բաժանեալ կամաւքն հանդերձ. ի հարկէ եղեւ, ըստ քո մտացոյ, երկու որդիքն զոր ասացին Նեստոր եւ Լեւոն նախնի վարդապետքն քո:

Ի հաւատոյ թղթէն Տիրանոյ Հայոց վարդապետից, զոր գրեաց առ Սինաքերեմ.

Ջկնի երկու բնութեանն ասողի անէծք վասն այնր է, զի երկու բնութիւնն երկու կամք են, եւ երկու խորհուրդք, եւ երկու տեսարք: Թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, զի բնութիւն բնութեան հակառակ՝ մարտակիցք են միմեանց, եւ կամ մինն տէր եւ միւսն ծառայ. եւ թէ երկու բնութիւն է՝ ապա Աստուած ի մարմնի իւրում կռիւ ունի իբրեւ ընկեր առ ընկեր, եւ զիա՞րդ կարէ նա այլում տալ խաղաղութիւն, զոր ինքն ոչ ունի:

Նորին՝ յետ սակաւուց .

Արդ, մեք մի բնութիւն ասեմք Բանին եւ մարմնոյն՝ ճշմարիտ Աստուած եւ ստուգապէս մարդ, մի բնութիւն մի թիւ, ի սրբոյ Երրորդութեանէն:

Նորին.

Արդ, անմահ է Աստուած, բայց մարմնով իւրով մեռանի, զի մահն եւ արիւնն Աստուծոյ ասի՝ որպէս հոգի անմահ է, բայց ի չարչարելի մարմնոյն վտանգի այն, որ ոչ վտանգի:

Ի հաւատոյ թղթէն Սահակայ Հայոց վարդապետի որ առ զաւրս.

Ասաց Տէրն. «Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ՝ ես կենդանի եմ վասն Հաւր» եւ «որ ուտէ զիս, եւ՝ նա կեցցէ»: Արդ ի Հաւրէ առաքեալ՝ Բանն է, եւ կերեալ յերկրի՝ մարմինն, իսկ եթէ բաժանեալ են բնութիւնքն, որպէս ասէք, յայտ է թէ ճաշակողքն զԲանն ուտեն զկենդանին՝ զառաքեալն ի Հաւրէ,

ըստ որում ասաց թէ «Որ ուտէ զիս» զոր սարսափելի է իմանալն. իսկ թէ զմարմինն ուտեն եւ մարմինն կենդանարար է, յայտ է թէ միաւորեալ է ընդ առաքելոյ, ի Հաւրէ անբաժանելի: Բայց մեք ոչ ասենք խառնումն ապականութեան ի վերայ Քրիստոսի բնութեանցն՝ որպէս ջուր ընդ գինի խառնեալ եւ ի միմեանց ապականեալք, կամ որպէս ոսկի եւ արծաթք խառնեալք եւ հրով հալեալք եւ ի միմեանց շփոթեալք. այլ խոստովանիմք զխառնումն Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն՝ որպէս լոյս ընդ աւդ եւ հուր ընդ երկաթ եւ հոգի ընդ մարմին, որք են անփոփոխք եւ անշփոթք, եւ ոչ այլայլին ի միմեանց, թէպէտ եւ ժամանակաւ է սոցա խառնումն եւ միութիւնն:

Ի հաւատոյ թղթն Խոսրովու Հայոց հռետորէ.

Մարգարիտ առանց լուսոյ՝ ոչ ասի մարգարիտ, եւ տէրունական մարմինն ոչ ասի Քրիստոս Փրկիչ՝ առանց Աստուծոյ Բանին, զի ծնունդն Հաւր՝ եղեւ ծնունդ Կուսին:

Նորին՝ յետ սակաւուց.

Զի թէ մարդկայինքն աստուածայինքն ոչ ասին ի Քրիստոս կիրք եւ ներգործութիւնք, եւ աստուածայինքն՝ մարդկայինք, ապա միաւորութիւնն բարձեալ լինի ի միջոյ: Արդ՝ ընդէ՞ր լինիք ի միտս ձեր սուտք եւ ասէք՝ Միածին. քանզի որոյ բնութիւնն անհասանելի է, նորա եւ միաւորութիւնն անքննելի է:

Նորին.

Որք ի մարմին Բանին հաւատացին, ծանոյց նոցա զԱստուածութիւնն . եւ որք ասացին թէ մարմինն մարդոյ է եւ ոչ Աստուծոյ, նոքա ընդ ուրացողսն ելցեն ի խաւարն արտաքին:

Եղիշէի Հայոց վարդապետի.

Աստուած միայն մարդասէր, եւ մարդ միայն աստուածասէր. Աստուած՝ մարդոյ եւ մարդ՝ Աստուծոյ. վասն մարդոյ Աստուած մարդացեալ եւ վասն Աստուծոյ մարդ աստուածացեալ:

Ի հաւատոյ թղթոյն Յեսուայ Խորխոռունեաց եպիսկոպոսի.

Հայրունակ գծաւորութիւն մերունակ գծաւորեալ բնութիւն եզակի շարամանեալ տնաւրինաբար ներգործութեամբ մարմին անապական հաւրածինն անժամանակ, երիկածինն յԱստուածածին Կուսին Աստուած գոլով:

Ի հաւատոյ բանէն Դըվնալլ ժողովոյն.

Է՞ր աղագաւ ասէք մարդացեալ, եթէ ոչ է՝ միաւորեալ ի մարմնի Բանն Աստուած, զի մարդացեալն ի

մարմնի խառնեալն է, զի խառնումն զբաժանումն բառնայ, որպէս գրէ Կիրեղ առ Նեստոր, թէ ոչ կրկնապատիկ Քրիստոս, թէպէտ եւ յերկուց զանազանից ի միասին հաւաքեալ անբաժանաբար:

Նորին՝ յետ սակաւուց.

Արդ՝ որպէս մարդս ի հոգոյ եւ ի մարմնոյ բաղկացեալ եւ է մի բնութիւն յերկուցն, այսպէս եւ Աստուած Բանն իւր մարմնովն մի դէմ, մի կամք, մի բնութիւն, մի ներգործութիւն:

Ի հաւատոյ թղթն միջնոյ Ներսէսի Հայոց կաթողիկոսի, զոր գրեաց ի խնդրոյ Մուշեղայ Բագրատունոյ.

Ո՛վ դուք, երկաբնակք, յորժամ դաւանեաց Պետրոս զՏէրն մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանոյ, ընդէ՞ր ոչ սաստեաց նմա Տէրն, թէ Ես զՈրդոյ Մարդոյ հարցանեմ եւ դու զՈրդոյ Աստուծոյ պատասխանես, այլ վասն ուղիղ դաւանութեանն, որ ոչ բաժանեաց զԲանն ի մարմնոյն, երանեցաւ եւ վէմ հաւատոյ եղաւ ի հիմն եկեղեցոյ:

Ի հաւատոյ թղթն Յոհանու Հայոց կաթողիկոսի.

Ոչ որոշեմք զԲանն Աստուած յիւրմէ մարմնոյն յերկուս դէմս կամ երկուս բնութիւնս կամ երկուս ներգործութիւնս, կամ տալով զբարձրագոյնսն Աստուծոյ, զնուաստագոյնսն մարդոյն ըստ Նեստորի եւ Լեւոնի, այլ մի անձն եւ մի բնութիւն խոստովանիմք մարմնացելոյ Բանին Աստուծոյ, ամենայն ուղղափառ վարդապետացն հետեւելով:

Ի հաւատոյ թղթն Ներշապիոյ Մամիկոնէից եպիսկոպոսի եւ Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի.

Իսկ թէ երկու բնութիւն էր Քրիստոս ըստ Լեւոնի եւ Սամուստացոյն նախ քան զխաչն եւ մարդկային բնութեամբն կրեաց զամենայնն եւ թաղեցաւ, եւ ապա աստուածային բնութեամբն յարեաւ: Այս ըստ նոցա խորհելոյն ցուցանէ, թէ գերեզմանն է աստուածածին փոխանակ Կուսին Մարիամայ. ապա թէ ամբարշտութիւն է զայս ասել, ուրեմն յայտ է, թէ մի բնութիւն էր Քրիստոս նախ քան զխաչն՝ յետ անշփոթ միութեանն: Քանզի խառնմամբ Բանին յարգանդի Կուսին եղեւ մարդկային բնութիւնն աստուածային, քանզի հաւասարեալ ասացին սուրբ հարքն զմարմինն միութեամբ Բանին՝ իսկական բնութեանն Հաւր անվրէպ նմանութեամբ:

Նոցին՝ յետ սակաւուց.

Արդ, եթէ երկու բնութիւն էր Քրիստոս ըստ կարծեաց երկաբնակացն, ընդէ՞ր ասաց կուրին, թէ Տեսէր

զՈրդի Աստուծոյ. պարտէր ասել, թէ յիս է Որդին Աստուծոյ, եւ ոչ խաբել զկոյրն եւ ասել, թէ զոր տեսէր՝ դա՛ է Որդին Աստուծոյ:

Նորին.

Ոչ եթող զմարմինն ըստ իւր տկար եւ անզաւր բնութեան ի միանալն ի նա Աստուած Բանն, այլ անճառելի արագութեամբ զհողեղէնն հրեղէն եւ զմարմնեղէնն աստուածեղէն արար, զծառայականն՝ տէր եւ ազատիչ եւ քաւիչ ամենայնի:

Ի հաւատոյ թղթէն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, որ առ Գերմանոս.

Ամենայն ուրեք աստուածայնոց գրոց ի սուրբ Կուսէն ասէն առեալ զմարմինն Բանին Աստուծոյ, յորմէ մի լեալ ի բաց բարձեալ երկուց հատմանցն:

Նորին՝ յետ սակաւուց.

Արդ՝ մի գոլ հաւատամք զՈրդոյ բնութիւն, զի ահաւասիկ զաստուածագործ զաւրութեանցն եւ զմարդկագոյնսն միոյ եւ նորին մարմնացելոյ Բանին Աստուծոյ ասեն զներգործութիւնսն գիրք սրբոցն որք Հոգովն Աստուծոյ խաւսեցան:

Նորին՝ յերկրորդ թղթէն, զոր գրեաց Վասն հաւատոյ պատասխանի Անտիոքայ պատրիարգին.

Բանն Հաւր որ յառաջ քան զյաւիտեանս ծնեալ ի Հաւրէ, աւետեալք հրեշտակապետին եկեալ ի Կոյսն մարմնանայ ի նմանէ ճշմարտապէս, եւ որպէս էր ճշմարիտ Աստուած, նոյնպէս եւ ճշմարիտ մարդ, մինն յերկուց բնութեանց անշփոթ եւ անբաժանելի, թէպէտ եւ մարմնացաւ, այլ ի Հաւրէ անբաժանելի էր:

Ի հաւատոյ թղթէն Աբրահամու եպիսկոպոսի.

Քանզի որք ի Քաղկեդոն ժողովեցան՝ երկաբնակք կոչին, վասն զի որոշեն միում բնութեանն զքաղցն եւ զնուաստագոյն կիրսն արտաքոյ է այս վարդապետութեան սրբոց առաքելոցն, զի զմիւսն մարդ լոկ, իսկ զմիւսն Բան անուանեն, եւ Պաւղոս զՈրդին Աստուծոյ ասէ վասն մեր զմահ ճաշակեալ. Հաշտեցաք, ասէ, ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ նորա:

Ի թղթէն Եզնկայ որ առ Մաշտոց.

Բանն Աստուած ի վախճան ժամանակաց եղեալ վասն մեր մարդ առանց յեղաշրջելոյ յիւրմէ Աստուածութենէն, եւ ոչ բաժանի Էմանուէլն յերկուս առաջս, եւ ոչ մարդ ոք եղել Աստուած յաւելուած Երրորդութեանն, այլ Էն Աստուած եւ Որդի Աստուծոյ արժանի արար լինել մարդ անփոփոխելի, եւ



անդատին յորովայն է Կուսին յետ միաւորութեան Բանին ընդ մարմնոյն ոչ ասի մարմին մարդոյ, այլ մարմին Աստուծոյ:

Այլ հաւաքումն բանից ի Հայոց վարդապետացն.

Արդ, Կիրեղ եւ Յուլիայ, Եփրեմ եւ այլ զաւրաւոր վարդապետք եկեղեցոյ զմարդ մի բնութիւն ասացին, թէպէտ եւ յերկուց է միացեալ: Այսպէս եւ Բանն Աստուած խառնեալ ի մարմնի միացաւ ընդ նմա եւ եղեւ մի բնութիւն: Երեմիա ասէ. Սա է Աստուած մեր, որում ոչ ոք համեմետի. յետ այսորիկ յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ: Յայտ [է], եթէ զմարմնով երեւեալն նորա ասէ, եւ նա է անհամեմատ: Եւ Դանիէլ ասէ. Տեսանէի եւ ահա գայր Որդի մարդոյ եւ հասանէր մինչեւ ի հին աւուրցն: Արդ, մի՞թէ զմերկ Բանէն ասէ գալ եւ հասանել առ Հայր. քաւ լիցի, քանզի Բանն յաւիտենից անսկզբնութեամբ ունէր զհասումն առ Հայր. այսր յայտ է զմարմնոյն ասէ մարգարէն գալ եւ հասանել առ Հայր, համեմատել եւ հաւասարել զմարմինն Հաւր, քանզի յորժամ ասացաւ Կուսին՝ Տէր ընդ քեզ, ի նմին ժամու եղեւ Բանն ի Կոյսն, եւ մարմինն զոր Բանն առ ի մերմէ բնութենէս, իսկ եւ իսկ հաւասարեաց իսկական բնութեանն Հաւր միաւորութեամբ Բանին բնութեամբ եւ Աստուածութեամբ, փառաւք եւ զաւրութեամբ:

Եւ արդ, ի Ծննդենէն ցՀամբարձումն ոչ ի վերայ սոսկ մարդոյ ասեմք եւ ոչ ի վերայ մերկ Աստուածն Բանի, զի մերկ Աստուած ոչ տեսանի եւ ոչ շաւշափի, եւ սոսկ մարդ ոչ կարէ ասել, թէ Յառաջ քան զլինելն Աբրահամու Եմ եւ. եւ թէ Զփառսն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի, այլ ասեմք զայս ի վերայ Բանին մարմնացելոյ, որով հետեւին նմա երկու նշանակութիւնք, այսինքն Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ միով բնութեամբ անշփոթ խառնեալ, եւ ոչ որոշին կիրքն եւ ներգործութիւնքն երկուց բնութեանցն. զի թէ որոշեմք զբնութիւնսն, զնան ընդ նոսա եւ երկաքանչիւր յատուկքն բնաւորաբար ըստ Նեստորի եւ Լեւոնի եւ Պաւղեայ Սամուստացոյն եւ Թիոդորի Տարսոնի եւ Դիոդորոս Կիրիս քաղաքի եւ Թիոդորի Սամուստիայ: Արդ՝ ուր երկու բնութիւն կամի եւ ներգործէ, բարձեալ է անտի միաւորութիւնն:

Ներսէսի վերջնոյ իմաստասիրի Հայոց կաթողիկոսի ի թղթէն, որ առ Մանիլ թագաւորն.

Այլ եւ խառնի ընդ մարմնոյ անմարմին Բանն, եւ միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս՝ աստուածացուցանելով զնա խառնմամբն եւ միաւորութեամբն, ո՛չ փոփոխումն կամ այլայլութիւն ունելով ի միաւորութեանն, ըստ որում եւ ո՛չ հոգի եւ մարմին մարդկային:

Նորին՝ յերկրորդ թղթէն.

Է՛ մարմին եւ է՛ անմարմին. մարմին՝ ըստ մարդկութեանն զոր առ, եւ անմարմին՝ ըստ Աստուածութեանն զոր ունէր: Եւ նոյն տեսանելի եւ անտեսանելի: Ոչ ոմն եւ ոմն, այլ մի էութիւն եւ անձնաւորութիւն՝ յերկուց բնութեանց ի մի Քրիստոս միացելոց՝ անշփոթելի եւ անբաժանելի միաւորութեամբ:

Նորին՝ յերրորդ թղթէն.

Միացաւ ընդ մերս բնութիւն անբաժանելի, եւ ոչ լուծումն կամ փոփոխումն ընկալաւ Աստուածութեանն ի մարդկութիւնն, եւ ոչ մարդկութեանն՝ յԱստուածութիւնն, այլ մնաց անորոշելի եւ անշփոթելի:

Նորին.

Արդ, եթէ մի բնութիւն վասն անքակտելի միաւորութեանն ասի եւ ոչ վասն շփոթման, եւ երկու բնութիւն՝ վասն անշփոթ եւ անայլայլելի մնալոյ, եւ ո՛չ վասն բաժանման եւ բնութեանցն զյատուկսն տալոյ, երկոքեանս ի սահման ուղղափառութեանն :

Եւ ես՝ ողորմելիս Վարդան, որ հաւաքեցի զայս աստուածային եւ լուսափայլ մարգարիտս հաւատոյ, մեծաւ ցանկութեամբ յուսոյ եւ սիրոյ, հետեւելով աստուածազան եւ բարեփառ հարցն ուղիղ դաւանութեան՝ Հաւատով խոստովանիմ անթերի մտաւք զհամագոյ եւ զԱմենասուրբ Երրորդութեանն անբաժանելի, յամենայնի կատարեալ: Հաւատով խոստովանիմ ուղիղ խորհրդով զանսկզբնակից, զէակից եւ զփառակից Բանն Աստուծոյ՝ զծոցածին Որդին Հաւր լուսոյ, նորին կամաւք, եւ գործակցութեամբ Հոգոյն Սրբոյ, ի վերջին աւուրս ծնեալ մարդ կատարեալ յամենայնի, առանց մեղաց, յերանելի եւ յամենագովելի Սրբոյ Կուսէն Մարիամայ Աստուածածնէ՝ յարեանառուէն Ադամայ, զիմն առեալ կատարելապէս զհոգի, զմիտս եւ զմարմին, զի զիս բոլոր աստուածագործեսցէ, անճառ եւ անպատումն հրաշիւք յորովայնի Կուսին խառնեալ միացաւ ընդ մարմնոյն եւ եղեւ մի բնութիւն, ո՛չ ապականագործ միաւորութիւն շփոթեալք կամ այլայլեալք, այլ որպէս հոգի եւ մարմին, աւդ եւ լոյս, հուր եւ երկաթ, որ թէպէտ եւ ժամանակաւ է սոցա խառնումն, բայց անշփոթ մնան, նոյնպէս ի մի եկեալ երկու աւտար յոյժ եւ զատական բնութիւնք Աստուծոյն եւ մարդոյ, եւ խառնեալ եւ անշփոթ մնացեալ, զերազանցեալ քան զաւրինակս եւ զմիտս եղականաց, որ ինքեան Աստուծոյ միայն է գիտելի, որ եւ յետ անճառ եւ զարմանագործ միաւորութեանն ո՛չ է եւ ո՛չ ասի երկուք, այլ մի բնութիւն, մի կամք եւ ներգործութիւն, մի դէմ եւ մի անձնաւորութիւն. սորին վասն եւ խոստովանիմք զԾնողն՝ Աստուածածին, Մայր, եւ յետ ծննդեանն մնացեալ Կոյս սուրբ եւ

անապական եւ անխախտելի, եւ մաքուր եւ պայծառ քան զոր յառաջն էր, եւ զծնեալն՝ Աստուած անապական մարմնով, զատեալ յամենայն հեշտաքարշ մտածմանց տեսակաց մեղաց, եւ հեռացեալ յանգոսնելի կրից՝ ի կերակրոց եւ յընպելեաց յախտաբար հոսմանց: Քանզի որոյ ծնունդն անախտ էր ի Հոգոյն Սրբոյ եւ ի մաքուր Կուսէ, նմա ո՛չ վայելէր ի ներքոյ լինել այսպիսի ակամալ] եւ անգոսնելի կրիցս, որ բռնութեամբ եւ ակամայ ի մեզ ներգործի: Ըստ որում եւ մեծն Դիոնեսիոս ասէ. Մարդ Յիսուս, ո՛չ մարդ Յիսուս. մարդ Յիսուս, ըստ որում անթերի մարդ եղեւ մեզ հաւասար. ո՛չ մարդ Յիսուս, այլ ի վեր քան զմարդ, զի մեկնեալ էր յամենայն որոմանց չարին, զի ծնունդն ի մաքուր Կուսէ եւ ի Հաւրէն լուսոյ եղեւ, հաւասարեցաւ մարմինն Հաւր՝ յորովայնի Կուսին ի միանալն ընդ Բանին Աստուծոյ, եւ եղեւ անբաժանելի ի Բանէն յորովայնէ ցիսաչն, եւ յաւիտեանս յաւիտենից: Վասն որոյ եւ խաչն Աստուծոյ զենարան, եւ աթոռ եւ սեղան, եւ գերեզմանն՝ Աստուծոյ գերեզման եւ հանգստարան: Քանզի Բանն ի՛ւր համարէր զամենայն կիրս եւ զչարչարանս մարմնոյն վասն անճառ խառնմանն, թէպէտ եւ ինքն գեր ի վերոյ մնայր քան զամենայն կիրս, բայց զի ի՛ւր էր մարմինն եւ յորժամ կամէր թոյլ տայր կրել զկիրս մարդկայինս բայց ի մեղաց, եւ ոչ բռնադատել ի կրից մարմնոյն գունակ մեզ: Քանզի այս գիտելի է ամենեցուն, որ յամենայնի վեհագոյնն յաղթեսցէ, վասն որոյ կամք Բանի՛ն միայն էր եւ բարձեալ էր ի մարմնոյն ամենայն կարիք եւ կիրք եւ կամք մարդկայինք, եւ թոյլ տալով Բանին կրէր ոչ զանգոսնելի կիրս, այլ զվաստակելն եւ զարտասուելն եւ զայլն, որք գրեալ են ի սրբոց Աւետարանչացն, յայն սակս զի մարդեղութիւն Բանին ճշմարիտ ծանուցեալ լինի եւ ոչ կարծեալք: Վասն որոյ Աստուծով եւ աստուածախառն մարմնով եղեւ փրկութիւնս մեր, եւ ոչ սոսկ մարդով. եւ համարձակութեամբ խոստովանիմք զմարմինն Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ եւ հաւասար Հաւր, երկրպագեալ յաթոռ փառաց յամենայն եղականաց. եւ անյաւելուած մնաց Երրորդութիւնն վասն անճառ եւ անբաժանելի միութեամբ Բանին եւ մարմնոյն. եւ նոյն որ ծնաւ ի սրբոյ Կուսէն Աստուած Բանն՝ մարդ եղեալ անապական մարմնով նոյն չարչարելի եւ նոյն անչարչարելի, նա անմահ եւ նա մեռեալ վասն մեր, եւ նոյն մինն անմահ ի մեռանելն եւ անչարչարելի ի չարչարելն, որում ամենայն ինչ դիւրին է եւ նա է Տէր տէրանց եւ Թագաւոր թագաւորաց եւ Արարիչ ամենայնի, եւ նոյն մինն որ ի խաչին պրկեցաւ հեղուսեալ բեւեռաւք եւ ընկալաւ ի կողն զխոցումն տիգին, զալոց է ընդ ամպս երկնից՝ ի հողոյ յարուցանելով եւ ի մահահանգիստ քնոյ զարթուցանելով է զամենայն ծնունդս Ադամայ, ատեան ահագին կազմէ եւ դատաստան անաչառ ուղղէ, տիեզերական հրապարակ գումարէ, եւ ի քթելական ի մի վայր պարփակէ զերկնայինս եւ բազմի հայրական փառաւք յաթոռ յանճառ եւ ի զարմանագործ ի մէջ երկրի ի տես տիեզերաց դատաւոր ահագնահայեաց եւ հատուցանէ ի սարսափելի ժամուն ամենեցուն ըստ իւրաքանչիւր գործոցն արժանաւորութեան, եւ նոյնժամայն սոսկալի զոչմամբ ծայնիւ աւրինեալ փառաբանի եւ զովեալ երկրպագի ի հրեղինաց եւ ի

հողեղինաց վասն արդարակորով դատաստանին եւ իրաւանցն զոր առնէ, որ է աւրինեալ այժմ եւ անսպառ յաւիտեանսն որ գալոց է:

Արդ, մեծաւ հոգաբարձութեամբ եւ ըղծալի սիրով հաւատոյ արարաք հաւաքումն բազում բանից յամենայն ուղղափառ հայրապետացն խաւսից եւ վարդապետաց եկեղեցոյ ի մերոց Հայաստանեաց եւ յամենայն ազգաց առեալ միայն զվկայութիւնս սակաւ բանիւ վկայ մերոյ ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյս ընդդէմ երկաբնակաց եւ Արիանոսաց եւ ընդդէմ նոցա որք ապականացու ասացին զանապական մարմին Աստուծոյ Բանին, եւ անգոսնելի կիրք ետուն նմա:

Դարձեալ եկ, բաղձալի, եւ բեր զմիտս քո զխնամակալութեամբ Հոգոյն Աստուծոյ հաւաքեսցուք եւ այլ վկայութիւնս, որ կարի եւս պիտանացու է մերս եկեղեցւոյ կարգաց եւ աւրինաց որք են խորհրդածութիւնք հաւատոյ] ամենայն ազգաց սուրբ առաջնորդաց եւ ի մերոց Հայաստանեաց եւ լցցուք զայս աստուածաբնակ տառս իբրեւ զդրախտ մի լցեալ զանազան ծաղկաւք եւ պտղաւք աստուածային հոգեխառն բանիւք եւ իբրեւ զքաղաք մի լցեալ ամենայն մեծութեամբ եւ աստուածական անհամեմատ գանձիւ, եւ արասցուք զսա պարիսպ եկեղեցոյ ուղղափառաց ազգաց ազգս, որով հերքեալ հալածին ամենայն հերձուածողք եւ պապանձեսցին շատաբան եւ անդուռն բերանք նոցա: Եւ արդ, սկիզբն արասցուք ուստի սկսանել արժան է, նախ Ծննդեան Տեառն եւ Մկրտութեանն եւ վասն Սուրբ պատարագին եւ Խաչեցարին, եւ զելի եւ մատղի զատկի, եւ ննջեցելոց, եւ վասն գառինն զի եկեր Տէրն երեկոյին հինգշաբթին, վասն աղի:

## ԳԼՈՒԽ Ժ

### ՎԱՍՆ ԵՐԱԳԱԼՈՒՑԻՆ, ԶԻ ԵՐԵԿՈՒՄՆ ՊԱՐՏ Է ՈՒՏԵԼ

Կիրոյի՝ ի Պարապմանց գրոց, ի Թէոդոսի, զի պարտ է ու տել երեկուն ճրագալուցին.

Արդ, պահելով զաւրն յորում մատնեցաւ, եւ մատնեցաւ ի չո ըեքտասաներորդ լուսնին յառաջնումն ամսեանն, եւ մնամք Յարութեան նորա աւուր, այսինքն է կիրակէին: Վասն այսորիկ լուծանեմք յերկոյին շաբաթին զպահսն, եւ տաւնեմք վաղիւն կիրակէին որպէս եւ վաղ առաւաւտին յարուցեալ զՔրիստոս: Այլ թէ ասացի ի խոր երե կոյին յարութեան գործեալ խորհուրդ, այլ խոր երեկոյ եւ առաւաւտն վաղ ի մի եւ ի նոյն ընդթանան ժամանակք:

Թէոփիլի Աղեքսանդրու հայրապետի՝ ի Թգենոյն ճառէն.

Աստուածային բնութիւնն ոչ նուաղէր միաւորութեամբն ի քաղցն եւ ի ծարաւն. ի չարչարանսն, ի մահն եւ ի գերեզմանն անբաժանելի էր ի մրամնոյն. ոչ չարչարէր եւ ոչ մեռանէր, բայց սակայն իւր համարէր:

Նորին.

Որպէս խոնարհագոյնն բարձրագունին համարեալ է, նոյնպէս եւ բարձրագոյնն խոնարհագունին, քանզի զբարձրն խոնարհ տեսին մարդիկ եւ զխոնարհն՝ բարձրագոյն, Աստուած փառաւորեցին հրեշտակք:

Նորին.

Որպէս հրացեալ երկաթ եւ կռանահարեալ երկաթն հալածի, եւ հուրն միացեալ յերկաթն ոչ տանջի, նոյնպէս Բանն Աստուած միացեալ ի մարմնի կրող չարչարանաց, եւ մնաց ի նմա անչարչարելի. իսկ իւրոյ մարմնոյ կիրքն ինքեան համարեալ է: Եւ որպէս հուրն յիւր զաւրութիւնն ձգէ զերկաթն եւ ինքն յերկաթոյն ոչ սեւանայ, նոյնպէս մարդկութիւնն յԱստուածութենէն զաւրանայր եւ Աստուածութիւնն ի կրից մարմնոյն ոչ տկարանայր:

Տիմոթէի Աղէքսանդրու հայրապետի վկայութիւնք.

Տեսէ՛ք, յորպիսի՛ հայիոյութիւնս անկան Քաղկեդոնականքն, որք երկու բնութիւնս ասեն եւ ըստ մասին դնեն մարդ եւ Աստուած, եւ ոչ ասեն Աստուած մարմնացեալ:

Նորին.

Անկիր արկեալ մարմինն Քրիստոսի ոչ բնութիւն մարդոյ հասարա կականի ասացաւ մարմին Բանին Աստուծոյ, քանզի Աստուած խոստովանիմք զմարմնացեալ եւ զմարդացեալ Բանն Աստուած, որ զմահ եսպան անապական մարմնով:

Նորին.

Աստուածային գիրք երկուս բնութիւնս ոչ աւանդեցին, եւ ոչ Քրիստոս եւ Տէր անունս ի վերայ նշանակելոյ երկուց բնութեանց զմեզ ուսուցին. զայս Նեստորիոս ուսույց, եւ ոչ աստուածային գրեցեալքն եւ ոչ սուրբ հարքն. մկրտեցէք յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, եւ ոչ ասաց թէ՛ եւ ի մարդկութեանս յանուն:

Նորին.

Աստուած ելով Բանն մարմնացաւ ի Կուսէն անպար իմացապէս, որպէս միայն ինքն գիտէ եւ զկուսութիւնն ոչ ապականեաց, եւ դրաւքն փակեալ ի ներքս եղեալ եւ ճեմեալ:

Պետրոսի վկայի Աղէքսանդրու հայրապետի.

Վասն որոյ եւ եղեալ նա Սուրբ Որդի Աստուծոյ կոչեսցի, քանզի եւ Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ, զի զնոյն ելով զԲանն ոչ այլ եւ այլ, քա՛վ լիցի. եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ գրեալ է եւ եթէ Յիսուս է Քրիստոս, եւ ճշմարտապէս չարչարեցաւ վասն մեր:

Դիոսկորոսի Աղէքսանդրու հայրապետի ի Գանգրա յաքսորանացն՝ ի գրոցն որ Սեկունդինան.

Քանզի առ զմերս բոլոր անթերի Փրկիչն անծնացեալ անծամբ բանականաւ թանց միայնոյ բեղման մարդոյ եւ քնոյ, եւ հեշտ ցանկութեան:

Սրբոյն Աղէքսանդր հայրապետի Աղէքսանդրու.

Զի՞նչ արդեաւք հարկաւոր գալն զԱստուածն յերկիր, մարմնանալ ի Կուսէն եւ խանձարրապատիլ եւ ի մսուր դնանիլ եւ կաթնաբոյծ լինել ի գոգս անարգիլ եւ կախիլ զփայտէ, թաղիլ եւ յառնիլ եռաւրեայ եւ տուեալ փրկանս անծն ընդ անծին, միս ընդ մսոյ եւ արիւն փոխանակ արեան:

Կիրողի Երուսաղէմայ հայրապետին.

Արդ՝ ոչ լուկոյ մարդոյն երկիր պագան արժան ինչ է, եւ ոչ Աստուած մերկ ասել առանց մարդկութեան բարի է: Արդ երկրպագեսցուք Աստուծոյ, հաւատասցուք թէ եկն եւ մարդկութիւն զգեսցաւ ի Սրբոյ Կուսէն :

Նորին՝ յետ սակաւուց.

Ոչ որպէս ոմանք կարծեցին թէ յետ չարչարանացն պսակեցաւ, որպէս թէ յԱստուծոյ վասն համբերութեան առեալ իցէ ընդ աջմէ Հաւր նստեալն, այլ ի սկզբանէ որպէս էն ծնեալ ունի զընդ աջմէ Հաւր նստեալն:

Նորին.

Հաւատա՛ դու, թէ սա Միածին Որդին Աստուծոյ է, վասն մերոյ մեղաց յերկնից իջեալ, զհաւասարակից մարդկութեանս յանձն առեալ զչարչարանս, եւ ծնեալ ի Սրբոյ Կուսէն եւ ի Հոգոյն Սրբոյ ո՛չ կարծեալք ինչ, այլ ճշմարիտ մարմնացաւ:

Յոհաննու Երուսաղէմայ հայրապետի.

Աստուած ի Կուսէն ծնեալ եւ Աստուած խաչեալ:

Նորի[ն].

Այլ վասն զի բոցատերեւ վարդն անապական ծաղկեալ յանապական Կուսէն, Բանն Աստուած ծնաւ ի Կուսէն եւ Կոյսն մնաց անապական, զի ուր պատճառք անապականութեն է, անդ ոչ գործեցաւ անապականութիւն:

Նորին յետ սակ[աւ]ուց.

Խոստովանիմք եթէ Յիսուս Քրիստոս ճշմարտապէս մեռաւ վասն մեղաց մերոց, թաղեցաւ եւ յարեալ՝ զնոյն բնութիւն ունելով մեռեալն որով մարմնով եւ թաղեցաւ, յայտ է՝ թէ անապանութեամբն որպէս էրն իսկ յառաջագոյն, նոյնպէս եւ յարեալ:

Անտիոքայ երկրորդ ժողովոյն.

Որ ոչ հաւատայ բնութեամբ էութեան ճանաչի միութիւնն , նզովեալ եղիցի: Որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս Աստուած, որ համբուրեաց զխաչն կամաւորութեամբ վասն մեր մինն ի դիմաց յԵրրորդութենէն եւ ի բնութենէն յԱստուծոյ Հաւր, նզովեալ եղի[ցի]:

Որ գմահն Տեառն եւ զչարչարանս ապականացու ասէ, եւ ոչ առաւել խոստովանեսցի չարչարանաւքն անչարչարելի եւ մահուամբն անմահ, որում ամենայն ինչ դիւրին է, նզովեալ եղիցի. ամէն:

Տիտոսի Անտիոքու հայրապետի.

Մի բնութիւն հաւատամք եւ երիս գոյացութիւնս խոստովանիմք. քանզի երեքեան իմացեալ եւ որպէս զմի ճառեմք. Աստուած Բանն խաչեալ որ Հաւր միասնական Որդի եւ ի ծեռն անապական մահուան իւրոյ զառ ի մեզ մահն խափանեսցէ:

Երեքթեայ յԱնդիոքու Պիսիդայ հայրապետի.

Եւ իբր ծնիցելոյն երկուս բնութիւնս, քանզի թէ ոք զայս համարձակեսցի ասել զէմանուէլն, մի մերձենար առ այնպիսին:

Սելեռի Անտիոքու հայրապետի՝ ի Կաթողիկեաց մեկնչէն.

Հարկաւորի ասել Պետրոս Քրիստոսի չարչարելն մարմնով որպէս զի միոյ պատկերի եւ միոյ անձնաւորութեան եւ մի բնութեան Աստուծոյ Բանին մարմնացելոյ իմացուք զայս ասել, զի թէ յերկուս բաժանէր՝ աւելորդն էր վերստին ասել չարչարելի . այլ զի Աստուած էր անչարչարելի եւ վասն մեր փոխադրապէս չարչարելի եղեւ մարմնով, ասաց՝ չարչարելի մարմնով:

Նորին՝ յետ սակաւուց.

Ասելն մարմնով ցուցանէ թէ նոյն ինքն առանց չարչարանաց մնայր ըստ Աստուածութեանն եւ ոչ զգայր ի չարչարանացն եղեւ չարչարիչ:

**ԳԼՈՒԽ ԺԱ.**



**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ, ԶԻ ՊԱՐՏ Է Ի ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ՏԱԲՆԵԼ Ի ՎԵՑՆ ՅՈՒՆՎԱՐԻ ԱՄՍՈՅ**

Ի Կղենայ առաքելասահման կանոնացն.

Կարգեցին առաքեալքն զաւր Ծննդեանն Տեառն ի վեցն յունուարի:

Պողիկարպոսի եպիսկոպոսի, զոր լուաւ ի Յոհաննէ.

Ծնունդ Փրկչին ի միաշաբաթոջ եղել, եւ մկրտութիւնն՝ յետ երեսուն ամի ի նոյն քանիաւնութեան ամսոյն պատահեցաւ լինել յաւուր չորեքշաբաթոջ:

Մակարայ յԵրուսաղէմի հայրապետի.

Մկրտութեանն խորհրդոյ յերիս տաւնս առաւել փափաքեցին մեր հարքն՝ ի Զատիկն, ի Պենդեկոստէն եւ ի Ծննդեան Մկրտութեանն Տեառն, զոր տաւնեմք ի միում աւուր:

Յոհաննու Երուսաղէմի հայրապետի.

Կանոնք եւ սահմանք եկեղեցոյ զաւուրս ութ պահեսցեն ծերք եւ տղայք, ընդ նմին զշաբաթ եւ զկիրակէ, եւ յորում է աւուր դիպեսցի, կատարեսցեն զաւր ծննդեանն եւ մկրտութեանն, վասն զի աստուածայինք են եւ փրկագործ:

Նեքտառեայ Հռոմայ հայրապետի.

Սահմանք ուղղափառութեան եկեղեցոյ առաքելոցն հաստատեալ քառասուն աւր պահել կրաւնաւորաց եւ ապաշխարողաց, եւ ութ աւր համարէն ժողովուրդքն, ընդ նմին զշաբաթ եւ զմիաշաբաթ եւ զտաւն Աստուածայայտնութեանն՝ Ծննդեանն ասեմ եւ Մկրտութեանն, վասն զի աստուածայինք են եւ տէրունականք, յորում աւուր դիպեսցի կատարեսցեն:

Գրիգորի Աստուածաբանի.

Կարգեսցէ եպիսկոպոսն իւրոյ եկեղեցոյն ի վեցն յունուարի զաւր Ծննդեանն Տեառն եւ Յայտնութեանն, վասն զի աստուածայինք են եւ տէրունականք, յորում աւուր դիպեսցի՝ կատարեսցեն: Ի չորեքտասանն փետրուարի եկաւորեալն Տեառն ի տաճարն:

Նորին.

Երիս ծնունդս գիտէ մեզ բանս. զմինն փչնամբն Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ եւ ի քթթելական Բանն խառնեաց իւր մարմին իբրեւ քառասնաւորեայ մանուկ, եւ զմիւսն մարմնանալովն եւ մկրտութեամբն:

Տեսանե՞ս, զԾնունդն եւ զՄկրտութիւնն անբաժանելի ասէ եւ զմիւսն Յարութեամբն եւ վերագրէ զճառն ի Յայտնութիւնն Տեառն եւ սկսանի թէ Քրիստոս Ծնեալ լինի, եւ թէ Երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ, եւ ի նոյն արէ, ասէ, մկրտութեան է արսւ եւ պարտ է վաստակել, որ ցուցանէ թէ երեկուն էր Ծնունդն եւ առաւաւտուն Մկրտութիւնն: Այս հարկարար առաջին հարցն երեկուն զծնունդն առնել, զի երեւեցի պատիւ մկրտութեանն առաւաւտուն:

Բարսղի.

Անուն դիցուք տաւնիս Աստուածայայտնութիւն:

Հիպողիտեալ] եպիսկոպոսի.

Իննամսեալ] Տէրն ծնաւ եւ երեսնամեայ մկրտեցաւ ի նմին աւուր՝ ըստ Ղուկայ, եւ Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից. եւ յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ, զի աննման էր այլում աւուր ծնանել Փրկչին եւ այլում աւուր մկրտիլ եւ թերահաւատութիւն ի մէջ արկանել, զի զայլ ծնեալ եւ զայլ մկրտեալ ասացին, զի երկուս բնութիւնս եւ երկուս որդիս խոստովանեցան, եւ այն ի յերկուս տաւնս բաժանեցին որք անհնազանդքն էին: Իսկ եկեղեցի հաւատացելոց ի միում աւուր տաւնէ զտաւն Ծննդեան Տեառն եւ Մկրտութեանն:

Սեբերիանոսի եպիսկոպոսի՝ Ղուկասու Աւետարանին մեկնութենէն.

Նախնիքն երկուս աւուրս ի շաբաթն պահեցին եւ գլիշատակ սրբոցն յաւուրս յայտոսիկ յառաջիկայսն անցուցին. բայց միայն զԱստուծոյն եւ զԱստուածորդոյն տաւն ուր հանդիպի՝ կատարել, զի Աստուած է եւ զամենայն լուծանէ, զԾննդեանն ասեմ եւ զՄկրտութեանն ի միում աւուր:

Ի թղթէն Մելիտոնի եպիսկոպոսի, որ առ Տրեպիսն.

Տաւնեմք ըստ աւետեաց հրեշտակին իննամսեայ՝ զծնունդն, ութարեայ՝ զթլպատութիւն, երեսնամեայ՝ զմկրտութիւնն, եւ պատուել այսպէս զծնունդն եւ զմկրտութիւնն ի միում աւուր տաւնել:

Կիպրիանոսի եպիսկոպոսի.

Քրիստոս ըստ մարմնոյ երեսուն ամ լցեալ, յայսմ աւուր մկրտի յորում եւ ծնաւ ի Սրբոյ Կուսէն:

Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի.

Եւ զայս ասեմ ոչ եթէ այլ եւ այլ են տաւն Ծննդեանն եւ Մկրտութեանն, այլ ի միում աւուր տաւնել պարտ է. բայց վասն զի գործքս այլ եւ այլ են որ այսաւր պատահեցաւ:

Ի Կարնոյ կանոնացն, որ եղաւ հրամանաւ Յուստիանոսի.

Վասն մեծի Յայտնութեանն զոր կարգեցին առաքելաւքն ի վեցն յունուարի ուրախութեամբ տաւնել ի փառս յԱստուծոյ. եւ որ այլազգի խորհի եւ ի քսան եւ հինգն դեկտեմբերի ծնունդ առնէ հետեւելով Արտեմոնի, յԱստուծոյ եւ ի սուրբ ժողովոյս նզովեալ եղիցի:

Վասն Արտեմոնի.

Արտեմոն յետ խաչելութեանն Տեառն երեսուն եւ չորս ամի անցելոյ աշակերտեցաւ Յոհաննու աւետարանչի եւթն ամիս եւ ոչ եկաց հաստատուն յյուզիղ հաւատս, զորմէ ասէ Յոհաննէս. Ոմանք առ ի մէնջ ելին: Եւ յետ մահուան առաքելոյն ասէ Արտեմոն. Վասն նախանծու առաքելաւքն զծնունդն Տեառն ոչ ասացին, իսկ այժմ ինձ յայտնեցաւ եւ ես ձեզ ծանուցանեմ: Եւ ընդ հակառակս ելեալ՝ գրէ ընթերցուածս եւ բաժանէ յերկուս բնութիւնս զմի Քրիստոսն եւ երկու որդիս, եւ կարգէ երկուս տաւնս բաժանեալս ըստ երկուց որդուցն. քսան եւ հինգն դեկտեմբերի կարգէ զծնունդն ի Սրբոյ Կուսէն եւ զծնեալն սոսկ մարդ ասէ, եւ ի վեցն յունուարի սահմանէ զմկրտութիւնն, եւ զայն Բանին Հաւր ասէ եւ բաժանէ զԱստուած Բանն յիւր միացեալ եւ աստուածացեալ մարմնոյն:

Ի թղթէն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, զոր գրեաց յԵրուսաղէմայ ի Հայք.

Յերեսներորդի ամի թագաւորութեանն Յուստիանոսի կայսէր կրկին մարտ ետ սատանայ ընդ եկեղեցի, եւ փոխեցին զսուրբ հաւատն եւ այլայլեցին զկարգ եկեղեցւոյ, զոր հաստատեալ էր առաքելոցն: Քանզի եմուտ առ թագաւորն Հրէայ ոմն հերծուածող եւ ասէ. Ընդէ՞ր ոչ առնեն յերուսաղէմացիքն զտաւն Տեառն ընդ առաջին ըստ Ծննդեանն եւ ոչ ըստ Յայտնութեանն, որպէս ամենայն երկիրս Յունաց: Եւ լուեալ թագաւորն գրեաց վաղվաղակի առ հայրապետ քաղաքին որում անուն էր Ոստոս, առնել զտաւն Տեառն ընդ առաջին ըստ Ծննդեանն եւ ոչ ըստ Յայտնութեանն. եւ հայրապետն արտասուեալ ժողովրդականաւքն հանդերձ եւ երեւեալ նշան Աստուծոյ, քանզի ջուր բղխեաց ի սիւնէն, որ ի սուրբ Սիոն առաջի բազմութեանն եւ զաւրաց թագաւորին, եւ ամենեքեան փառս ետուն Աստուծոյ: Եւ դարձեալ ի հայրապետութեանն Մակարայ ի Մաւրիկ թագաւորէն եկեալ սաստիկ հրաման մահու ի քաղաքն յԵրուսաղէմ, թէ ոչ կատարեսցեն զտաւն Տեառն ընդ առաջին ըստ Ծննդեանն եւ ոչ ըստ Յայտնութեանն. եւ բազմութիւն քաղաքին ետուն զանձիսս իւրեանց ի մահ եւ ոչ առնել զկամս թագաւորին. եւ զաւրք թագաւորին կամեցան սուր արկանել ի քաղաքն, եւ յԱստուծոյ խնամոցն այլ նշան յայտնեցաւ: Քանզի Սուրբ Կոյսն Մարիամ տպաւորեցաւ ի նմին սիւն որ ի սուրբ Սիոն, ի գիրկս ունելով զՓրկիչն, եւ յաջ Տեառն խաչ մեծ ծիրանի, եւ տեսին արդարք եւ

մեղաւորք, եւ բժշկեցաւ առաջին կին մի ի Հայոց: Եւ յետ մահուանն Մակարայ ընկալաւ զքաղաքն զաղանդն:

Յոհաննու Հայոց կաթողիկոսի .

Որ ծնունդ առնէ նախ քան զյայտնութիւնն, սուտ է. զի Ծնունդն եւ Յայտնութիւնն մի են, եւ յայտ ընթերցուածոյն է, որ ասէ . Յիսուս Քրիստոսի ծնունդն էր այսպէս:

Յոհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի.

Արժան է ար յայտնութեանն արհնել զջուրն :

Պատրիարզն ասէ.

Զաւետիքն նախ քան զԾնունդն ընդէ՞ր ոչ առնէք:

Կոմիտաս Հայոց կաթողիկոսն ասէ.

Զի ոչ ընկալաք յԱրտեմոնէ եւ ի Յորնաղէ, այլ ի Յակոբայ եւ ի Կիրղէ յԵրուսաղէմացոյ: Արդ՝ ժամ է քեզ մեղադիր լինել Յակոբայ, որ զԱւետիքն ի Ծնունդն եղ, քանզի մեք զԵրուսաղէմին ընդունիմք, որպէս դուք զԱրտեմոնին եւ զՅորնաղին: Բայց ի հակառակն եկեսցուք: Ո՞ եցոյց տաւնել աշխարհի զԱւետիքն, զի հրեշտակն միոյ Կուսի աւետեաց. Մատթէոս ի բազում տեղիս զծնունդն յիշէ եւ աւետեաց փոյթ ոչ առնէ. Մարիամ ընդ բանսն խռովեցաւ եւ ունէր զբանն ի սրտի իւրում. եւ Յովսէփ լռելեայն արձակել. յերագի զաւետիքն ընդունի, եւ այս ամենայն ի ծածուկ, իսկ ի Ծնունդն՝ հրեշտակքն, հովիւքն, մոզքն, աստղն:

Ի հաւատոյ թղթն Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի ի թղթոյն Անտիոքայ պատրիարզին.

Դարձեալ ասէք վասն կուսական աւետեացն, թէ մեք ոչ տաւնեմք: Այո՛, տաւնեմք եւ կարի քաջ: Որպէս զԾնունդն եւ զՄկրտութիւնն ի միում աւուր տաւնեմք, նոյնպէս եւ զՅարութիւնն եւ զԱւետիսն: Եւ եղեւ այսպէս զի ապրիէլի չորսն՝ լրումն տէրունական չարչարանացն, հինգն՝ թաղումն, վեցն՝ յարութիւնն: Արդ՝ նոյն հրեշտակ, որ ապրիէլի վեցն զաւետիս Ծննդեանն ետ Կուսին, նոյն դարձեալ ապրիէլի վեցն զաւետիս Յարութեան ետ իւղաբերիցն. վասն որոյ ի փառս Աստուածածնին զՅարութեան մեծացուցէքն եւ զեւթն արն կատարեմք խորհրդաբար, որ զաւետիս Հոգոյն եւ այլն, որ զկնի գայ: Այլ թէ ընդէ՞ր ոչ կարգեաց Յակոբոս ընթերցուածն եւ ոչ Կիրղի փոյթ եղեւ, այս է պատճառն, զի բազում անգամ պատահէր ի սուրբ պահս չարչարանացն ապրիէլի վեցն. վասն այսորիկ հրամայեցին յամենայն կիրակէի ընդ յարութեանն պատուել զաւետիսն եւ ասել

մեծացուցե՞ք, քանզի սրբոցն երկուցեալ ի լուծանելոյ զպահսն՝ ոչ կարգեցին զաւետիսն, եւ որ յետոյ կարգեցաւ յԱրտեմոնէ եւ ի Յոբնաղէ՝ զայն ոչ ընկալաք եւ ոչ զայն, որ բռնութեամբ եղաւ ի Մարկիանոսէ եւ ի Յուստիանոսէ:

Նեստորն ասէ ընդ կրանաւորն.

Ծնունդ ընդէ՞ր ոչ առնես:

Կրոնաւորն ասէ.

Յակոբոս եւ Կիրեղ, Աստուածաբան եւ Բարսեղ զերիս ծնունդն մի ասեն եւ հրամայեցին տաւնել: Ընթերցիր զիմ գրեանն եւ տես թէ յուրանալ են, «Որ ծնանելոցն է ի քէն» եւ «Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ». «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս». «Եւ ի ծնանելն Յիսուսի». եւ այլ ընթերցուածք եւ սաղմոսք:

Անանիայի Հայոց վարդապետի.

Տեսցուք եւ զայն, որ ասեն Յոյնք, թէ յորում աւուր պապանծեցաւ Ջաքարիա, ի նմին աւուր յղացաւ կին նորա. եւ աստի թուեն հարիւր եւ ութսուն աւր, որ բերէ ի մարտի ԻՇ զԱւետիքն. եւ անտի թուեն աւուրս ՄՀԶ, որ բերէ ի ԻՇ դեկտեմբերի զծնունդն: Բայց արդ պապանծումն Ջաքարիայ ի Ժ թշրին ամսոյ է, զի նա է եւթներորդ ամիս, նա է աւր քաւութեան: Քանզի ասէ բնագիրն «Յամսեանն եւթներորդի, որ աւր մի կոչեցեալ սուրբ լինիցի ձեզ», եւ «Նա է աւր քաւութեան» յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբութեանցն մի անգամ ի տարւոջն, եւ կայր առաջին մեծ տաւն տաղաւարահարացն եւ բոլորեալ անդ էր. զի ա՞րդ գնայր նա ի տուն՝ առանց կատարման տաւնին, զի նա էր քահանայապետ, նաեւ տուն նորա չէր յԵրուսաղէմ, եւ վկայ մեզ աւետարանիչն որ ասէ. Իբրեւ լցան աւուրք պաշտամանն: Աւուրք պաշտաման զտաւն քաւութեանն եւ տաղաւարահարացն ասէ: Տեսանե՞ս. Կատարեցան, ասէ, աւուրքն, եւ գնաց ի տուն իւր եւ յղացաւ կին նորա. զի թէ հասարակաց ժողովրդեանն երիս աւուրս սրբիլ հրամայեն արէնքն նախ քան զտաւնն, նոյնպէս եւ յամսամուտս, ո՞րչափ եւս առաւել նա, որ զլուխ էր տաւնիցն. եւ այս անհաւատալի է, որ նա ի մէջ երկուց գլխաւոր տաւնից երթայր ի տուն իւր եւ մերձենայր ի կին իւր: Արդ՝ պարտ է հաւատալ աստուածայնոց գրոց ի Ժ թշրին ամսոյ պապանծումն, որ է Է սեպտեմբերի, ի ԻԲ մերձաւորութիւնն եւ յղութիւնն Եղիսաբեթի, որ լինի Զ ամսոյն աւուրքն Ը եւ Զ աւր, որ ցուցանէ ի ԺԶ ի Նիսան ամսոյ որ լինի ի ԶՆ ապրիլէի Կուսին աւետիքն ըստ Հռոմայեցւոցն եւ թուել Ժ ամսեայ աւուր յղութիւն Կուսին կատարի ՄՀԶ ի ԻԱ տրէթի ամսոյ, որ է Զն յունուարի: Աստ կացցուք հաստատուն, Ղուկաս ասէ. Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ . սկսեալն՝ սկիզբն առնելն է երեսնամեայ կատարեալ հասակի եւ

վարդապետութեան ի Ջն յունուարի լինել Մկրտութեանն, յորում եւ ծնաւ, զի ի նոյն ար եկն կատարումն երեսուն ամին:

Արդ, Յակոբոս որ քաջ գիտէր ի Ջն յունուարի գրէ զՅայտնութիւնն եւ կարգէ ընթերցուածս: Միաբանի նմա եւ Կիրեղ Երուսաղէմացին, քանզի ասէ Կիրեղ, թէ այլ քաղաքս հետեւեցան Արտեմոնի, եւ յառաջին կարգն Հայք միայն գտան, եւ ի ԻՇ դեկտեմբերի Դաւթի եւ Յակոբայ տաւնեն, եւ թէ Կիրեղ տրտնջէր զՀայոց, ինքն ի կարգ Ծննդեանն ընդէ՞ր կարգէր մարտիրոսի, ի Ջն յունուարի Յայտնութիւն. զի ի Յակոբայ հաստատեալ գտաւ զԾնունդն, զԽաչելութիւնն եւ զՊենտեկոստէն, եւ ինքն դնէ զկարգ երախայիցն եւ զմարտիրոսացն ի միջոցն: Եւ գիտեմ, որ յԵրուսաղէմին հաստատուն է:

Ի հաւատոյ թղթէն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, որ առ Մանիլ թագաւորն.

Է՛ եւ այս աւանդութիւն Հայոց ի նախնեաց սկսեալ՝ զտաւն Ծննդեանն եւ Մկրտութեանն տաւնել ի միում աւուր. եւ այս՝ ո՛չ է վայրապար, զի ի սկզբաննէ ամենայն եկեղեցիք նոյնպէս կատարէին, որ եւ այս գիտելի է ձերում իմաստութեանդ, թէպէտ եւ յետոյ յերկուս բաժանեցին զմի տաւնն: Իսկ մեք զաւանդեալն մեզ ի սրբոյն Գրիգորէ անփոփոխելի պահեցաք ըստ Ղուկայ որ ասէ թէ՝ Յետ աւուրցն այնոցիկ գնաց ի տուն իւր եւ յղացաւ Եղիսաբեթ, եւ տեսիլն եւ պապանծումն յառաջին ար տաւնի քաւութեանն եղեւ:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԵՄ ՆՈՑԱ ՈՐՔ ԱՍԵՆ ԹԷ ՏԵՐՆ ՄԵՐ ԶԳԱՈՆ ՈՉ ԵԿԵՐ ՅԵՐԵԿՈՅԻՆ ԴԻՆԳՇԱԲԹԻՆ

Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ՝ Աւետարանին  
մեկնութենէն.

Վասն որոյ ի հին զատկին սկսանի. զի այն յայսմ աւրինակ էր եւ երեկունն, զի ի լրումն ժամանակաց  
եկն. նախ զհինն կատարել, եւ ապա նորոյս սկիզբն առնէ, զի այն խաւիանելոց էր:

Նորին՝ այլուստ

Քանզի յառաջ եկեր զգառն, որ ի Մովսիսէ անտի գայր, եւ ապա ետ զմարմինն եւ զարիւն  
աշակերտաց իւրոց:

Ջենոբայ եպիսկոպոսի.

Եկեր գառն ճշմարիտ՝ զգառն խորհրդոյ. եւ ապա ետ զմարմին իւր աշակերտաց իւրոց:

Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի.

Որպէս ի սուրբ պասքայն, զի նախ եկեր գառն ստուերին եւ ապա սկսաւ ճաշակել զհոգեւոր զատիկն:

Նորին՝ յետ սակաւուց.

Եւ յետ ճաշակելոյ ստուերական գառինն, ապա աւրինեաց զհացն եւ ետ նոցա, ըստ մեծին Պաւղոսի  
որ ասէ, թէ Յետ ընթրեացն առ Յիսուս հաց, գոհացաւ . եւ ըստ սուրբ աւետարանչին որ ասէ. Յարեաւ  
Յիսուս [յ]ընթրեացն եւ զգեցաւ զղենճակ մի:

Ի թղթին Ներսիսի որ առ Մանիլ թագաւորն.

Գառնն ճշմարիտ յորժամ եկեր զգառն աւրինակին եւ զբաղարջն:

#### **ԳԼՈՒԽ ԺԳ.**

### **ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՆԽՄՈՐ ԵՒ ԱՆՋՈՒՐ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ, ԱՆԱՂ ԵՒ ԱՆՁԷԹ**

Թաղէոսի առաքելոյ.

Արժան է զհաց պատարագին ջերմ հանել ի սեղանն, եւ ջուր ո'չ է պարտ խառնել ի գինին:

Մակարայ յԵրուսաղէմի հայրապետի.

Պարտ է ըստ առաքելոցն աւանդութեան զսուրբ հացն ջերմ հանել ի սեղանն՝ առանց իրիք խառնուածոյ, զի ապականացու իւրիք ոչ փրկեցաք, այլ անապական մարմնով անարատ Գառինն:

Գրիգորի Աստուածաբանի.

Աստուատ բարձունն խմորոյն ի հնամէն եւ ի քացախուտ չարութենէն:

Նորին.



Արդ՝ խմորն ո՛չ է հաց կենդանականի:

Ի չորրորդ գրոցն Լեւոնի Հռոմայ հայրապետի.

Քրիստոս աւանդեաց բաղարջով զպասեքն, զոր առեալ Յուդայի գնաց առ Հրէայսն եւ ասաց թէ բաղարջ աւրինացն գինի եթաց եւ ետ մեզ եւ ասաց, թէ այս է մարմին իմ, որ յերկնից իջեալ է. արդ հանէք զնա ի խաչ. թէ կարէ ինքն իւր կեանս տալ, ապա եւ ձեզ տայ կեանս բաղարջ աւրինացս: Դիոնեսիոս Աղեքսանդրացի եւ Մակար յԵրուսաղէմի եւ Անտիկոստ Կոստանդնուպոլսի ասեն միաբան թէ աւետարանիչն աճումն Քրիստոսի գլայտնի լինելն յաշխարհի ասէ եւ ոչ վասն խմորուն հացի, որով ոմանք պատարագեն զանապական Տէրն մեր:

Եփրեմի եւ Ջենոբայ.

Ի գինոյն առ զպատառն Քրիստոս, եթաց ի ջուրն եւ լուաց ի շնորհաց Հոգոյն եւ ետ Յուդայի:

Ամռիկոսի եպիսկոպոսի

Արդ, հաց պատարագին խմոր խառնուած ո՛չ ունի, որպէս եւ ոչ Քրիստոս՝ ապականութիւն:

Կիպրիանոսի եպիսկոպոսի՝ ի Ողորմութեան ճառէն.

Քանզի բաղարջ հացիւ եւ անապական գինով աւանդեցաւ մեզ սուրբ խորհուրդն:

Կիւրղի՝ Պարապմանց գրոց.

Աթոռակիցն Հաւր ետ վասն մեզ զարիւն իւր. վասն այսորիկ առնենք անապական գինով, զի մի՛ ապականութեան կարծիս յանապական արիւնն Աստուծոյ լիցի: Քանզի սովորութեամբ մարդիկ զջրախառն գինի ապականեալ ասեն:

Նորին՝ գՂեւտականէն.

Քանզի խմորն՝ չարութեան եւ ապականութեան է աւրինակ:

Ի հարցամանցն Կղեստիանոսի Հռոմայ հայրապետի եւ Բարսամայի Անտիոքայ եպիսկոպոսի.

Բարսամայ ասէ.

Ապա մինչ այն ջուրն որ ի կողիցն ել չէր ապականութիւն, զոր մեք ի գինին խառնենք ընդէ՞ր դսրովէք:

Կղեստիանոս ասէ.

Մի՛ թիրէր անմտութեամբ զբանդ, զի այն ջուրն ոչ է ի պատարագին խորհուրդ, այլ ի մկրտութեանն:

Բարսամայ] ասէ.

Կարես յիշել զայն որ Կաթուղիկէսն ասէ, Թէ. Ջուրն եւ արիւնն եւ հոգին մի են:

Կղեստիանոս ասէ.

Յիմար եւ անմիտ դու դատեցար զքեզ, զի թէ յառաջ զարիւնն էր ասացեալ եւ ապա զջուրն, բարիոք էր. բայց նախ զջուրն ասաց, զի յառաջ ջրով մկրտիմք եւ ապա հոգին մաքրէ, եւ ապա արժանի լինիմք մարմնոյ եւ արեանն Տեառն, որպէս եւ Տէրն ասէ. Որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգոյ, ոչ մտցէ յարքայութիւնն Աստուծոյ: Բայց դու ասա ինձ` խմորու՞ն է քո մարմինդ, թէ ոչ:

Բարսամալ] ասէ.

Թէ խմորուն էր յորովայն մաւրն, ապա քացախեալ էր արդեաւք իմ կողքս:

Կղեստիանոս ասէ.

Խոստովանի՞ս զորովայն Կուսին առանց խմորոյ եւ զՔրիստոսի մարմինն անխմոր Մարիամայ ծնեալ առանց խմորոյ:

Բարսամայ ասէ.

Այո՛, խոստովանիմ:

Կղեստիանոս ասէ.

Բնութի՞ւնն է ստոյգ, թէ աւրինակն:

Բարսամալ] ասէ.

Բնութիւնն ստոյգ է քան զաւրինակն:

Կղեստիանոս ասէ.

Խմորոյն բնութիւնն ապականացու՞ է քան անապական:

Բարսամալ] ասէ.

Ապականացու է ստոյգ խմորոյն բնութիւնն:

Կղեստիանոս ասէ.

Ահաւասիկ դու վկայեցեր քեզ, զի խմորով ապականես զնշխարն եւ ապականացու ասես գործովքդ զմարմինն Տէրունական. զի ջուրն զգինոյն համն տանի եւ խմորն զզաւրութիւնն ապականէ. նոյնպէս եւ աղն: Իսկ ձէթն զսիրտն զազրացուցանէ: Արդ՝ ու՞ր է անապական հացն, որ յերկնից իջեալ է. ու՞ր այսքան խառնուածս լինի:

Բարսամայ ասէ.

Զի՞նչ համարիս դու զխմորով եւ զջրով պատարագն, եթէ վախճան քեզ հանդիպի:

Կղեստիանոս ասէ.

Ոչ թե միայն ես չառնուի զհացն զայն այլ եւ թէ ոք ի տգիտաց առնոյր զնա, զնգովքն Նեստորի կարդայի նմա, եւ եկեղեցոյ հանի, եւ մեծ ջանիւ թէ լինէր արժանի յետին թաւշակին:

Բարսամայ ասէ.

Եւ զի՞նչ համարիս դու զայն հացն զոր մատուցանենք խմորով եւ ջրով:

Կղեստիանոս ասէ.

Համարիմ զհաց խմորուն եւ ձիթուն չասել անուն հացի ի վերայ նորա. եւ որ հաղորդի ի նմանէ՝ համրիմ ուտել զմիս զոհից եւ ոչ համարիմ արժանի եկեղեցւոյ եւ քրիստոնէութեան. զի ոչ վասն կատարելութեան արկանէք զխառնուածն ի նշխարն, այլ վասն հայիոյութեան, զի Քրիստոս ախտի բնութեան ասէք ծնեալ, որպէս ամենայն մարդ, զի թէ Աստուած համարէիք զնա՝ ոչ արկանէիք ի խորհուրդն աղ եւ ձէթ եւ խմոր:

Ի Կարնոյ կանոնացն, որ եղաւ հրամանաւն Յուստիանոսի.

Քանզի լուաք լուր ծանրագոյն, թէ ոմանք ապականեալք ի քաղկեդոնականացն եւ զսուրբ խորհուրդն ապականեն խմորով եւ ջրով: Արդ՝ որ ոք գտցի յայսպիսի չար սովորութիւն՝ լուծցի ի պատւոյն, եւ ի սուրբ ժողովոյն, նզովեալ եղիցի:

Կրանաւորն ասէ ընդդէմ Նեստորին.

Բարսեղ եւթնալոյս արեգակն ասէ. Բանն, որ ասէ թէ

Ողջոյն մի՛ տայք ի ճանապարհի, կարծեն թէ վասն հերձուածողացն ասէ, որք երկու բնութիւն ասեն զՔրիստոս, եւ ջրով եւ այլ խառնուածով ապականեն զՍուրբ խորհուրդն:

Յոհան Ոսկեբերան Աւետարանին մեկնելն ասէ.

Ու՞ր այնոքիկ որ ջուր արկանեն ի Սուրբ խորհուրդն, զի որթն գինի ծնանի եւ ոչ ջուր: Ի քրիստոսնէից. թէ ոք ճաշակէ զայն հացն անգիտութեան, որոշեսցի յեկեղեցւոյ, եւ թէ գիտութեամբ իբրեւ զայնոսիկ է, որ ի զոհիցն ճաշակեն եւ կամ զմեռելոտի:

Յոհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի.

Արժան է զհացն անխմոր եւ զգինին անապակ հանել ի սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի, որպէս եւ եբեր արինակէն առաքելաբար որպէս եւ զաղն արինութեան:

Ի հաւատոյ թղթն տեսառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի, որ առ Յոհաննէս պատրիարզն Ասորոց.

Արդ, գլխորն արհինակ արքայութեանն ասաց Տէրն վասն յինքն ձգող զարութեանն զոր ունի, որ է աւետարանական քարոզութիւնն. եւ դու առնուս գլխորն յարհինակ մարմնոյն Քրիստոսի. ապա հարկ է քեզ առնուլ զգանձն եւ զմարգարիտն եւ զմանանէխն եւ խառնեա՛ ի մարմինն Քրիստոսի: Ո՛հ անմտութեանդ: Եկն ար բաղարջակերացն ասեն աւետարանիչքն, թէ յառաջնունն ար բաղարջակերացն երթայ եւ վերստին առնու եւ, ասէ, Մինչդէռ ուտէին, առ Յիսուս հաց, զոհացաւ եւ ետ աշակերտացն, զոր ուտէին զբաղարջն ի սեղանոյն ըստ արհինացն. եւ Յովսէփ արհինապահ զհա՞րդ հաց խմորուն բերէր նոցա. եւ թէ Քրիստոս զարէնսն ելոյծ եւ հաց խմորուն կերան յայնմ գիշերի, ապա Յուդա չէ մատնիչ, զի զարհինազանցն մատնեաց, այլ նախանձախնդիր իբրեւ զԵղիա, եւ Հրէայքն չեն աստուածասպանք, զի զարհինազանցն սպանին: Աստուած ասաց Մովսիսի՝ Մի՛ պակասեսցէ հաց ջերմ ի սեղանոյն, եւ ի խորանն հաց խմորուն ոչ մտանէր եւ ոչ ի սեղանն ելանէր, եւ վկայ մեզ բանն Քրիստոսի զոր առ Հրէայսն ասաց. Եկեր Ղաւիթ զհացն առաջարութեան : Արդ՝ ստոյգ զբաղարջն ասէ հաց եւ ոչ խմորունն, եւ Ղաւիթ զայն եկեր ի սեղանոյն: Նաեւ է մարդկան սովորութիւն որ եւ զցորեանն հաց կոչեն: Արդ, խմորն քացախ եւ ջուրն ապականացու որ ունի ծածուկ զաղանդն Նեստորի, որ ցուցանէ ոչ Աստուած կամ աստուածախառն մարդ չարչարեալ վասն մեր, այլ լոկ մարդ իբրեւ զմեզ ի ներքոյ անկեալ ապականութեան: Արդ, յո՞ր առաքելոյ ուսար զայդոքիկ. խմորես, ձիթես, աղես եւ համեմես իբրեւ զփտեալ անդամ, զանապական մարմինն Քրիստոսի:

Ի հարցմանցն Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի եւ պատրիարզին.

Արդ, ի վերնատունն առ Յիսուս հաց եւ գինի, եւ ջուր ո՛չ ասաց, եւ ի բերոյ որթոյ ասաց յետ Յարութեանն ըմպել: Իսկ յորժամ ի խաչել ոչ ասաց, թէ զոր յիս տեսանէք՝ արարէք ինձ յիշատակ, զջուրն որ ի կողէս ելանէ, ո՛վ դու կրպակաւոր եւ ջրասէր. այլ ի Վերնատունն առ Յիսուս հաց, նոյնպէս եւ զբաժակն գինով, ասէ աւետարանիչն: Մի՞թէ յայտնեցաւ ձեզ Տէրն եւ ասաց, թէ իմ մարմին քացախեալ խմորն է եւ իմ արիւն ջրով ապականեալ գինին է, զոր ի Վերնատունն ոչ կարացի ասել առաքելոցն, իսկ այժմ ձեզ համարձակ ասեն: Բայց այս որոմնս Բարսամայի է, աշակերտին Նեստորի: Արդ, այն որ ասէ, թէ. Մարիամ ընդ բանսն խռովեցաւ, մի՞թէ խմոր եբեր ի Կոյսն եւ վասն այնորիկ խռովեցաւ. եւ կամ այն հացն խմո՞ր էր զոր ասաց Տէրն, թէ Ես եմ հացն կենաց իջեալ յերկնից, ապա հրեշտակք խմորահա՞տք են արդեաւք: Արդ, աղ եւ ջուր արկանէք ի խորհուրդ պատարագին. ո՞ր յամուսնութենէ եւ ի կարծեաց ծնեալ ասէք զՔրիստոս, եւ զԱստուած ոչ անկեալ ընդ մահուամբ, եւ ոչ արեամբ նորա եղէք փրկեալք:

Ի հաւատոյ թղթէն Տիրանոյ Հայոց վարդապետի.

Արդ, որ այսաւր խմորեն եւ խառնեն, այս են միտք, զի ի հարկէ այսու խառնելովս յապականութիւն խոնարհեսցի անապական մարմինն Քրիստոսի:

Ի հաւատոյ թղթէն Խոսրովու Հայոց հռետորի.

Արդ, գրէ առաքեալն Պաւղոս. Տէր Յիսուս ի գիշերին, յորում մատնէր, առ հաց զբաղարջն ի սեղանոյն ըստ արինացն, նոյնպէս եւ զբաժակն գինով առանց ջրոյ: Մելքիսեդէկ հաց բաղարջ եւ անապակ գինի բաշխէր ի գերեզմանին Ադամայ, որ ցուցանէր զանապական գալուստն Աստուծոյ յաշխարհս: Նոյնպէս եւ բաղարջն Աբրահամու եւ Ղովտայ, որով զանմարմինսն կերակրեցին: Եւ նահապետն Յակոբ ասէ. Լուսացէ արեամբ խաղողոյ զպատմուճան իւր: Ճշմարիտ որթն Քրիստոս զջուրն ի գինի փոխարկեաց. իսկ Նեստորիոս ի զգինին ի ջուր, զի ոչ էր նա մանուկ առագաստի ուրախութեան հարսանեացն: Արդ, ցուցեալ եղեւ, որ ի զուր ջանան, որ ի սուրբ խորհուրդն ջուր եւ խմոր խառնեն:

Ի հաւատոյ թղթէն Ներսէսի, որ առ Մանիլն.

Յետ կատարելոյ զհինն՝ առեալ զհացն ի սեղանոյ անտի. յայտ է թէ՛ զբաղարջն, զի առաջի ար էր բաղարջակերացն, եւ ասէ. Այս է մարմին իմ: Նաեւ կուսածին եւ անապական մարմնոյն ի դէպ է բաղարջն լինել արինակ, եւ ոչ խմորեալն: Եւ վասն գինոյն, զի [ի] Լուսաւորչէն մերմէ ունիմք զայս, որպէս ընկալաւ նա ի նախնեացն: Գրեալ է՝ Քրիստոս գինի միայն առ ի ձեռս եւ ասաց. Այս է իմ արին. եւ ջուր ոչ յիշէ. եւ թէ՛ ի բերոյ որթոյ ոչ արբից:

Մանուէլի եպիսկոպոսի՝ վասն տաւնի Սուրբ խաչին.

Ի ձեռն Կոստանդիանոսի հաստատեցաւ տաւնախմբութիւն Խաչիս ըստ Հոռոմոց տումարին ի սեպտեմբերի ԺԴ ոչ ի նմին աւուր կատարել զտաւնախմբութիւնն, զի ար Յարութեանն չքնաղ եղանակաւոր ծայնիս պատուի՝ առանց տէրունեան խաչին. վասն որոյ հարկեցաք ոչ այլ ար տաւնել, այլ ընդ Քրիստոսի Յարութեանն պատուել զփրկագործ տաւնախմբութիւն Խաչին:

## ԳԼՈՒԽ ԺԴ.

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶԻՆԱԶԵՑԱՐՆ ԱՍԵԼ ԱՄԵՆԱՅՆ ԱԻՈՒՐ Ի ԴԵՄՍ ՈՐԴԻՈՅ

Ներքտառեայ Հռոմայ հայրապետի.

Արդ, ոչ եղև հնար Յովսէփայ զմարմինն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի խաչէն իջուցանել կամ զբեւեռսն թափել, զի ի փորուածոյ ձեռացն փայլատակմունք ճառագայթից անպատմելի լուսոյ հատանէին՝ մինչեւ համբարձեալ զձեռս իւր եւ երիցս անգամ ասաց. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ. եւ ապա համարձակեալ՝ իջուցեալ պատեաց եւ թաղեաց:

Բան ի գրոյն Սոկրատայ.

Քանզի Իգնատիոս Անտիոքացի կարգեաց յիւր ժամանակս զխաչեցարն յԱնտոք, զոր ի հրեշտակէն լուաւ, զի սա ականատես էր եղեալ Քրիստոսի, եւ անտի առեալ ասացին զխաչեցարն բազում քաղաքք եւ եկեղեցիք:

Նորին Իգնատիոսի, որ եւ Աստուածազգեացն, ասաց.

Երկիր պագանէ հոգիս իմ խաչին Յիսուսի Քրիստոսի, որ է գայթակղութիւն անհաւատիցն:

Նորին.

Որ զխաչելութիւնն ամաւթ համարի, եղիցի քեզ իբրեւ հակառակորդն:

Կղենայ Հռոմայ հայրապետի.

Սահմանք եւ հաստատութիւն հաւատոյ քրիստոսական խաչն եւ սրբասացութիւնն զոր հանապազ յաղաւթս մեր կատարեմք եւ ասեմք. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Ի գրոցն Արեղիանոսի Հռոմայ հայրապետին, որ Կանոնաց լրմունք կոչի.

Արդ, յաւուրս առաքելոցն յաւուր չորեքշաբաթու նախ ասէին ` Սուրբ Աստուած, որ խաչեցար վասն մեր, եւ ապա սկսանէին ի ժամ պատարագին: Եւ զկնի փոխման Աստուածածնին Հոգի ազդեալ ի Թումաս, ասաց զՓառաւորեալ միշտ Կոյսն` կցորդիւ, զոր առեալ առաքելոցն եւ եղին զկնի Սուրբ Աստուածին, որ է ստոյգ վկայ խաչեցարին` զՄայրն առ Որդի բարեխաւս ունելով:

Ի գրոցն Որոզինէի, որ Ջատկաց կոչի.

Արդ, յառաջ քան զմեզ, որք յետ առաքելոցն էին, բազումք ասացին զՍուրբ Աստուածն. վասն որոյ պարտ է եւ մեզ հետեւել նոցա կարգել ի մերում ժամանակիս եւ ասել զՍուրբ Աստուածն: Արդ` զայս գտեալ Յոհան Ոսկեբերան եւ կարգեց ձայնիւ ընդդէմ Արիանոսացն յիւր ժամանակս, զոր արգելուին Թէոփիլեանք վասն նախանձուն զոր առ նա ունէին եւ ասէին, թէ. Ոհան զՈրոզինէին խորհի:

Իսիդորոսի Ելիստացոյ ի Ռ թղթոցն.

Բայց դու` արմատ կենդանութեան փայտ սուրբ, պսակ եկեղեցւոյ եւ զէն հաւատոյ եւ յուսոյ քրիստոնէից, որ ի քեզ ընկալար զսերոբէիցն ահաւորն, գայթակղութիւն անզգայ անիմաստիցն եւ մեզ պարծանք ի ներկայս եւ յապառնիսն, անբաղդատելի լոյս, յաղագս որոյ առ ի քեզ բարձրացեալ գոչեմք յարակայական ձայնիւ ամենայն աւուր ` Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ:

Գրիգորի Աստուածաբանի.

Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ, եւ դարձեալ լուսաւորեալ. զի պարտ էր եւ ընդ Արարչին չարչարակից լինել եւ արարածոյն:

Մեծին Բարսղի.

ԶԱստուած խաչեալ տեսանելով, եւ զնոյն ընդ աւագակսն:

Նորին՝ ի կանոնացն.

Քահանայ առանց բեւեռի խաչ մի՛ աւրհնեսցէ եւ պայծառացուցէ զուարակաւք:

Եպիփանու Կիպրացոյ.

Այլ դու, ո՞վ խաչ, որ եւ՛ Քրիստոսի, եւ մեզ պարծանք:

Նորին՝ յետ սակաւուց.

Սովաւ Քրիստոս ծանուցաւ մեզ, վասն որոյ եւ սովաւ ակն ունիմք ապրել յանսպառ տանջանացն:

Կիրողի յԵրուսաղէմայ հայրապետի.

Մի՛ համարեսցուք յամաւթ զխաչն Քրիստոսի. այլ թէպէտ եւ ոք ծածկէ, դու յայտնապէս ի վերայ ճակատոյդ նշանակեսցիր, զի Աստուծոյ նշան է եւ յաղթող զէն, որ շնորհեցաւ մեզ, զի ապրեսցուք:

Յոհաննու Ոսկեբերանի՝ յԵսայուն մեկնութենէ.

Թէ հարցանէ ոք ընդ իս եւ ասէ, թէ Զի՞նչ արար Քրիստոս: Ես թողից զարարածոց լինելութիւնն եւ զյարութիւն մեռելոցն եւ զայլ սքանչելիսն, զոր կատարեաց զարմանագործն Քրիստոս, եւ զմեծն քան զամենայնն ասացից. Ապտակեցաւ վասն իմ եւ թուք յերեսս ընկալաւ եւ խաչեցաւ. եւ այս՝ Աստուծոյ գործ է եւ ոչ մարդոյ:

Դաւթի Հայոց փիլիսոփայի.

Արդ, որ եդ զանձն՝ ապաքէն սովա՛ւ եդ, եւ ի սմին եդ եւ որ ի սմին եդ՝ նո՛յն տակաւին ի սմին է, եւ ի սմանէ ոչ երբեք մեկնեսցի հեռացեալ. ապա ուրեմն յիրաւի Աստուծոյ զաւրութիւն է սա:

Ի հաւատոյ բանէն Դըվնա]] ժողովոյն.

Ժամանեաց համբաւ ժողովոյն Քաղկեդոնի ի Հայս, եւ ընթերցան զսահմանեալ հաւատն ի նոցանէ, եւ ժողով արարեալ ի սկիզբան թուականութեանն Հայոց եւ բազում ճառս կարգեցին ընդդէմ քաղկեդոնականացն: Կարգեցին եւ զխաչեցարն յերիս սրբասացութիւնս կցորդիւ, ընդդէմ նորա բաժանմանցն զՔրիստոսի միացեալ բնութիւնն՝ զի մի՛ մարդապաշտք լիցուք, այլ անապական արեամբն Աստուծոյ եղիցուք փրկեալք. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ



խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: Ջի թէպէտ եւ մա՛րդ տեսաք զնա, այլ Աստուած էր. եւ թէպէտ ի տկարութիւն կամաւ խոնարհեցաւ, այլ հզաւր էր. եւ թէպէտ եւ կամաւ վասն մեր զմահ կրեաց, այլ անմահ էր:

Ի հաւատոյ թղթն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի Անտիոքայ պատրիարգին.

Արդ, քննեսցուք զայն, թէ զերեք սրբասացութիւնն Երրորդութեա՞նն ասացին սերովբէքն, թէ՞ Որդւոյ: Եսայիաս մարգարէն ասէ. Տեսի զՏէր յաթոռ բարձր, եւ շուրջանակի սերոբէքն երգէին երեք սուրբ եւ մի Տէր՝ իբրեւ ի միոյ երեսաց, թէ լի են երկինք եւ երկիր փառաւք նորա: Արդ, զայսոսիկ ի վերայ Որդւոյ ետես եւ ասաց Եսայիաս, եւ վկայ մեզ Յոհաննէս աւետարանիչն, որ ասէ. Եսայի ետես զփառս նորա եւ խաւսեցաւ վասն նորա: Արդ՝ զնա տեսաք ի վերջին աւուրս խաչեալ, եւ զնոյն սրբասացութիւնս երգենք նմա: Քանզի բարձրացեալ աթոռ՝ խաչն է եւ սեղան, եւ յյաներեւոյթս երգեն սերովբէքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զաւրութեանց, լի են երկինք եւ երկիր փառաւք քո, արհնութիւն ի բարձունս, արհնեալ, որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն, արհնութիւն ի բարձունս, արհնեալ որ եկիր : Արդ, ի բանէս իմացիր, որ Որդւոյ ասացաւ երեք սուրբն, որպէս եւ երեք արհնութիւնն:

Նորին՝ յետ սակաւուց.

Կիրեղ Աղեքսանդրացի ի ժողովն Եփեսոսի կարգեաց ընդդէմ Նեստորի. ձայնիւ «Միածին Որդի եւ Բանդ Աստուած, որ յանձն առէր մարմնանալ ի Սուրբ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն անփոփոխելի մարդ եղեալ խաչեցար սուրբ Աստուած, մինդ ի Սրբոյ Երրորդութենէն», եւ երկու հարիւրքն զՍուրբ Աստուած ի խաչեցարին կատարեցին ի Հոգւոյն ազդմանէ զոր եւ Ասորիք ունին ընդ մեզ «զՄիածինն» մինչեւ ցայսաւր: Եւ ի նոյն ժողովն Եփեսոսի երեք անգամ ի Փառք ի բարձունս Որդւոյ ասացին զԱրհնեալ Տէր ուսոյ ինձ զարդարութիւնս քո: Եւ յաւուր կիրակէի յետ Աւետարանին երեք անգամ Որդւոյ ասենք «Ոչ դադարեցի Քրիստոս արհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ»: Եւ ի հաւատոյ դաւանութիւնն, զոր Հոգւովն Աստուծոյ սահմանեաց սուրբ ժողովն Նիկիայ, ասէ վասն Բանին Աստուծոյ, թէ. Վասն մերոյ փրկութեան իջեալ մարմնացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով, մարդ ճշմարտապէս եւ ոչ կարծեալք, չարչարեալ, այսինքն՝ խաչեալ, թաղեալ եւ յերրորդ աւուր յարուցեալ եւ համբարձեալ յերկինս՝ նոյն մարմնով նստաւ ընդ աջմէ Հաւր, զոր ամենայն աւր երգէ ամենայն եկեղեցի: Արդ, յայտնի եղեւ, որ սուտ է նա եւ զայս ասէ եւ զմեզ բամբասէ վասն խաչեցարին, զոր ասենք:

Ի հաւատոյ թղթն Ներսիսի միջնոյ Հայոց կաթուղիկոսի.

Արդ, զնիւթական բնութիւնս զաւրացոյց Աստուած յոր ինչ կամեցաւ երեւել. նոյնպէս եւ զբնութիւն Կուսին զաւրացոյց տանել զանտանելի բնութիւն իւր. այսպէս եւ զփայտ խաչին զորացոյց, զի տարաւ զանբաւ բնութիւն իւր առաւել քան զմորենին, եւ զդրախտն: Եւ զքրովբէսն, յորում եւ սերովբէքն երկրպագեցին եւ պաշտեն զնա իբրեւ ստոյգ բարձող Աստուծոյ. նոյնպէս եւ Կոյսն կամաւ երկրպագեաց խաչին, զի Աստուած Բանն մարմնով չարչարեցաւ ի վերայ նորա:

Ի Հարցմանցն Կոմիտասայ] Հայոց կաթուղիկոսի եւ պատրիարգին.

Պատրիարքն ասէ.

Եւ պարսաւանք չէ՞ ամենայն աւուր ասել զխաչեցարն:

Կոմիտաս ասէ.

Արդ, զոր աւրինակ որդի թագաւորի երթայ ի վերայ ծառայի իւրոյ, որ բռնացեալ ունէր ի կապանս զիշխանս նորա, յաղթ նմա եւ հանէ զգերեալսն ի նմանէ եւ ինքն արեամբ թաթաւեալ լինի. եւ ազատեալքն յամենայն աւուր կան առաջի նորա եւ ասեն, որ վասն մեր հեղեր զարին քո եւ հանէր զմեզ ի կապանաց, ողորմեա՛ մեզ: Արդ, ասա ինձ՝ նախատի՞նս համարի զայս թագաւորն եւ որդին իւր, թէ պատիւ:

Պատրիարքն ասէ.

Պատիւ է գանն, թէ ստոյգ արեամբն փրկեցան:

Կոմիտաս ասէ.

Զնոյն եւ մեք ասեմք առ Քրիստոս, որ փրկեաց զմեզ արեամբն իւրով, զոր եհեղ վասն մեր ի վերայ խաչին:

Ի հաւատոյ թղթն Խոսրովու Հայոց հռետորի.

Արդ, տունս Հայոց զսրբասացութիւն սերովբէիցն ի վերայ Որդւոյ առնուն, վասն զի պատուեն զՀայր զառաքիչն նորա, ըստ այնմ, թէ. Որ զիս ընդունի, զառաքիչն իմ ընդունի: Իսկ թէ անարգեն ի սրբասացութիւնսն յիշել զխաչեցարն, զոր ի վերայ Որդւոյ առնումք, ապա ի բաց բարձէք զպատարագ խաչին, զոր դնէք ի վերայ սեղանոյ Տեառն, եւ նովաւ աւրինէք զանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Իսկ մեզ՝ պարծանաց անուն է խաչն ուսեալք ի հրեշտակէն, որ ասէր առ կանայսն մեծ պարծանաւք Զխաչելեալն խնդրէք: Քանզի եւ աւետարանիչն փառք Քրիստոսի կոչէ զխաչն. չեւ էր

Հոգի, ասէ՛. Քանզի Յիսուս չէր էր փառաւորեալ, այսինքն խաչեալ: Եւ քնար Հոգւոյն Պաւղոս գոչէ ասելով. Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ թէ բան խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն է, իսկ մեզ՝ զաւրութիւն Աստուծոյ:

Ի հաւատոյ թղթն տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի, որ առ պատրիարքն Ասորոց Յոհանէս.

Աւրինեմք զխաչ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ո՛չ թէ որդիս արքայութեանն առնել զփայտ կամ զքար, զի այս մարդոյս միայն պարգեւեցաւ ողորմութեամբն Աստուծոյ եւ ջրով եւ զինով լուանամք զաւրինակ ջրին եւ արեանն, որ ել ի կողէն Յիսուսի Քրիստոսի, եւ զմահացու փայտն՝ կենաց փայտ եւ ազատութեան արար: Իսկ թէ ասես, որ ամենայն խաչածեւք արհնեցան եւ վասն այնորիկ բաւական է մի խաչ. ապա մի անգամ ասաց Քրիստոս. Այս է մարմին իմ, եղիցի քեզ ամենայն հաց՝ մարմին Քրիստոսի, եւ եղիցի քեզ ամենայն տուն՝ եկեղեցի. եւ քանզի ետ Քրիստոս մի անգամ իշխանութիւն առաքելոցն, եղիցի քեզ ամենայն մարդ եպիսկոպոս եւ քահանայ. այսպէս եղիցին քեզ ամենայն խաչածեւք՝ պաշտելիք յանտառս մայրեաց եւ ի նկարս ոստայնանկաց, եւ որ այլ ինչ խաչածեւք են ի կենդանիս եւ ի շէնս. ահա եղեւ քեզ որպէս կաղնին Արամազդայ, որպէս փտեալ անդամ համեմես աղիւ, ձիթով եւ խմորով զանապական մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յո՞ր առաքելոյ ուսար զդա, եւ ընդ իս ասես, թէ ընդէ՞ր արհնես զխաչ:

Ի հաւատոյ թղթն Ներսիսի վերջնոյ Հայոց կաթողիկոսի, որ առ Մանիլ թագաւորն.

Եւ արդ՝ արհնութիւն խաչի ոչ նախ ի մէնջ եղեալ է, այլ առաջին հարցն ձերոց, եւ նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ: Իսկ լուանալն նախ ջրով եւ ապա զինով ի խորհուրդ երկուց վտակացն, որ ել ի կողէն Յիսուսի Քրիստոսի:

**ԳԼՈՒԽ ԺԵ.**

**[ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ  
ՎԱՍՆ ՈՒՐԲԱԹԱԶԵԼԻ ԶԻ ՍՈՒՏ Է ՅԱՄԵՆԱՅՆԻ]**

Ի հաւատոյ թղթն տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի, որ առ պատրիարզն Ասորոց Յոհանէս վասն ուրբաթագելի զի սուտ է.

Արդ, եկեսցուք եւ այն, որ զգիշեր յառաջագոյն դնէք քան զտիւ, եւ զխաւար՝ քան զլոյս:

Մեծ մարգարէն Մովսէս ասէ. Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր: Տեսանե՞ս, նախ զվերին յերկինս ասաց լինել, որ է լոյս եւ բնակարան հրեղինացն, որ ցուցանէ թէ առաջին է լոյսն եւ ոչ յետին: Եւ նախ ասաց Աստուած՝ Եղիցի լոյս, եւ ստուերք տարերց չքաւորեցան: Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զխաւարն՝ զիշեր . եւ ոչ ասաց ար՝ մինչեւ լցաւ երկոտասան ժամ զիշերուն, եւ եկն առաւաւտն՝ սկիզբն երկրորդ աւուրն, եւ ապա ասաց՝ ար առաջին, եւ ոչ երկրորդ: Եւ արար Աստուած զլուսաւորն մեծ՝ յիշխանութիւն տուրնջեան: Արդ, յամենայն Աստուածաշունչ զիրս տիւն յառաջ է կարգեալ քան զգիշերն: Ըստ այնմ. Եւ եղեւ անձրեւ զքառասուն տիւ եւ զքառասուն զիշեր: Եւ յելսն ի տապանէն ասէ. Եղիցի ամառն եւ գարուն, տիւ եւ զիշեր: Եւ թէ՛ Յետ քառասուն տուրնջեան ետ ինձ Տէր զտախտակսն: Եւ թէ. Ջքառասուն տիւ եւ զքառասուն զիշեր հաց ոչ կերայ:

Եւ բարեկամքն Յոբայ նստան եւթն տիւ եւ եւթն զիշեր:

Եւ Դաւիթ ասէ. Խորհեսցի ի տուէ եւ ի զիշերի: Եւ թէ՛ Արեգակն իշխանութիւն տուրնջեան : Եւ թէ՛ Ի տուէ կարդացի եւ զիշերի առաջի քո:

Եւ թէ՛ Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ եւ մի՛ լուսինն ի զիշերի:

Եւ այլ մարգարէ ես եմ, որ արարի զտիւ:

Եւ թէ՛ Տէր ետ զարեգակն ի լոյս տուրնջեան: Եւ ի մէջ հնոցին երեք մանկունքն երգէին տիւք եւ զիշերք զՏէր արհնեցէք:

Եւ լոյս եւ խաւար:

Ե՛կ ի Նոր Կտակարանս եւ տե՛ս, ո՞վ դու խաւարասէր:

Մատթէոս ասէ. Եւ էր Յիսուս ի լերինն զքառասուն տիւ եւ զքառասուն զիշեր փորձեալ եւ յաղթող գտեալ: Եւ թէ՛ յերեկոյին շաբաթին, յորում լուսանայր միաշաբաթին . տես՝ զերեկոյին շաբաթին ասաց, եւ ո՛չ միաշաբաթին:

Եւ Մարկոս ասէ. Իբրեւ անց շաբաթն ընդ առաւաւտս միաշաբաթին գան ի գերեզմանն:

Նոյնպէս եւ Դուկաս ասէ:

Եւ Յոհաննէս ասէ. Էր երեկոյ միաշաբաթին եւ դրաւքն փակելովք եմուտ Յիսուս: Տե՛ս՝ զերեկոյին միաշաբաթին ասաց, եւ ո՛չ երկշաբաթին: Արդ, ցո՛յց, ու՞ր է իրիցութիւն զիշերոյն:

Սեւեռի՝ յԱրարածոց.

Եւ ընդ տիւ եւ ընդ գիշեր ԻԴ ժամն կատարեն ար մի. ըստ այնմ «Աւուրք իմ որպէս հովանի անցին».  
Եւ գիշեր ոչ յիշեաց:

Բարսղի՝ յԱրարածոց.

Եղեւ երեկոյ՝ զսպառել աւուրն ասէ. եւ եղեւ վաղորդեան՝ զկատարումն գիշերոյն՝ զառաւաւտն ասէ  
ընդ տիւ եւ ընդ գիշեր եղեւ ար մի :

Այլուստ.

Ի ծագել առաւաւտուն մինչեւ ցնոյն ժամն կատարի արն եւ սահմանի:

Որոգինէ.

Ընդ տիւ եւ ընդ գիշեր ար մի, որպէս Յոբ Յորժամ լինի առաւաւտ՝ ասեմ. Ե՞րբ իցէ գիշեր, եւ յորժամ  
լինի երեկոյ՝ ասեմ. Ե՞րբ իցէ առաւաւտ:

Դիոնիսիոսի Աղեքսանդրու հայրապետի.

«Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեան՝ ար մի»: Զկատարումն աւուրն եւ զկատարումն գիշերուն մի  
ար անուանեաց, զի կարգ ինչ յարինեալ դիցէ երեւելեացս:

Կիրոլի Աղեքսանդրու հայրապետի.

«Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեան՝ ար երկրորդ»: Արդ՝ ստուգիւ ուսուցանէ եւ զվախճան լուսոյ  
երեկոյ կոչէ եւ զվախճան գիշերոյ՝ առաւաւտ, եւ ապա ասէ՝ ար ողջ, այսինքն՝ յառաջ լոյս եւ ապա  
գիշեր:

Յոհաննու Ոսկեբերանի՝ յԱրարածոց.

Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեան՝ ար երրորդ: Ստէպ-ստէպ ուսուցանէ եւ հաստատէ զմիտս մեր,  
թէ յառաջ է տիւ քան զգիշեր: Եւ մի՛ զարմանար, թէ կրկնելով ասէ՝ Եղեւ երեկոյ եւ վաղորդեան, զի եւ  
յետ այսչափ յիշելոյ մոլորեցան Հրէայք եւ այլք բազումք. հակառակին եւ զերեկոյ եւ գիշեր սկիզբն  
աւուրն ասեն եւ խաբեալ նստին ի խաւարի, եւ ճշմարտութեան ոչ հասանեն:

Նորին.

Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեան՝ ար չորրորդ: Ընդէ՞ր ամենայն աւուր կատարումն զայս  
ուսուցանէ մեզ. եղեւ երեկոյ, այսինքն՝ տիւն զի կատարեցաւ, եւ եղեւ վաղորդեան, այսինքն՝ գիշերն

որ լցաւ, եւ եղեւ ընդ երկոսեանն աւր մի. զի հաստատուն զկարգս Աստուածեղէն գրոց ուսցուք մեք, եթէ յառաջ տիւ է եւ ապա գիշեր:

ՅԱրիստոտէլէն վկայ բանիս.

Արդ, պարտ է գիտել, թէ խաւարն չէ էութիւն, եւ ոչ ունակութիւն, եւ ոչ այլ ինչ բնաւ էիցս, բայց պակասութիւն լուսոյ. զի չիք խաւարի արարողական պատճառ, որ իւրմէ էութենէ առնէ զնա, այլ ուր լոյս ոչ գոյ, անդ խաւար է:

Արդ, չար առնել ասի Աստուած եւ խաւար, ոչ իբրեւ Արարիչ չարի կամ խաւարի, այլ յորժամ արգելոյ զճանապարհ բարի եւ խնու զանցս լուսոյն իւրոյ, ա'յն է չար առնել եւ խաւար: Տե'ս դու, գիշերասէր, զի ցուցանէ բան, թէ որ զխաւար յառաջ դնէ քան զլոյս եւ զգիշերն` սկիզբն աւուրն ասէ, այնպիսին զԱստուած արարիչ ասէ խաւարի, եւ խաւարն եւ մեղքն ո'չ են արարածք Աստուծոյ` վկայեալ յամենայն գրոց:

## **ԳԼՈՒԽ ԺԶ.**

### **ՎԱՍՆ ԶԱՏԿԻ ՄԱՏԱԴԻ, ԶԻ ԲԱՐԻ Է ԵՒ ՉԷ ԽՈՏԱՆ**

ՅԱռաքելական երկրորդ կանոնացն, զոր գրեաց Կղեմ ամենայն հեթանոսաց.

Կարգեցին առաքելքն եւ եղին հաստատութեամբ, թէ ի զատկէն մինչեւ ի քառասներորդ ար  
Վերացման Տեառն յերկինս ուրախութիւն եւ ցնծութիւն եղիցի, զի աւուրք յարութեան են եւ փեսայն  
յառագաստի է, եւ ապա յետ տաւնի Վերացմանն պահեսցեն, եւ դարձեալ յիսներորդ տաւն  
կատարեսցի յիջանել Հոգւոյն, եւ իբրեւ զառաջին զատիկն գառն զենցի:

Ի Նիկիայ երկրորդ կանոնացն ընդդէմ նոցա, որ խոտեն զագապս, որ է մատաղ ննջեցելոց.

Եթէ ոք գարշեսցի յայնցանէ, որք հաւատով ագապս առնեն, այսինքն մատաղ, նզովեալ եղիցին:

Նորին՝ յետ սակաւուց.

Ո՛չ է պարտ քահանայի յագապս մասունս բառնալ եւ թշնամանել զքահանայութիւնն:



Ի Գանգրայ կանոնացն.

Որք արհամարհեն զայնոսիկ, որք հաւատով ազապս առնեն եւ վասն պատուի Տեառն կոչեն զեղբարս իւրեանց եւ ոչ կամին հաւասարել, նզովեալ եղիցին:

Ի Բարսղի կանոնացն.

Ի որսոց որ մատաղ մի՛ իշխեսցէ առնել, բայց միայն զաղաւնիս եւ զայլ սուրբ թռչունս:

Նորին.

Ձանասուն խել կամ յափշտակեալ՝ մատաղ որ մի՛ իշխեսցէ առնել:

Նորին.

Ձանասուն զոր նուիրէ որ Տեառն, զնոյն մատուցէ, եւ թէ յանկարծակի որոգայթի, աղ տացէ եւ աղքատաց բաշխեսցէ:

Նորին.

Արժան է գլխատակ հանգուցելոցն կատարել ի նմին ամի. եւ զմատաղն արասցեն յաւդեաց եւ ի թռչնոց ըստ հինգ զգայութեան մարդոյն կամ ըստ կարին:

Սահակայ Պարթեւի Հայոց.

Քահանայք առանց Աւետարան կարդալոյ մի՛ կատարեսցեն զպաշտաւն ազապացն. եւ որ նախ հաց եկեր, մի՛ ճաշակեսցէ ի մատաղէն թէ՛ քահանայ եւ թէ՛ աշխարհական:

Հարցումն Աշոտոյ իշխանին վասն մատաղի: Ասէ Սահակ վարդապետն Հայոց.

Սուրբն Գրիգոր սահմանեաց զիրաւունս եկեղեցւոյ եւ զհաս քահանայից, յորժամ [զ]տունս Հայոց լուսաւորեաց, նոյնպէս եւ վասն մատաղի. քանզի զպատարագ զոհիցն, զոր յաւդեաց կոռցն մատուցանէին, հրամայեաց զայն Աստուծոյ մատուցանել. եւ զի սրբոյ Լուսաւորչին է հրամանս, մեծ ամբարշտութիւն է թողուլ զտաւնն առանց մատաղի. զի որպէս ասէ սուրբն Սահակ՝ քանզի Հայք ոչ ողջակէզս զոհից ըստ Հին արինացն մատուցանեն եւ ոչ զմոխիր անասնոցն, որ այրէին արտաքոյ քաղաքին առնուն ի պահապնութիւն: Քանզի Գառնն Աստուծոյ Յիսուս Քրիստոս անարատ մարմնով զենաւ ի խաչին եւ եբարձ զիրէական զոհսն, այլ յանուն Աստուծոյ Հայք զենուն զարջառս եւ զոչխարս, եւ վայելեն աղքատաւք, զԱստուած փառաւորեն եւ զտաւնն մեծարեն ըստ հրամանի սրբոյն Գրիգորի. եւ այս՝ կրկին գոհութիւն է:

Վասն աղի արհնութեան: Յոստոսի երրորդ եղելոյ եպիսկոպոս յԵրուսաղէմ զկնի Յակոբայ եւ Շմաւոնի.

Արդ, առաջին ի Վարդավառի տաւնին պատարագեցին առաքեալքն զՔրիստոս եւ հաստատեցին վասն աղի արհնութեան, եւ փոխեցին զհինն ի նորս. նոյնպէս եւ զքահանայութիւնն:

Խոստովանութիւն մեղաց եւ խայտառակութիւն անձին ինքնայաւժար կամաւք եղկելոյս Վարդանայ, եւ որ ասէ՝ իւր կողմն՝ լսէ Աստուած

Ո՛վ դուք ընտրեալք եւ պիտանիք,

Հարք եւ եղբարք իմ եւ որդիք,

Որք յապառնիս ըն պատահիք

Աստուածակրի այս մատենիս:

Որ է գանձ աստուածային,

Եւ մարգարիտ սուրբ եւ հրածին.

Որ[ը]ք սովաւ լուսաւորիք

Մեծ հաւատով յԱստուած կապիք:

Ողբով լացէք զիս եղկելիս,

Վա՛յ ասացէք զողորմելիս.

Բայց իմացէք դուք եւ տեսէք,

Եւ զիտացեալ ի միտ առէք:

Թէ ուստի ուր սողեցայ,

Կամ որպիսի՛ փառաց անկայ.

Յանցաւորին որդի եղայ,

Պատժոց նորին ներքոյ զըտայ:

Խաբմամբ չարին աղտեղացայ,

Եւ յԱստուծոյ շատ հեռացայ.

Ի կենաց դըրախտէն ելի,

Շաղախեցի զտիպ տէրունի:

Անասնոց ն[ը]մանեցի,

Զկեանս անիծից ժառանգեցի.

Վասն այսորիկ միշտ վայ ասեմ,

Ինձէն ես զիս խայտառակեմ:  
Ի լուր մարդկան յայտնի գոչեմ,  
Ջծածկեալ խաւարս ի լոյս բերեմ.  
Ջիմ անբաւ չարս ի նիւթ[ը]ս գրեմ,  
Նախատանաց արծան կանգնեմ:  
Ջի յապագայսն որ զայս լ[ը]սէ,  
Պարսաւանաւք զիս նախատէ.  
Եւ այս մեծ շահ ինձ ընծայէ,  
Ջի դատաստանն իմ աստ կազմէ:  
Ջնախաստեղծին պարտ ընկալայ,  
Անչափ մեղաւք ըզնա զանցայ.  
Եղեռնագործ յայտնի զ[ը]տայ  
Քան զամենայն ծնունդ[ը]ս նորա:  
Քան [ը]զԿայէն ես չար եղայ,  
Եղբայր, հոգոյս սպանող զ[ը]տայ.  
Երերեալ տատանեցայ  
Եւ որպէս նա յեւթ[ը]ն դար[ը]ս ոչ քաւեցայ:  
Քան զորդիս[ը]ն Կայէնի  
Յանասելիս ձեռնարկեցի.  
Գէջ անասնոց նմանեցի,  
Եւ զՀոգի Տեառըն փախուցի:  
Ջ[ը]րիեղեղն որ կոչեցի,  
Ջակն անդ[ը]նդոց յինձէն բացի.  
Յանձրեւ մեղաց[ը]ս խաղացի,  
Նոյի նաւին չժամանեցի:  
Հողմով հոգոյն չար վիշապին  
Մեղաց բ[ը]րգուն[ը]ս կանգնեցի,  
Բարձրաւանդակ յարիներցի,  
Ի կործանել ձեռն ոչ արկի  
Ի բաժանումն ոչ ջանացի:  
Հինգ զգայութեամբք[ը]ս չարացալ]

Քան զհինգ քաղաք[ը]ն Սողոմայ.  
Բոլոր անձամբ Տեառնն մեղայ,  
Մարմնով ի գէճ ախտ մաշեցայ:  
Ի բոց մեղաց[ը]ս ջերմացայ,  
Ի հուրն անշեջ հրաւիրեցայ.  
Փարաւոն նոր յայտնեցայ,  
Սալ երկաթի սիրտ ընկալայ:  
Ես իմ կամաւ անդարձ եղայ,  
Ի ծով մեղաց[ը]ս հեղգացա[յ],  
Րախաբու հանգոյն եղայ,  
Ծածուկ պոռնիկ ես յիս ընկալայ:  
Զհոգոյն [ը]րտեսն ոչ ընկալայ,  
Եւ որպէս նա յազգէ մեղացս ոչ հեռացայ.  
Ընդ Իսրայէլ ոչ դասեցայ,  
Կենաց երկրին ժառանգ չեղայ:  
Պեղծ խորհրդովք պոռն[ը]կեցայ,  
Հոգոյս իմոյ սպանող եղայ.  
ԶԴաւթայ մեղայն յիս չ[ը]նկալայ,  
Ի մահիճս ոչ հեծեծեցայ:  
Հարաւային հ[ը]նդիկ եղայ,  
Զերմ արտասուաւք ոչ [ուացա[յ]].  
Զհրաման[ը]ս Տեառնն մոռացայ,  
Ընդ ազգ մեղաց խառնակեցայ:  
Ի կանանց տեսըս պատրեցայ,  
Տաճար կըռոց ինձէն ստացայ.  
Սողոմոնի ն[ը]ման չեղայ,  
Ի տուն մըտացս ոչ զըղջացայ:  
ԶԱստուծոյ տունըս պըղծեցի,  
Կռաւք Բահաղու շաղախեցի.  
Բազում պատկերըս կանգնեցի,  
Զնոր Իսրայէլըս ջ[ը]նջեցի:

Ի Բաբելոն գերի գնացի,  
Որ է պեղծս յայս[ը]մ յաշխարհի.  
Մանասէի չնմանեցի,  
Կապեալ հոգւովս ի բանտ մեղաց ոչ գ[ը]ղջացի:

ՋՆիհուէացիս[ը]ն զանցուցի,  
Անչափ մեղաւք յառաջեցի.  
Քարոզողացն ոչ լըսեցի,  
Վա~յ, անդարձ մեղըս հարկեցի:  
Եմ Ջաքէոս կարճահոգի,  
Ի թըզենի մեղաց ելի.  
Տեառըն տեսոյն չժամանեցի,  
Ջի գբագում չարըս մաքսեցի:  
Ի տուն մըտացս ոչ կոչեցի,  
Եւ գչորեքկինն ոչ հատուցի.  
Ես տեռատեսն եմ զազրալի,  
Կինըն պոռնիկ գէճ աղտեղի:  
Արիւն մեղաց յինէն վիժի.  
Փ[ը]րփրատեսակ շարաւ հոսի.  
Աչաց[ը]ս ջրով զոտ[ը]ս Փ[ը]րկչին ոչ լուացի,  
Գաղտագողի [ը]գփ[ը]րկութիւնն ոչ կորզեցի:  
Աւազակ եմ [ես] անառակ,  
Եւ հոգեսպան գագանաբնակ.  
[Ը]գհայրենի գանձ վատնեցի,  
Յաղքատութիւն հոգւոյ հասի :  
Յանասնոց բաուտ միտեցի,  
Խոզի բնութեան բնաւ չ[ը]հասի.  
Իսկ Արարիչն իմ խոնարհեալ,  
Կ[ը]րկին պատուով զիս նորոգեալ:  
Իւր սուրբ մարմնով[ը]ն չարչարեալ,

Եւ զիմ պարտիս[ը]ն հատուցեալ,  
Ինձ խոստացաւ զարքայութիւն,  
Ընդ սերովբէս դասակցութիւն:  
Եւ կ[ը]րկին ըստունգանեցի,  
Եւ զնա սաստիկ բարկացուցի.  
Ծուլացայ եւ հեշտացայ,  
Մեղաց քընով դանդաչեցայ:  
Պորտ յորովայն միշտ սահեցայ,  
Ի ծածուկ կարաս վաստակեցայ.  
Ջհոզիս աղտով շաղախեցի,  
Ջլուսափայլ զգեստըն կորուսի:  
Վա~յ, զամենայն չար գործեցի,  
Ջմարդասպանն յիս բերկրեալ տեսի.  
Յիս ընկալեալ ինձէն ստացայ  
Ջտեսակ մեղացըն զինչ որ կայ:  
Ջոր անհ[ը]նար է ինձ թըւել,  
Եւ կամ [ը]զնիւթ [ը]զնա գ[ը]րել,  
Ջոր[ը]ս Աստուած միայն գիտէ,  
Յայն որ զաւազ ծովու թուէ:  
Վա~յ ինձ յայտնիքն եւ [ը]զգաղտնիքն,  
Ջշընչականքն եւ զմարմնականքն,  
[Ը]զկամաւորքն եւ զակամայքն,  
Եւ զհեշտաքարշ բ[ը]ռնադատողքն:  
[Ը]զմարմաջողս եւ զանախորժս,  
Եւ զ[ը]մբ[ը]ռնողքն որ չեն պիտոյ.  
[Ը]զհեշտասէր ախորժելիս,  
Եւ զհրով ջեռեալ գէջ աղտելիս:  
[Ը]զմեծամեծս եւ [ը]զփոքունս,  
Ջզազանակերպս եւ զաւդայինս,  
Ջանասնագնացս եւ զգիջայինս,  
Եւ որք նըման աւծի սողին:

Ջարագաքայլս եւ գլեղնաշարժս,  
Այլք որք նըման կորեաց խոցեն.  
Ըզբընածինս եւ զեկամուտս,  
Որք անդադար յիս ներգործին:  
Ընդ զգայութեանց[ը]ս պատուհան  
Աւազակաց ն[ը]ման մ[ը]տեն.  
Յաստուածային գանձէն զ[ը]րկեն,  
Ջոսկի պատկերս իմ ժանգոտեն:  
ՋՀոգին յինէն փախուցանեն,  
Ի տիւ եւ ի գիշեր քուն  
Եւ արթուն զիս խիստ նեղեն  
Ջանազան յախտ կերպարանեն,  
Չարին կամաւ զիս սպանանեն :  
Ջանճառելիս տան ինձ խորիել,  
Յանասելիսըն ձեռնարկել.  
Որ թէ [ը]սէր զայն ոք յայտնի,  
Յանդունդս յերկրի զիս [ս]ուզէին,  
Եւ կամ ի հնոց արկանէին:  
Ականաքթիթ մի չդադարեն,  
Ի պէս պէս չարըս յորդորեն.  
Որդանըն կեր զիս պատրաստեն,  
Ժառանգ հ[ը]րոյն զիս աւրինեն:  
Յայտնի գիտեմ ես իմ մ[ը]տիս,  
Որ ես այրման եմ արժանի,  
Եւ սատակման խիստ ընտանի:  
Ջի մեծ լուսոյ հանդիպեցայ,  
Եւ խաւարաւ մոլորեցայ.  
Յաւազան մ[ը]կ[ը]րտեցայ,  
Եւ քրիստոնեայ] անուանեցայ:  
Բարեաց գործոց չիտեւեցայ,  
Եւ յանուանէ ոչ աւգտեցայ.

Քահանայ ձեռնադրութեցայ,  
Եւ աստեալ Տեառըն կոչեցայ:  
Քաւութեան կարաւտացայ,  
Եւ եղոյն Տեառն արժան չգտայ.  
Լոյս եւ տէր ես կոչեցայ,  
Խաւար մեղաց ծառայ գըտայ:  
Վարդապետ անուանեցայ,  
Եւ ուսուցիչ մարդկան եղայ.  
Տըգիտաց գործովք լցայ,  
Բարի ուսման կարաւտացայ:  
Քարոզ եղայ եւ ես չուսայ  
Ձոր ուսուցի գայն չարարի.  
Ի մարդկան աչըս ձեւացայ,  
Իմ առաջի գՏէրն ոչ տեսայ:  
Ի տըգիտաց սուրբ կոչեցայ,  
Եւ ընդ արդարս երանեցայ.  
Իսկ առ Աստուած խոտան գըտայ,  
Չար մըշակի վարձ ընկալայ:  
Ձիս գովեցին՝ ես հեշտացայ,  
Ըգտուտն իրաւ համարեցայ.  
Յանձառ բարոյն շատ հեռացայ,  
Ձանշէջ գեհենն ինձէն [ը]ստացայ:  
Կեղծաւորեալ վարուք կացի,  
Ըգտգէտ մարդիկքն շատ խաբեցի.  
Ճըշմարտութեան գործ չարարի,  
Այլ [ը]գստութիւն միշտ ջանացի:  
Վա~յ ինձ, զի ես զիս գովեցի,  
Եւ իմ ընկեր զոք չարչարի.  
Ամբարհաւաճ ես զիս եղայ,  
Այլոց արարս ոչ հաճեցայ:  
Յանաչառէն նախատեցայ,



Ատեանն ահեղ յամաւթ ստացայ.  
Փ[ը]քացեալ հըպարտացայ,  
Գործովք չարին յայտին լըցայ:  
Ս[ը]նափառեալ ես պ[ը]ճնեցայ,  
Եւ յանցաւորս զուարճացայ.  
Յանձառ փառաց[ը]ն զ[ը]րկեցայ,  
Ի մնացական բարոյն ելայ:  
Յատենի [յ]աչըս ամենի  
Ձագահութիւն պարսաւելով դ[ը]սրովեցի.  
Իսկ ի ծածուկ զոր կարացի  
Ձայն յիմ ամբար[ը]ն մաքսեցի:  
Արծաթատեաց յայտնի ցուցայ,  
Եւ յաշխարհէս երանեցայ.  
Հոգովս ի քսակ[ը]ն կապեցայ,  
Ծածուկ ս[ը]րով միշտ խոցեցայ:  
Մըտաւք յախտէս այս ջրագեցայ,  
Եւ սակաւովն ոչ շատացայ.  
Ձ[ը]րկեցի եւ զ[ը]զուեցի,  
Ձայրին եւ զոր[ք]ըն նեղեցի:  
Յահագին յայն[ը]մ ատենի  
ՁԱստուածորդին ինձ ցասուցի.  
Ողորմութեան փոյթ չարարի  
Սիրտ գազանի յիս գործեցի:  
ՁԱստուած ի դրանէն վարեցի,  
Թէեւ սակաւ մի արարի,  
Ձայն յաչս մարդկան ես ցանեցի  
Որ չէ աւգուտ յայնմ ատենի:  
Անողորմից[ը]ն վիճակի  
[Ը]ստուգիւ ինձ այն չարն պահի.  
Ահեղ աւուրն համառաւտի  
Վաշխ եւ տոկոս զոր կարացի` զայն կորզեցի:

Ի վարշամակս հուր ծրարեցի,  
Որ զիս այրէ յայնմ յատենի.  
Անաւթք անդէպ ժամու  
Ի կերակուր ձեռնարկեցի.  
Եւ հասուխած միշտ արարի,  
Ի չար հոգւոյն յաւրանչեցի,  
Եւ աղաղեն պէս ձ[ը]գտեցի:

Ակնարկելով միշտ նենգեցի,  
Խեղ կատակաւք զհոգիս լըցի.  
Որ ոչ վայել է քրիստոնէի,  
Թող թէ գիտուն կարգաւորի:  
Հայեցայ եւ հեշտացայ,  
Հրով ջեռուցեալ աղտեղացայ,  
Եւ խորհըրդովըս մեղկացայ.  
Ձիրաման[ը]ս Տեառ[ը]ն մոռացայ,  
Շնացող պորնիկ անուանեցայ:  
Ձփառ[ը]ս մարդկան սիրեցի,  
Որ Աստուծոյ է թըշնամի.  
Թէ զոք քան զիս յառաջ տեսի,  
Հրով նախանձուն տոչորեցի:  
Հաշեցի հառաչեցի,  
Ձհոգիս ախտէս այս մաշեցի.  
Ձոր ատելին հրաման չառի:  
Ատեցի եւ մատնեցի,  
Դարան մահու եղբաւր[ը]ն դրի,  
Ընդդէմ բարոյն չար չափեցին:  
Թէպէտ եւ այն չժամանեցի,  
Բայց զիմ հոգիս ինձէն սպանի:  
Քըսութեամբ եւ նենգութեամբ,

Բամբասելով բանասարկեցի.  
[Ը]զլեզուս ոչ սանձեցի,  
Եւ ի մեղաց ոչ վրիպեցի:  
Ուրացական երդմամբ լըցայ,  
Անճառ մըտաւք շատ գերեցայ.  
Աւազանի կարաւտեցայ,  
Որում բընաւ հընար չկայ:  
Ջբարի քանքար[ը]ն հայցեցի,  
Միոյ փոխան երկուս առի.  
Անչափ պարտուց ներքոյ գ[ը]տի,  
Ջի ընդ հողս ծածկեցի եւ ի սեղան ոչ կառուցի:  
Ջինչ որ գործի՝ մեղք յաշխարհի  
Յետին աւրէն մինչ առաջինն,  
Ամէնն առ իս ն[ը]կարագրին,  
Նա եւ գործով զտեղի ունին:  
Ջգիշեր մահուն ի միտ չառի  
Ջահագին աւրն ոչ յիշեցի:  
Յորժամ սաստիկ փողըն հընչէ,  
Ջազգըս մարդկան յարուցանէ.  
Յորժամ յաթոռ Տէր[ը]ն ն[ը]ստի,  
Եւ զաւրք երկնից անդ ժողովին:  
Յայնժամ գործ[ը]ք մարդկան յայտնին,  
Թ[ը]րթրակ լեզուք[ը]ն պապանձին:  
Յորժամ լըսի՝ Եկայք բարիք,  
Գնացէք յինէն չարին որդիք,  
Յայնժամ ցընժան յաջակողմեանքն,  
Այնչափ ս[ը]գան ծախակողմեանքն :  
Յորժամ մ[ը]տցէ փեսայն հարսամբն,  
Եւ իմաստուն կոյսքն ընդ ն[ը]մա,  
Յանվախճան փառաւքն զարդարին,  
Ընդ Սուրբ Հոգին միաւորին:

Յորժամ հուր[ը]ն բորբոքի,  
Հրածին վիշապքն ի նմա ծըփին,  
Սառնամանիք[ը]ն ց[ը]րտագին,  
Եւ թանձըր հուր խաւարային:  
Անդ բարկութեամբ տանջողքն յայտնին,  
Խոժոռ հրեշտակք դէմք դ[ը]ժուարին.  
Այնպիսեացն այս[ը]ք պատրաստին,  
Որք գիւատոյ յոյս[ը]ն հատին,  
Եւ զագրալի գործաւք կացին,  
Ի դարձ բընաւ ջաւժարեցին:  
Որք մ[ը]տանեն եւ ժառանգեն  
Ջայս անբաւ չարս ընդ բանսարկուին.  
Անեզ[ը]ր եւ անվախճան  
Ամենեքեան ի թըւոյ մարդկան փախչին:  
Վասն այսորիկ ասեմ ինձ վայ,  
Որ զայսքան վիշտ[ը]ս մոռացայ,  
Որ կայ պահեալ տանս Ադամայ:  
Ընդ խորհըրդովըս չարկանեմ,  
Ոչ ի մըտի նըկարագրեմ,  
Թէ այսքան չարս ինձ պատահի,  
Փոխան մեղացս որ ինձ գործի :  
Ջի սեւացեալ հընդիկ յառնեմ,  
Յահեղ Տեառնէն շատ ամաչեմ,  
Նեխեալ շարաւ ժանգախառնեալ  
Հոտ գարշութեան յինէն բուրեմ:  
Որք զիս աստէն երանեցին,  
Բազում ինձ ցանկային,  
Յատեանն ահեղ զիս նախատեն,  
Լի բերանով թուք յիս ձ[ը]գեն:  
Թէ մեք ըզքեզ սուրբ գիտէաք,  
Լոյս տ[ը]գիտաց համարէաք,

Որդի սուրբ Հաւրըն կոչէաք,  
Ժառանգ Փըրկչին անուանէաք:  
Դու մեղաւք ես զարդարեալ,  
Եւ խաւարին գործաւք լըցեալ,  
Ժառանգ հըրոյն ես յաւրինեալ,  
Եւ խաւարն արտաքին ելեալ :  
Զի հարսանեաց չես պատրաստեալ,  
Պատմուճանով ժահահոտեալ:  
Երկաթակապ շըղթայ արկեալ,  
Հրեղէն սըրովն ընդ մէջ հատեալ,  
Ի բարի գ[ը]նդէն ելեալ,  
Անհաւատից մասին դասեալ:  
Յորժամ այս առ իս ասի.  
Յայն սոսկալի հրապարակին,  
Յայնժամ լեզու չէ որ խաւսի,  
Զի բան չունիմ պատասխանի:  
Յայնժամ ի տես մեծ ատենին,  
Վայ վայոյ ես ինձէն գոչեմ.  
Եւ անաւգուտ շատ արտասուեմ:  
Մինչդեռ մարմնով եմ յաշխարհի,  
Ես կանխագոյն զայս գիտացի,  
Որ այս տանջանք ինձ պատրաստի:  
Զի զինչ որ կայ մեղք արարի,  
Զայն ահեղ աւրն ոչ յիշեցի:  
Քան զայսոսիկ զորըս գրեցի  
Սեւադեղովս արձան յայտնի.  
Եւթըն անգամ յաճախեցի,  
Մեղս ի վերայ մեղաց եդի:  
Ի գլուխ չարեաց ժամանեցի,  
Զհարիւրաւոր թիւ[ը]ն լ[ը]ցի.  
Վա~յ, ես չունիմ յուսոյ տեղի,

Ոչ բարեխաւս յայնմ ատենի:  
Ոչ եղբայր, ոչ սիրելի,  
Ոչ բարեկամ որ ողորմի.  
Դու ես իմ յոյսն Աստուածածին,  
Կոյս մաքրական եւ Մայր Փ[ը]րկչին:  
Ես առ քեզ ապաւինիմ,  
Եւ միշտ գոչեմ հառաչագին.  
Ձի դու միայն կարես խաւսել,  
Եւ բարեխաւս մարդկան լինել:  
Դու վասն իմ աղերս մատո՛,  
Խաղաղացո՛ սիրտ Որդոյ քո.  
Ձիս անշէջ հըրոյն գերծո՛,  
Յանքուն որդանցն անհոգացո՛:  
Սառնամանեացն ի գատ փախո՛  
Ի խաւարէն շատ հեռացո:  
Հանգըստեան չեմ արժանի,  
Արքայութեան գործ չարարի:  
Ի հանդէս պատերազմի  
Մեծ վաստակաւք պըսակի վասն ոչ ջանացի  
Սակս այսորիկ գայս չխնդրեցի  
Ձի զիմ Աստուածն ըզքո զՈրդի  
Անպատմելի բարկացուցի:  
Ձոր դու զանտեսն եւ զանքննին  
Ըզծոցածին Հաւրըն զՈրդին  
ՁԱստուծոյ Բան[ը]ն Միածին:  
Յորովայնի քուն ընկալար,  
Սուրբ կուսութեամբ ըզնա ծընար.  
Մարմնով ի գիրկ[ը]ս զըզուեցեր,  
Մաքուր կաթամբ քո ջամբեցեր:  
Հոգովն ընդ Աստուած միացար,  
Մարմնով եղեր նորին տաճար.

Վասն այս անճառ մեծ բարութեանս

Երանութեան եղեր արժան:

Յանմարմին հոգեղինացն,

Ի մարմնաւոր հողեղինացս:

Որք զԱստուած Բան[ը]ն միշտ արինենք,

Զքեզ ընդ ն[ը]մին փառաւորենք:

Արինեալ է ամէնարինեալ եւ ամենաբարի բնութիւն համագոյ եւ Ամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի յամենայն եղելոցս, յաւիտեանս յաւիտենից, ամէն. որ զաւրացոյց զողորմելիս տանել ի կատարունն զայս աստուածաբնակ տառս եւ լցոյց զցանկութիւնս ին ողորմութեամբ իւրով, որ եւ ցնծացայ հոգւովս ընդ աւարտունն սորա:

Եւ է սա երկոտասան գիրք գրեալ եւ փոխեալ առաջին արինակէն, ձեռամբ մեղապարտիս Վարդանայ, եւ առաքել զսա զպսակ ուղղահաւատ եկեղեցւոյ Հայաստանեաց, որպէս եւ այլքն, որ յառաջ քան զսա, թողեալ յիշատակ բարի մեզ եւ ծնողաց եւ եղբարց մերոց եւ ազգի մերոյ: Եւ արդ, առ ոտս ամենեցուն անկեալ պաղատիմ աղերսանաւք եւ աղաչեմ՝ արարէք յիշելոյ արժանի զմեզ զամենեսեան, եւ խնդրեցէք թողութիւն մեղաց մերոց ողորմածէն Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, զի թերեւս ապրեսցուք անսպառ տանջանացն. որ եւ զձեզ փրկեսցէ Աստուած ի մահուանէ, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ գրեցաւ սա ի Պարվաւան ՈԾԸ (1209) մերոյ թուիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սրբոյ Նշանիս, յառաջնորդութեան տեառն Մանուէլի սրբասնեալ եպիսկոպոսի:

Այս ինչ է կարգեալ յայս աստուածաբնակ տառս.

Ա. Սակաւ բան մեր յիշատակին:

Բ. Եւ պատուէր գրոցս առ ժառանգողս իւր:

Գ. Եւ ուղիղ դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն:

Դ. Եւ բազում վկայութիւնք ընդդէմ երկաբնակացն:

Ե. Եւ բանն զոր ասէ սուրբն Աթանաս թէ՝ Ո՞ր դժոխք սգայրեցան ասել մի բնութիւն Բանին Հաւր եւ մարմնոյն որ ի Մարիամայ:

Զ. Եւ զոր Աստուածաբան ասէ թէ՝ Բնութիւնք երկուք:

Է. Եւ զոր Եփրեմ ասէ՝ Թող լիք զնա չարչարել. եւ թէ՝ Ի մահուանդ ոչ էր նա ընդ նմա:

Քանզի [յ]այս երեք բանս զոր այս երեք սուրբքս ասեն, բազումք տկարանան եւ զուղիղն ոչ կարեն իմանալ. իսկ դու գտցես զսոսա պարզս մեկնեալս, եւ եղեալ յիրաքանչիւր կարգն շնորհաւքն Աստուծոյ, որով իմանաս զճշմարտութիւնն եւ յամաւթ առնես զանոպայսն, որք անմիտք են:

Ը. Եւ ընդդէմ նոցա յոլով վկայութիւնք, որք ապականացու ասացին զանապական մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ անգոսնելի կիրք ետուն նմա, այսինքն կերակրոց եւ ընպելեաց ախտաբար հոսումն: Արդար եւ վա՛յ է նոցա

Թ. Եւ վասն դժուարալուր բաներոյ՝ Ոչ է իմ տալ, եւ Անցո՛ղ զբաժակս, եւ որք այսպիսիք են:

Ժ. Եւ վասն ճրագալուցին, զի երեկունն պարտ է ուտել:

ԺԱ. Եւ վասն զի պարտ է ի Ջն յունուարի տաւնել ի միում աւուր զԾնունդն Տեառն եւ զՄկրտութիւնն:

ԺԲ. Եւ զի եկեր Տէր զգառն յերեկոյին հինգշաբթին:

ԺԳ. Եւ զի պարտ է զպատարագն անխմոր եւ անջուր մատուցանել:

ԺԴ. Եւ զի պարտ է ասել զխաչեցարն յամենայն աւուր ի դէմս Որդոյ:

ԺԵ. Եւ զի սուտ է որ ուրբաթ զել առնէ:

ԺԶ. Եւ զի բարի է Ջատկի մատաղ, եւ այլ մատաղ զոր առնեն, եւ աղն զոր աւրինեն եւ տան անասնոց:

Ջայտոսիկ գտցես եղեալ վկայութեամբ բազմաւ ամրացեալ, որով խնուս զբերանս հակառակողաց:

Արդ, է սա զանծարան Աստուծոյ կենդանւոյ լցեալ անբաւ եւ անճառ լուսափայլ հաւատոյ մարգարտով. եւ որ շատ աշխատի յընթերցումն սորա, նա ճաշակէ զմեծապանծ գեղեցկութիւն սորա. քանզի սա լեառն է Սինէական, ուր բնակէ եւ ուստի խաւսի Աստուած: Եւ սա է հալածող հերձուածողած, քարամբք հոգոյն պարսելով զնոսա:

Սա է լոյս հոգւոյ ի խաւարային շաւիղսն՝ յելսն մեր յերկնիս:

Սա է հիմն եւ մայր հաւատոյ, որ կամի ճաշակել զԱստուած

Սա է դուռն արքայութեանն: Սա է, որ տեսանել տայ մեզ զԱստուած, եւ շրջել համարձակ եւ անամաւթ ահագին ատենին, եւ աւրինեալ է զՔրիստոս դատաւորն արդար . ամէն:



**ԳԻՐՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱԲԱՏՈՅ, ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ԱՐԻԱՆՈՍԱՑՆ, ԶԻ ԱՍԵՆ ՀԵՐԵՏԻԿՈՍՔՆ ԵԹԷ ՈՉ ՄԻԱՑԱԲ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ ԸՆԴ ՄԱՐՄՆՈՅՆ, ԱՅԼ ՈՐԻՇ ՈՐԻՇ ԽՈՍՏՈՎԱՆԻՆ ԶԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ Ի ՄԱՐՄՆՈՅՆ, ԶՈՐ ՔԱԲ ԼԻՑԻ ՈՒՂՂԱՓԱՈԱՑ ԶՄՏԱԲ ԱԾԵԼ ԱՅՄՊԻՍԻ ԻՆՉ, ԱՅԼ ԱՐԻԱԲԱՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԲԵՐԵԼ ՊԱՐՏ Է ԶՄԱՐԳԱՐԷԱԿԱՆՔՆ, ԶԱԲԵՏԱՐԱՆՆ ԵՒ ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆՆ, ԵՒ ՀԱՄԱՐՉԱԿՈՒԹԵԱՄԲ ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲԱՆԻՑՆ**

**ԳԼՈՒԽ Ա**

*[Ի]սկ եթէ երկու էին ուրոյն ուրոյն Աստուածութիւնն եւ մարմինն,...*

**ԳԼՈՒԽ Բ**

**ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ ՈՐՔ ԱՊԱԿԱՆԱՑՈՒ ԱՍԱՑԻՆ ԶՄԱՐՄԻՆՆ ՏԵԱՌՆ ԵՒ ԱՆԳՈՍՆԵԼԻ ԿԻՐՔ ԵՏՈՒՆ ՆՄԱ**

**ԳԼՈՒԽ Գ**

**ԱՅԼ ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՄԵԿՆՉԱՑՆ**

**ԳԼՈՒԽ Դ**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԶԻ ՊԱՐՏ Է ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ՏԱԲՆԵԼ**

**ԳԼՈՒԽ Ե**

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ ԵՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՔՆ ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ ՈՐՔ ԱՍԵՆ, ԹԷ. ՈՉ**

**ԵԿԵՐ ՏԷՐՆ ԶԳԱՌՆ Ի ԶԱՏԿԻՆ**

**ԳԼՈՒԽ Զ**

**ՎԿԱՅՈՒԹՅԻՒՆՔ ԶՈՐ ԱՍԱՑԻՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՔՆ ԸՆԴԴԷՄ ԱՐԻՈՍԻ ԵՒ ՆԵՍՏՈՐԻ, ՈՐՔ ԱՐԿԻՆ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԽՄՈՐ, ԱՂ ԵՒ ԶՈՒՐ ԵՒ ԶԷԹ ԵՒ ՈՒՐԱՑԱՆ ԶՍԱՀՄԱՆԵԱԼՆ**

**ԳԼՈՒԽ Է**

**ՎԿԱՅՈՒԹՅԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶԽԱԶԵՑԱՐՆ ԱՍԵԼ ԸՆԴ ԴԷՄՍ ՈՐԴՈՅ**

**ԳԼՈՒԽ Ը**

**[ՎԱՍՆ ԶԱՏԿԻ ՄԱՏԱԴԻ. ԶԻ ԲԱՐԻ Է ԵՒ ՉԷ ԽՈՏԱՆ]**

**ԳԻՐՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱԲԱՏՈՅ, ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԻՆ ԸՆԴԴԷՄ ԱՐԻԱՆՈՍԱՑՆ, ԶԻ ԱՍԵՆ ՀԵՐԵՏԻԿՈՍՔՆ ԵԹԷ ՈՉ ՄԻԱՑԱԲ ԱՍՏՈՒԱԾՈՒԹՅԻՆՆ ԸՆԴ ՄԱՐՄՆՈՅՆ, ԱՅԼ ՈՐԻՇ ՈՐԻՇ ԽՈՏՈՎԱՆԻՆ ԶԱՍՏՈՒԱԾՈՒԹՅԻՆՆ Ի ՄԱՐՄՆՈՅՆ, ԶՈՐ ՔԱԲ ԼԻՑԻ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ ԶՄՏԱԲ ԱԾԵԼ ԱՅՄՊԻՍԻ ԻՆՉ, ԱՅԼ ԱՐԻԱԲԱՐ ՎԿԱՅՈՒԹՅԻՆ ԲԵՐԵԼ ՊԱՐՏ Է ԶՄԱՐԳԱՐԷԱԿԱՆՔՆ, ԶԱԲԵՏԱՐԱՆՆ ԵՒ ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆՆ, ԵՒ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԵԱՄԲ ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲԱՆԻՑՆ**

[Ի]սկ եթէ երկու էին ուրոյն ուրոյն Աստուածութիւնն եւ մարմինն, որպէս դու կարծես յիմարդ, իսկ Մովսէս ընդէ՞ր ասէ այսպէս թէ. Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ: Զկեանս ասէ եւ ոչ զմարմին՝ վասն որ ի խաչին կախեցաւ վասն Բանին միանալոյն:

Իսկ Ղաւիթ ասէ.

Ետուն ի կերակուր ինձ լեղի եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ: «Ինձ» ասէ եւ ոչ՝ մեզ:

Ղարծեալ ասէ. Ծակեցին զձեռս ի. «իմ» ասէ եւ ոչ զմերս:

Սողովմոն ասէ.

Մի է եղբարորդին իմ, մի է ծնողին իւրոյ: Տեսանե՞ս, զի «մի» ասէ եւ ոչ երկուս:

Երէմիա ասէ

Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս: Ոչ բնութիւնք ինչ յիշէ կամ երկու քրիստոսք ասէ այլ մի՛ ասէ:

Դարձեալ ասէ. Արկցուք փայտ ի հաց նորա: «Նորա» ասէ եւ ոչ՝ նոցա:

Եսայիաս ասէ.

Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի: «Որդի» ասէ, եւ ոչ որդիք, կամ բնութիւնք ինչ ոչ յիշէ:

Եւ դարձեալ ասէ, թէ. Մանուկ ծնաւ մեզ: «Մանուկ» ասէ, եւ ոչ՝ մանկունք:

Եւ դարձեալ, թէ. Ջթիկունս իմ ետու ի հարուածս: Իմ ասէ, եւ ոչ՝ զմերս: Եւ մեք նորա վիրաւքն բժշկեցաք: Տես զի «նորա» ասէ, եւ ոչ՝ նոցա:

Բարուք ասէ.

Յետ այսորիկ Աստուած յերկրի երեւեցի: Երեւեցի ասէ, եւ ոչ թէ երեւեցին:

Միքիաս ասէ.

Բեղդահէմ ի քէն ելցէ ինձ իշխան որ հով[ու]եցցէ զժողովուրդ իմ: Տե՛ս, «իշխան» ասէ, եւ ոչ ասէ թէ իշխանք: Եւ թէ. Յաւուրն երրորդի յարիցուք եւ կացցուք առաջի նորա: Տե՛ս, զի «նորա» ասէ, եւ ոչ ասէ, թէ նոցա:

Ջաքարիաս ասէ.

Ահա թագաւոր քո գայ քեզ հեզ եւ հեծեալ յէջ եւ յաւանակ իշոյ: Տե՛ս, զի «թագաւոր» ասէ եւ ոչ ասէ թագաւորք:

Ամբակում ասէ.

Ելեր դու ի կառս քո, եւ հեծելութեամբ քոյով փրկութիւն եղես: Տե՛ս, զի «դու» ասէ եւ ոչ ասէ թէ դուք:

Վկայէ հրեշտակն եւ ասէ, թէ.

Որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեցի: «Որդի» ասէ, եւ ոչ ասէ, թէ որդիք, կամ բնութիւնք ինչ ոչ յիշէ:

Եւ, թէ. Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ, որ է օծեալ: Ոչ բնութիւնք ինչ, այլ որ ծնաւ մարմնով:

Սիմէոն աղաղակէ.

Արդ, արձակեա՛, Տէր, զճառայս. ոչ ասէ մարմնոյն, թէ որ ի քեզդ է, դու քառասնօրեա՛ մանուկդ զի Աստուած ես, որ վասն մարդկան մարմնով յերկրի երեւեցար:

Յոհվաննէս ասէ.

Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի: Ոչ ասէ, թէ որ ի մարմինէ կամ բնութիւն ինչ, այլ ասէ, թէ զոր տեսանէքդ մարմնով:

Աստուած Հայր վկայէ երկնից, թէ .

Ղա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ: Ոչ բնութիւն յիշէ, եւ ոչ բաժանէ այլ ասէ, թէ «Ղա է Որդի իմ» զոր տեսանէքդ մարմնով:

Եւ ինքն իսկ Յիսուս վկայ]]է եւ ասէ.

Ես եւ Հայր իմ մի ենք: Տես զի ասէ, թէ «Ես» որ տեսանէք մարմնով:

Եւ ասէ թէ.

Որ ետեսն զիս՝ ետես զՀայր: Եւ այն զի մարմնով տեսին զնա, եւ ոչ անմարմին:

Եւ դարձեալ ասէ, թէ.

Ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էն երկինս. զՈրդին մարդոյ յիշէ եւ զՈրդին Աստուծոյ զուշակէ վասն անճառ միութեանն: Եւ եթէ տեսանիցէք զորդին մարդոյ զի ելանիցէ եկինս ուր էր զառաջինն. տե՛ս զԲանն որ միացաւ ի մարմնի՝ Որդի մարդոյ ասէ:

Վկայութիւնք սուրբ Առաքելոցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ.

Վկայէ առաքեալն Պետրոս եւ ասէ.

Ղու ես Քրիստոս Որդի Աստուծոյ: Տե՛ս, զի ասէ. «Ղու» մարմնովդ զոր տեսանենք, որ անճառ միացեալ [եւ] ընդ Բան Բանին Աստուծոյ Հաւր: Տե՛ս, զի բնութիւն ոչ յիշէ եւ ոչ բաժանէ, վասն այնր ընկալաւ զանճառ երանութիւնսն: Իսկ դուք քաղկեդոնացիքդ յերկուս բնութիւնս բաժանեցիք զմիացեալն ի մարմնի եւ ընկալաք զանշիջանելի հուրն:

Թովմաս վկայէ եւ ասէ.

Տէր իմ եւ Աստուած իմ:

Ձտիգաւ հարեալ կողն շաւշափեալ՝ Տեր եւ Աստուած հաւասար Հաւր դաւանեաց զնա վասն Բանին միանալոյն. եւ երանեցան ի Տեառնէ որք այսպէս հաւատան եւ բնութիւնք ոչ քննեն:

Յովհաննէս վկայէ եւ ասէ.

Ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց:

Զմարմինն շաւշափե[ա]լ Բան ասաց վասն մի գոլուն:

Եւ Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաք, որում եւ ականատեսք եղաք: Զմարմին տեսանել զԲանն ասաց տեսանել, եւ ոչ բնութիւնք ինչ: Եւ այսպէս սիրեաց Աստուած զաշխարհս, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ: Վասն մի գոլոյն Բանին եւ մարմնոյն Միածին Որդի կոչէ Հաւր:

Պաւղոս վկայեաց եւ ասէ.

Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ նորա: Տե՛ս, զի «Որդոյ» ասէ եւ ոչ ասէ, թէ որդոց եւ կամ բնութեանց ինչ: Եւ ասէ. Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց. Քրիստոս զոր վերագոյն Որդի Աստուծոյ ասաց: Եւ բնութիւնք ոչ յիշեաց: Եւ ասէ. Յայտնութեամբ մեծին Աստուծոյ:

Տե՛ս, զի զերեւելան մարմնով՝ մեծ Աստուած ասաց հաւասար Հաւր եւ բնութիւն ոչ յիշէ, կռուակիցք եւ թշնամիք բնակեալք ի միասին:

Եւ դարձեալ ասէ.

Որ միայն ունի զանմահութիւն: Տե՛ս, զի «միայն» ասէ եւ բնութիւնք ոչ յիշէ:

Եւ ասէ.

Մի Տէր Յիսուս Քրիստոս:

Եւ թէ. Տէր Յիսուս Քրիստոս, յերէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան:

Վկայէ Դիոնէսիոս Արիսպագացին եւ ասէ.

Աստուած Բանն ճշմարիտ հաղորդութեամբ ըստ ամենեցունց նմանութեամբ եղեալ առանց մեղաց եւ առ մեր խոնարհութիւնս միացեալ հանդերձ իւրով անշփոթ, անհատ, ամենակար ունակութեամբն առ ինքն զկցորդութիւն որպէս համազգեաց պարգեւեաց մեզ: Քանզի բնութիւն եւ պարզութիւն եւ թագաւորութիւն Յիսուս աստուածպետական Բանին ընդ մեզ մարդանալոյն եւ զմեր նուաստութիւնս ընդ իւրոյ ծայրագունից աստուածայնոց միացուցեալ բնութիւն:

Նորին

Մարդ Յիսուս ոչ մարդ Յիսուս, քանզի այրացելոյն Աստուծոյ մարդ Յիսուս: Իսկ մնալոյն առ Հաւր եւ ընդ Հաւր անբաժանելի ի փառս Աստուածութեան իւրոյ ոչ մարդ Յիսուս, այլ վերագոյն քան զմարդ:

Քանզի ամենայն աստուածաբանութիւնք յայտնութիւն ընդ մեզ Յիսուս աստուածաստեղծութիւն է եւ անձառելի յամենայն բանի եւ անգիտելի ամենայն մտաց:

Նորին ասացեալ.

Աստուածայետական Յիսուս կենսատու մահուամբն երիս տիւս եւ երիս գիշերս եկաց ի գերեզմանի:

Տե՛ս, զի ասէ «աստուածայետական» զկախիլն զփայտէ, այսինքն է Աստուածացոյց:

Դիոնէսիոս Աղէքսանդրացոյ ասացեալ ընդդէմ [Ս]ամուս[տ]ացոյն.

Ջթիկունս իմ ետու ի հարուածս եւ զծնաւտս իմ յապտակս: Եւ ասէ. Ո՞վ իցէ սա, եթէ ոչ Աստուած, որ եթուք յերկիր եւ արար կաւ ի թթոյն, եւ կաւովն եբաց զաչս կուրին:

Նորին ասացեալ.

Ջին[ո]ւորքն զպատմուճանն նորա ոչ կարացին պատառել. իսկ հերետիկոսքն զՈրդին Աստուծոյ պատառել կամելով եւ բաժանել զԲանն յերկուս զայն միայն որ անբաժանելին է Յիսուս Քրիստոս եւ անքննելի:

Տե՛ս, դու, ո՞վ երկաբնակ, որ երկու բնութիւնս բաժանել, եւ պատառել կամին զՈրդին Աստուծոյ:

Նորին ասացեալ.

Նա ետ նոցա մեղր եւ նոքա ետուն նմա լեղի նա ետ նոցա մանանայ եւ նոքա ետուն նմա քացախ. եւ ի սուրբ խաչէն կախեցին զայն, որ յոչնչէ կախեաց զերկինս որ է կեանք ամենայն կենդանեաց:

Տե՛ս, երկաբանող, զի զԱրարիչն ասաց կախեալ ի խաչին:

Նորին ասացեալ.

Չէ մարդ որ խաչեցաւ, այլ սուրբ Միածինն Բան եւ Որդին Հաւր:

Տե՛ս զի, «զԲանն Հաւր» ասաց կախեալ զխաչէն, եւ ոչ սոսկ մարդ:

Նորին ասացեալ յԵփեսոսի թղթին.

ՋԲանն Աստուած խոստովանիմք մարդ եղեալ ճշմարտապէս առանց երկդիմութեան:

Իզնատոսի Աստուածազգեաց, ի թղթին որ առ Պողիկարպոսի ասացեալ.

Ակն կալ այնմ որ ոչ ունի ժամանակ, անտեսանելին որ վասն մեր տեսաւ, անչարչարելին որ վասն մեր չարչարեցաւ:

Նորին՝ յԵփեսոսի թղթին.

Մի է բժիշկ հոգոց եւ մարմնոց մերոյ, անեղանելին եւ եղականն, Աստուածն եւ Որդին մարդոյ, մինն որ միաւորեցաւ, ի վեր քան զմիտս եղականացս, ի Մարիամայ եւ ի Հաւրէ անչարչարելին եւ չարչարելի վասն մեր Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած մեր:

Նորին՝ [ի] Ջմիւսոյ թուղթն ասացեալ.

Ջաւրացեալ էք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս Որդի Դաւթի ըստ մարմնոյ, եւ Որդի Աստուծոյ բնութեամբ եւ զաւրութեամբ. եւ որ այսմ ոչ հաւատայ՝ ուրացող է եւ զգեցեալ է զմահ:

Նորին ասացեալ.

Կորեան, սատակեցան, ճարակ հրոյ եղէն որք բաժանեն զՔրիստոսի միացեալ բնութիւն, քանզի դառն կակիժ եւ վտանգ է զիս, յորժամ լսեմ զկորուստ հերձուածողացն, որք ասեն այլ եւ այլ բնութիւն զՔրիստոսէ:

Նորին ասացեալ.

Որ զխաչելութիւնն նորա եւ զչարչարանս եւ զծնունդն [յ]ամաւթ համարին՝ եղիցի քեզ իբրեւ զհակառակորդն, թէպէտ եւ զամենայն բարեգործութիւնս կատարեսցէ:

Նորին՝ թղթէն որ առ Փիլիպեցին.

Ընդէ՞ր սոսկ մարդ իմանաս զՔրիստոսէ, թէ Աստուած եւ մարդ միաւորեցաւ եւ եղեւ յերկուցն մի, որ է բնութեամբ անբաժանելի եւ անփոփոխելի:

Երանոսի հետեւողի առաքելոցն ասացեալ.

Որ հերձնուն եւ պատառեն զմինն՝ զԴոքովամու պատուհասն ընկալցին: Քանզի անարգեն զՈրդին Աստուծոյ եւ զմարմնոյ] փրկութիւնն ուրանան եւ զվերստին ծնունդն անպատուեն, որք ասեն զնա զոլ ընդունական ապականութիւն:

Նորին՝ ասացեալ.

Որ եկն եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյ ներգործեաց, իսկ մեք ոչ կարէաք կցորդ լինել անապականութեանն. իսկ որ աներեւոյթն էր ի մէնջ, եղեւ տեսանելի, զի ըստ ամենայն մասին կցորդութիւն առցուք զանապականութիւն:

Նորին ասացեալ.

Ընդունայն եւ սնոտիք են որ զԱստուծոյ զփրկութիւնն ուրանան զոր ի մարդանալն իւրում շնորհեաց մեզ. քանզի եկն Որդին Աստուծոյ եւ զգեցաւ մարմին անապական յանարատ կուսէն Մարիամու:

Երինոս Լոկտաւնոյ եպիսկոպոսի վկայութիւն հաւատոյ.

Անջատելի են բարք նոցա յաստուծոյ եւ ոչ գիտելով զտորա Բանն Միածին որ միշտ ընդ մարդկութիւնս միաւորեալ եւ ընդ սմա զանկեալ ընդ իւրում ստեղծուածոյս:

Նորին ասացեալ.

Ի հերձուածս գործ որ զմեծ եւ զփառաւորեալ մարմինն Քրիստոսի բաժանեն եւ հատակոտորեն:

Նորին ասացեալ.

Եսայի ասէ. Մերձեցալ] առ կինն իմ մարգարէ եւ ծնաւ որդի սքանչելի խորհրդակից, Աստուած հզաւր իշխան քարոզելով զմիութիւն Բանին առ [ի] ստեղծուածն իւր յայտնէին, քանզի Բանն մարմին եղեւ եւ Որդի Աստուծոյ՝ Որդի մարդոյ:

Գրիգոր Սքանչելագործն ասէ.

Որ այլ ասէ զախտակրե[ա]լն, եւ այլ՝ ոչ ախտակրեալ, եւ ոչ խոստովանի զնոյն ինքն զախտակիրն՝ Աստուած մարմնով իւրով ախտակրեալ, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի: Քանզի Աստուած մարմնացեալ բոլորովին լրութեամբ, ոչ երկութիւն, այլ միութիւն անբաժանելի ի կուսէն յայտնեալ:

Նորին՝ յետ սակաւուց.

ԶԱստուած ճշմարիտ ի մարմնի երեւեալ, եւ կատարեալ՝ Աստուած կատարելութեամբն: Ո՛չ բնութիւն երկուս, ո՛չ երկու կամս, ո՛չ երկու դէմս. զի եւ ո՛չ ասեմք չորս երկրպագեալս՝ զԱստուած եւ զՈրդին Աստուծոյ, զմարդն եւ զՀոգին Սուրբ, վասն որոյ նզովեմք զայսպիսի ամբարշտեալսն:

Նորին ասացեալ.

Զիա՞րդ ասիցէ որ այլայլելի զՔրիստոս՝ իսկ ինքն Տերն ասաց. Եթէ ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ. զի ոչ հոգի նորա թողու ի դժոխս եւ ոչ մարմինն նորա ետես զապականութիւն:

Նորին ասացեալ.

Եթէ որք ասիցէ մարդ սոսկ զՔրիստոս՝ բաժանելով յԱստուածութենէն, եւ ոչ խոստովանեցի մի բնութիւն զՔրիստոս, նզովեալ եղիցի:

Սեղբեստրոս ասէ.

Յիրաւի պարտիս հաւանիլ զի զիտացես ի սոցունց երկու բնութեանց միացելոց մինն անկեալ ընդ թշնամանաւք, եւ միւսն՝ ո՛չ:



Հրէայն Յորնաղ ասէ.

Անհնար է միում երկու ինչ գոլ, մինն ի ներքոյ անկեալ անվնաս միւսն խաչեալ:

Սեղբեստրոս ասէ.

Կեցուցիչ արինակաւ հաւանի՞ս:

Կոստանդիանոս կայսրն ասէ.

Յակամայ եւ կռապանաւք հաւանեալ ունի, թէ ցուցցէս երկու ինչ միացեալ բնութեամբ՝ մինն չարչարեալ եւ միւսն ազատ մնացեալ:

Սեղբեստրոս ասէ.

ՋԹագաւորական ծիրանիսդ ի ցոյց առից: Ասերս խառնեալ ընդ արիւն խնջաւղի, եւ գոյնն ծիրանի ետ նմա ի փողեալն մատամբք լեալ առէջ ասրն կրեց գշրջումն եւ ոչ ծիրանին: Այսպէս իմացիր. ասր մարդն է, եւ ծիրանին Աստուած Բանն միացեալ ի մարմինն եւ ի չարչարանսն, եւ ինքն յայսցանէ ոչ կրեաց:

Իսկ թագաւորն եւ ամենայն ժողովն աղաղակեցին ասելով. Կարի եւս ճշմարիտ լինել արինակիդ որ ասրն անկեալ լինի ընդ չարչարանաւք, եւ ոչ ծիրանի գոյն:

Թագաւորն ասէ.

Ոչ հաւանիմ:

Սեղբեստրոս ասէ.

Այլ ցուցից եւ դու լուր: Կարո՞ղ է ծառ ընդունել զճառագայթս արեգականն ի յինքն ի հատանելն:

Թագաւորն ասէ.

Հնար է:

Սեղբեստրոս ասէ.

Ի պատահել եւ իսկ ի հատանելն նմա ոչ տեսեալ զվէրն երկաթուց զճառագայթն յառաջ ընդունի քան զփայտին ընդունելն, եւ փայլակն ընդ անդ գոլով ոչ ի հատանելն կարէ: Սոյնպէս եւ Աստուածութիւն ոչ որոնել կարիւր եւ ոչ հատանիլ: Իսկ մարմինն անկեալ ընդ չարչարանաւք որպէս փայտն ուր եւ կապեալ կայրիւր եւ ունել: Արդ, զայս ասացից ի սակաւ ցոյցս, բայց անճառ է յամենայնի:

Յուլիայ Հռովմայ հայրապետն ասէ ի Դիոնեսիոսի թղթէն

Մի՛ պատճառեսցեն բաժանողացն՝ երկուս ասելով բնութիւնս. մի՛ բաժաներ զմարմնոյ բնութիւնն

յԱստուծոյ բնութենէն, զի չէր, ասէ, հնար զբոլորն Որդի մարդոյ կոչել ստոր անցեալն յերկնուստ, եւ ոչ Որդի Աստուծոյ՝ ծնիցեալն ի կնոջէ, թէ բաժանիւր երկուս բնութիւնս:

Նորին ասացեալ.

Ասին, որպէս լսեմ, երկուս բնութիւնս. եւ այս զի Յովհաննէս մի ցուցեալ զբնութիւնս ասէ, Բանն մարմին եղեւ, որպէս զի աստուածութեան ճշմարիտ մարմնովն մի է յերկուս բնութիւնս ոչ բաժանի:

Նորին ասացեալ.

Իբր գաւելին յամենայնի ի Մարիամայ ծնեալ Աստուած անեղլի մարմնաւորութեամբն, մի բնութիւն անճառ միացեալ:

Նորին ասացեալ.

Ոչ մի անջատումն բերել ի յաստուածային գիրս՝ Բանին եւ մարմնոյն, քանզի որպէս մարդ յերկուս տեսակացն մի բնութեամբ, նոյնպէս եւ ի նմանութիւն մարդկան եղեալն Քրիստոս մի է բնութեամբ:

Նորին ասացեալ.

Պաւղոս ասէ.

Մի Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն եղեւ մի դէմ, մի բնութիւն. Աստուած մարդ երեւեալ ի կնոջէ, ոչ ի մարդ բնակեալ կամ վերառեալ զմարդն ըստ շնորհի արժանաւորութեան, որպէս Պաւղոսի Սամուստացոյն թըւեցաւ:

Նորին ասացեալ.

Որք երկու բնութիւն ասեն, հարկ է նոցա զմինն երկրպագել եւ զմիւսն՝ ո՛չ, զմարդկային եւ զմիւսն՝ զաստուածային, յաստուածայինն մկրտեալ, եւ մարդկայինն՝ ո՛չ:

Ուիտալայ Հռովմայ հայրապետին ասացեալ .

Որ [ո]ք բաժանէ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ ասէ այլ զԱստուած Բանն, եւ այլ՝ զեղեալն մարդ, եւ ոչ խոստովանի զմի եւ զմի եւ զնոյն ինքն, այնպիսին նզովեալ է:

Նորին.

Որ զատուցանէ զմի Տէր Յիսուս Քրիստոս մեր. նզովեալ է:

Պետրոսի Հռովմայ հայրապետին ասացեալ.

Քանզի Մարիամ ծնաւ զմարմնացեալ Բանն Աստուած զմի եւ

զնոյն ոչ այլ եւ այլ քաւ լիցի:

Նորին ասացեալ.

Որ համարձակին ասել զմարմինն ապականացու ի միաւորութիւնն եւ ասել բաժանումն Աստուծոյ եւ մարմնոյն, այնպիսիքն նզովեալ են:

Նորին.

Եւ զի է՛ Աստուած եւ մարմինն մի բնութիւն եւ մի դէմ, նա որ կամաւ յանձն տարաւ եւ յաւժարութեամբ հոգոյն նոյն ինքն Աստուած անբաժանելի եւ յաղաւթեալն անբաժանելի:

Նորին.

Որ ասէ զկնի միաւորութեան բաժանելոյ երկու բնութիւնս կամ երկուս կերպարանս եւ կամ երկուս որդիս՝ ա՛յլ որ ի Հաւրէ եւ ա՛յլ որ ի մաւրէն Մարիամայ, քանզի խելագարեցան եւ արհամարհեցին զՀայրն երկու որդով[ք]ն, միովն որ ի բնութենէն եւ միւսովն եկամտիւն, եւ այսմ մուծին չորրորդութիւն եւ մոռացան զՍուրբ Երրորդութիւնն, ըստ նոցա բանիցն նոր աստուած երկրպագի ի Մարիամայ սկիզբն առեալ. իսկ եթէ այսպէս է, ապայ կորեան ամենայն ազգ, թէ մարդոյ խաչի երկիրպագեն, եւ զմարմին եւ զարիւն մարդոյ ճաշակեն:

Փելիկեայ] Հռոմայեցոյ է

Բայց նզովեմք որք ախտակիր ասեն զաստուածութիւնն, եւ որք սոսկ մարդ զխաչեալն զՔրիստոս, եւ ոչ բոլոր էութեամբ զԱստուած:

Նորին ասացեալ.

Զգոյշ եղերուք յամբարշտացն, որք ասեն զԱստուածն եւ զմարդն ծնեալ ի կուսէն եւ բովանդակեն երկուս թուով, ասեն մինն՝ ծնեալ, եւ երկուսն՝ ոչ: Այլ մի Աստուած թանձրամած ծնեալ, ասեն եւ որ բաժանեն՝ նզովեալ են:

Նորին ասացեալ.

Որ ի ծնունդն եւ յապտակսն ի խաչին եւ ի գերեզմանին յանապական Յարութիւնն եւ ի Համբարձումն բաժանեն յերկուս, նզովեալ են:

Բարսամ ասէ.

Զհաց պատարագին ո՞րպէս ասէք, ասա ինձ զստոյզն:

Կղեստանէ Հռովմայ]եցի ասէ.

Ասեմ եւ հաւատամ զհաց պատարագին Աստուած բովանդակ,  
առանց ապականութեան, խառնեալ Աստուած Բանն ընդ մարդկութիւնս, եղեւ մի բնութիւն:  
Նորին.

Ջփորձ առ կրից չարչարանաց Աստուածութեան ոչ մերկ եւ անմարմին, այլ վասն անձառ  
միաւորութեան մարմնոյն եւ աստուածային բնութեանն, վասն որոյ մի կամք եւ մի բնութիւն  
խոստովանիմք զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի այլ եւ այլ կամք ոչ եղեն Փրկչին մերոյ:

Աթանասի Աղէկսանդրի ի թղթէն որ առ Կղաւղի թագաւորն.

Արդ՝ մի կամք խոստովանիմք մի յաւէտ եւ ասեմք Բանին բնութիւն եւ անձնաւորութիւն,  
կատարելապէս մարդացեալ. եւ որ այսպէս ոչ ասէ՝ աստուածամարտ է եւ հակառակ Սուրբ Հոգոյն եւ  
սուրբ հարցն:

Առ նոյն ասացեալ.

Նախ Տեառն ընդ կուսի աստուածաբար, ապա նոյն ինքն ի նմանէ: Որ երկուս բնութիւնս կամ երկուս  
դէմս ասէ, փոխանակ Երրորդութեանն՝ չորրորդութեան երկիր պագանեն:

Նորին.

Ջի որպէս ոչ է հնար զթագաւորս եւ զծիրանիս երկուս թագաւորս ասել, նոյնպէս անհնար է զԲանն  
Աստուած եւ զիւր մարմինն երկու բնութիւնս ասել:

Նորին ընդդէմ Ապողոնարի պատասխանին.

Արդ՝ յամենայն Աստուածաշունչ Կտակարանսն մի բնութիւն ասացաւ մարմնացելոյ Բանին  
Աստուծոյ:

Նորին.

Ոչ ասաց, թէ Բանն Աստուած եղեւ, այլ ասաց թէ. Աստուած էր Բանն: Միշտ է՛ր, ասէ, Աստուած. եւ սա  
նոյնս Աստուած՝ եղեւ մարմին, զի մարմին նորա եղիցի Աստուած Բանն ընդ թովմայի, որ զմարմինն.  
Տէր եւ Աստուած ասաց: Վասն որոյ խոստովանիմք մի բնութիւն Բանին Աստուծոյ որ մարմնացաւ եւ  
երկրպագի մարմինն ի հրեշտակաց, եւ ոչ որպէս Արիանոսքն որք այլ եւ այլ տան [ասել]:

Նորին.

Ի Սուրբ Հոգոյն ասէ ծնաւ մարմին ի Կուսէն. որ բաժանէ զԲանն ի մարմնոյն, ուրանայ զշնորհսն որ

նովաւ տըլաւ մեզ, վասն զի զնոյն մարմին ընդ աջմէ Հաւր տեսաւ երանելին Ստեփան[ն]ոս: Վասն որոյ ասեմք ցԲանն՝ «Ի բաց լեր ի մարմնոյդ, զի քեզ երկրպագեսցուք»: Ի ժամ խաչելութեանն դողացաւ երկիր, զի Բանն միացեալ էր ի մարմինն ի վերայ խաչին:

Նորին՝ ընդդէմ Սամուստացոյն ասացեալ.

Ուր երկու բնութիւնս ի Քրիստոս իմանան յետ միայնալոյն, ծառայ ընդ տեառն կամին դասել եւ գերորդութիւնն՝ չորրորդ[ութիւն] առնել: Վասն մի բնութիւն պարտ է իմանալ եւ ասել Աստուծոյ Բանին մարմնացելոյ. եւ թէ ոք այլ եւ այլ ասէ, նզովեալ է:

Նորին ասացեալ.

Գիտեմք զՔրիստոս ծնեալ ի զաւակէ Դաւթի. զնա ասացին Աստուած զնա՝ մարդ. զնա՝ Որդի Աստուծոյ, զնա՝ Որդի մարդոյ. զնոյն՝ յերկնից. զնոյն՝ երկրի. զնա՝ չարչարելի: Ո՛չ այլ եւ այլ, ո՛չ երկուս դէմս, եւ ո՛չ երկուս բնութիւնս:

Նորին առ Դեբոս եպիսկոպոսի ասացեալ.

Զգործս Հաւր ի ձեռս մարմնոյն գործէր, քանզի ձեռամբ յարոյց զջերմնոտն եւ ձայնիւ՝ զմեռեալս: Վասնզի լոյս աստուածութեանն փայլեալ փոփոխելի մարմնովն եւ անդէն հրաշաքուսեալ յարգանդին, մանուկ պարզեալ եւ մաքրեալ եւ ձգեալ ի ծայրս աստուածութեան, եւ ընդ նմին եղել անբովանդակելի:

Նորին.

Զի խոստովանիմք զնա Աստուած եւ Որդի Աստուծոյ ըստ Հոգոյ եւ Որդի մարդոյ ըստ մարմնոյ. մի բնութիւն եւ մի դէմ Բանին Աստուծոյ որ մարմնացաւ:

Նորին՝ առ Կորնթացի եպիսկոպոսի ասացեալ.

Բանն որ ի մարմին էր, ի վեր քան զբնութիւն մարմնոյ մահկանացուի արար զմարմին իւր անմահ եւ անապական, զի զգեցեալ եւ միացուցեալ իւր զմարմին Բանին Աստուծոյ:

Նորին՝ ընդդէմ Արիոսի ասացեալ.

Բանն ունէր զմարմնոյն տկարութիւն որպէս զիւր, վասն զի նորա էր մարմինն եւ նովաւ լինէր աստուածագործութիւնքն. զի թէ Աստուծոյ Բանին գործք ոչ էր ի ձեռն մարմնոյն լեալ, ոչ էր աստուածացեալ մարդն:

Նորին.

Քանզի եւ թուքն գոյր աստուածային, թէպէտ մարդկաւրէն վարէր ի բժշկութիւն, եւ ոտքն մարդկային աստուածաբար ճեմէր ի վերայ ծովուն, քանզի Բանն միացեալ էր ի մարմնի անշփոթ եւ անբաժանելի:

Նորին [ի] Յայտնութեան.

Աստուածային կամք միայն էր ի Փրկչին մարմինն յետ մարմնանալոյն, եւ մարդկային խորհուրդք անհետ լեալ էր յաստուածային մարմնոյն եւ ի մարմնանալ Բանին:

Նորին՝ ի բանէն Պետրոսի առաքելոյ.

Քրիստոսի չարչարելն մարմնով՝ ոչ իւրական բնութիւն Բանին, այլ մարմնոյն բնութիւն չարչարանքն ծանկցի. բայց թէ այլում էր մարմինն այլում ասելի էր չարչարանսն: Ապա թէ Բանն մարմին եղեւ եւ Բանին էր մարմինն, հարկ է եւ Բանին ասել զչարչարանսն, քանզի վասն անքակ միութիւնն Բանն իւր համարէր զիւրոյ մարմնոյն չարչարանսն ըստ այնմ թէ. Ջի՞ հարկանես զիս եւ ասէ, թէ Ետու զթիկունս իմ ի հարուածս:

Նորին.

Սնուտիք են որ աստուածութեանն նորա ասեն զչարչարանսն, զի ոչ Աստուած ի ձեռն մարմնոյն չարչարեցաւ, այլ ի ձեռն Աստուծոյ ի մարմնոյն եղեն չարչարանքն: Իսկ վասն միանալոյն Բանն ինքեան համարի զիւրոյ մարմնոյն չարչարանսն. արդ հրաժարէ ի չարչարանացն որպէս մարդն, եւ էութեամբ Աստուած գոլով անմահ, յաւժարութեամբ ընկալաւ զմահ եւ զչարչարանս:

Նորին.

Յորժամ թոյլ տար Բանն մարմնոյն նա կրէր զիւրն, եւ ոչ որպէս ակամայլ]. եւ ուսուցանէ զքեզ քաղցն եւ ծարաւն որ յետ քառասուն աւուրն, յորժամ թոյլ ետ:

Նորին՝ ի խնդրոյ Եպիկտիտոնի Կորնթացի եպիսկոպոսի.

Իսկ այս հուր բորբոքութեան ուստի՞ ել եւ բխեաց. եւ կամ ո՞ր դժոխք զսգայութեանցն ասել մի բնութիւն որ ի Մարիամայլ մարմինն էր եւ Բանին Աստուծոյ:

Պարտ է իմաստութեամբ իմանալ զբանս, թէ է՞ր աղագաւ ասէ զայս սուրբն Աթանաս: Եւ դու մի՛ կարծեր, թէ զոր վերագոյն շինեաց ընդդէմ երկաբնակացն, քակեալ ձեռնարկէ, եւ ինքն յինքեանն

հակառակ առնել, եւ երկու բնութիւնս հաստատել, ընդ որս կռուէր զամենայն ժամանակս իւր, որ քա՛վ եւ մի՛ լիցի:

Արդ՝ հարկ եղեւ դնել աստ զայս բանս, զի գիտացես թէ ընդէ՛ր ասաց Աթանաս, եթէ ո՛չ է պարտ մի բնութիւն ասել Բանին եւ մարմնոյն: Քանզի լսեն զայս տգէտք որք ոչ իմանան զմիտս բանին եւ ասեն հակառակութեան ըստ երկասէր բարուցն զոր ունին, թէ Աթանաս նզովեաց զասացողսն մի բնութիւն: Արդ՝ Վաղենտիանոս եւ Մարկեղ, Մանի, Եւտիքէս եւ այլ բազումք ասացին թէ յերկնից եբեր Տէր զմարմինն, եւ այլ թէ առ աչաւք շրջեցաւ Տէրն յաշխարհի, եւ այլ թէ մարմինն յառաջ քան զլինել աշխարհիս էր առ Հաւր էր հաւասար Բանին, եւ յաւետակից նմա, եւ մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն: Ասէ սուրբն Աթանաս ընդդէմ նոցա. Սուրբ հարքն ի Նիկիայ զԲանն հաւասար Հաւր ասացին, եւ մի բնութիւն Բանին եւ Հաւր սահմանեցին, եւ յետոյ զմարմինն ի Կուսէն էառ եւ միացաւ ընդ նմա անճառապէս: Այսպէս ամենայն սուրբ հարքն ասացին, թէ. Մի է բնութիւն Բանին եւ մարմնոյն յառաջ քան զառնուլն ի Մարիամայ, ապա աւելորդ էր յիշեալ զՄարիամ եւ ասել թէ ի նմանէ ծնաւ. եւ կամ ի՞նչ հարկ էր բերեալ զայն մարմինն յերկնից եւ կրկին զգեճուլ ի Մարիամայ], մարդոյ բնութիւնակից մարմնովն առանց ի Մարիամայ] ծնանելոյ եւ ոչ զգեճուլ զիւր բնութիւն կրկին:

Դարձեալ ասեն հերձուածողքն, թէ. Յորժամ մի բնութիւն ասեմք Բանին եւ մարմնոյն յառաջ քան զառնուլն ի Մարիամայ], յայնժամ մնայ] Երրորդութիւն. իսկ թէ ի Մարիամայ] ասեմք առեալ զմարմինն՝ Երրորդութիւն լինի չորրորդութիւն: Եւ ուստի փախչել կամին, տգիտութեամբ ի նմին կործանեցին, թէ մի էր բնութիւն Բանին եւ մարմնոյն նախքան զլինելն աշխարհի, եւ էր յաւետակից եւ հաւասար նմա: Ո՛վ դուք չարք, այս է չորրորդութիւն. զի որպէս ընկեր առ ընկեր հաւասար ասէք զմարմինն Բանին Հաւր նախ քան զծնունդն ի Սրբոյ Կուսէն եւ ոչ կրտսեր ժամանակաւ քան զԲանն, եւ ոչ ի վերջինս առ զնա ի Մարիամայ Աստուածածնին:

Կիրոյի Աղէքսանդրի ի ժողովն Եփեսոսի ասացեալ ընդդէմ Նեստորի.

Որ ոչ խոստովանեսցի ի մի Տէր Յիսուս Քրիստոս եւ մի բնութիւն եւ Աստուածածին՝ զԿոյսն Մարիամ, նզովեալ եղիցի:

Եթէ ոք զմի Տէր Յիսուս Քրիստոս բաժանէ յերկուս դէմն յետ միանալոյն, եւ մերձաւորութեան, պատիւ եւ ճոխութիւն տացեն նմա, եւ ո՛չ միութեան բնութեամբ, նզովեալ եղիցին:

Թէ ոք իշխեսցէ ասել աստուածագգեց մարդ զՔրիստոս, եւ ո՛չ Աստուած ճշմարիտ եւ մի Որդի, նզովեալ է:

Եթե ոք յերկուս դէմն եւ յերկուս զաւրութիւնս բաժանեցէ զբանս սրբոց աւետարանչացն, եւ կամ որ վասն Քրիստոսի ի սրբոցն ասացեալ է, եւ զոմանս մարդոյն առանձինն իմանայցէ եւ զոմանս՝ Բանին որ ի Հաւրէ, նզովեալ է:

[Ե]թե ոք ո՛չ խոստովանեցի զԲանն որ յԱստուծոյ խաչեալ մարմնով, եւ ճաշակեալ զմահ մարմնով, որ կենդանի է եւ կենդանարար, նզովեալ եղիցի:

Սենկունդոսի եպիսկոպոսի ասացեալ.

Արժա՞ն է յետ միանալոյն երկուս բնութիւնս ասել, թէ ոչ:

Պատասխանի ետ Կիրեղ եւ ասէ.

Յետ միաւորութեան ոչ անջատեմք զբնութիւնս ի միմեանց եւ ոչ երկուս որդիս բաժանեմք զանբաժանելին, այլ մի՝ որպէս սուրբ հարքն ասացին:

Տե՛ս, ի պատասխանոյդ յայտ է, թէ՛ որ երկու բնութիւն ասեն ի Քրիստոս, հարկէ նոցա, որ երկու որդի եւ երկու կամս ասեն:

Առ նոյն ասէ.

Ասեն հերժուածողքն, թէ որ մի բնութիւն ասէ, հարկ է շփոթեալ եւ ի ներքս գողանալ զբնութիւն մարդոյն. բայց անգիտացան զուղեղսն, թէ ըստ ճշմարտութեան ասի մի բնութիւն:

Նորին՝ առ Ղեւզիոս քահանայ.

Մի բնութիւն եթէ մարմնոյն՝ հոգեւորի եւ իմանալոյ եւ բանականի, սակայն միաւորութիւն խոստովանեցելոյ, ոչ մեկուսին, այլ է մի բնութիւն եւ մի Որդի:

Նորին՝ ի Պարապմանց գրոց.

Միաւորեալ եւ մի համարեալ եւ ընդ մարմնոյն իւր ցուցեալ զնորայսն, միաւորեալ ընդ նմա զիւր բնութեանցն ներգործութիւնսն:

Թէ որոշես զբնութիւնս, բացագնասցեն ընդ նմա եւ իւրաքանչիւրոյ յատուկքն բնաւորաբար:

Նորին ասէ.

Մարդն աստուածացաւ շնորհաւք՝ յետ խաչին եւ չարչարանացն:

Կիրեղ ասէ.



Ես ոչ մարդ եւ աստուած քարոզեմ, այլ Աստուած մարդացեալ խոստովանիմ, քանզի ոչ իբրեւ ի մեզ բնակէ Աստուած ի Քրիստոս, եւ Աստուած էր բնակութիւն եւ երեւեցաւ մարդ ճշմարիտ:

Նորին՝ վասն մի բնութեան.

Այսպիսի գոլ զմիաւորութիւն Էմանուէլին. քանզի իւր ցուցանէ Հոգին զամենայն ինչ զմարմնոյն, թէպէտ եւ հատանիցի սրով մարմինն, ցաւակից լինի որպէս իւրոյ մարմնոյ չարչարելոյ, բայց ինքն իւր բնութիւնն ոչ ինչ կրեսցէ. ի վերայ եկելոցն այսպէս ասեմք ի վերայ է Էմանուէլին զմիաւորութեան քանզի միաւորելոյ ընդ մարմնոյ ցաւակից լինի հոգին: Իսկ Բանն Աստուած ոչ լինի զգայակից չարչարանացն, քանզի անչարչարելի է Աստուածութիւնն:

Հարցումն առ Կիրեղ.

Միացա՞նք Քրիստոսի բնութիւնքն եթէ միաւորեցան:

Պատասխանի ետ Կիրեղ եւ ասէ.

Միաւորեցան, այսինքն՝ խառնեաց անշփոթելի, ըստ որում նոր խառնումն ասացաւ ի գրոց. ոչ բաժանի յիւրմէ մարմնոյն Բանն Աստուած, զիտէ մահ ճաշակեալ վասն մեր Աստուծոյ Բանն:

Նորին՝ յետ սակաւ[ուց].

Որ գայցէ այսպիսի բախած եւ անուսումն երկու ասել զմի Որդի, եւ մի նորա բնութեան գոլ ասեմք, եւ զմարդկայինս եւ զաստուածայինս ի միում դիմի առաւելուցութիւն:

Նորին ասացեալ.

Ընդ իւր միաւորեաց զմարմինն, մի ներգործութեամբ աստուածավայելչականաւք յիւրսն եհան ի փառս, ուստի եւ զերկու կոյրսն լուսաւորէր մերձաւորութեամբ ձեռին դնելովն աստուածային բնութիւն, որպէս զոքանչին Պետրոսի բժշկելով ձեռն դնելով միազաւրացուցեալ զիւրոյ մարմնոյն ներգործութիւն. եւ մարմին ունի զամենայն ներգործութեան կենդանարար Բանին, եւ գործէ զգործ Հաւր, քանզի յաստուածայինսն հարստացեալ անճառաբար որպէս անպատմելի միացեալ ընդ Բանին:

Նորին.

Քանզի ո՛չ բնաւ Քրիստոս բաժանի, այլ է մի Որդի ըստ միոյ բնութիւն եւ ճշմարիտ մնա իմն պատմելոյ զի եղեւ մարմին Բանն ըստ Յոհաննու, մի Որդի եւ մի գոլ բնութիւն նորա ասեմք. եւ որ երկու բնութիւնս ի Քրիստոս իմանայ յետ միաւորութեան՝ մարդապաշտ է եւ ոչ աստուածապաշտ:

Նորին.

Չարահնարութեամբ բաժանեալ յերկուս զմինն զբնութիւնն եւ ճշմարտապէս մարմնացեալ:

Նորին՝ ասացեալ առ Ակակ Մելետից եպիսկոպոս.

Աստուածային գիրք ի Կուսէն ասեն առեալ զմարմինն Բանն Աստուծոյ, սակայն է՝ մի երկուց բնութեանցն միաւորեալ ի բաց բարձեալ յերկուց հատմանցն:

Նորին ասացեալ.

Որպէս հրացեալ ոսկի եւ կռանահարեալ նիւթ ոսկոյն ընդունի զհարումն, եւ ոչ հուրն որ միացեալ էր ընդ ոսկոյն, թէպէտ եւ ժամանակաւ գտանին միաւորեալ, այսպէս եւ Աստուած Բանն ընդ իւրոյ մարմնոյն նա եւ ի վեր քան զաւրինակս:

Նորին.

Ոչ եթէ բնութիւն զնա հարկէր, այլ ինքն շարժէր զբնութիւնն. ասէ. Անձն իմ խռովեալ է:

Նորին՝ յԱւէտ[արանին] մեկնութենէն.

Քաղցն, զծարաւն, զվաստակեալն յորժամ կամէր. զերկիւղն եւ զտրտմութիւն, ի չարչարանս մերձեալ, կամաւ կոչէր յինքն. նոյնպէս եւ տգիտութիւն՝ առ մեր վարդապետութիւնս, զի մեք ի մեր աղաւթելն ի կամս Աստուծոյ թողցուք զկամս մեր եւ զհայցելին:

Նորին.

Որ այլ զչախտակրեալն ասէ, եւ այլ՝ զչախտակրեալն, եւ ոչ ասէ զանախտակիրն Աստուած ախտակրեալ իւրովն մարմնովն ի վերայ խաչին, նզովեալ է, որ է Քրիստոս աստուածութեամբն անչարչարելի եւ չարչարելի՝ մարմնովն:

Նորին.

Խաչեցելումն եւ մեռելեցելումն մարմնի եւ Աստուած էր Բանն որ կցորդ էր չարչարանացն, թէպէտ եւ անչարչարելի որպէս եւ Աստուած: Քանզի եւ իւր էր նորա բեւեռեալն մարմինն սակայն մեռեալ ըստ մարմնոյն ոչ մեռեալ ըստ ուրում էրն բնութեամբ Աստուած: Վասն այնորիկ կամք վասն որոյ միայն էր ի մեռեալս ազատ, զի ոչ յաղթեցաւ ի մահուանէ, թէպէտ եւ կրեաց զնա:

Թէոփիլէ Աղեքսանդրի թղթին ճառէն ասացեալ.

Աստուածային բնութիւնն ոչ նուաղէր միաւորութեամբն ի քաղցն, ի ծարաւն. ի չարչարանսն, ի մահն անբաժանելի էր ի մրամնոյն. որ չարչարէր եւ ոչ մեռանէր, բայց սակայն իւր համարէր:

Նորին.

Որպէս խոնարհագոյն բարձրագոյնին համարեալ է, նոյնպէս եւ բարձրագոյն Աստուած փառաւորեցին հրեշտակք քանզի զբարձրն խոնարհ տեսին մարդիք եւ զխոնարին բարձրագոյն Աստուած փառաւորեցին հրեշտակք:

Նորին յետ սակաւ[ուց].

Որպէս հրացեալ երկաթն եւ կռանահարեալ երկաթն հալածի, եւ միացեալ հուրն յերկաթն ոչ տանջի, նոյն Բանն Աստուած միացեալ ի մարմնի կրող չարչարանացն, եւ մնաց ի նմա անչարչարելի. իսկ իւրոյ մարմնոյ կիրքն ինքեան համարեալ է: Եւ որպէս հուրն յիւր զաւրութիւն ձգէ զերկաթն եւ ինքն յերկաթոյն ոչ սեւանայ, նոյնպէս մարդկութիւն յԱստուածութենէն զաւրանայր եւ Աստուածութիւնն ի կրից մարմնոյն ոչ տկարանայր:

Տիմոթէի Աղեքսանդրի ասացեալ.

Տեսէ՛ք, յորպիսի՛ հայիոյութիւնս անկանին Քաղկեդոնացիքն, որք երկու բնութիւն ասեն եւ ըստ մասին դնեն մարդ եւ Աստուած, եւ ոչ ասեն Աստուած մարմնացեալ:

Նորին.

Անկիր արկեալ մարմինն Քրիստոսի ոչ բնութիւն մարդոյ հասարակականի ասացաւ այլ մարմին Բանին Աստուծոյ, քանզի Աստուած խոստովանիմք զմարմնացեալն եւ զմարդացեալն Աստուած Բանն, որ զմահ եսպան անապական մարմնովն:

Նորին.

Աստուածային զիրք երկուս բնութիւնս ոչ աւանդեցին, եւ ոչ Քրիստոս եւ Տէր անունս ի վերայ նշանակելոյ երկուց բնութեանց զմեզ ուսուցին. զայս Նեստորիոս ուսոյց, եւ ոչ աստուածային գրեցեալքն եւ ոչ սուրբ հարքն. ասէ. Մկրտեցէք յանուն Հաւր եւ Որդոյ եւ [Հոգոյն սրբոյ], եւ ոչ ասաց թէ՛ ի մարդկութիւնս յանուն:

Նորին.

Աստուած ելով Բանն մարմնացաւ ի Կուսէն անպարագրելի իմացապէս, որպէս ինքն գիտէ միայն եւ զկուսութիւն ոչ ապականեաց, եւ դրաւքն փակելովք ի ներքս եղեալ եւ ճեմէ:

Պետրոսի Աղեքսանդրու եպիսկոպոս.

Վասն որոյ եղեալն սուրբ եւ Որդի Աստուծոյ կոչեսցի, քանզի եւ Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս

Քրիստոս ծնաւ, զի զնոյն ելով զԲանն ոչ այլ եւ այլ, քա՛վ լիցի. այլ է ճշմարիտ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ եւ թէ Յիսուս է Քրիստոսն, եւ ճշմարտապէս չարչարեցաւ վասն մեր:

Դէոսկորոս Աղեքսանդրու հայրապետն ասէ ի Գանգրայ յԱքսորանացն ի գրոցն որ Սէնկունդոսն էր.

Քանզի առ զմերս բոլոր անթերի Փրկիչն անձնացեալ անձամբ բանական եաւթեանց միայնոյ բեղման մարդոյ եւ քնոյ, եւ հեշտ ցանկութեան:

Նորին ասացեալ.

Զի՞նչ արդեաւք հարկաւոր գոլ զԱստուածն գոլ յերկինն, մարմնանալ ի Կուսէն եւ խանձարրապատեալ եւ ի մսուր դնել եւ կաթնաբոյծ լինել ի գիրկս անարգիլ եւ կախիլ զփայտէ, թաղիլ եւ յառնել երեք ւարեայ եւ տըւեալ փրկանս զանձն ընդ անձին, միս ընդ մսոյ, արիւն փոխանակ արեան:

Կիրեղ Երուսաղէմայ հայրապետ[ի].

Արդ՝ ոչ լոկոյ մարդոյն երկրպագանել արժան ինչ է, եւ ոչ Աստուած մերկ ասել առանց մարդկութեան բարի է: Արդ՝ երկիրպագեսցուք Աստուծոյ, հաւատասցուք, թէ եկն եւ մարդկութիւն զգեցաւ ի Սրբոյ Կուսէն:

Նորին.

Ոչ որպէս ոմանք կարծեցին, թէ յետ չարչարանացն պսակեցաւ, որպէս թէ յԱստուծոյ վասն համբերութիւն առեալ իցէ ընդ աջմէ Հաւր նստիլն, այլ ի սկզբանէ որպէս ծնել ունի ընդ աջմէ Հաւր նստեալն այլ ի սկզբանէ:

Նորին յետ սկաւ[ուց].

Հաւատա՛ դու թէ սա Միածին Որդին Աստուծոյ է, վասն մերոց մեղաց յերկնից իջեալ, զհաւասարակից մարդկութիւնս յանձն առեալ զչարչարանս, եւ ծնեալ ի Սրբոյ Կուսէն եւ ի Հոգոյն Սրբոյ ո՛չ կարծեաւք ինչ, այլ ճշմարտապէս մարմնացաւ:

Յոհանու Երուսաղէմայ] հայրապետ[ի].

Զի ի Կուսէն ծնեալ եւ Աստուած Խաչեալ:

Նորին յետ սակաւ[ուց].

Այլ վասն զի բոց ասէր եւ վարդն անապական ծաղկեալ յանապական Կուսէն, Բանն Աստուած ծնաւ ի

Կուսէն եւ Կոյսն մնաց անապական, զի ուր պատճառ անապականութեան էր, անդ ոչ գործեցաւ ասպականութիւն:

Նորին .

Խոստովանիմք, թէ Յիսուս Քրիստոս ճշմարտապէս մեռաւ վասն մեղաց մերոց, թաղեցաւ եւ յարեալ՝ զնոյն բնութիւն ունելով մեռեալն որ մարմնով եւ թաղեցաւ, յայտ է, թէ անապականութեամբն որպէս էրն յառաջագոյն, իսկ նոյնպէս եւ յարեալ:

Անտիոքու երկրորդ ժողովն.

Որ ոչ հաւատայ եթէ բնութեամբն էութիւն ճանաչի ի միութեան, անեղին Աստուծոյ Հաւր, նզովեալ՝ եղիցի:

Որ ասէ զկարգ միաբանութիւնն բաժանեալ յերկուս բնութիւնս եւ այսմ մութանեն զչորրորդութիւնն, նզովեալ է:

Որ ասէ զմարմինն ճշմարտի Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի թէ միաւորութիւնն, մինչեւ ցյարութիւն, ասպականացու էր, անփառաւոր էր եւ անկատար, եւ յետ յարութեանն փրկեցաւ եւ խառնեցաւ, եւ ոչ խոստովանի թէ որ զկնի յարութեանն էր, նոյնպէս եւ յառաջ քան յարութիւն, եղիցի նզովեալ:

Որ զմահն Տեառն եւ զչարչարանս ասպականացու ասէն, եւ ոչ առաւել եւս խոստովանեսցի չարչարանաւքն անչարչարելի եւ մահուամբ անմահ, որով ամենայն ինչ դիւրին է:

Տիտոսի Անտիոքու ասացեալ.

Մի բնութիւն հաւատամք եւ երիս գոյակցութիւնս խոստովանիմք. քանզի երեք են իմացեալ եւ որպէս զմի ճառեմք. Աստուած Բանն խաչեալ որ Հաւր միայն է միասնական Որդի եւ ի ձեռն անապական մահուան իւրոյ զառ ի մեզ զմահն խափանեսցէ:

Եւտիքի զԱնտիոքու Պիսիդայ եպիսկոպոսի ասացեալ.

Եւ իբր ծնիցելոյն երկուս բնութիւնս, քանզի թէ ոք զայս համարձակի ասել զԷման[ու]էլն, մերձենայ առ այնպիսին:

Սեւեռի Անտիոքու Ասորոց Կաթողիկէի մեկնութենէն ասացեալ.

Հարկաւորի ասել Պետրոս Քրիստոսի չարչարելն մարմնովն որպէս զմիոյ պատկերի, միոյ անձնաւորութիւն եւ միոյ բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ իմացուք զայս ասելով, զի յերկուս

բաժանէր՝ աւելորդ էր վերստին ասել չարչարի. այլ զի Աստուած էր անչարչարելի եւ մեր փոխանդրապէս չարչարելի եղէւ մարմնով, ասաց՝ չարչարել մարմնով:

Նորին.

Ասելն մարմնով ցուցանէ թէ նոյն ինքն առանց չարչարանաց մնայր ըստ աստուածութեան եւ ոչ զգար ի չարչարանացն այլ չարչարանացն եղէւ չարչարիչ:

Աստուածաբանի՝ Կլոնդոն[ոս]ի թղթն ասաց[եալ].

Երկու բնութիւնք, քանզի Աստուած եւ մարդ, քանզի հոգի եւ մարմին:

[Ա]պողինար ասաց.

Թէ Աստուած Բանն ի Կուսէն զմարմինն միայն էառ առանց հոգոյ եւ մտաց:

Աստուածաբանն ասէ.

Բնութիւնք երկու: Այսինքն՝ կատարեալք, Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ: Զի մարդոյն կատարելութիւն ի հոգոյն եւ ի մարմնոյն է, քանզի ասէր իսկ, թէ հոգի եւ մարմին. քանզի ոչ կարէ մարդ առանց հոգոյ գոյանալ, եւ Բանն Աստուած առ ի մէնջ զհոգի եւ զմարմին եւ ընդ ինքեան գոյացոյց եւ ոչ ըստ կարծեացն Ապողոնարի, բայց որդիք ոչ երկուք եւ ոչ աստուածք: Արդ՝ Աստուած եւ մարդ ասաց, զի մի կարասցեն յերկուս բաժանել զմի եւ զնոյն Քրիստոսն դնէ թէ ոչ երկու որդիք եւ ոչ երկու աստուածք, քանզի եւ աստ ոչ երկու մարդ, թէպէտ եւ Պաւլոս ներքին եւ արտաքին ասէ.

Տե՛ս. թէպէտ եւ երկու է մարդ հոգի եւ մարմին, ըստ առաքելոյն, սակայն ոչ ասի երկու մարդ կամ երկու բնութիւն, այլ մի մարդ, մի բնութիւն վկայի յարտաքնոց. եւ վարդապետաց եկեղեցոյ նոյնպէս ասացին եւ ցուցին զմարդանալն Բանին Աստուծոյ յերկուց աւտար բնութեանցն մի եղեալ անշփոթ, այլ եւ այլ, յորոց Փրկիչ: Եւ արդ՝ մի՞թէ ոչ նոյն է, այսինքն՝ մի երեւելին եւ աներեւոյթն, անժամանակն եւ որ ընդ ժամանակաւ. ոչ այլ ոք եւ այլ, այս՝ մի՛ լիցի, երկոքեանն մի:

Նախ յամաւթ արար զԱպողոնար, որ ընդ մարմինս միայն ասաց միանալ Բանին Աստուծոյ, եւ երկու բնութիւն ասաց, այսինքն՝ Աստուած կատարեալ եւ միացաւ ընդ կատարեալ բնութիւն մարդոյս ընդ հոգի, ընդ մարմին եւ ընդ միտս: Ահա երկու բնութիւն անթերիք՝ Աստուծոյ եւ մարդոյն, նախ աւտարք ի միմեանց, իսկ յորովայն ի Կուսին մի եղալ անշփոթ, ըստ որում եւ ասէ վարդապետս, թէ.

Երկոքեանս մի են՝ խառնելովն Աստուծոյ մարդանալովն, Աստուծոյ եւ մարդոյն աստուածանալովն:

Արդ՝ եբարձ զերկուութեան կարծիս, զոր ասաց ընդդէմ Ապողոնարի, խառնեցաւ եւ մի լեալ ասէ:

Աձեն քեզ այլ վկայս նոյն բանիս: Բարսեղ եւ Գրիգոր Աստուածաբանն երբեմն ի բնութիւն խնդիրս,

եղեալ ասեն. Ոչ մի ասեմք բնութիւն, յաղագս զմիւսն կորուսանելով, եւ ոչ երկուց ասեմք զՔրիստոս բաժանաբար, այլ յերկուց բնութեանց միացեալ ասեմք զՔրիստոս անբաժանաբար, մի անձն, եւ մի պատկեր, սքանչելի միաւորութեամբ ի վեր քան զմիտս եղելոց:

Ի նոյն Կլոդիոնոս[ի] ճառէ.

Եթէ ոք իբրեւ ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործելոյ, այլ ոչ բնութիւն միաւորեալ եւ ստեղծեալ ընդ նմին, եղիցի ընդունայն ի լաւագոյն զաւրութենէն. եւ որ յետ մկրտութեանն որդեգրութեան արժանանալ ասէ, եղիցի նզովեալ:

Ի նոյն ճառէ, ընդդէմ Ապողոնարի ասացեալ.

Թէ ոք յանմիտ մարդ յուսացաւ՝ նա անմիտ է, քան ոչ առեալն անբժշկելի է. թէ կէսն սխալեաց՝ Աղամայ կէս առեալ եւ ապրեցաւ, եւ թէ բաւանդակն, բաւանդակն առաւ եւ ապրեցաւ:

Ապողիմար ասէ.

Այլ արդ բաւական էր աստուածութիւն փոխանակ մտաց:

Աստուածաբանն ասէ.

Զի՞նչ է առ իս այն զի աստուածութիւնն հանդերձ մարմնովն միայն ոչ է մարդ, այլ եւ ոչ հոգի միայն, եւ ոչ երկոքեան առանց մտաց, որք եւ մարդ պահեն զմարդն, եւ մեծագոյն զաստուածութիւնն, զի զիս կատարելապէս գործեսցէ:

Տե՛ս, այս եղեւ պատճառ ասել յառաջ երկու բնութիւն, զի ցուցէր թէ Աստուած ընդ բոլոր մարդս միացաւ ընդ միտս, ընդ հոգի եւ ընդ մարմին, եւ եղեւ մի. զի կատարեալ առցուք զփրկութիւն:

Նորին՝ յՈրթոյ ճառէն ասէ.

Խառնեցաւ ընդ աստուածութիւն եւ եղեւ մի՝ վեհագոյնին յաղթելով:

Նորին՝ Ջատկին ճառէն.

Աւծելոյ ւստութեամբ եղելոյ որպէս որ էւած, եւ համարձակիմ ասել զուզաստուած:

Նորին ասացեալ.

Կարաւտացաք Աստուծոյ մարդանալոյն եւ մեռանելոյն:

Նորին.

Մերով ախտակրութեամբ ախտակրէ Աստուած եղեալ մարդ:

Նորին ի Ջատուցեալ ճառէն.

Հրեշտակապետին ողջոյնն առ կոյսն, ինքն ողջոյն՝ Բանն Աստուած է, զի մտեալ ի յունկն լուծաւ եւ յարգանդի, եւ անդէն զապականացու մասունս, որ յետ անիծիցն եղեւ, զի ուր Աստուած է, զի՞ եւս յիշի ապականութիւն, քանզի ապականութիւն մեղաց է: Եւ որ մեղս ոչ արար զի՞արդ առ նա մաւտ էր ապականութիւն:

Նորին.

Յորժամ պատմէ զգործս Տեառն սքանչելիսն որ պատմի ի գիրսն Մա[տ]թէոսի զոր գործեաց թագաւորն Քրիստոս յորժամ ընդ մարդկան մարմին խառնեցաւ:

Նորին՝ յետ սակաւուց.

Տղայ է, որ ոչ երկիր պագանէ մարդոյ թագաւորի որ երեւեցաւ համագոյ Աստուածութիւն Բանին երկնաւորի. հատ իսկ կամ զԲանն ի Հաւրէ մեծէ կամ ի Բանէն զկերպարանն մարդկան եւ զթանձրութիւն. քանզի Աստուած է, որ մարմնացաւ Բանն Հաւր:

Նորին.

Աստուած խաչեալ արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուսաւորեալ, զի պարտ է ըստ Արարչին չարչարակից լինել եւ արարածոյն:

Նորին.

Քաղցնոյր, բայց ի հինգ նկանակէ զհինգ հազարսն կերակրեաց. Բանն թանձրանայ, անտանելին տեսանի, անշաւշափելին շաւշափի:

Նորին.

Ո՛վ նոր խառն մասն, ո՛վ սքանչելի խառնուածոյն:

Նորին.

Որ զի ճշմարտութիւն որպէս մի, եւ ոչ բազմութիւն զի ճշմարտութիւն, երկուութիւն՝ ի բազումս պատրաստեալ է:

Նորին.

Առաջի քո ածենք զՔրիստոսի խոնարհումն, զանչարչարելին, զչարչարանս, զխաչին, զբեւեռնս:



Նորին.

Թէ տակաւին արարածոյ երկիր պագանեն եւ յարարածս մկրտէին ոչ եւս աստուածանային զառաջին ծնունդն փոփոխեալ:

Նորին.

Եկեալ Աստուած հանդերձ առեցելովքն մի յերկուց ընդդիմակացն մարմնոյ եւ հոգւոյ, յորոց մինն Աստուած եւ միւսն աստուածացաւ, քանզի որով ոչ ի ստորինս էջ, նոքաւք ի վեր չոգաւ:

Նորին.

Արին Աստուծոյ լսելով եւ չարչարանս եւ մահ, մի' ի վայր անկցիս անաստուածաբար, իբր յԱստուծոյ ջատագով, այլ առանց ամաւթոյ կեր զհացն, արբ զարին, թէ կենացն փափագիցէք. զի շիտք արեանն դու զնա Քրիստոսի Աստուծոյ զերկիրս ամենայն վերստին ստեղծանէ եւ լինի նա խաղաց կաթինն ամենայն մարդկան:

Նորին.

Ջամենայն կիրս աստուածաբար կրեաց, զի կարող էր զինչ եւ կամիցէ. եւ վկայէ Աւետարանն զի յետ քառասուն աւուրն ապա քաղցեաւ, քանզի կամաւ եկեալ ի չարչարանս անչարչարելին, եւ իւր համարի զիւրոյ մարմնոյ չարչարանքն:

Բարսեղ` ասէ ընդդէմ երկբանակացն. Ի Սաղմոսի մեկնութենէն.

Կարողակից արար Աստուածութեանն զմարմինն, եւ [ի] մի զաւրութիւն զաւրացոյց:

Նորին.

Մարմինն բնութիւն մարդկային, իսկ միաւորութեամբն Աստուածային եղեւ:

Նորին.

Ջոր աւրինակ մարմինն Քրիստոսի ոչ ետես զապականութիւն, նոյնպէս եւ միտք նորա ոչ իմացան զմեղս:

Նորին.

Բանն որ ասէ, Ողջոյն մի տայք ի ճանապարհի, ինձ ասպէս թուի, թէ վասն հերձուածողացն ասէ, որք երկու բնութիւն ասեն զՔրիստոս, եւ ջրով եւ այլ խառնուածով ապականեն զսուրբ խորհուրդն:

Նորին՝ ընդդէմ Ապողինարի ասացեալ.

Որպէս ասրն ներկեալ լինի ծիրանի անհետ լինի սպիտակութիւն, զի մի երկու գոյն տեսողացն երեւեսցի, այլ միայն ծիրանին, այսպէս եւ մարդկային միտք եւ մարմին խառնեալ աստուածային բնութեամբն չէ հնար զնա երկու տեսակ իմանալ կամ երկու բնութիւնս կամ երկու կամս առընթեր միմեանց այլ մի իշխանական կամս զնա իմանալ եւ ասել եւ ի բաց բարձեալ ի նմանէ ամենայն մարդկային անձնիշխան կամք:

Ապողինար ասէ.

Անկարելի է երկուց բնութեանց մի լինել կատարելութեամբ:

Բարսեղ ասէ.

Թէ ի մարդկանէ անկարելի է, սակայն յԱստուծոյ կարելի է յոյժ որպէս Կուսին ծնանիլն ի վերայ ծովուն զնալն, եւ դրաւքն փակելովք մարմինն թանձրամասն ի ներքս մտեալ ի յոսկերաց հաստատեալ:

[Նորին.]

Բանն մարմին եղեւ մնացեալ. նոյնպէս մարմինն աստուածացեալ եւ ոչ փոփոխեալ յանմարմնութիւն:

Գրիգորի Նիւսացին ի Բնութենէ գրոյն, որ վասն հոգւոյ եւ մարմնոյն միաւորութեանն.

Քանզի պատշաճի այս բանս մաքուր ի մարդկութիւնս, միաւորութիւն Աստուած Բանն ի ստորում միաւորեալ՝ մնաց անշփոթ եւ անպարագրելի ոչ ըստ անձին այլ ըստ հոգւոյ եղանակի. քանզի թուի եւ ախտակից լինել հոգին մարմնոյն. իսկ Աստուած Բանն ոչինչ այլայլեցաւ ի կցորդութենէն որ առ մարմինն եւ անձն, այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրոյ Աստուածութեանն, լինի նոքաւք մնացեալ յոչ ինչ յառաջ էր: Նոր իմն է յեղանակս, եւ խառնի եւ մնալ] անշփոթ. ոչ ախտակից եղեալ, այլ գործակից միայն:

Վկայէ այսոց եւ Պորփիրոս հակառակ Քրիստոսի շարժեալ զիւր լեզուն, զի հզաւր են [ի] թշնամեացն վասն մեր ի վկայութիւնք. յերկրորդ բանին շարախառնիցն գրէ այսպէս եւ ասէ.

Ոչ է ասել թէ անհնարին է էութիւն իրիք առեալ ի լրումն այլ էութիւն եւ լինել մասն էութիւն եւ մնալով ըստ իւր բնութեանն մի յետ լնլոյն զմիւսն էութիւն ընդ այլոցն լինել եւ զիւրն ամբողջ պահելով ոչ փոփոխեալ, այլ յորս մերձ լինի փոփոխէ յիւր ներգործութիւնն:

Բարսեղ ասէ.

Եւ ասէ զայս յաղագս միաւորութեան հոգւոյ եւ մարմնոյ: Իսկ թէ ի վերայ հոգւոյ ճշմարիտ է բանն յաղագս անմարմնութեան որչափ ի վերայ Աստուծոյ Բանին յաւէտ անբաղ[ղա]տաբար ըստ ճշմարիտ անմարմնոցն, որ հակառակ խնու զբերանս ձեռնարկողացն բամբաստել զԱստուծոյ Բանին միաւորութիւն առ մարդկութիւն:

Նորին ասացեալ.

Քանի են ոմանք որ չարչարանաւք զմի բնութիւն որոշեն եւ բաժանեն. նոքա են բազմահայեաց աչք, որ բազում հային եւ բնաւ ինչ ոչ տեսանեն:

Նորին՝ ընդդէմ Եւնիմիոսի ասացեալ.

Ներգործեալ որպէս Աստուծոյ ճշմարտի ի ձեռն իւրոյ մարմնոյն ձայն եւ գործն մարդկաւրէն եկեալ յառաջ եւ Աստուածութիւն ի ներքուստ ծածկեալ լինի:

Առ նոյն ասացեալ.

Մեք զմարմինն, որով զչարչարանս ընկալաւ ընդ աստուածային բնութիւնն խառնեալ, զայս ասեմք արարեալ որ ինչ է առովն:

Նորին՝ առ Թէոփիլ[լ]ոս Աղեքսանդրու հայրապետն ասացեալ. Ամենայն որ ինչ տկար բնութիւն է խառնեալ եւ եղեւ որ ինչ Աստուածութիւնն, քանզի անժանաւթ բնութեամբն ծնունդ ի վերայ ինքեան նորածեւեաց:

Հարցումն Բարսղի.

Է ի՞նչ զանազանութիւն Բանին եւ մարմնոյն:

Նորին.

Թէ զանազանութիւն եւ աննմանութիւն ոչ պարզութիւն, թէ ոչ պարզութիւն ի բազմաց դրութիւն:

Նորին.

Հարկ է [մի] բնութիւն խոստովանել զՔրիստոս եւ մի կամք եւ մի դէմ յետ միաւորութեանն:

Նորին.

Իսկ Տէրն ի Մարիամայ ծնեալն որով ամենայն ինքն ամենայն ասելով Աստուծոյ Բանն. բայց նզովեմք որք երկու բնութեամբն չարչարի ասէ, Աստուած եւ մարդ սոսկ զխաչեալն զՔրիստոս, եւ ոչ բոլոր էութեամբն Աստուած է:

Հարցումն պատրիկայ Մարինոսին յաղագս երկու բնութեանս: Պատասխանի Գրիգորի.

Երկու բնութիւնք եւ երկու ներգործութիւն յաւտար է յԱստուծոյ, զի հակառակ է բանդ. այլ զոր գրես՝ ծանուցից քեզ: Մարմինն որով չարչարեցաւ ընդ աստուածային բնութիւն խառնեալք, զայն ասեմք չարչարեալ ի ձեռն միաւորութեանն որ ինչ է առողին բնութիւնն ընդ տկար եւ ապականացու բնութիւն խառնեալ յաստուածային բնութիւն եւ եղեւ որ ինչ միշտ էրն Աստուածութիւն:

Նորին.

Ինքն էակացս Տէրն ընդ համառաւտ եղելոցս եղանի ընդ դատապարտելոցս եւ պարագրողն զերկնից կամարն՝ խանձարրապատի եւ ի մտուր դնի:

Նորին.

Բանն Աստուած ոչ յինքեան էառ զմարմինն, եւ ոչ ինքն ընդունակ եղեւ նոցա տկարութեանն, այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրում Աստուածութեանն, լինի ն[ո]քաւք մի որպէս յառաջ էր քան զգալն յաշխարհս:

Նորին առ հարցումն Բարսղի.

Բանն զմարմինն յիւր պատկերն փոխեաց Որդոյ բնութեամբն, զի ոչն իւր էր Հայր ան[ն]մանոյ տալոյ զաթոռ իւր:

Տե՛ս, նման Հաւր ասէ զմարմինն, ապա հարկ է զի մի բնութիւն եղիցի Բանին եւ մարմնոյն, զի զանվրէպ նմանութիւն առ Հաւր կալցի, զի Հայր մի բնութիւն է:

Եփրեմի յԵրրորդութեան ճառէն ասացեալ.

Ոչ յերկնից ասեմք զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմինն, այլ ի սրբոյ Կուսէն Մարիամայ], եւ ոչ բաժանեմք զԲանն յիւրմէ մարմնոյն յերկուս դէմս կամ յերկուս բնութիւնս. եւ եղիցի մարդս մեզ արինակ, որ գոյացեալ է ի հոգոյ եւ ի մարմնոյ, եւ է մի դէմ եւ մի բնութիւն խառնեալ եւ անշփոթ մնացեալ:

Նորին՝ յԱւետարանի [մեկնութենէն]։

Ի մէջ թակուկացն շրջեաց զջուրն ի գինի ըստ ոչ բնութիւն. նոյնպէս եւ զմեր բնութիւնս առ ի մէջ Կուսին, եւ շրջեաց յանա պականութիւն եւ ուր Աստուածութիւնն յամենայն տեղիս ձգի եւ մարմինն։

Նորին.

Կոյսն զմարմինն ծնանելով՝ զԱստուած ծնաւ. հրէայքն զմարմինն խաչելով՝ զԱստուած խաչեցին։

Նորին՝ ի Հաւատոյ բանէն.

ԶԲանն Հաւր որ ծնունդն է Հաւր յաւիտենից. թէ երէկ ծնաւ ի Մարիամայ] ըստ հրեշտակին, որ ասէ. Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ, նոյնպէս եւ զմարմնոցն ասէ. Ծնեալ ի Հաւրէ. աղաղակեաց Հայր յերկնից եւ ասէ. Դա է Որդի իմ սիրելի: Տե՛ս, զի Հայր ո՛չ որոշեաց, եւ դու մի՛ որոշէր:

Նորին.

Բնութիւն եւ Տէրն յաւիտենից եւ մարմինն նորա, որ եկն ի Մարիամ, մի է եւ ոչ երկուս:

Նորին.

Այն որ ի սկզբանէ Աստուած, եւ այն որ եկն եւ ծնաւ՝ մի ծնունդ կատարեալ է. քանզի իբրեւ ծնաւ մարմին Բանին, եկն յայնժամ ծնաւ Բանն, որ յաւիտենից էր ընդ մարմնոյն որ եկ եւ ծնաւ:

[Նորին.]

Ոչ ինչ բաժանումն Բանին եւ մարմնոյն. [յ]աստուածային գիրս մի բնութիւնս եւ մի զաւրութիւն, բոլորն Աստուած եւ բոլորն մարդ:

Նորին.

Ո՛վ սքանչելեացս, որ ի ձեռն կաւեղէն ի հողոյ Արարիչն երկնի եւ երկրի ապտակեցաւ. քանզի Աստուած Բանն տեսանեմք կախեալ զփայտէ եւ սպանեալ վասն մեղաց մերոց:

Նորին՝ ի Հաւատ[ոյ] բանէն.

Աստուած որ եկն տալ նոցա կեանս, կալան եւ կախեցին զնա ի փայտէ. մարգարէքն որ կոտորեցան, ոչ կարացին խլել զքաղաք վասնզի արարածք էին: Իսկ Աստուած, որ խաչեցաւ ի մէջ նոցա, կործանեաց զնոսա, վասն զի Արարիչ է ամենայնի. զբարբառն որ արծակեաց Տէրն ի խաչին, լըւան արարածք եւ ճիչ բարձին, զի ծանեան, թէ նա՛ է Արարիչ իւրեանց:

Նորին.

Շիջաւ արեգակն՝ ճրագն աշխարհի, զի խաչեցաւ լոյսն ամենայն արարածոց:

Նորին.

Կապեցաւ եւ կծ[կ]եցաւ ի վերայ խաչին, զաւրութիւն այն յոր կապեալ են ամենայն արարածք:

Նորին.

Աւտար է յապականութեանց ծնեալն զոր Կոյսն ծնաւ, վասն այնորիկ սրբութեան աղբիւր, եւ պահեցաւ միշտ կուսութիւնն, քանզի անապականութեանն փափագեաց եւ եղեւ մայր անապականութեան:

Եփրեմի՝ յԱւետարանին մեկնութենէն.

Թողլիք զնա չարչարեալ այսպէս որոշեցաւ ի նմանէ այլ իբրեւ ծաղկեցաւ զաւրութեամբ իւրով ի սպանելոյն եւ ի սպանողացն: Արդ ի մահու անդ ո՛չ էր նա ընդ նմա, ո՛չ՝ վասն զի կամեցաւ ի բաց լինել ի նմանէ, այլ քանզի ոչ կարաց մահ մերձենալ ուր կեանք էին սպանողք մահու:

Արդ՝ տգիտաբար միայն յերեսս բանիս հային եւ զխորսն ոչ իմանան՝ տկարանան հոգով եւ գայթակղին, որպէս եւ տեսաք զոմանս: Սորին վասն այնր եդաք զլուծումն սորա օգնութեամբն Աստուծոյ, որով պախարակեսցես զայնոսիկ որք անմտաբար անդուռն բերանով վարին սովաւ. որպէս եդաք զԱստուածաբանին յիւրում տեղոջն զայն որ ասէ. Ո՞ր դժոխք սգալոյնեցան ասելով մի բնութիւն Բանին Աստուծոյ եւ մարմնոյն որ ի Մարիամ[այ], եւ ցուցաք զպատճառ սոցա:

Բայց տե՛ս զայլ վկայութիւն Եփրեմի, որ գրեալ են յառաջն եւ սովաւ մի՛ գայթակղիր, քանզի ասէ՝ Աստուած զծնեաալն ի Կուսէն, եւ թէ Աստուած է զոր խաչեցին հրէայքն:

Արդ, ա՛յն, որ ասէ՝ Թողլիք զնա չարչարեալ, այսինքն՝ Բանն Աստուած թոյլ ետ իւրում մարմնոյն կրել զհիւրն, վասն զի մեր յանցանացն, թոյլ ետ չարչարանացն գալ ի վերայ նորա. քանզի Բանն իւր կամաւք մատնեաց զանձն իւր այսպէս որոշեցաւ ի նմանէ: Արդ, ի մարմնոյն ոչ ասէ որոշիլ, սիրելի, այլ ի չարչարանացն. զի Բանն Աստուած բնութեամբ անչարչարելի է, քանզի է մարմին միացեալ անբաժանելի, եւ ի չարչարանացն որոշելի, բայց իւրն համարէր զչարչարանսն քանզի ի՛ւր էր մարմինն, ոչ իբրեւ այն զի հատցի ի նմանէ ոչ ասեմ ասէ զորոշեալն հատանել կամ բաժանիլ Բանին ի մարմնոյն, որպէս երկաբնակքն որք առանց Բանին Աստուծոյ սոսկ մարդ վասն իւրմէ ասեմ չարչարեալ, այլ իբրեւ ծածկեալ է զաւրութեամբ իւրով. ի սպանելոյն ինքն մեկնէ զայս ասեմ որոշումն ասէ, քանզի Բանն ծածկեցաւ ի մարմինն, եւ ոչ երեւեցոյց զաւրութիւն իւր. ի սպանելոյն յիւր

մարմնոյն, զոր թոյլ ետ Բանն իւր կամաւք սպանանիլ վասն մեր, քանզի կրեաց զամենայն կիրս ի մարմինն, բաց ի մեղաց կամաւք Բանին, որպէս եւ աղաւթերն առ Հայր՝ անցանել բաժակին, եւ քիրտն եւ այլն ամենայն. եւ սպանողացն ի խաչահանուացն ասէ, զի իբրեւ զմարդ չարչարեցին զնա, քանզի կուրացաւ աչք հոգոց նոցա ի չարէն ըստ առաքելոյն որ ասէ, թէ. էր ծանուցեալ նոցա ոչ արդեաւք զՏէրն փառաց ի խաչ հանէին: Արդ, ի մահու անդ ոչ էր նա ընդ նմա, ոչ մեռաւ ասէ Բանն ընդ մարմնոյն, զի Աստուած Բանն անմահ է եւ անչարչարելի, բայց վասն անձառ միութեանն Բանն ի՛ւրն համարէր զչարչարանսն եւ զմահն, վասն զի ի՛ւր էր մարմինն, եւ աստուածացաւ մարմինն իմանալ ընդ Բանին յորովայնի Կուսին: Սորին վասն համարձակութեան ասեմք՝ Աստուած խաչեալ եւ անմահն վասն մեր մեռեալ, ո՛չ՝ վասն զի կամեցաւ ի բաց լինել ի նմանէ ո՛չ ասեմ թէ որոշեցաւ կամ մեկնեցութեամբն ի մարմնոյն, քա՛ւ լիցի, քանզի անբաժանելի էր միացեալ ընդ մարմնոյն, բայց սակայն ո՛չ մեռաւ, ընդ նմա զի անմահ է Բանն Աստուած որպէս ասացաք: Այլ քանզի ոչ կարաց մահ մերձենալ ուր կեանքն էին սպանող մահու, զիա՞րդ ասէ կարէր մահ հասանել անմահ բնութեան Աստուծոյ, որ վասն մեր մարդ եղեւ, եւ իւր աստուածացեալ մարմնովն եսպան զմահ, այլ որպէս ասացաք խաչեցաւ անշփոթ մարմինն ընդ նմա Բանին եւ աստուածացաւ յամենայնի հաւասար նմա տնաւրինաբար եւ կամաւ կրեաց զչարչարանս եւ զմահ, եւ սպան զմահ իւր անմահ եւ անապական եւ կենարար մահուամբն իւրով, եւ ինքն գեր ի վերոյ մնաց քան զամենայն կիրս, բայց սակայն ինքեանն համարեցաւ, վասն զի ի՛ւր է մարմինն:

Եպիփանու Ի. Սաղմոսի մեկնութենէն.

Առ զբնութիւնս մեր Միածին Որդին Աստուծոյ եւ միացոյց ընդ բնութեամբ Աստուածութեան իւրոյ:

Նորին.

Բանն Աստուած հաւասար Հաւր անքակ միացոյց ընդ իւր զբնութիւնս մեր:

Նորին՝ հաւ[ա]տոյ բանէն.

Այլ ինքն Բանն մարմին եղեալ ոչ փոփոխեաց զԱստուածութիւն իւր ի մարդկութիւնս, եւ անձառ միացոյց զմարդկութիւնս ընդ Աստուծութեանն իւր, եւ մարդ ասեմ կատարեալ որչափ եւ որ ինչ ի մարդն բաց ի մեղաց:

Նորին՝ ի ժողովոյն ասէ.

Յանդիմանէ սա զայնոսիկ որք ունին զաղանդն Սիմոնի Կախարդի եւ ասեմ երկու բնութիւն, երկուս որդիս, զմինն՝ ըստ բնութիւն եւ միւսն՝ ըստ շնորհաց, մինն անմահ եւ միւսն՝ մահկանացու:

Նորին՝ յԱկանց գրոց.

Քրիստոս ի չարչարելն մարմնով ոչ Աստուծութեանն որիչ եւ ոչ մարդկութեանն մեկնելով, այլ ի միասին եւ ի նոյն Աստուածութեան եւ մարդկութեան մի Տէր եւ մի Քրիստոս. արիւնն ոչ էր Յովսէփայ, որով ներկեալ էր պատմուճանն, իսկ հանդերձ նորա էր. եւ արիւն[ն] ոչ հասաւ ի մարմին նորա, այլ ի պատմուճանն, իսկ ներկուածն ոչ ասի հանդերձին, այլ զգեցողին զնա. նոյնպէս եւ չարչարանքն ոչ հասին յԱստուածութիւն նորա, բայց Աստուածութեանն համարեալ եղեւ, զի Աստուծով եղիցի փրկութիւն մեր, զի մի՛ յուսացուք ի մարդ, այլ Աստուած, քանզի. Անիծեալ է որ դնէ գոյս է իւր ի մարդ, այլ Աստուած:

Նորին.

Կարողակից արար զհողեղէն մարմինն Աստուածութիւնն, ի մի զաւրութիւն եւ ի մի Աստուածութիւն ժողովեաց:

Նորին ասացեալ.

Առեալ զմահկանացու մարմինս մեր եւ զեղծանելի միացոյց ընդ աստուածութիւն եւ եցոյց անապական:

Նորին.

Ամենակալ սրբողն Աստուած Բանն զգեցաւ մարմին անապական յանապական կուսէն Մարիամա[յ] եւ ընդ առնուլն գործեաց զնա անապական:

Նորին՝ Հաւատոյ ճառէն.

Ինքն Աստուած եւ ինքն մարդ, ոչ շփոթեալ զերկուսեանն ի միասին խառնեաց, զերկրա[յ]ինն ընդ աստուածա[յ]ինն զաւրացոյց, ի մի Աստուածութիւն հաւաքեաց:

Նորին.

Ջոր աւրինակ սպիտակութիւն ասրոյն ներկեալ ծիրանի ոչ են երկու, այլ մի, թէպէտ եւ խառնուած է, նոյնպէս եւ միտք պայծառացեալք եւ աստուածացեալք մի են:

Նորին.

Որպէս ասիցէ ոք փոփոխելի զՔրիստոս կամ մասն մարդոյ առեալ. ինքն ասէ. Դնեմ զանձն իմ ի վերայ ոչխարաց . կամ թէ առանց մտաց է մարմին Քրիստոսի, զի հոգս եւ տրտմութիւն կիրք է հոգոյ:



Յոհաննու Ոսկիբերանի ի ճառէն, որ աղաւթէր Յիսուս ի լերին.

Միով զաւրութեամբ զբազմատեսակ ախտոսն բժշկեաց եւ զանազան սքանչելիսն ի ձեռն մի ներգործութիւն լնլով. քանզի զհտեմք զՔրիստոս քաղցեալ, եւ զհտեմք զՔրիստոս հինգ նկանակաւ զբազումս կերակրեալ. զի Քրիստոսդ անուն՝ ոչ Բանին է յատուկ եւ ոչ մարմնոյն, այլ երկուց միացելոց եւ աստուածախառն գործելով զտնաւրինականքն:

Նորին. Ի կնոջէ ծնաւ, զի զանցեալն ի դրախտին զպատուիրանաւ ողորմեսցի. կոչեցաւ Որդի մարդոյ, զի զմեզ որդի մարդոյս, որդիս Աստուծոյ արասցէ. էառ զմերս եւ ետ զհարն:

Նորին. Տապանակ ասի եւ խորան ըստ Մովսիսեան գրոց: Մարգարէից տառիցն ունկնդիր լիցուք, զի անապակացուցին զմարմինն Տեառն եւ միով բընութեամբ, ոչ ուրանան զբնութիւն եւ ոչ բաժանեն, եւ մի բնութեամբ ասեն անշփոթաբար, զի Դաւիթ ասէ. Ոչ թողու ոգի նորա ի դժոխս եւ Ոչ մարմինն նորա ետես զապականութիւն. քանզի զՏէր փառաց սոսկ մարդ ասել՝ եւ դեւք [ոչ] յանդգնին:

Նորին՝ Փիլիպեցոց թղթոյն մեկնութենէն.

Միշտ փութասցուք մի՛ անջրպետ ի մէջ արկցուք, վասն զի միութիւն խոստովանիմ եւ ոչ քայքայութիւն ինչ կամ լուծումն այնր բնութեան յայն եւ կամ այն յայս, այլ մնացեալ ասեն եւ մի լեալ եւ զանճառ միութիւն:

Նորին.

Քանզի ըստ ճշմարտութեանն մարդ եղեւ տնաւրինաբար Աստուծոյ Բանն, եւ անտեսանելին եղեւ տեսանելի՝ մնացեալ անեղ լի բնութեամբ:

Նորին.

Եցոյց զնշանս բեւեռացն եւ խոցումն տիգին անապական յետ յարութեան, զի յամօթ արասցէ զհերետիկոսքն քանզի եւ յառաջ քան զյարութիւնն անապական էր եւ որ այս խառնուածոյս բաժանումն արասցէ եւ ապականացու ասէ զմինն, ոչ ընդունի Սուրբ եկեղեցի:

Պրոկղի Կոտանդնուպաւսի ի ներբողեան ի Սուրբ Կոյսն ասացեալ

Մի՛ պատառեր զտնաւրինականն պատմուճան, զի Արիոս հատանէ զտնաւրինական բնութիւն. դու զմիաւորութիւնն մի՛ բաժաներ, զի մի՛ բաժանեսցիս դու Աստուծոյ:

Նորին.

Բանն մարմին եղել էլ ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց խառնակութեան մնաց ի միաւորութիւն:

Նորին.

Ինքն ի ծոց Հաւր եւ յարգանդ Կուսին, եւ ի խաչին բեւեռեալ եղել, եւ յաթոռոյ փառաց ոչ մերկանայր:

Նորին՝ յետ սակաւու[ց].

Անվայրափակ Բանն ի ծոց Հաւր պարունակեալ փոքրիկ տղայիկ զսերովբէսն սասանեցուցէ, այլ չարչարի եւ ի Պիղատոսէն հարցաքննեալ:

Նորին.

Նոյն ինքն զմեծասքանչելի զաւրութիւն առնէր եւ նոյն ինքն ընդ չարչարանաւք անկանէր, զի միութիւն է ոչ լինի ի միութիւնէ երկուս զի այսպէս բաժանեցէ, ոչ լինի միութիւն, այլ երկուութիւն:

Նորին՝ ընդդէմ Ն[ե]ստորի.

Թէ անարգութիւն է Աստուծոյ յարգանդն գալ, ապա եւ հրեշտակաց անարգութիւն է մարդոյ սպասաւորել:

Նորին.

Էական ըստ բնութեան անախտակիր եղել, ի ձեռն գթոյ՝ յոքնախտակիր

Նորին.

Ոչ ի նահատակութենէ եղել Աստուած՝ Քրիստոս, քաւ լիցի, այլ գթովն եղել մարդ, զի ոչ մարդ աստուածեղեալ քարոզեմք, այլ Աստուած մարդացեալ հաւատամք. Աստուած ելով որպէս հաւատամք:

Նորին Ղուկասու Աւետարանի մեկնութենէն.

Տես զի՞արդ զդրացին մեր զհերետիկոսքն, թէ ո՛րչափ ախտացեալ են հայիոյութեամբ, եւ զի՛նչ չար կացցէ քան զաստուածամարտ լինելն առ միաւորեալ Աստուածագործ Որդւոյ միաւորութիւնն:

Նորին յետ սակաւուց.

Զփրկագործ տնաւրէնութեանն պատմէ զխորհուրդ Աւետարանն Ղուկասու զԿուսին երկիւղածութիւն, զաւետիսն Գաբրիէլի, զկերպարանս Աստուծոյ, որ թափեաց զինքն ի ծառայի կերպ: Զանփոփոխելի

Աստուածութիւն, զանխառնելի յերկուց բնութեանց հրաշափառապէս խառնումն, որ եւ յետ միութեան ոչ եւս երկու բնութիւն:

Նորին.

Թէ ըստ բնութեան մերոյ ծնեալ էր Քրիստոս, յիրաւի ոք ասէր ի նա ապականութիւն, իսկ թէ ի վեր է քան զամուսնութիւն, ապա յիրաւի ի վեր քան զապականութիւն:

Նորին.

Ով լուաք ի սկզբանէ մկրտեալ Քրիստոս, թէ երկու բնութիւն է Քրիստոս, այլ մի լուաք:

Նորին.

Քարոզել խորհեալ ենք եւ խայտառակել զասացողսն երկու բնութիւն զՔրիստոս, եւ խոստովանելով զմարմին՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ զնոյն Աստուած ելով:

Նորին.

Մեղաւորաց եւ հրէից, հանդերձ երկբնակաւք, զգեհենն խոստանայ, որք մարդ զնա պարզաբար ասեն, եւ ոչ Աստուած:

Նորին յետ սակաւուց.

Մեզ քաւ լիցի վասն կամաւոր չարչարանացն եւ մահուան, զոր կրեաց ապականութիւն ասել մեզ քաւ լիցի ասել միացեալ բնութեան Միածնին ապականութիւն կամ շփոթումն ասել:

ՅԱտիկայ եպիսկոպոսի Կոստանդնուպոլսու.

Այսաւր Քրիստոս Տէր զմարդասիրութիւն ընկալաւ ծնելութեամբ Բան թափի անթափելին զբնութիւն ունելով, անմարմին վասն քո մարմնանայ, փարադրողն զերկինս խանձրրապատի եւ ի մտուր դնի:

Մարութին եպիսկոպոս Նփրկերտոյ, որ էմ գրող.

Ձի թէպէտ եւ տեսանիցեն զնա խանձրրապատեալ եւ ի մտուր եղեալ, սակայն Տէր ճանաչիցեն զնա հրեշտակաց եւ աւծեալ Աստուած՝ միաւորութեամբ մարմնաւոր:

Նորին՝ յետ սակաւուց.

Ձի որպէս անդ մորենին տունկ փշեղէնն ընկալաւ զհուրն Աստուած եւ ոչ կիզաւ, նոյնպէս եւ բնութիւնս մեր, որ ի ներքոյ անկեալ ի փշոյ մեղաց, խառնեալ միացաւ ի բնութիւն հրոյ Բանին Աստուծոյ եւ ոչ շփոթեցաւ, այլ եղեւ առող ի ներբնութիւն:

Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի՝ ի ճառն որ յաստղն եւ ի մոզսն.

Մոզսն որ[ք] քննեցին զխորինս հար[ցո]ւածովքն իւրեանց ի ծնունդս Աստուածորդոյն լռութեամբ պահեցին ընտրողապէս: Ընդէ՞ր ոչ այսպէս ծանր լինի խորհուրդ նորա առ քննողսն կամ զրպարտողսն, որ աւձտեն զնա գազանաբար հարցուածովքն իւրեանց:

Նորին.

Կայծակն հրեղէն զգեցաւ մարմինն եւ եկեալ յաշխարհս, զի կիզցէ զորոմն սերմանեալ չարին:

Նորին՝ Յարութեան ճառէն.

Զայս հրաշալի գործքս Միածնին ով պատառեսցէ եւ երկու [բն]ութիւն լրբի ասել զՄիածնին:

Հիպող[ի]տայ եպիսկոպոս[էն]

Իսկ որ երկու բնութիւն ասեն՝ գտանի ըստ մտացն չորս տեսարս ասել, այսինքն՝ չորրորդութիւն, եւ թէ այս մասունս յամառին՝ պարտին փառս տալ չորրորդութեանն, եւ պարտ է նոցա ասել՝ Փառք Հաւր եւ Որդոյ եւ միւս որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Նորին.

Զմարդն առանց Աստուծոյ Բանին խոստովանեալ՝ եւ դեւք [ոչ] յանդգնին, որ եւ ինքեանք տազնապէին ասելով՝ Զի՞ կայ մեր եւ քո, Որդի Աստուծոյ, եւ աղաչէին իբրեւ զԱստուած:

Նորին.

Շունչ արարած է, եւ ո՛չ չարչարի եւ ո՛չ խոցի. որչափ եւս առաւել Բանն Աստուած, եւ որչափ չարչարեցին զմարմինն Աստուծոյ արարին զանարգանսն, քանզի զԲան Աստուած մարդացեալ գիտեմք:

Վկայէ Թէդորիտոս Անգուրիոյ եպիսկոպոս եւ ասէ.

Արդ՝ թէ ըստ նոցա ամբարշտութեան ապրի երկաքանչիւր բնութեանց յատկութիւն, եւ արշաւեսցեն իրերաց բնութիւնքն եւ մինչեւ այժմ շարայարեալք յԱստուած Բանն եւ ի Մարիամայն մարդ, ապա ըստ ասիցն ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ եղեալ ի կնոջէ, ոչ թափեաց զինքն եւ ոչ աղքատացաւ բառացին:

Նորին.

Ընկալելի է, եւ պահել զմիութիւնն, այլ դիպեալ զ[յ]ատկութիւն այլ կարծեալք միայն ասէ որոշեմ.

ուրեմն նովին եւ զմիութին լուծանէր. քանզի զատուցեալ էր ի միւսէն զմիւսն. թէ միաւորես բանիւ մի՛ հատցես իմացութեամբ, եւ մի՛ ուրանար զմիաւորութին, մի՛ երկու բնութին զմտաւ ածցես Աստուծոյ, ի ծայրն հրաշագործեալ զմիաւորութին հաւատ սքանչելեացն եւ մի՛ քններ զեղեալն, ո՛չ մնայ հրաշափառ Բանն, թէ ճանաչի կամ հասու լինի ի մէնջ:

Նորին յետ սակաւուց.

Քանզի միացեալն ոչ է երկու, այլ մի անուանի, եւ զՅիսուս խոստովանակից եղիցին որք միութեամբ խոստովանին, քանզի երկու բնութիւնք ի մի եկեալ միացան անշփոթաբար՝ ո՛չ լուծեալ ի միմեանց:

Նորին.

Ձերկաբնակացն անմտութիւնս յատկապէս ամենեցունց կացուցաք, քանզի մի է բնութին Աստուծոյ Բանին մարմնացելոյ. Աստուած Բանն մարմին եղեալ մարմնանալովն Աստուած անյեղլի բնութին: Սակս այսորիկ ոչ բնութին մարդոյ հասարակականի ասացաւ անկիր արկեալ մարմին Էմանուէլին, այլ մարմին Աստուծոյ Բանին. քանզի երանելի հարքն մեր միում մարմնացելոյ Բանին Աստուծոյ ասեն զաստուածալ]ինս եւ զմարդկայինս, ոչ բաժանեն զնա յերկու բնութիւնս եւ ոչ ընդ յատուկսն առբաշխեն բնութեանց յետ անձառ միութեանց:

Նորին.

Քրիստոս ոչ երկու բնութին, զի մի՛ մարդապաշտութին կարծեսցի խորհուրդն, այլ մի է բնութին Աստուծոյ Բանին մարմնացելոց զի յարիցէ մկրտութին է:

Այլփերոսի եպիսկոպոսի՝ եւ մարտիրոսի ասացեալ.

Այս գրեցաւ վասն միանալոյ Բանին Աստուծոյ ընդ մեզ ծննդեամբ Բանին Աստուծոյ ի սրբոյ Կուսէն՝ զի յերկուց միացեալ եւ անշփոթ մնացեալ անորիշ ի միմեանց, այլ միացեալ եւ մի լեալ անքակտելի:

Ձենոբալ] եպիսկոպոս[ի] ասացեալ.

Մեք ո՛չ ասեմք, թէ մահ մարմնոյն միայն է, որպէս ո՛չ ասեմք, թէ կեանք Բանին եւ մարմնոյն:

Ի թղթէն Մել[ի]տոնի եպիսկոպոսի, որ առ Եւտրէպիսն ասէ.

Ի նմա էր մարմին հոգեւոր եւ ի նմա էր աստուածութիւն անփոփոխելի, եւ այն որ չարչարեցաւ ապականացուն, այլ անապականելի եւ ասեմք, որ. Նստի ընդ աջմէ Հաւր:

Փիլաքսոնի եպիսկոպոսի ասացեալ.

Վասն զի սիրէ զպատկեր իւր՝ նմանեցաւ նմա. վասն անսկիզբն էր՝ ո՛չ դարձաւ ի մարմինն, զի անապական էր:

Նորին յետ սակաւ[ուց].

Մարմնացաւ ի Սրբոյ Կուսէն Բանն Աստուած անփոփոխելի եւ էառ ի նմանէ մարմին անապական եւ հոգի առանց մեղաց ո՛չ ի ծնանելն երկուս եւ ո՛չ ի խաչելն երկուս:

Փիլաքսոնի եպիսկոպոս[ի].

Ճշմարտութիւն ծանուցաւ, շնորհքն եկն, կեանքն յայտնեցաւ Աստուծոյն Բանն Աստուծոյ Որդի մարմինն եղեւ անապական վասն մեր, զի զմեզ փրկեսցէ ապականութենէ:

Անփիլիքսոն Յիկոնիոնի եպիսկոպոսի ասացեալ.

Թէ ոչ էր նորա ծնեալ մարմնապէս, թէ ոչ էր նորա կերպ ծառայի առեալ՝ դու ոչ էիր շահեալ զփառս որդեգրութեան Տեառն չարչարանքն եւ մահն ծառայի անմահութիւն մեքենայս առնես զերախտիսն:

Սեբերիանոսի Ագաբաղացոյ եպիսկոպոսի.

Մի՛ բաժաներ զԱստուածութիւնն, զի մի՛ դու բաժանեսցիս յԱստուածութենէն որպէս զԱքիոս պատառեցաւ:

Ակակ Մելե[տե]նոյ եպիսկոպոսի.

Քանզի ճշմարիտ մարմնանալն Քրիստոսի որ անապական եւ առանց մեղաց յԱստուածածնէն յաւելուած Որդւոյ արարեալ, եկաց մնաց ներգործութիւն մարդ զինչ կամեցաւ եւ մարմնացաւ մինն յԵրրորդութենէն Բանն Աստուած:

Անփիլիքսոն Յիկոնիոնի եպիսկոպոսի.

Ընկալ ի քեզ որ յերկակացն է միութիւն անորիչ եւ անտարակացելի, զի սա այսպէս յերկակացն ճշմարիտ միութեանց զեռ[ե]յակն առցես կատարեալ:

Աբայ Բերսոն եպիսկոպոսի.

Անսկիզբն եւ անտեսանելին սեռս Աստուած եղանի մարդ մշտապէս անորիչ եւ անյատկաբար միութեամբ ի մի դէմ միով է ընթակացութեամբ, միով տարաբերութեամբ:

Յետովիայ Արծնու եպիսկոպոսի.

Նորուն աստուածայինքն վասնզի Աստուած էր բնութեամբ, նորուն եւ մարդկայինքն, ո'չ բնաւորութեամբ բաժանի եւ ո'չ ընդ բնութեանց թուով, մասամբ որոշի:

Թեոփոնի Թեոպացու եպիսկոպոսի.

Անճառաբար երեւեալ մարդ ի ձեռն Հոգոյն Սրբոյ, նոյն ինքն սա Աստուած ճշմարիտ ըստ նախատեսացն քարոզութեան:

Մեծին Եղիարոնի՝ ի բանէն որ ասէ. Դատաստանք Տեառն անդունդք բազում են.

Հրաշափառագոյն գործառնութեամբ էմանուէլին զջուրն [ուանալ] եւ մաքրէ աննիւթական եւ նիւթական խառնմամբ հրաշիւք աստուածայնովք:

Նորին.

Այսաւր ի ձեռն անապական կուսական արգանդէն ճշմարտապէս մարդ յերկրի երեւեալ անփոփոխ եւ անայլայլակ, անշփոթ եւ անորիշ միութիւն յերկակացն բաւանդակ մարդ նոյն ինքն բաւանդակ Աստուած:

Պանփիւլալ] առ Սկիւթացի ճառէն ասացեալ.

Ապա թէ, ըստ հաճութեան Հաւր եւ առաքման զՈրդի անմարմին Աստուած մարմին զգեցաւ եւ անբաժանաբար միացոյց յիւր մարմինն, որով եւ աշխարհի երեւեցաւ, զի՞նչ ասիցեն առ այս երկաբնակքն, զի Բանն մարմին եղեւ:

Ի թղթէն Առիստիդայ փիլիսոփայի որ առ Մենան[դրոս] փիլիսոփայ.

Ջամենայն կիրս կրեաց ճշմարիտն հանդերձ մարմնովն, զոր հաճութեամբ Հաւր եւ Հոգոյն Սրբոյ առեալ միացոյց իւր մարմին ի Կուսէն Եբրալ]եցոյ ի սրբոյն Մարիամայ անճառաբար եւ անյատկական միութիւն:

Պռենպոսի Կորնթացոյ եպիսկոպոսի ընդդէմ [Ս]ամուստացոյն ասէ.

Քանզի «Բանն մարմին եղեւ» որ ոչ ըստ բնութեան Աստուա ծութիւն, եւ զմեր բնութիւնսն խառնեալ միացոյց ի բնութիւն աստուածութեան իւրոյ՝ մի անձն եւ մի դէմ, անորիշ եւ անքակ միութեամբ, յերկակացն մի գոլով ըստ Պաւղոսի թէ. Արար զերկոսեանն մի, ըստ որում նորա ձեւս նոր իրակէ զբնութիւն:

Դակեղայեղեսի եպիսկոպոսի.

Գրէ. Աստուած յԱստուծոյ, եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ ի ձեռն Հոգոյն Սրբոյ եւ ոչ փոփոխեաց զբնութիւն Աստուածութեանն:

Մերոդի եպիսկոպոսի եւ մարտիրոսի՝ ի Համբարձման Ճառին ասացեալ.

Ջամենեսեան ձգեաց առ ինքն Փրկիչն մեր եւ տարեալ կացոյց ստուգապէս ի վեր յերկինս Միածինն Աստուծոյ Բանն յետ միաւորութեան իւրոյ ընդ մարմնոյն:

Շմաւոն եպիսկոպոսի ասացեալ է.

Որ յետ անձառ միաւորութեանն Քրիստոսի երկու բնութիւն ասեն՝ աւտարն են յԱստուածութենէն, քանզի չիք դառն չարիք եւ մեծ հերձուածք քան զայն որ ի խաչին կամ ի գերեզմանին բաժանեն զՔրիստոսի միացեալ բնութիւնն:

Եգէասի մեծ վ[կ]այի ասացեալ է.

Ջի յամենայն հերձուածողաց գարշել արժան է, եւ յայնպիսի հերձուածողացն, որ զՔրիստոսի գանբաժանելի բնութիւն յերկուս բաժանեն:

Տեղէայրենոսի եպիսկոպոսի ասացեալ.

Որ երկու բնութիւն ասէ, զնոսա նզովեալ է այն զաւրութիւն, որ վասն աշխարհի մեռաւ:

Որոզինէի եպիսկոպոսի ասացեալ.

Որ ի մահն Քրիստոսի ոչ մկրտին, լոկ ի ջուր լուանին, զմիացեալ անբաժանելին յերկուս բաժանեն. նոքա զրկեալ են ի շնորհաց լուսաւորութենէն, խաւարին եւ հոգի ոչ առնուն, այլ զբարկութիւն Աստուծոյ [շարժին]:

Ամղիքոսի Յիկոնիոնի եպիսկոպոսի ասացեալ.

Ջի նոյն ինքն է թագաւոր եւ Աստուած եւ զկիրս տնաւրէնութեան յանձն էառ. ընծայքն խորհրդեանն նշանակէ, մատուցանեն ոսկի, զի թագաւոր ճանաչեն զնա, մատուցին կնդրուկ՝ զի Աստուած գիտացին զնա, մատուցին զմուռս՝ վասն չարչարանացն:

Եւսեբի Եմուսոյ եպիսկոպոսի.

Չարչարեցաւ վասն մեր մարմնով, եւ չարչարանաքն մարմնոյն համարին, ոչ եթէ զաւրութիւնն խոցեցաւ, եւ ոչ Աստուածութիւնն պատառեցաւ, քանզի ոչ մտին բելեռքն յանմարմինն, այլ



չարչարեցաւ մարմնով զաւրութիւն անչարչարելի, եւ մարմնոյն չարչարանքն զաւրութիւնն իւր համարի:

Կիպրիանոսի եպիսկոպոսի.

Փոքունք եւ մեծամեծք պատահեցին, սիրելիք, աստուածալին բարեգործութիւնք. Հայրն զՈրդին առաքեաց, զի զմեզ նորոգեսցէ, եւ առաքեալ Որդին կամեցաւ Որդի Մարդոյ լինել, զի զմեզ որդիս Աստուծոյ կեցուցէ. վիրաւորեցաւ, որպէս զի զմերսն բժշկեսցէ:

Յոհաննէս ասէ.

Սերկէ էական ծնանի եւ էական եղանի որպէս ոչ էր քանզի եղելով Աստուած եղանի մարդ ոչ տարակցեալ ի գոլոյն Աստուած անյայտն եւ պարզն, եւ անմարմինն ձեռաւք մարդկայնաւք փարի զմեղաց ի բաց կորզիչն ի կապանս ի խանձարուրս հիւսանի:

Վասն Քաղկեդոնի ժողովոյն հարցմունք.

Աղէքսանդրացիք զՆեստոր աքսորեցին, իսկ ի Քաղկեդոն ժողովեալք հաստատեցին ընդդէմ ուղղափառացն զՆեստորի՝ աղանդն բռնադատեալք ի Մարկիանոս թագաւորէն: Արդ՝ գրէ ժողովն Քաղկեդոնի, ոչ եբարձ բնութեանցն. իսկ բազումք աղաղակեցին, թէ. Ոչ հաւանիմք նորածայն բանիցն, որ է ի Լեւոնի տունարէն, որ չար է քան զհայիոյութիւնն Նեստորի, քանզի ԻՅ ամ է ի ժողովոյն Եփեսոսի մինչեւ ի ժողովն Քաղկեդոնի: Ի Քաղկեդոն ասացին ուղղափառքն. Որք ասէք զՔրիստոս երկու բնութիւն՝ նզովեալ եղիցի: Իսկ Նեստորականք ասացին. Որ ոք ասեն զՔրիստոս մի բնութիւն՝ նզովեալ եղիցի: Իսկ միաբան ասացին ուղղափառքն. Որ ոք աւելի քարոզէ քան զերիս սուրբ ժողովն՝ նզովեալ եղիցի ի Սուրբ Երրորդութենէն: Իսկ Մարկիանոս թագաւորն խնդրեաց ի ժողովոյն գիր եւ սահման ըստ հաւատոյ: Ջի այն մեզ բաւական է որ ի Նիկիայ եւ ի Կոստանդինուպոլիս եւ յԵփեսոս, եւ հրամայեաց թագաւորն զմիաբանեալսն զեպիսկոպոսունսն եւ զիշխանսն արկանել ի բանտ, եւ Յոբնաղիոս ի մէջ անցեալ ծածկեաց բազում որդիսն Լեւոնի եւ Նեստորի՝ երկու բնութեամբն զոր սահմանեցին: Իսկ թագաւորն եւ կինն իւր եկին առ նոսա եւ եղեն առ նոսա եւ եղեն անդ աւուրս չորս, եւ սուրբքն ոչ հաւանեցան: Իսկ այլ ժողովքն ոմանք յերկիւղէ եւ ոմանք յակնառութենէ թագաւորին եւ կնոջ նորա Պողքերայ հաւանեալք յանձն առին զերկուածն, եւ զոչ հաւանեալն ընդ Դիոսկորոսի հրամայեա թագաւորն յաքսորս առաքել: Իսկ հաւանեալքն զղջացան յետոյ եւ գրեցին հերձուածոյ ապաշխարութիւն ի տախտակս կապարեայ, թէ. Պատառեցաք զցանկ հայրենի հաւատոյ պատառեցաք, եւ եղին ի տապանակին ազաթայ՝ յեկեղեցինն Դեմեդեալի]:

Իսկ ի թագաւորելն Անաստասայ ասացին նմա որ գիտակ էին, եւ նա հանէր զտախտակն ասպաշաւեր լալով զքակտումն հաւատոյն: Իսկ Անաստաս եւ Ջենոն եւ Յուստիանոս կայսերքն Հռովմայեցոց, եւ Ակակ եւ Մաքսիմոս հայրապետքն Կոստանդինուպոլսու յիւրաքանչիւր ժամանակս նզովեցին զժողովն Քաղկեդոնի:

Գրէ թուղթ Ակակ առ Պետրոս Աղէքսանդրու հայրապետն, քանզի Խ թուղթ գրեցին առ միմեանս Պետրոս եւ Ակակ:

Գրէ Ակակ առ Պետրոս այսպէս.

Հայր սուրբ Պետրոս Աղէքսանդրու հայրապետ, վեմ հաւատոյ եւ հիմն եկեղեցոյ, որ հաստատուն կացեր ի հաւատս ուղիղս առաքելական սահմանս, ընդ վայր նզովեցաք զքեզ զի շիջուցաք զճրագ հաւատոյ, քանզի մոլորեցաք ի ճշմարտութենէն եւ հետեւեցաք ստութեան եւ կորստական ճանապարհին: Հայր սուրբ, նմանեալ] Տեառն քում անյիշաչարի եւ ընկալ զդարձ զղջմանս իմոյ, եւ հաստատեայ զիս ի հաւատս յոր դու անշարժ կացեր, քանզի նզովեմ զտումարն Լեւոնի որ ամբարշտութեամբն զՔրիստոս գերկու բնութիւն խոստովանեալս եւ բաժանեալս, եւ գԵւտիքէս, եւ ընդունիմ զուղիղ հաւատս, զոր ի մոլորութեան լեզ[ու]իս իմոյ ուրացայ:

Գրէ Պետրոս առ Ակակ.

Այս երեսուն ամ է որ զհաւտն Քրիստոսի անխնալ] սպանէք անհաւատութեամբ ձեռնարկութեամբ տումարին Լեւոնի երկու բաժանեալ բնութեամբքն հրէական ուրացութեամբն: Եւ դարձեալ խնդրես յինէն ասպաշխարութիւն, եւ ես ոչ գիտեմ, թէ զի՛նչ արարից: Բայց յուսամ յողորմութիւն մարդասիրին Քրիստոսի. եւ ընդունիմ զդարձ քո եւ լինիմ աղաւթակից քեզ: Արդ, դու եւ ես քառասուն ար պահաւք եւ ջերմ արտասուաւք եւ աղաւթիւք ասպաշխարեցուք վասն քո եւ վասն քահանայիցդ եւ վասն ժողովրդեանդ, եւ հաշտեցուցուք զՔրիստոս, զոր ուրացաք: Եւ զայն քառասուն արն պատարագ մի՛ մատուցաներ, եւ թէ հարկէ ոք զքեզ՝ դու մի առնուլ յանձն. եւ ի կատարել քառասուն արուրն մատո՛ պատարագ դու այդր եւ ես՝ աստ. եւ երեւեսցի քեզ Քրիստոս մանկական կերպարանաւք եւ խաւսեսցի ընդ քեզ զարժանն. մի՛ յիշեսցես ի պատարագն զայնոսիկ որք ձեռնարկին ի տոմարն յայն հրէական ուրացութեամբ եւ ինքեանք անդարձ եւ անասպաշխարութեամբ մեռան. քանզի ոչ ընդունի Տէր մեր Յիսուս Քրիստոս զպատարագն վասն նոցա, որք ուրացան զնա եւ դնէ ընդդէմ նոցա զդուռն արքայութեան:

Գրէ Ակակ առ Պետրոս.

Հնազանդեցայ հրամանաց քոց, հայր սուրբ, եւ ընկալայ ապաշխարութեան կանոն ըստ հրամանի քո եւ յորժամ մատուցի զպատարագն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի մերոյ ահիւ եւ դողութեամբ, եւ յանկարծակի ծածկեաց զիս լոյս սաստիկ ընդ սեղանովն Աստուծոյ, եւ ըստ մարգարէութեան քո տեսի զՏէր մեր Յիսուս Քրիստոս ի մանկան կերպարանս, զգեցեալ պարեգաւտ սպիտակ, տեսի զնա եւ զնշան բւեռացն, եւ ինքն բազմեալ էր ի վերայ սկոյն եւ մաղզմային, եւ ես կարծէի, թէ չեմ յերկրի, եւ եբարձ յինէն զահ եւ զերկիւղ եւ լուայ ձայն որ ասէ ցիս որպէս ինքն գիտէ Աստուած.

Քաջալերեցարուք քահանայք եւ ժողովուրդք, զի բարձի ի ձէնջ զնախատինս ուրացման ձեռնարկութեան տոմարին Լեւոնի ամբարշտի: Եւ այլ ո՛չ եւս տեսի զնա, եւ ոչ զձայն լուայ, եւ վասն այնորիկ փառաւորեցի զսքանչելագործն Աստուած, որ ապրեցոյց զիս ի ձեռն քո՝ բժշկելով զվէրս անհաւատութեան յինէն: Եւ արդ, յանձն առնեմ զիս քեզ յիշել, հայր սուրբ, զիս անմոռաց յաղաւթս քո առ [Տէր] Աստուած մեր Յիսուս Քրիստոս, զոր դու սիրեցեր յամենայն զաւրութենէ քունմէ եւ ոչ ուրացար զնա առաջի թագաւորաց եւ դատաւորաց եւ իշխանաց:

Վասն Սիմէոնի Սինակեցոյ Անտիոքացոյ.

Արդ, ի թագաւորելն միւս Յուստիանոսի կամեցաւ բառնալ զհերձուածութիւն ի միջոյ, եւ չարք ոմանք ի նոյն հերձուած կացուցին զնա վկայեցին սուտ եւ ասեն, թէ. Երանելին Սիմէոն Սինակացին միաբանեալ է ընդ ժողովն Քաղկեդոնի: Եւ վաղվաղակի գրեաց առ նա, զի ի նմանէ իմասցի զճշմարիտն, զի էր նա հռչակեալ սքանչելիւք եւ ընտանի Հոգոյն Սրբոյ: Իսկ երանելի ծերն իմացեալ աստուածալիին իմաստութեամբն եւ ետ զինքն սպասաւորին ի վայր իջուցանել, եւ սպասաւորն զարմացաւ վասն իջանելոյ նորա, եւ եկեալ թղթաբերն եմուտ եւ երկրպագեալ որպէս եւ վայել էր սրբոյն եւ սկսաւ խաւսել կեղծաւորութեամբ: Եւ ասէ ծերն. Տուր ցիս զառաքեալ թուղթն ի թագաւորէն: Ես իբրեւ սկսաւ սակաւ ինչ ընթերցաւ՝ վաղվաղակի ի հուրն ընկեց զթուղթն եւ ասէ բարձր ձայնիւ. Անիծեալ Մարկիանոս եւ անիծեալ ժողովն Քաղկեդոնի: Եւ դարձաւ թղթաբերն ամաւթով առ թագաւորն եւ թագաւորն ամաչեաց յոյժ:

Վասն ի հաւատոյ թղթէն Անաստասայ թագաւորն, որ յետ Քաղկեդոնի ժողովոյն.

Մեք որպէս լուաք ի ճշմարիտ հարցն, ոչ ասեմք երկու բնութիւնս, այլ յերկուց մի բնութիւն, որ մարմնացաւ Աստուած Բանն խոստովանիմք:

Ի հաւատոյ թղթէն, զոր [գրեաց] Ջենոն թագաւորն, որ էր յետ ժողովոյն Քաղկեդոնի.  
Քանզի ճշմարիտ մարմնաւորութիւն Որդւոյն անապական էր առանց մեղաց, եւ Աստուածութեանն  
յաւելուած ոչ արար եւ երկուս ոչ գտաւ:

**ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ  
ՈՐՔ ԱՊԱԿԱՆԱՑՈՒ ԱՍԱՑԻՆ ՁՄԱՐՄԻՆՆ ՏԵԱՌՆ  
ԵՒ ԱՆԳՈՍՆԵԼԻ ԿԻՐՔ ԵՏՈՒՆ ՆՄԱ**

Կիրեղ Ղեւտական գրոց ասացեալ.

Աբրահամու կերակրոց ախտք ըստ նմանութեան մարմնոյ մեղաց, եւ ոչ ընդ նմին մեղաց, զի վճարեալ էր յասելն յայն զագրացեալ է եւ յարտաշնչութենէ, որ տանի զմեզ, յոչ պատշաճաւ:

Նորին ի Ղուկասու Աւետարանէն ասէ.

Յամենայն զագրութեանց սուրբ էր մարմինն Քրիստոսի:

Հարցումն առ Կիրեղ.

Ապականութի՞ւն կրեաց Քրիստոս, թէ կիրս ապականութեան:

Պատասխանի.

Ոչ ապականութիւն եւ ոչ կիրս ապականութեան. զի թէպէտ եւ քաղցեաւ, որ էր կիր ապականութեան:

Վկայէ Աւետարանին եւ ասէ. Յիսուս յետ քառասուն աւուրն, ապա քաղցեաւ. Մովսէս եւ Եղիայ, պահեցին, բայց քաղցնուին, իսկ Տէր մեր ոչ քաղցեաւ՝ մինչեւ կամեցաւ: Ապա ուրեմն ոչ ասի Քրիստոս[ի] կիրք ապականութեան:

Ապողինար ի Ղեւտական գրոց ասէ.

Մաքրութիւն որպէս բնաւորեալ է. աղտ ի կերակրոյ լինի եւ այն ի Քրիստոս ոչ եղեւ, եւ ի մէնջ՝ յաղագս շնորհին ի բաց բառնայ:

Աստուածաբանն ասէ.

Փորոտին ծածկելովքն տնաւրէնութեան անճառութեան ի հալումն հոգեւոր:

Ի հակառակելն Ապողինարի՝ ասէ սուրբն Բարսեղ.

Ես զծնունդն, զսնունդն, զչարչարանս Աստուծոյ ասեմ. եւ զի հեռի է յապականութեանց:

Նորին.

Ոչ փոփոխելի էր Քրիստոս մի՛ լիցի զի մի՛ մեղանչումն ի ներքս մտցէ յանմեղանչականն. իսկ թէ ապականութիւն կամ փոփոխումն ունէր ապայ հարկ է նաեւ մեղացն լինի, որ մայր է սոցա եւ չար է քան զաստանայ:

Աթանասի աս[ացեալ]է.

Արդ, Ադամ զանմեղ մարմինն ի դատապարտութիւն եւ ապականութիւն արկ, իսկ Քրիստոս զսանապական եւ խաւիանիչ մահու եցոյց:

Նորին.

Զի, թէ զմեղս եբարծ, որ է մայր ապականութեան, զի՞արդ ասեն ապականութիւն ի նմա:

Յոհան Ոսկեբերանն ասէ.

Անապական է մարմինն Տեառն եւ անեղծական. իսկ թէ վասն կերակրոյ ասես զնա ապականացու,  
նա եւ յետ յարութեան այլ ճաշակեաց:

Նորին որ Վասն թլփատութեան

Տեառն եւ քառասնաւրեայ գալստեանն ի տաճարին.

Յորժամ լսիցես, թէ թլփատեցաւ` մի' ապականելի իրս կարծիցես, զի թէպէտ եւ եղեւ իբրեւ զմեզ  
մարդ, այլ ըստ ճշմարիտ խառնմանն անդրանկացեալ քան զմեր ապականելի կիրս եւ զկարծիս  
մարդկան, աստուածագործ մարմնովն:

[Սրբոյն] Գրիգորի Հայոց Լուսաւորչի.

Յետ յարութեան հաղորդեցաւ Քրիստոսի կերակրոց յանկարաւտ յարքայութեանն, զի ծանիցես թէ  
նախ քան զխաչն անկարաւտ է եւ անապական թէպէտ եւ կերակրեցաւ:

Ներսէսի ի վերջոյ Հայոց կաթողիկոսի ի հաւատոյ թղթէն ասացեալ առ Մանիլ թագաւորն.

Ահա թէ, որ վասն ակամայ] եւ անգոսնելի կրից ապականացու ասէ զնա, այսինքն` կերակրոց եւ  
ըմպելեաց ախտաբար հոսմանց, այսմ ոչ հաղորդիմք, քանզի ապականացու մեղա'ց է ծնունդ, եւ որ  
մեղս ոչ արար, ոչ տիրեաց նմա այսպիսի ապականութիւն:

Գրիգորի ասացեալ.

Թէ ոչ զկիրս ակամայ, այլ կամաւորաբար կրեաց, եւ այլ այս կիրք ապականութեան ոչ կամաւ, այլ  
ակամայ] եւ բռնութեամբ ներգործի ի մեզ, եւ որ զայս ասէ` յայտ առնէ թէ ոչ կիրք նմա', այլ ինքն  
կրի'ցն ծառայէր, եւ թէ այսպիսի ապականելի կրից ի ներք[ոյ] արկեալ էր, յայտ էր թէ եւ մեղա'ց, որ  
հայրն է ապականութեան. զոր մի' լիցի իմանալ եւ ասել ուղիղ հաւատացելոց: Իսկ թէ վասն  
մարդանալոյն ասէ ոք զայս առ նա լինել, բաւական են յայտնի կիրքն որ կրեցան, անանգոսնելի`  
քաղցն եւ ծարաւն, արտասուքն եւ վաստակելն, թէ ճշմարտապէս մարդ եղեւ, եւ անկրելոցն եւ  
վատթարագունիցն ոչ կարաւտանալ ուղիղ խոստովանողացն զնա Աստուած ճշմարիտ:

Յերկրորդ թղթէն նորին աս[ացեալ].

Բնութիւն Ադամայ մեղանչական միացաւ ընդ Աստուածն

Բան եւ եղեւ անմեղ եւ անապական արտաքոյ անգոսնելի կրից, որպէս ի հրահալելին ի հուր  
մերձենալ ժանկ ապականութեան, թէ իցէ ի նմա` մածեսցի, զի որոյ սկիզբն անապական ի Կուսէն

առանց սերման, եւ գրէ, թէ ի մարմինն նորա ոչ ետես զապականութիւն, հարկ եղեւ ի ծնընդենէն մինչեւ ի մահն լինել անապական:

### ԱՅԼ ԼՈՒԾՍՈՒՆՔ Ի ՄԵԿՆՉԱՑՆ

Ո՛վ վասն աւուրն այն ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակ, ո՛չ Որդի, բայց միայն Հայր, եւ թէ Ու՞ր եղիք զՂազարոս.

Որ քեզ անգէտ թուի, ասէ. Ջամենայն զոր ինչ ունի Հայր՝ ի՛նչ է: Եւ թէ Ես եւ Հայր իմ մի ենք: Եւ թէ. Որ ետեսն զիս՝ ետես զՀայր:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս զաւգուտն լսողացն խաւսէր եւ ոչ տայր թոյլ յանաւգուտսն ձեռնարկանել ոչ ասաց զաւրն, զի ոչ են կամք Աստուծոյ գիտել մարդոյ զաւրն մահուան եւ զաւր կատարածի աշխարհի, զի մի՛ ծուլացին. վասն այնր փակէ ընդդէմ նոցա եւ ի Հայր ձգէ զԲանն, զի այլ մի՛ նեղեսցեն զնա, զի չէր նոցա շահ անտի: Հարցին եւ զնոյն բան յետ յարութեանն, թէ. Ի ժամանակի՞ աստ յայսմիկ հասուցանելոց ես զարքայութիւն Իսրայէլի, նա ասէ. Ոչ է ձեզ գիտել զժամանակն զոր Հայր ետ իւրում իշխանութիւն: Նոյնպէս եւ Պաւղոս յորժամ ոչ համարեցաւ պատշաճ լսել մարդոյ զբան յանճառութեան փակեաց զնա: Արդ, գիտէ Որդի զաւրն որպէս զՀայր, եւ ում կամի յայտնէ զնա: Մարդ կրկնայարկս եւ վերնայարկս շինէ եւ զորպէսն ոչ մոռանայ: Որ տումարի հմուտ է՝ ի հարցանելն ասէ զամիսն եւ զաւրն եւ զժամանակն: Իսկ Տէրն, զոր արարն զայն՝ ոչ գիտէ, եւ կամ զորոյ զմահն յառաջագոյն ասաց եւ զոր յարուցելոցն էր զգերեզմանն ոչ գիտէր. քաւ լիցի զայս ումեք զմտաւ ածել: Իսկ յառաջն ընդէ՞ր պատմեաց վասն աւերելոյ տաճարին եւ իւրոյ զալստեանն եւ նստելոյ յաթոռ փառաց: Ո՛վ մարդ, հայեաց ի քեզ, զի յորժամ դու քեզ անհաս մնաս, զբարձրն քան զքեզ մի՛ քններ, եւ արդ, մի՛ հալածեսցէ քննութիւն զմիտս քո, զի չար է հալածանք քննողաց քան զհալածանս թագաւորաց:

Ինքն Յիսուս ասէ. Ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է.

Տէրն մեր ասաց առ նոսա թէ իցեն, որ ընթացան կամ ընթանան վաստակաւք առաւել քան զծեզ ի միտս Հաւրն կատարեալ է նա վասն գործոց իւրոց, եւ նա փառաւորեսցէ զնա առաւել քան զծեզ: Եւ դարձեալ. զի ես արդարադատ եմ եւ խնդիրդ անիրաւ է, զի առանց աշխատութեան կամիս առնուլ զնա. վասն որոյ Տէրն մեր ետ զխնդիրս նոցա պսակ ի միջի անդ ասաց, թէ, որ առաքինանայ ի պատերազմի նորա, պսակեսցի նովաւ:

Եւ թէ. Հայր իմ մեծ է քան զիս.

Իսկ Յարութենէ նորա չէին տեղեակ առաքեալքն նորա, եւ պատշաճ կարծիս ոչ ունէին վասն նորա եւ զՀայր մեծ համարէին քան զնա: Ասէ Յիսուս ի կարծիս նոցա. Հայր իմ մեծ է քան զիս. լուայք զի առ մեծագոյնն երթամ, պարտ է ձեզ ուրախ լինել եւ ո՛չ տրտմել: Որպէս այն որ ասաց ի կարծիս լսողացն. Համարիք թէ ո՞չ կարեն աղաչեն զՀայր առաքել երկոտասան գունդս հրեշտակ[աց], եւ ինքն յետս եհար զնոսա եւ էզարկ զգետնի:

Եւ ասէ, Թէ հնար է՝ անցցէ բաժակս յինէն.

Որով եկն յոչէից եղեալք ի լինելութիւն, ոչ հրաժարէր ի բաժակէն. որ ի մարմինն միացաւ եւ ի կնոջէ ծնաւ վասն աշխարհի պատարագել, եւ սաստեաց Պետրոսի, թէ զյԱստուծոյ ո՛չ խորհիս դու: Արդ, որ վասն սորին եկն՝ խնդիր ազատիլ ի սմանէ. եւ ոչ երբէք այլ զի ցուցցէ, թէ կամաւ Հաւր է մահ նորա վասն աշխարհի, քանզի Հայր մատնեաց զնա առ մեղս մեր:

Եւ դարձեալ. զի մի՛ Որդւոյ միայն շնորհապարտք լիցուք արարածս, այլեւ Հաւր: Եւ դարձեալ, զի մի համարեսցի մահ կլանել զնա մահկանացու բնութեամբ, որ կեանքն էր զի պատառեսցէ զորովայն նորա:

Եւ դարձեալ, զի ծանրացի արիւն Աստուծոյ նորա ի վերայ մեր, որ հեղաւ ի խաչին, եւ զի մի՛ կարծեսցուք թէ առանց ցաւոց փրկեաց զմեզ:

Արդ, թոյլ ետ մարմնոյն կրել զկիրս առանց մեղաց, կամաւք եւ ոչ ակամայ, զի թէ կարծիւքս թուեսցի մարդեղութիւն նորա, այլ ճշմարիտ. սորին վասն եւ զարհուրի, հոգայ եւ տրտմի, քրտնի եւ աղաւթ անցանել բաժակս:



Ոչ իմ կամք, այլ քոյդ.

Այսինքն՝ թէ. Ոչ է որոշեալ կամք իմ ի կամաց քոց, այլ որ ինչ կամք քո է, այն է կամք իմ, որպէս եւ ամենայն որ ինչ քո է՝ այն իմ է:

Եւ դարձեալ, զի Ադամ խափանեաց զկամք Արարչին իւրոյ, իսկ Տէրն մեր խափանեաց զկամս մարդկային:

Բանն, որ ասէ. Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս.

Ոչ թէ ինքն թողաւ յԱստուծոյ Հաւրէ կամ յիւրմէ աստուածութենէն, եւ վասն այրն զարհուրեալ ի չարչարանացն ասէ զայս, այլ իբրեւ զգլուխ փոխանակ մարմնոյ իւրոյ կարդալ] առ Հայր: Զի մեք թողեալ էաք յԱստուծոյ անբաւ հեռագնացութեամբ, իսկ նա գլուխ մեր է, եւ միջնորդ առ Հայր հաշտեալ ընդ մեզ իւր պատարագաւն: Որ վասն մեր զենաւ ի խաչին, եւ բերանով Ադամայ ի դիմաց բնութեամբս առ Հայր որ այնչափ ժամանակս անտես արար զազգս մարդկան:

Եւ դարձեալ վկայեսցէ մարգարէից իւրոց եւ կատարեսցէ զբան նոցա եւ ցուցցէ թէ ճշմարիտ մարդ եղեւ. եւ Ես անմեղս ի մահ եկի վասն առաջին մարդոյն:

Որ յաւուրն երրորդի մարմնոյ իւրոյ աղաւթէր.

Մերովս վասն մեր առ Հայր գոչէր, եւ նա ընկալաւ զմեզ եւ լսելի եղեւ առ լաւու մեռանել խնդրէր նա: Այլ վասն խաչահանուացն աղաչէր եւ լսելի եղեւ զի դարձան խաչահանունքն եւ եղեն քարոզողք նորա: Արդ՝ կարծիս տայ, թէ Հաւր կարաւտ է իսկ ի յարութեան ոչ կարաւտացաւ նա Հաւր:

Արդ հաւաքեցաք զաւետիսըն սրբոյն Գրիգոր[ի] Լուսաւորչին Հայոց.

Խոնարհեցաւ եւ խառնեցաւ Աստուածութիւն ընդ մարդկութիւնս, եւ անմեռն՝ ընդ մեռոտս:

[Նորին.]

Սկիզբն ընդ անսկզբնականն փառքն ամենատեառնն, որ վասն մեր մարմնացաւ եւ միացաւ ի մարմնի բնութեամբ:

Նորին.

[Զ]մարմին մարդկային խառնեաց յաստուածութիւն իւր: Եւ թէ զմահկանացու բնութիւնս մեր խառնեաց յանապական Աստուածութիւն իւր եւ արար [ան]ապական:

Նորին.

Աստուածորդին խառնեցաւ յանարգութիւն մահու խաչի եւ մահու թաղման:

Նորին

Ե[ւ] թէ Աստուծոյ Որդին մեռաւ, զի մեռեալքս կեցուցէ:

Նորին.

Կորոյս զչարն եւ ապա խառնեաց միացոյց ընկղմեաց զմարմինն յԱստուծութիւնն իւրում:

Նորին

Եւ դարձեալ խառնեցար զմարդկութիւնս մեր յԱստուածութիւն քո:

Նորին.

Եւ թէ մարմնովն, զոր խառնեաց միացոյց յԱստուածութիւն, նմին մարմնով տացէ զյաղթութիւն:

Սահակայ Պարթեւի

Ոչ լոկ մարդ իմանամք զՔրիստոս, որ ծնաւ ի Մարիամայ ըստ մարդադաւանիցն եւ կամ քնար Բանին Աստուծոյ, այլ զԱստուած յԱստուծոյ խոստովանիմք, կատարեալ անդամաւք մարդացեալ յորովայնի Կուսին, հոգով եւ մտաւք միացեալ ընդ մարմին առանց [յ]եղաշրջելոյ:

Ի հաւատոյ թղթն Սահակայ եւ Մաշտոցի, որ առ Պրոկղայ ասացեալ.

Կամաւք կամակատարութեամբ եւ ոչ ակամայ կամաւք զանձն իւր Միածին եղ եւ ինքն զինքն մատնեաց եւ ինքն զինքն ընկալաւ եւ զսուրբ մարմինն իւր ետ պաշար կենաց:

Նորին.

Բանն Աստուած Որդի մարդոյ կոչի վասն անքակ միութեանն ըստ այնմ, թէ. Ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից Որդի Մարդոյ:

Նորին յետ սակաւուց

Թէպէտ եւ յերկուց է միաւորութիւն, այլ անքակտելի է Աստուածութիւն եւ մարդեղութիւն մինչեւ ի խաչն յաւիտեանս յաւիտենից:

Նորին ասացեալ

Անմահ եւ մահկանացու առանց չարչարանաց եւ չարչարելի զնոյն զմինն աներեւոյթ եւ երեւելի է իմանալ. Տէր եւ Որդի, Աստուած եւ մարդ:

Ի հաւատոյ ճառէն Դաւթի Հայոց փիլիսոփայի ասացեալ

Բանն Աստուած կատարեալ մարմնացեալ կատարեալ մի անձն Աստուծոյ միջնորդ մարդկան.

խոստովանիմ մի անձն որպէս կոչումնդ ի վերայ ընդ մեզ Աստուած կարդացեալ, եւ զայն զմինն Որդի Աստուծոյ եւ Որդի Մարդոյ, միով բնութեամբ Որդի Աստուծոյ, եւ Աստուած Որդի Մարդոյ, եւ մարդ երեսաւք առանձնապէս մի, այլ Որդի Աստուծոյ եւ մարդ եւ Որդի Մարդոյ եւ Աստուած մարդ ըստ Բանին Որդի անդրանիկ Աստուծոյ, Աստուած Բանն եւ ընդ մարմնոյն Որդի Մարդոյ:

Ի հաւատոյ ճառէն Մովսէսի քերթողի.

Մարդկայինն աստուածային եւ որ յերկրէս յերկնից եկեալ սակս այնմ ծածկելովն եւ ընկղմելովն. վասն զի առ Աստուածն Բանն միաւորեցաւ, նորին փառաց բնութիւն գտաւ հաղորդ, եւ առ նորին յարմարեցաւ շարժութեամբ կամաց: Քանզի յաղթ զաւրաւորն տկարագունին ըստ ինքեան զնա խառնելովն եւ միացնելովն միով բնութեամբն անշփոթ եւ անբաժանաբար ի վեր քան զմիտս եւ զբանս. յետ անձառ միութեանն ոչ իշխեցից երկու բնութիւն ասել, այլ մի Որդի, մի նորա դէմ եւ մի բնութիւն, եւ մի զաւրութիւն, եւ մի կենդանութիւն:

Նորին` յետ սակաւուց

Արդ, մեռանի ըստ մարմնոյ կենդանին յաւիտենական, զի որ ինքեան էր մարդկային ըստ որում անքակ Բանն էր միացեալ ըստ նմին բանի եւ անշնչացեալ մարմինն ի խաչին կենդանի էր Աստուածութեան միաւորութեամբն, եւ մերկացեալ ի մարմնոյն շունչն իբրեւ ոչ մերկացեալ Աստուածութեամբն, որ եւ ընդ նմա եւ ընդ մարմինն միացեալ էր ի գերեզմանն եւ ի դժոխս:

Անանիայ Հայոց վարդապետն ասէ

Հաւր հաւասար եւ Սուրբ Հոգոյն խորհրդակից Որդին ի կուսական յամենասուրբ յարգանդին, զնաքրագործ ակն զայն ներգործեաց միաւորութիւն լոյս անպատում եւ անմատոյց ի լուսաթաղանթ միջոց Սուրբ Կուսին զմերս ի վերայ շարժեալ շարախառնեաց զմարմին ընդ իւրում աստուածային պարզական եւ անպարունակ բնութեամբ միացուցեալ անորիշ եւ անշփոթ միութեամբ, եւ ընդ միանալ Բանին ընդ մարմնոյն բարձան ի նմանէ ամենայն կարիք եւ կիրք մարդկային բնութեան եւ առեալ եղեւ, որ ինչ առողին էր բնութեան:

Նորին` յետ սակաւուց.

Եւ խառնումն որպէս հուր ընդ երկաթոյ եւ ընդ ոսկոյ որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութեան, եւ հաւասարէ իւրում լուսոյն եւ կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ յաւր խառնեալ, եւ կամ որպէս հոգի եւ մարմին,

զի միաւորեալ են անշփոթ, եւ մի կոչին բնութիւնս մարդոյ այսպէս եւ Բանն Աստուած աճառ միաւորեալ ի վեր քան զմիտս եւ անշփոթ միացեալ:

Նորին.

Աստուած Բանն տիրէ ի վերայ կրից մարմնոյ, եւ ոչ գունակ մեզ ի հարկէ կիրք տիրեն նմա, այլ յորժամ թոյլ տալլր. նմա իւր միացեալ մարմնոյն կրէ զչարչարանսն, եւ Բանին կոչին կիրք խոնարհագոյնքն եւ բարձրագոյնքն, քանզի իւր էր մարմինն:

Նորին.

Արդ, կիրք բաժանականք են, վասն զի երեք ասին ի Քրիստոս՝ հոգոյն եւ մարմնոյն եւ Աստուածութեան. եւ է կիրք հոգւոյ՝ երկնչիլն, հոգալն, տրտմելն, եւ կիրք մարմնոյն՝ վաստակելն, քաղցնուլն, ծարաւելն եւ կիրք աստուածութեանն՝ սաստեալն ծովուն եւ հողմոյն, զցաւս բազումս բժշկել եւ զմեռեալս յարուցանել:

Ո՛վ դու հանճարեղ եւ իմաստուն բաժանող, թէ ի միութիւն իսկակիցն Հաւրն աննուազ գոլով անտանելի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի Աստուածածնի Կուսին մաքրութիւն յորում աճեցոյց զբոյսն արինութեան լուսասահման անդստին անարատութիւն ընդ ամենակատարն էութիւն համասնեալ անանջրպետն միականութիւն թափանցական խառնութեամբ յԱստուածութիւն յոգի բաղկացոյց զգոյութեան շնորհիս շնչոյս հրաշապէս:

Նորին.

Անկարութեան ի դիմաց ծնաւդին իւրոյ ի սենեկ կուսին պարզաբար եւ ելեալ անտի յաւդաւորաբար մինն էապէս անորոշելի անթերի մարդկութեամբն եւ անպակաս Աստուածութեամբն:

Նորին

Մի Որդի Հաւրն միայնոյ եւ Միածին անդրանիկ Աստուածամաւրն Տիրածին Կուսին Արարիչն յեղականումն մարդ ելով ճշմարիտ սկզբնածնին:

Մովսէսի Հայոց քերթողի.

Քանզի Աստուած է եւ որպէս կամի՝ առնէ, թէպէտ եւ խոնարհի ի բաժակ մահու՝ անմահ էր. թէպէտ եւ չարչարի՝ այլ լուծիչ է չարչարանացն:

Նորին՝ յետ սակաւ[ուց]։

Արդ, այս ամենայն աստուածախառն գործ է, եւ ոչ մարդոյ լոկոյ. զի ծնաւ ի Կուսէ Աստուած թանձրացեալ բնութեամբ մարդ խառնեալ ընդ Աստուած անքակտելի խառնումն։

Պաւղոսի Հայոց վարդապետի.

Արդ, ի նմա մերս, այլ ըստ նմա, եւ ոչ ըստ մեզ իմացեալ Բանն մարմնացեալ, եւ մնացեալ նոյնպէս մարմինն աստուածացեալ, եւ ոչ փոփոխեալ, բայց ոչ երկուց բնութեանց կամ երկուց դիմաց վարեցի հետք։

Նորին.

Ո՛վ դու երկաբնակ, ոչ ոք կարէ բաժանել զբանն ի գրոյն եւ ոչ զՔրիստոս յերկուս բնութիւնս։ Արդ, բաժանես զխաւարն լուսոյն, որ Եգիպտոս կամ զարիւնն ի ջրոյն։ Ահա մեծասքանչ հրաշ. Նոյն խաւար՝ Իսրայէլի լոյս եւ նոցա խաւար, եւ նոյն ջուր՝ Իսրայէլի ջուր եւ նոցա արիւն։ Ջայս իմացիր եւ բաժանեա եւ ապա սկիզբն արայ քննել եւ զատուցանել յերկուս զմի բնութիւն Քրիստոսի։

Նորին.

Թէ Աստուած խոստովանիս զմարմինն, այլազգ չէ հնար, բայց թէ մի՛ յԵրրորդութենէն ասես զի մի չորրորդութիւն լինիցի, ապա թէ մի յԵրրորդութենէ, ապա մարմինն Բանն է եւ Բանն մարմին. իսկ թէ երկուք էին որպէս դու ասես, ապա չորս եղեն աստուածք. ապա հարկ է զմիւսն ի բաց զատուցանել։

Նորին.

Արիստոտէլ եւ Եռիպիդէս եւ այլք յարտաքնոցն տասն եւ մի բնութիւն ասացին զմարդն, եւ պարզ աստուածութեան՝ մի, որ լինի բանն այն բնութեան Քրիստոսի։ Ըստ խորհրդեանն երկաբնակացն ինքեանք գիտէին, որչափ եւ կամին բաժանեսցին։ Իսկ Պաւղոս մի Տէր Յիսուս Քրիստոս քարոզէ եւ ի Նիկիա՝ Հաւատամք եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, ասացին, եւ ոչ երկուս բնութիւնս ի Կոստանդինուպաւսին եւ յԵփեսոսին՝ նզովեցին զասացողսն երկուս բնութիւնս։

Ի հաւատոյ թղթէն Կոմիտաս Հայոց կաթողիկոս

Ի վերջին ժամանակս Աստուածորդին կամաւ Հաւր եւ Սուրբ Հոգոյն վասն մերոյ փրկութեան ծնաւ աստուածավայելչաբար ի սրբոյ Կուսէն, ի վերայ երկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ միաւորութեամբ տնաւրէնութիւն, քաղցեաւ եւ ծարաւեցաւ ոչ սոսկ մարդկութեամբ այլ միաւորութեամբ տնաւրէնութիւն աստուածավայելչաբար։

Խոստովանութիւն Մանագկերտու ժողովոյն.

Որ ոչ խոստովանեսցի զմարմնացեալ Բանն Աստուած մի բնութիւն յետ անճառ միաւորութեանն, որ յԱստուածութենէն եւ ի մարդկութենէն անշփոթ եւ անքակ միաւորութիւն, եղիցի նզովեալ:

Ի գրոցն, որ Կրանաւոր կոչի

Աստուած մարդացեալ ասեմ, խառնեալ եւ մի լեալ ասեմ, ա՛ռ մարմինն եւ անքակտելի միացոյց: Հայր ձայնէ. Ռայ է Որդի իմ սիրելի, զոր տեսանէք: ՅԱստուած թքին, զԱստուած սպանին հրէայքն, եւ Աստուած էր որ եղաւ ի գերեզմանի:

Ի հաւատոյ թղթն Սամուէլի Հայոց կաթողիկոսի

Արդ, թէպէտ եւ հարքն առաջինքն յիշեցին միայն զհետս բնութիւն, վասն հաստատելոյ զտնաւրենութիւն, թէ ճշմարտապէս եղեւ մարդ, եւ ոչ կարծիք, եւ մարմնովն իւրով կրեաց զամենայն վասն մեր, այլ ոչ ուրեք սահման հաւատոյ բնութեանս հաստատեցին:

Նորին՝ յետ սակ[աւուց].

Քանզի որպէս լոյս ճրագի ի լոյս արեգականն միացեալ ոչ կարէ գործել ճառագայթս իւր զաւրութեան, այսպէս մարդկութիւնս ընդ աստուածայինսն խառնեալ եւ միացեալ անտի բաց բառնալի ոչինչ առանձնապէս զիւրն ներգործէ զաւրութիւն, քանզի յամենայնի յաղթէ զաւրաւորն տկարագունին:

Ի հաւատոյ թղթն Տիրանոյ Հայոց վարդապետի, որ առ Սենեքարիմ.

Զկնի ասողին երկու բնութիւն, անէծք վասն այնր եղիցի, երկու բնութիւն երկու կամք են, երկու խորհուրդք, եւ երկու տեսարք:

Եւ. Թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, զի բնութիւն բնութեան հակառակէ՝ մարտակիցք են միմեանց, կամ մինն տեսառն եւ միւսն ծառայ. եւ թէ երկու բնութիւն է՝ ապա Աստուած ի մարմին կռիւ ունի որպէս ընկեր առ ընկեր, զի ա՞րդ կարէ նա այլ ումեք խաղաղութիւն տալ, զոր ինքն ոչ ունի:

Նորին.

Արդ, մեք մի բնութիւն ասեմք Բանին եւ մարմնոյն՝ ճշմարիտ Աստուած եւ ստուգապէս մարդ, երկու բնութիւն, ի մի եկեալ՝ մի բնութիւն, մի թիւ ի Սրբոյ Երրորդութենէն:

Նորին յետ ասա[ցեալ]

Արդ, անմահ է Աստուած, բայց մարմնովն մեռանի, զի մահն եւ արիւն Աստուծոյ ասի՝ որպէս Հայր անմահ է, բայց ի չարչարել մարմնով վտանգի այն, որ ոչ վտանգի:

Ի հաւատոյ թղթէն Սահակայ Հայոց վարդապետի.

Ասաց Տէր. Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ՛ ես կենդանի եմ վասն Հաւր. եւ որ ուտէ զիս, եւ՛ նա կեցցէ: Արդ, ի Հաւրէ առաքեալ Բանն է, եւ կերեալ յերկրի՝ մարմինն, իսկ թէ բաժանեալ են բնութիւնքն՝ որպէս ասէք, յայտ է թէ ճաշակողքն զԲանն ուտեն զկենդանին՝ զառաքեալն ի Հաւր է, ըստ որում ասաց, թէ. «Որ ուտէ զիս», զոր սարսափելին է իմանալ. իսկ, թէ. Ջմարմին ուտեն, եւ մարմինն կենդանարար է, յայտ է, թէ միաւորեալ է ըստ առաքելոյն, ի Հաւր է անբաժանելի: Բայց ոչ ասեմ խառնումն ապականութեան ի վերայ Քրիստոսի բնութեանցն՝ որպէս ջուր ընդ գինի խառնեալք ի միմեանց ապականեալք, կամ որպէս ոսկի ընդ արծաթ հրով հալեալք եւ միմեանց ապականեալք. այլ խոստովանիմք զխառնումն Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն՝ որպէս լոյս ընդ յաւր կամ որպէս հուր ընդ ոսկի եւ կամ հոգի ընդ մարմին, որ են անփոփոխելիք, անայլայլելիք, անբաժանելիք:

Ի հաւատոյ թղթէն Հայոց Խոսրովի հռետորի.

Մարգարիտ առանց լուսոյ՝ ոչ ասի մարգարիտ, եւ ոչ տէրունական մարմին ոչ ասի Քրիստոս Փրկիչ՝ առանց Աստուծոյ Բանին, զի ծնունդ Հաւր՝ եղեւ ծնունդ Կուսին:

Նորին՝ յետ սակաւ[ուց].

Մի՞ թէ մարմինն մարդկայինքն աստուածայինք ոչ ասին ի Քրիստոս կիրք եւ ներգործութիւն, եւ աստուածայինքն՝ մարդկայինք, ապա միաւորութիւն բարձեալ լինի ի միջոյ: Արդ, ընդէ՞ր լինիք ի միտս ձեր սուտ եւ ասէք՝ Միածին:

Նորին՝ յետ սակաւ[ուց].

Արդ, որ բնութիւն անհասանելի է, նորա եւ միաւորութիւն անքննելի է:

Նորին.

Որք ի մարմինն Բանին հաւատացին, ծանոյց նոցա զԱստուածութիւնն. իսկ որ ասացին, թէ մարմինն մարդոյ է եւ ոչ Աստուծոյ, ընդ ուրացողսն ելցեն ի խաւարն արտաքին: Թովմաս զշաւշափեալ կողն Աստուած խոստովանեցաւ զնա:

Եղիսէի Հայոց վարդապետի.

Աստուած միայն մարդասէր, եւ մարդ միայն աստուածասէր.

Աստուած վասն մարդոյ եւ մարդ վասն Աստուծոյ. Աստուած մարդացեալ եւ մարդն աստուածացեալ:

Ի հաւատոյ թղթէն Յետուայ Խորխոռունից եպիսկոպոս.

Հայ[ր]ունակ գծաւորութիւն մերունակ գծաւորեալ բնութեան եզակի յարամանեալ տնաւրինաբար ներգործութեամբ մարմին անապական հայրածին անժամանակ, երեկածին յԱստուածածին Կուսէն Աստուած գոլով:

Ի հաւատոյ բանէն Դնայ ժողովոյն.

Ո՞ր աղագաւ ասէն մարդացեալ, թէ ոչ միաւորեալ ի մարմինն Բանն Աստուած, զի մարդացեալ ի մարմնի խառնեալն է, զի խառնումն զբաժանումն բառնայ, որպէս գրէր Կիւրեղ առ Նեստոր, թէ. Ոչ կրկնապատիկ Քրիստոս, թէպէտ եւ յեր[կ]ուց զանազանից ի միասին հաւաքեալ անբաժանաբար:

Նոցին.

Արդ՝ որպէս մարդ ասի ի հոգոյ եւ ի մարմնոյ բաղկացեալ եւ է մի բնութիւն յերկուց, այսպէս եւ Աստուած Բանն իւր մարմնովն մի դէմք, մի կամք, մի բնութիւն, մի ներգործութիւն:

Ի հաւատոյ թղթէն միջնոյ Ներսէսի Հայոց կաթողիկոսի. ի խնդրումն Մուշեղայ Բագրատ[ու]նոյ

Ո՞վ դուք, երկաբնակք, յորժամ դաւանեաց Պետրոս զՏէրն մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանոյ, ընդէ՞ր ոչ սաստեաց նմա Տէրն, թէ. Ես զՈրդոյ Մարդոյ հարցանեմ եւ դու զՈրդոյ Աստուծոյ պատասխանես, այլ վասն ուղիղ դաւանութեան, որ ոչ բաժանեաց զԲանն ի մարմնոյն, երանեցաւ Պետրոս:

Ի հաւատոյ թղթէն Յոհանու Հայոց կաթողիկոսի.

Ոչ որոշեմք զԲանն Աստուած յիւրմէ մարմնոյն յերկուս դէմս կամ երկուս բնութիւնս կամ ներգործութիւնս, եւ կամ տալով զբարձրագոյնսն Աստուծոյ, եւ զնուաստագոյնսն մարդոյն, ըստ Նեստորի եւ Լեւոնի, այլ մի անձն եւ մի բնութիւն խոստովանիմք մարմնացելոյ Բանին Աստուծոյ Որդին, ամենայն ուղղափառ վարդապետացն հետեւելով:

Ի հաւատոյ թղթէն Ներշապուհոյ Մամիկոնեանց եպիսկոպոսի եւ Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի.



Իսկ թէ երկու բնութիւն գՔրիստոս ըստ Լեւոնի եւ ըստ Սամուստացոյն նախ քան զխաչն եւ մարդկային բնութեամբն միայն կրեաց զամենայն եւ թաղեցաւ, եւ ապա աստուածային բնութեամբն յարեաւ: Այս, ըստ նոցա խորհելոյն, ցուցանէ, թէ գերեզմանն աստուածածին փոխանակ Կուսին. ամբարշտութիւն է զայս ասել, ուրեմն յայտ է, թէ մի բնութիւն էր Քրիստոս նախ քան զխաչն՝ յետ անշփոթ միութեանն: Քանզի խառնմամբ Բանին է յորովայնի Կուսին եղեւ մարդկային բնութիւնն աստուածային, քանզի հաւասարեալ ասացին սուրբ հարքն զմարմինն մի բնութիւն Բանին՝ իսկականի բնութեանն Հաւր անվրէպ նմանութեամբ:

Նոցին՝ յետ ս[ակաւուց].

Արդ, թէ երկու բնութիւն է Քրիստոս ըստ կարծեաց երկաբնակացն, ընդէ՞ր ասաց կուրին, թէ. Տեսէր զՈրդին Աստուծոյ . պարտ էր ասել, թէ յիս է Որդին Աստուծոյ, եւ ոչ խաբեալ զկուրն եւ ասել, թէ զոր տեսէր՝ Դա՛յ է Որդին Աստուծոյ:

Նորին յետ սակաւուց.

Ոչ եթող զմարմինն ըստ իւր տկար եւ անզաւր բնութեան ի միանալն ի նա Աստուած Բանն, այլ անճառելի արագութեամբ զհողեղէնն հրեղէն եւ զմարդկեղէնն՝ աստուածեղէն արար, եւ զծառայականն Տէր եւ Արարիչ եւ քաւիչ ամենայնի:

Ի հաւատոյ թղթն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, առ գերեզմանոս, տե՛սԳերմանոս Ամենայն ուրեք աստուածայնոց գրոց ի Սուրբ Կուսէն ասէն առեալ զարմինն Բանին Աստուծոյ, յորմէ մի՛ լեալ ի բաց բարձեալ յերկուց հատմանցն:

Նորին յետ սակաւուց].

Արդ, մի գոլ հաւատամք զՈրդոյ բնութիւնն, զի ահաւասիկ զաստուածագործ զաւրութեանցն զմի բնութիւն զքաղցն եւ զվաստական [զ]կիրսն եւ զմարդկագոյնսն միոյ եւ նորին Բանին Աստուծոյ մարմնացելոյ ասեն զներգործութիւնսն զիրք սրբոցն որք Հոգովն Աստուծոյ խաւսեցան:

Ի հաւատոյ թղթն Աբրահամու եպիսկոպոսի.

Քան[զի] որք ի Քաղկեդոն ժողովեցան՝ եկաբնակքն կոչեցին, վասնզի որոշեն զմիում բնութիւնն զքաղցն եւ զվաստական կիրսն: Արտաքոյ է այս վարդապետութեան սրբոց առաքելոցն, զի զմիւս մարդ լոկ, իսկ զմիւսն Բան անուանեն, եւ Պաւղոս զՈրդին Աստուծոյ վասն մեր զմահ ճաշակեալ. Հաշտեցաք, ասէ, ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ նորա:

Ի թղթէն Եզնակ կաթողիկոսէ առ Մաշթոց.

Բանն Աստուած ի վախճան ժամանակաց եղեալ մարդ վասն մեր առանց շիջանելոյ յիւրմէ Աստուածութենէն, եւ ոչ բաժանի Էմանուէլն յերկուս առաջս, եւ ոչ մարդ ոք եղեւ Աստուած յաւելուած Երրորդութիւնն, այլ Էն Աստուած եւ Որդի Աստուծոյ արար արժանի լինել զմարդկան փոփոխելի, եւ անդստին յորովայնէ Կուսին յետ միաւորութեան Բանին ընդ մարմնոյն ոչ ասի մարմին մարդոյ, այլ մարմին Աստուծոյ:

Ասացուածք Հայոց վարդապետաց.

Արդ, Կիրեղ եւ Յուլիայ եւ Եփրեմ եւ այլ զաւրաւոր վարդապետք զմարդ մի բնութիւն ասացին, թէպէտ եւ յերկուց է միացեալ: Այսպես եւ Բան Աստուած խառնեալ ի մարմնի միացաւ ընդ նմա եւ եղեւ մի բնութիւն: Երեմիա ասէ. Սա է Աստուած մեր, յորում յոչ ոք համեմատի. յետ այսորիկ յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ: Յայտ է զմարմնով երեւեալ նորա ասէ, եւ նա է անհամեմատ: Դանիէլ ասէ. Տեսանէի եւ ահա գայր որդի մարդոյ եւ հասանէր մինչեւ ի հին աւուրցն: Արդ, միթէ զմերկ Բանէն ասէ գալ եւ հասանել առ Հայր. եւ մի լիցի, քանզի Բանն յաւիտենից անսկիզբն բնութեամբ ունէր զհասումն առ Հայր. ապա յայտ է թէ զմարմնոյն ասէ մարգարէն գալ եւ հասանել առ Հայր, համեմատել եւ հասանել զմարմինն Հաւր, քանզի յորժամ ասացաւ Կուսին՝ Տէր ընդ քեզ, ի նմին ժամու եղեւ Բանն ի Կոյսն, եւ մարմինն զոր Բանն առ ի մերմէ բնութենէս, իսկ եւ իսկ հաւասարեաց ամենայնի իսկական բնութիւն Հաւր միաւորութեամբ Բանին բնութեամբ եւ Աստուածութեամբ, փառաւք եւ զաւրութեամբ:

Եւ ամենայն որ ինչ աստուածալիին բնութիւնն էր՝ եղեւ մարմին արդ, ի Ծնընդենէն մինչեւ ցՀամբարձումն ոչ ի վերայ սոսկ մարդոյ ասեմք եւ ոչ ի վերայ մերկ Աստուածն Բանի, զի մերկ Աստուած ոչ տեսանի եւ ոչ շաւշափի, եւ սոսկ մարդ ոչ կարէ ասել, թէ. Յառաջ քան զլինելն Աբրահամու էմ եւ. եւ թէ. Ջփառսն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի, այլ ասեմ զայս ի վերայ Բանին մարմնացելոյ, որով հետեւի նմա երկու նշանակութիւնք, այսինքն՝ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ մի բնութիւն անճառ խառնեալ, այլ ոչ որոշին կիրքն եւ ներգործութիւնքն երկուց բնութեանցն. զի յորժամ որոշեմք զբնութիւնքն, գնան ընդ Նեստորի եւ Լեւոնի եւ Սամուստացոյն եւ Թէոդորի Տարսոնի եւ Դիողորայ Կիրիս քաղաքի եւ Դիողորի Սամ[ո]ւստիայ եւ Արիոսի: Արդ, ուր երկու բնութիւն կայ բարձեալ է անտի միաւորութիւն:

Ներսէսի վերջնոյ իմաստասիրի Հայոց կաթողիկոսի առ Մանիլ թագաւորն.

Այլ եւ խառնի ընդ մարմնոյն անմարմին Բանն, եւ միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս՝

աստուածացուցանել զնա խառնմամբն եւ միաւորութեամբն, ո՛չ փոփոխումն կամ այլայլութիւն ունելով ի միաւորութեան, ըստ որում եւ ո՛չ հոգի եւ մարմին մարդկային:

Նորին՝ յերկրորդ թղթն ասացաւ.

Է՛ մարմին եւ է՛ անմարմինն. մարմին՝ ըստ մարդկութեանն զոր էառ, եւ անմարմին՝ ըստ Աստուածութեան, զոր ունէր: Եւ նոյն տեսանելի եւ անտեսանելի: Ոչ ոմն եւ ոմն, այլ մի էութիւն եւ անձնաւորութիւն՝ երկուց բնութեանց ի մի Քրիստոս միացելոց՝ անշփոթելի եւ անբաժանելի միավորութեամբ:

Նորին երկրորդ թղթն

Միացաւ ընդ մերս բնութիւն անբաժանելի, եւ ոչ լուծումն կամ փոփոխումն ընկալաւ Աստուածութիւնն ի մարդկութեանն, այլ մնաց անորիշ եւ անշփոթելի:

Նորին.

Արդ, եթէ մի բնութիւն վասն անքակտելի միաւորութեանն ասի եւ ոչ վասն անշփոթ եւ անայլայլելի մնալոյ, եւ ո՛չ վասն բաժանման եւ բնութեանց զլլատուկսն տալոյ, երկոսեանն ի սահմանս ուղղափառութեան:

## **ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԶԻ ՊԱՐՏ Է ՄԻՈՒՄ ԱՒՈՒՐ ՏԱԲՆԵԼ**

Զի նեստորականքն ըստ մարդադաւանութեան իւրեանց յայլում աւուր սահմանեցին զԾնունդ եւ այլում՝ զՄկրտութիւն[ն]: Որպէս զլոկ մարդոյ թողեալ զառաքելական սահմանեալսն եւ գնացին զհետ մոլորութեան սրտից իւրեանց:

Արդ, յունուարի վեցն կարգեցին առաքելալքն զաւր Ծննդեան Տեառն եւ յունուարի Զ աւրն՝ զաւր մկրտութեան.

Աստուաածաբանն ասէ.

Կարգեսցէ եպիսկոպոսն իւրոյ երեղեցոյն յունուարի վեցն զաւր Ծննդեան Տեառն եւ յունուարի Զ զաւր Մկրտութեան եւ Յայտնութեան Տեառն: Եւ չորեքտասանն ի փետրուարի զԳալուստն Տեառն քառասնաւրեալ] ի տաճարն:

Նորին.

Երիս ծնունդս գիտէ մեզ զբանս. զմինն փչմամբն Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ եւ ի [ք]թըթելականն Բանն խառնեցաւ ի մարմինն իբրեւ քառասնաւրեայ մանուկ եւ զմիւսն մարմնանալովն եւ մկրտութեամբն:

Տե՛ս, ո՞վ անմիտ, զի Ծնունդն եւ զՄկրտութիւնն անբաժանելի ասէ եւ զմիւսն Յարութեամբն եւ վերագրէ զճառն ի Յայտնութիւնն Տեառն եւ սկսանի եւ ասէ, թէ. Քրիստոս ծնեալ լինի, եւ թէ. Երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ , եւ ի նոյն աւր ասէ, ծննդեանն եւ մկրտութեան է աւրս եւ պարտ է վաստակել, որ ցուցանէ, թէ երեկուն էր Ծնունդն եւ առաւաւտուն Մկրտութիւն: Այս հարկ արար առաջին հարցն երեկուն զԾնունդն առնել, զի երեւեսցի պատիւ Մկրտութեանն առաւաւտուն:

Բարսեղ ասէ ի Քրիստոս Ծնունդն իւրական.

Անուն դիցուք տաւնիս Աստուածայայտնութեան:

Նեքտառիոս Հռովմայ հայրապետ[ի].

Սահմանք ուղղափառութեան եկեղեցոյ յառաքելոցն հաստատեալ քառասուն աւր պահք կրանաւորաց եւ ապաշխարողաց, եւ ութ աւր համաւրէն ժողովուրդք, ընդ նոսին պահեսցեն միաբան զշաբաթն եւ զկիրակէն եւ կատարեսցեն զաւր Աստուածայայտնութիւն՝ զԾննդեանն եւ զՄկրտութեանն յունուարի Զ, վասն զի աստուածայինք եւ տէրունականք են, եւ յորում աւուր դիպեսցի կատարեսցեն:

Հիպոդիտէ եպիսկոպոսի.

Իննամսեալ] Տէրն ծնաւ յունուարի Զ եւ երեսնամեալ] մկրտեցաւ ի նմին աւուր յունուարի Զ ըստ Դուկասու, որ ասէ. Յիսուս էր ամաց երեսնից. եւ յետ սակաւուց զմկրտութիւնն ճառէ, զի անպատեհ է յայլում աւուր ծնանել Փրկչին եւ յայլում աւուր մկրտիլ եւ թերահաւատութիւն ի մէջ արկանել, զի յայլ աւուր ծնեալ եւ յայլմ աւուր մկրտեալ ասացին արիոսականքն, զի երկուս բնութիւնս եւ երկուս որդիս

խոստովանեցան, եւ զայն ի յերկուս տաւնս բաժանեցին, որք անհնազան[դ]եցան յառաքելական սահմանացն: Իսկ եկեղեցիք հաւատացելոց ի միում աւուր տաւնեն զտաւն Ծնընդեան եւ Մկրտութեանն:

Յոհան[ն]ու Երուսաղէմայ] հայրապետին.

Կանոնք եւ սահմանք եկեղեցոյ աւուրս ութ պահեսցեն ծերք եւ տղայք, ընդ նմին եւ զ[շ]աբաթս եւ զկիրակէն, եւ յորում աւուր դիպեսցի, կատարեսցեն զտաւն Ծննդեանն եւ Մկրտութեանն:

Սեբերիանոս Դուկասու Աւետարանի մեկնութենէն.

Նախնիքն երկու աւր պահեցին ի շաբաթն եւ գլխատակս սրբոցն յաւուրս յայտոսիկ յառաջիկայսն անցուցին. բայց միայն զԱստուծոյ եւ Աստուածորդոյ տաւնս ուր հանդիպեսցի՝ կատարել պարտէ, զի Աստուած է եւ զամենայն լուծանէ, զԾնընդեանն ասեմ եւ զՄկրտութեանն:

Ի թղթէն Մելիտոնի եպիսկոպոսի, առ Եւտրեփիսն.

Տաւնեմք, ըստ աւետեացն հիշատակին, իննամսեայ՝ զԾնունդն, եւ Ը արեալ]՝ զԹլփատութիւն, երեսնամեալ]՝ զՄկրտութիւնն, եւ պատուեալ այսպէս զԾնունդն եւ զՄկրտութիւնն ի միում աւուր տաւնել:

Ամոս[այ] Բաւստրայ եպիսկոպոսի ասացեալ.

Քրիստոս, ըստ մարմնոյ երեսնամեալ] լցեալ, յայսմ աւուր մկրտի յորում եւ ծնաւ ի Սրբոյ Կուսէն:

Պաւղիկարպոսի, զոր լուաւ ի Յոհանու.

Ծնունդ Փրկչին յունուարի Զ ի հինգշաբաթոջ եղել, եւ մկրտութիւնն՝ յետ Լ ամի ինքն ի նոյն յունուարի Զ քան ի արհնութիւն ամացն պատահեցաւ յաւուր չորեքշաբաթոջ:

Պաւղիկարպոսի. զոր լուաւ ի Յոհանու

Զայս ասեմք, ոչ. եթէ այլ եւ այլ են տաւն Ծննդեանն եւ Մկրտութեանն, այլ ի միում աւուր տաւնել պարտ է. բայց վասն զի գործքս այլ եւ այլ, որ այսաւր կատարեցաւ:

Մակարայ Երուսաղէմայ եպիսկոպոսի ասացեալ.

Մկրտութեան խորհրդոյ երիս տաւնս առաւել փափաքեցին հարքն մեր ի Զատիկն, եւ ի Պենդեկոստ[է]ն եւ ի Ծնունդն եւ ի Մկրտութիւնն Տեառն, զոր տաւնեմք ի միում աւուր յունուարի Զ:

Ի Կարնայ կանոնացն, որ եղաւ հրամանաւ Յուստիանոսի արքային.

Վասն մեծի Յայտնութեանն զոր կարգեցին առաքեալքն [ի] յունուարի վեցն ուրախութեամբ տաւնել ի փառս Քրիստոսի Աստուծոյ. եւ որ այլազգ խորհի եւ ի քսան եւ հինգն դեկտեմբերի ծնունդ առնէ հետեւելով Արտեմնի, յԱստուծոյ եւ ի սուրբ ժողովոյս. նզովեալ [եղիցի]:

Ի թղթն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, զոր գրեաց յԵրուսաղէմայ ի Հայք.

Յերեսներորդի ամի թագաւորութեան Յուստիանոս կայսէր կրկին մարտ եղ սատանայ ընդ յեկեղեցիս քրիստոնէից, եւ փոխեցին զսուրբ հաւատն եւ այլայլեցին զկարգ եկեղեցոյն, զոր հաստատեալ էր յառաքելոցն: Քանզի եմուտ առ թագաւորն հրէալ] ոմն հերձուածող եւ ասէ. Ընդէ՞ր ոչ առնեն երուսաղէմացիք զտաւն Տեառն ընդ առաջին ըստ Ծնընդեանն եւ ըստ Յայտնութեան, որպէս ամենայն երկիրս Յունաց: Եւ լուեալ թագաւորն վաղվաղակի գրեաց առ հայրապետ քաղաքին, որում անուն էր Յոստոս, առնել զտաւն Տեառն ընդ առաջին ըստ Ծնընդեանն եւ ոչ ըստ Յայտնութեանն. եւ սուրբ հայրապետն արտասուեաց հանդերձ ժողովրդովն եւ երեւեալ նշան յԱստուծոյ, եւ ջուր բ[ղ]խեաց ի սինէն, որ էր ի Սուրբ Սիոն առաջի բազմութեան եւ զաւրաց թագաւորին, եւ ամենեքեան փառս ետուն Աստուծոյ: Եւ եղեն ամաւթալիցք հերձուածողքն:

Եւ դարձեալ ի հայրապետութիւն Մակարայ եւ ի թագաւորութիւն Մաւրկայ եկեալ սաստիկ հրաման մահու ի քաղաքն եւ ետուն զանձինս իւրեանց ի մահ եւ ոչ առնել զկամս նորա եւ զաւրք թագաւորին կամեցան սուր արկանել ի քաղաքն, եւ Աստուծոյ շնորհաւքն այլ նշան հրաշալի երեւեցաւ: Քանզի սուրբ Կոյսն Մարիամ տպաւորեցաւ ի նմին սին ի Սուրբ Սիոնի, ի գիրկս ունելով զՓրկիչն, եւ յաջ Տեառն խաչ մեծ ծիրանի, եւ տեսին արդարք եւ մեղաւորք, եւ բժշկեցան ամենեքեան: Բժշկեցաւ առաջի ամենեցուն կին մի ի Հայոց: Եւ յետ մահուանն Մակարայ ընկալաւ քաղաքն զաղանդն Նեստորի եւ Արիոսի:

Յոհանու Հայոց կաթողիկոսի.

Որ Ծնունդ առնէ նախ քան զՅայտնութիւնն, սուտ է. զի Ծնունդն եւ Յայտնութիւնն միաւոր հանդիպեցան յունուարի Զ եւ Յայտնութեանն ընթերցուածոյն է, որ ասէ. Յիսուս Քրիստոսի ծնունդն էր այսպէս:

Յոհանիսի Հայոց իմաստասիրի Հայոց կաթողիկոսի.

Արժան է յաւր Ծնընդեանն արհնել զջուրն:

Պատրիարզն ասէ.

ՋԱԵՏՈՒՅԻՆ ՆԱԽ ՔԱՆ ՉԾՆՈՒՆՈՂՆ ԸՆԴԷ՞Ր ՈՋ ԱՌՆԷՒ:

Կոմիտաս Հայոց կաթողիկոս.

Վասն զի ոչ ընկալաք յԱրտեմոնէ եւ Յորնաղէ, այլ ի Յակոբա[յ] եւ ի Կիւ[ր]ղէ Երուսաղէմացոյ: Արդ, ժամ է քեզ մեղադիր լինել Յակովբայ, որ զԱւետիսն ի Ծննդեանն դնէր, քանզի մեք զԵրուսաղէմին ընդունինք, որպէս դու զԱրտեմոնին եւ զ[Յ]որնաղին: Բայց ի հակառակն եկեսցուք: Ո՞ եցոյց տաւնել աշխարհի զԱւետիսն, զի հրեշտակն մի Կուսի աւետեաց. իսկ Մա[տ]թէոս ի բազում տեղիս զԾնունդն յիշէ եւ աւետեաց փոյթ ոչ առնէ. Մարիամ ընդ] բանսն խռովեցաւ. եւ Ունէ[ր] զբանս ի սրտի իւրում Յովսէփ լռելեանն արձակեաց զնա. յերազի զաւետիսն ընդունի, եւ այս ամենայն ի ծածուկ, իսկ ի Ծնունդն՝ հրեշտակքն, հովիւքն, մոզքն, եւ աստղն:

ՆԵՍՏՈՐՆ ԱՍԷ

ԾՆՈՒՆԴ ԸՆԴԷ՞Ր ՈՋ ԱՌՆԵՒ:

Կրոնաւորն ասէ.

Յակոբոս եւ Կիրեղ, Աստուածաբանն եւ Բարսեղ զերիս ծնունդն մի ասեն եւ հրամա[յ]եցին առնել: Ընթերցիր զիմ գրեանսն եւ տես թէ յուրանալ եմ: Ընթերցիր զԱւետարանն, որ ասէ. Որ ծնանելոցն է ի քէն Սուրբ է եւ Որդի Բարձրելոյն [կոչեսցի]. Եւ ասէ. [Եւ] Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս. Եւ. ի ծնանելն Յիսուսի Քրիստոսի. եւ այլ ընթերցուածք եւ սաղմոսք:

ԱՆԱՆԻԱՅ ՀԱՅՈԿ ՎԱՐՈՒԱԿԵՏԻ.

Տեսցուք եւ զայն, զոր ասեն Յոյնք, թէ. Յորում աւուր պապանծեցաւ Ջաքարիայ ի նմին աւուր յղացաւ կինն նորա. եւ անտի ի վեր թուեն հարիւր եւ ութսուն աւր, որ բերէ ի մարտի ԻՇ զաւետիքն Գաբր[ի]էլի. եւ անտի թուեն ՄՀԶ աւր, որ բեր[է] ի դեկտեմբերի ԻՇ զԾնունդն: Բայց արդ, Ջաքարիայի պապանծումն ի թշրինի Ժ էր, զի նայ է եւթներորդ ամիս, եւ նա է աւուր քաւութեան: Քանզի ասէ բնագիրն. Յամսեանն եւթներորդի որ աւր մի կոչեցեալ սուրբ լինի ձեզ, եւ նա է քաւութիւն, յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբութեանց մի անգամ ի տարւոջն, եւ կայր առաջի մեծ տաւն տաղաւարահարացն, զի բոլոր Իսրայէլ անդ էր. զիա՞րդ գնայր ի տուն իւր առանց կատարման տաւնին, զի նա էր քահանայապետ տարոյն, նա եւ տունն նորա չէր յԵրուսաղէմ, եւ վկայէ մեզ աւետարանիչն եւ ասէ. Իբրեւ լցան աւուրք պաշտամանն: Աւուրք պաշտաման զտաւն քաւութեանն ասէ եւ զտաղաւարահարացն: Տե՛ս, ասէ կատարեցան աւուրքն, եւ գնաց ի տուն իւր եւ յղացաւ կինն նորա. զի թէ հասարակաց ժողովրդեանն երիս աւուրս սրբիլ հրամայեն արեւնքն նախ քան զտաւնն, նոյնպէս եւ յամսամուտս, ո՞րչափ եւս առաւել նմա, որ զլուխ էր տաւնին եւ այս

անհաւատալի է, որ նա ի մէջ երկու գլխաւոր տաւնից երթայր ի տունն իւր եւ մերձենալի ի կինն իւր: Արդ, պարտ է հաւատալ աստուածայնոց գրոց ի Ժ ի թշրին ամսոյ պապանձումն Ջաքարիայի, որ է սեպտեմբերի Է եւ ի ԻԲ մերձաւորութիւն եւ յղութիւն յԵղիսաբէթի, որ լինի Ջ ամսոյն աւուրքն ՃՁ աւր, որ ցուցանէ ԺՋ նիսանոյ որ լինի Ջ ապրիլի ամսոյն Կուսին Աւետիքն, ըստ Հռովմայեցոյն եւ թուեալք Ժ ամսոյ աւուրք յղութիւն Կուսին կատարի ՄՀՋ աւր ի տբէթ ամսոյ ԻԱ, որ է յունուարի ՋՆ: Աստ կացաք հաստատուն, զի Ղուկաս ասէ. Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ. սկսեալն՝ սկիզբն առեալն է երեսնամեալ կատարեալն հասակի եւ վարդապետութիւն որ ցուցանէ ի յունուարի ՋՆ լինի Մկրտութիւն, յորում եւ ծնաւ, զի ի նոյն աւր եկն կատարումն երեսնամին:

Արդ, Յակոբոս որ քաջ գիտեր գրէ. յունուարի Ջ զՅայտնութիւնն եւ գրէ ընթերցուածս: Միաբան ի նմա եւ Կիրեղ Երուսաղէմացին, քանզի ասէ Կիրեղ, թէ յայլ քաղաքս հետեւեցան Արտեմոնի, իսկ յառաջին կարգն Հայք միաբան գտան, եւ դեկտեմբերի ԻԵ Ղաւթի եւ Յակովբայ տաւնն: Եւ թէ Կիրեղ տրտնջէր զՀայոց, ինքն ի կարգ Ծնընդեանն ընդէ՞ր դնէր, կարգեր մարտիրոսի, եւ յունուարի Ջ Յայտնութեան. ի Յակովբայ հաստատեալ գտաւ զԾնունդն եւ զԽաչելութիւնն եւ զՊենտէկոստ[է]ն, եւ ինքն դնէ զկարգ երեխալիցն եւ զմարտիրոսացն ի միջոցն: Եւ գիտեմք, եթէ Երուսաղէմի[ն] հաստատուն է:

Վասն Արտեմոնի մոլոր[եալ]ի.

Արդ, Արտեմոն զկնի Լ ամի խաչելութեան Տեառն յոլով ամաց անցելոյ եկն եւ աշակերտեցաւ Յոհաննու աւետարանչին ամիսս եւթն եւ ոչ եկաց հաստատուն ի հաւատս ուղիղս այլ գնաց խոտորնակի, զորմէ ասէ Յոհաննէս թէ. Ոմանք առ ի մէնջ ելին եւ ոչ էին ի մէնջ: Եւ յետ մահուանն առաքելոյն Յոհաննու եկն Արտեմոն եւ ասէ, թէ. Առաքեալքն նախանձեցան Տեառն ոչ ասացին զԾնունդն, իսկ այժմ Հոգին Սուրբ յայտնեաց ինձ եւ ես ձեզ ծանուցանեմ: Եւ այսպէս լեալ չար ախտիւ: Եւ ընդ հակառակս ելեալ՝ գրէ յընթերցուածս եւ բաժանէ զմի Քրիստոսն յերկուս որդիս եւ յերկուս բնութիւնս, եւ կարգէ երկուս տաւնս բաժանեալ ըստ երկուց որդոց. դեկտեմբերի քսան եւ հինգն կարգէ զԾնունդն ի Կուսէն եւ զԹնեալն սոսկ մարդ ասէ, եւ յունուարի վեցն զՄկրտութիւնն, եւ զայն Բանին հաւր սահմանէ եւ բաժանէ զԱստուած Բանն յիւր միացեալ աստուածացեալ մարմնոյն:

Ի հաւատոյ թղթն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, որ առ Մանիլ թագաւորն Յունաց.

Ջայս աւանդութիւն Հայոց յառաքելոցն եւ սրբոց հայրապետաց սկսեալ զտաւն Ծնընդեան եւ զՄկրտութեան Տեառն առնել ի միում աւուր. եւ այս՝ չէ վայրապար, զի ամենայն եկեղեցիք ի սկզբանէ նոյնպէս կատարէին, որ եւ այս գիտելի է ձերում իմաստութեանդ, թէպէտ եւ յետոյ յերկուս բաժանեաց



Արտեմոն գմի տաւնն: Իսկ մեք զաւանդեալն ի սրբոց առաքելոցն եւ ի սրբոց հարցն եւ ի սրբոյն  
Գրիգորէ անփոփոխելի պահեցաք ըստ Ղուկասու, որ ասէ, թէ. Յետ աւուրցն այնոցիկ գնաց ի տուն  
իւր եւ յղացաւ Եղիսաբեթ, եւ տեսիլն եւ պապանձումն յառաջին տաւնին աւր քաւութեան եղեւ:

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ ԵՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏՔՆ ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ ՈՐՔ ԱՍԵՆ, ԹԷ. ՈՉ  
ԵԿԵՐ ՏԵՐՆ ԶԳԱՌՆ Ի ԶԱՏԿԻՆ**

Յոհանու Ոսկաբերան[ի]

Քանզի յառաջ եկեր զգառն, որ ի Մովսէսէ անտի գայր, եւ ապա ետ զմարմին եւ զարիւն իւր աշակերտաց իւրոց:

Նորին Աւետարանի մեկնութենէն.

Վասն որոյ ի Հին զատկին սկսանի. զի այն այսմ արինակ էր եւ երեկունն, զի ի լրումն ժամանակաց եկն. նախ զհինն կատարէ, եւ ապա նորոյս սկիզբն առնէ, զի այն խափանելոց էր:

Ջենովբայ եպիսկոպոսին.

Եկեր զճմարիտ՝ գառն խորհրդոյ. եւ ապա ետ զմարմինն իւր աշակերտաց իւրոց:

Մարութային Նփրկե[ր]տոյ եպիսկոպոսի.

Որպէս ի սուրբ պասքայն, զի նախ եկեր զգառն ստ[ո]ւերին եւ ապա սկսաւ ճաշակել զհոգեւոր գատիկն:

Նորին՝ յետ սակաւ[ու]ց.

Եւ ասէ, թէ. Դարձեալ եւ յետ ճաշակելոյն ստուերական գառինն, եւ ապա արինեաց զհացն եւ ետ ի կեր նոցա, որպէս ըստ Պաւլոսի վկայէ. յետ ընթրեացն առ զհացն Յիսուս զոհացաւ: Որպէս ասէ արեւտարանիչն. Յարեաւ Յիսուս յընթրեացն եւ զգեցաւ ղենջակ մի:

Ի թղթէն Ներսէսի որ առ Մանիլ թագաւորն ասացեալ է.

Գառն ճմարիտ յորժամ եկեր, զգառն արինակին եւ զբաղարճն:

Կիրողի Երուսաղէմայ հայրապետի ի Պարապ[մ]անց գրոց Թէոդոսի Թղթէն զի պարտ է լուծանել զճրագալուցն

Արդ, պահելով զաւրն, յորում մատնեացաւ, եւ մատնեցաւ ի չորեքշաբաթի եւ ի չորեքտասան լուսնի երրորդին յառաջնումն ամսեան եւ ոմանք յարութեան նորա, աւուր այսինքն է կիրակէին, վասն այնորիկ լուծանեմք յերեկոյին շաբաթին զպահքն եւ տաւնեմք վաղիւն կիրակէին, որ այսպէս վաղ առաւատին յարուցեալ զՔրիստոս: Այլ, թէ. ասացի. Ի խոր երեկոյին, յարութեան գործել խորհուրդ այլ խոր երեկոյին եւ առաւաւտն վաղ մի ի նոյն ընթանան ժամանակքն, իսկ Մա[տ]թէոս արեւտարանիչն ասէ, թէ. Յերեկոյին շաբաթին լուսանայր միաշաբաթն: Տես, զի ասէ, թէ. Կանայքն յերեկուն եկին ի գերեզմանն եւ տեսին զհրեշտակքն եւ զշարժումն գերեզմանին եւ զՅարութիւն Տառն: Ժամ է քեզ մեծ Մա[տ]թէոսի եւ դու սուտ առնես զարեւտարանիչն:

**ՎԿԱՅՈՒԹՅԻՒՆՔ ԶՈՐ ԱՍԱՑԻՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՔՆ ԸՆԴԴԷՄ ԱՐԻՈՍԻ ԵՒ ՆԵՍՏՈՐԻ, ՈՐՔ ԱՐԿԻՆ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԽՄՈՐ, ԱՂ ԵՒ ԶՈՒՐ ԵՒ ԶԷԹ ԵՒ ՈՒՐԱՑԱՆ ԶՍԱՀՄԱՆԵԱԼՆ**

Թաղէնս առաքեալն ասէ.

Արժան է զհաց պատարագին ջերմ հանել ի սեղանն առանց աղ, առանց խմոր, առանց ձէթ եւ առանց ջուր եւ զինին անապական:

Մակար Երուսաղեամայ հայրապետն ասէ.

Պարտ է ըստ առաքելոցն աւանդութեանն, զոր հացն ի սեղանն հանեալ առանց իրիք խառնուածոյ, զի ապականացու իւիք ոչ փրկեցաք, այլ անապական մարմնոյն եւ արեան անարատ գառինն:

Գրիգոր Աստուածաբանն ասէ.

Աստուստ բարձունն խմորոյն ի հնմանէն ի քացախուտ չարութենէն:

Նորին ասացեալ.

Արդ, խմորն ո՛չ է կենդանական հաց:

Ի չորրորդ գրոցն Լեւոնի Հռոմայ հայրապետին.

Քրիստոս աւնդեաց բաղարջովն զպասէքն, զոր առեալ Յուդայի գնաց առ Հրէայսն եւ ասաց, թէ.

Բաղարջ աւրինացն ի զինին եթաց ետ մեզ եւ ասաց, թէ այդ է մարմին իմ, որ յերկնից իջեալ է, արդ, հանէ՛ք զնա ի խաչ: Թէ կարէ ինքն իւր կեանս տալ, ապա եւ ձեզ տայ կեանս բաղարջ աւրինացն:

Արդ, Դիոնէսիոս Աղեքսանդրացին եւ Մակար Երուսաղէմայ] հայրապետն եւ Ատիտ

Կոստանդինուպոլսու հայրապետն ասեն միաբան, թէ. Աւետարանիչն Քրիստոսի գլայտնի լինելն

աշխարհի ասէ եւ ոչ վասն խմորուն հացի, որով ոմանք պատարագեն զանապական Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Ամրիկոս եպիսկոպոսի.

Արդ, հաց պատարագին խմոր խառնուած ունի, որպէս եւ Քրիստոս ոչ ունի ապականութիւն:

Եփրեմի եւ Զենովբայ ասացեալ

Ի զինոյն էառ Քրիստոս զպատառն, եթաց ի ջուրն եւ լուաց ի շնորհաց Հոգոյն Սրբոյ եւ ետ Յուդայի:

Կիպրիանոս եպիսկոպոս ասէ յՈղորմութիւն ճառէն.

Քանզի բաղարջ հացի եւ անապական զինով աւանդեցաւ մեզ սուրբ խորհուրդն:

Կիրողի Աղեքսանդրի իՊարապմանց գրոց.

Աթոռակիցն Հաւր ետ վասն մեր զարիւ իւր. վասն այնորիկ առնենք անապական գինով, զի մի ապականութիւն կարծիս յանապական արիւնն Աստուծոյ լիցի: Քանզի սովորութեամբ մարդիկ զջրախառն գինի ապականեալ ասեն:

Նորին՝ զՂեւտական գրէն.

Արդ, խմորն՝ չարութեան եւ ապականութեան է աւրինակ:

Ի Կարնոյ կանոնացն որ եղաւ հրամանաւ Յուստիանոս թագաւորին.

Քանզի լուաք լուր ծանրագոյն, թէ ոմանք ապականեալք ի քաղկեդոնականացն [ապականեն] զսուրբ խորհուրդն խմորով եւ ջրով: Արդ, որ ոք գտցի յայսպիսի սովորութիւնս լուծցի ի պատւոյն, եւ ի սուրբ ժողովոյն:

Յառաջ եկն ոմն Բարսամ եւ ասէ.

Ապա մինչ այն ջուրն որ ի կողէն ել չէր ապականութիւն, զոր մեք ի գինին խառնենք ընդէ՞ր դսրովէք:

Կղեստիանոս ասէ.

Զի՞ թիրէր անմտութեամբ ի բանդ, զի այն ջուրն ոչ էր ի պատարագին խորհուրդն, այլ ի մկրտութեան:

Բարսամ ասէ.

Կարես յիշել զայն որ ի Կաթուղիկէն ասէ, թէ. Ջուրն եւ արիւն եւ հոգին մի են:

Կղեստիանոս ասէ.

Յիմար եւ անմիտ դու դատեցար զքեզ, զի յառաջ զարիւնն էիր ասցեալ եւ ապա զջուրն, բարիոք էր. բայց նախ զջուրն ասացար, զի յառաջն ջրով մկրտիմք եւ ապա հոգին մաքրէ զմեզ, եւ ապա արժանի լինիմք մարմնոյ եւ արեանն Տեառն, որպէս եւ Տէրն ասաց. Որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգոյ, ոչ մտանէ յարքայութիւն Աստուծոյ:

Բարսամ ասէ.

Զխմորն զոր մեք առնենք ի խորհուրդ պատարագին, իսկ դուք ընդէ՞ր դսրովէք:

Կղեստի[ա]նոս ասէ.

Խմորու՞ն է քո մարմինդ, թէ ոչ:

Բարսամ ասէ.

Թէ խմորուն էր որովայն մաւր, ապա քացախեալ էր արդեալք իմ կողքս:

Կղեստի[ա]նոս ասէ.

Խոստովանի՞ս գորովայն Կուսին առանց խնորոյ] եւ գՔրիստոսի մարմինն յանխնոր մարմնոյ ծնեալ առանց խնորոյ:

Բարսամ ասէ.

Այո՛, խոստովանիմ եւ հաւատամ:

Կղեստի[ա]նոս ասէ.

Խնորոյ բնութիւն ապականացու՞ է թէ անապական:

Բարսամ ասէ.

Ապականացու է:

Կղեստի[ա]նոս ասէ.

Ահաւասիկ դու վկայեցեր քեզ, զի խնորով ապականես զնշխարն եւ ապականացու ասես գործովքդ զմարմինն Տէրունական. զի ջուրն զգինոյն համն տանի եւ խնորն զհացի զաւրութիւն ապականէ. եւ աղն նոյնպէս: Եւ ձէթն զսիրտն զազրացուցանէ: Արդ, ու՞ր է անապական զհացն, որ յերկնից իջեալ է. այս որ քանի խառնուած լինի:

Բարսամ ասէ.

Զի՞նչ համարիս դու զխնորով եւ զջրով պատարագն, թէ քեզ վախճան հանդիպի:

Կղեստի[ա]նոս.

Ոչ թէ միայն ես չառնուի զհացն զայն, այլ թէ ոք ի տգիտաց առնոյր զնա՝ նզովք Նեստորի կարդայի նմա, եւ յեկեղեցոյ հանէի, եւ մեծ ջանիւ, թէ լինէր արժանի յետին թաւշակին:

Բարսամ ասէ.

Եւ զի՞նչ համարիս դու զայն հացն զոր մատուցանենք խնորով եւ ջրով:

Կղեստի[ա]նոս ասէ.

Համարիմ զհաց խնորուն եւ ձիթուն չասել հաց անուն ի վերայ նորա. եւ որ հաղորդի ի նմանէ՝ համարիմ ուտել միս զոհից եւ ոչ արժանի համարիմ զնա եկեղեցոյ եւ քրիստոնէութեան. զի ոչ վասն կատարելութեան արկանէք զխառնուածն ի նշխարն, այլ վասն հայիոյութեան, զի գՔրիստոս յախտ ի բնութենէ ասէ ծնեալ, որպէս ամենայն մարդ, զի, թէ Աստուած համարէիք զնա՝ ոչ արկանէիք ի խորհուրդն աղ եւ ձէթ եւ խնոր:

Ի գրոցն, որ կոչի Կրանաւոր.

Բարսեղ եաւթնաւոյս արեգակն ասաց բանն, որ ասաց թէ. Ողջոյն մի՛ տայք ի ճանապարհի, կարծեմ թէ վասն հերծուածողացն ասէ, որք երկու բնութիւն ասեն զՔրիստոս, եւ ջրով եւ այլ խառնուածով արկանեն զՍուրբ խորհուրդն:

Յոհան Ոսկեբերանն ասէ.

Ու՞ր են այնոքիկ որ խմոր եւ ջուր արկանեն ի սուրբ խորհուրդն, զի որթն գինի ծնանի եւ ոչ ջուր: Իսկ քրիստոնէից թէ ոք ճաշակեսցէ հացն զայն յանգիտութեան, որոշեսցի յեկեղեցոյ, եւ թէ գիտութեամբ ճաշակեսցէ իբրեւ զայն, որ զոհ ճաշակեսցէ եւ կամ զմեռելոտի:

Յոհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի.

Արժան է զհացն անխմոր եւ գինի անապական հանել ի Սուրբ սեղանն ըստ աւանդելոյ մեզ ի սրբոյն Գրիգորէ, որպէս եւ եբեր յարինակէ առաքելոցն առաքելաբար որպէս եւ զաղ աւրինութեան:

Ի թղթէն Գէորգաւ] Հայոց կաթողիկոսէն, որ առ պատրիարզն Ասորոց.

Արդ, զխմորն աւրինակ արքայութեան ասաց Տէրն վասն յինքն ձգող զաւրութեան զոր ունի, որ է աւետարանական քարոզութիւն. եւ դու առնես զխմորն ի խորհուրդ մարմնոյն Քրիստոսի. ապա հարկ է քեզ առնուլ զգանձն եւ զմարգարիտն եւ զմանանէխն եւ խառնել ի մարմինն Քրիստոսի: Եւ դարձեալ զխմորն, Տէրն ունակ աղանդոյն սաղուկեցոցն ասաց եւ դու առնես ի խորհուրդ պատարագին: Ո՛հ անմտութիւնդ: Եկն աւր բաղարջակերացն ասեն աւետարանիչք, եւ թէ յառաջնում աւուր բաղարջակերացն երթայ ի Վերնատունն առնու, մինչդէռ ուտէին, էառ Յիսուս զհացն, գոհացաւ եւ ետ աշակերտացն, զոր ուտէին զբաղարջն ըստ աւրինացն. եւ Յովսէփ աւրինապահ զիա՞րդ հաց խմորուն բերէր նոցա. եթէ Քրիստոս զաւրէնս ելոյժ եւ հաց խմորուն յայնմ երեկուն էառ, ապա Յուդա չէր մատնիչ, զի զաւրինազանցն մատնեաց, այլ նախանձախնդիր եղեւ իբրեւ զԵղիայ, եւ հրէայքն չէին աստուածասպանք, զի զաւրինազանցն սպանին: Աստուած Մովսիսի ասաց, թէ. Ոչ պակասեսցէ հաց ջերմն ի սեղանոյն, եւ ի խորանն հաց խմորուն ոչ եմուտ եւ ոչ ի սեղանն ելանէր: Արդ, ստուգիւ զբաղարջն ասէ հաց եւ ոչ զխմորուն: Է եւ այս սովորութիւն մարդկան, որ զցորեանն կոչել հաց: Որպէս եւ Տէրն ասաց առ հրէայսն, թէ. Եկեր Ղաւիթ զհացն զառաջաւորութեան, զնոյն բաղարջն ի սեղանոյն ասէ հաց: Արդ, խմորն քացախ եւ ջուրն ապականացու, որ ունի զաղանդն Նեստորի ի ծածուկ, որ ցուցանէ ոչ Աստուած կամ աստուածախառն մարդ չարչարեալ վասն մեր, այլ լոկ մարդ իբրեւ զմեզ ի ներքոյ անկեալ ապականութեան: Արդ, յո՞ր առաքելոյ ուսար զայդոքիկ խմորես, աղես, ձիթես եւ համեմես որպէս զփտեալ անդամ զանապական մարմին Քրիստոսի:

Ի հարցմանց Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի

Արդ, ի Վերնատունն առ Յիսուս հաց եւ գինի, եւ ջուր ո՛չ ասաց, եւ ի բերոյ որթոյ ասաց յետ Յարութեանն ընպել: Իսկ յորժամ ի խաչելն ոչ ասաց, թէ զոր յիս տեսանէք՝ արարէք ինձ զջուրն յիշատակ, որ ի կողէս ելանէ, ո՛վ դու կերպակասէր, այլ ի Վերնատունն առ Յիսուս զհացն, նոյնպէս եւ զբաժակն գինովն, ասէ աստարանիչ: Մի՞թէ յայտնեցաւ ձեզ Տէրն եւ ասաց, թէ. Իմ մարմինն քացախեալ խմորն է եւ իմ արիւնն ջրով ապականեալ գինին է, զոր ի վերնատունն ոչ կարացի ասել առաքելոցն, իսկ այժմ ձեզ համարձակիմ ասել: Բայց այս որոմս Բարսամայ, աշակերտին Նեստորի է: Արդ, այն որ ասէ, թէ. Մարիամ ընդ բանսն խռովեցաւ, մի՞թէ խմոր եբեր հրեշտակն ի [Կ]ոյսն եւ վասն այնորիկ խռովեցաւ. եւ կամ այն հացն խմո՞ր էր, զոր ասաց Տէր, թէ. Ես եմ հացն կենաց իջեալ երկնից, ապա հրեշտակք խմորահա՞տք են արդեաւք: Արդ, աղ եւ ջուր արկանէք ի խորհուրդ պատարագին. ո՞ր ունի արիւնակ, թէ յորում ամուսնութենէ եւ կարծեաց ծնեալ ասէք զՔրիստոս, եւ զԱստուած ոչ անկեալ ընդ մահուամբ, եւ ոչ նորա արեամբն փրկեալէք:

Տիրանայ] Հայոց վարդապետի.

Արդ, որ այսաւր խմորեն եւ խառնեն, այս են միտքն, զի ի հարկէ այսու խառնելովս յապականութիւն խառնեսցի անապական մարմինն Քրիստոսի:

Խոսրովի Հայոց հռետորի ասացեալ.

Արդ, գրէ առաքեալն Պաւղոս. Տէրն Յիսուս ի գիշերին, յորում մատնէր, առ հաց զբաղարջն ի սեղանոյն ըստ արիւնացն, նոյնպէս զբաժակսն գինով առանց ջրոյ: Մելքիսեդէկ հաց բաղարջ եւ անապական գինի բաշխէր ի վերա գերեզմանին Ադամայ, որ ցուցանէ զանապական գալուստն Աստուծոյ մերոյ յերկնից: Նոյնպէս եւ բաղարջն Աբրահամու եւ Դովտայ, որով զանմարմինսն կերակր[ե]ցին: Նահապետն Յակոբ ասէ. Լուսացէ արեամբ խաղողոյ զպատմուճանն իւր: Արդ, ցուցեալ եղեւ, որ ի զուր ջանան, որ ի Սուրբ խորհուրդն ջուր խառնեն ճշմարիտ որթն Յիսուս Քրիստոս Աստուածն մեր զջուրն ի գինի փոխարկեաց. իսկ Նեստորիոս զգինին ջուր փոխեաց, զի ոչ է նա մանուկ առագաստի ուրախութեան հարսանեաց:

Ի թղթէն Ներսէսի, որ առ Մանիլ թագաւորն.

Յետ կատարելոյ զհինն՝ առեալ զհացն ի սեղանոյ անտի. յայտ է եթէ՝ բաղարջ էր, զի առաջի ար էր բաղարջակերացն, եւ [ասէ]. Այս է մարմին իմ: Եւ կուսածին եւ անապական մարմնոյն ի դէպ է բաղարջն լինել արիւնակ, եւ ոչ խմորեալն: Եւ վասն գինոյն, զի ի Լուսաւորչէն մերմէ ունիմք զայս,

որպէս եւ ընկալաւ նա ի նախնեացն: Գրեալ է՝ Քրիստոս գինի միայն էառ ի ձեռն եւ ասաց. Այս է արիւն իմ. եւ ջուր ոչ յիշէ. եւ թէ՛ ի բերոյ որթոյ ոչ արբից:

Վկայութիւնք վասն տաւնի Սուրբ Խաչին.

Ի ձեռն Կոստանդիանոսի թագաւորին հաստաատեցաւ տաւնախմբութիւն Սուրբ Խաչին, ըստ Հռոմոնց ի սեպտեմբերի ԺԴ ոչ ի նմին կատարել զտաւնախմբութիւն, զի յաւր Յարութեան չքնաղ եղանակաւոր ծայնիւք պատուի՝ առանց տէրունեան Խաչին. վասն որոյ հարկեցաք ոչ յայլ աւր տաւնել, ոյլ ընդ Քրիստոսի յարութեանն զփրկագործ տաւնախմբութիւն Խաչին:



## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶԽԱԶԵՑԱՐՆ ԱՍԵԼ ԸՆԴ ԴԷՍՍ ՈՐԴՈՅ

Նեքտառիայ Հռոմայեցոյ ասացեալ.

Արդ, չէր հնար Յովսէփալ] զմարմին Տեառն Յիսուսի Քրիստոսի ի խաչէն իջուցանել կամ զբեւեռեսն հանել, մինչեւ համբարձեալ զձեռս իւր երիցս անգամ ասաց. ԶՍուրբ Աստուածն, եւ ապա իջուցեալ թաղեաց:

Ի գրոցն Աւրելիանոսի, որ Կանոնաց լրմունք կոչի.

Արդ, յաւուրս առաքելոցն ասէին՝ զՍուրբ Աստուածն յաւուրս չորեքշաբաթու եւ ուրբաթու: Եւ Հոգի ազդեալ Թովմաս, ասաց «զՓառաւորեալ միշտ Կոյսն Մարիամ» կցորդի:

Ի գրոցն Որոզինէի. որ Զատկաց կոչի.

Պատմէ Որոզինէս եւ ասէ, թէ յառաջ քան զմեզ, որ էին յետ առաքելոցն բազումք ասացին զՍուրբ Աստուածն. վասն որոյ եւ մեզ պարտ է հետեւել նոցա եւ կարգել ի մերում ժամանակիս եւ ասել Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Զայս գտեալ Յոհան Ոսկէբերանն եւ կարգեաց յիւրում ժամանակս ընդդէմ Արիանոսացն, որ արգելուին Թէոփիլեանքն վասն նախանձու եւ ասէին, թէ Յոհան զՈ[րո]զինէին խորհի:

Ի Սոկրատէն ասացեալ.

Արդ, Իգնատիոս Անտիոքացին կարգեաց յիւրում ժամանակն զխաչեցարն յԱնտիոք, զոր լուաւ ի հրեշտակէն:

Կղեմայ Հռոմայ հայրապետն.

Սահմանք եւ հաստատութիւն հաւատոյ քրիստոսական խաչն եւ սրբասացութիւնն զոր հանապազ յաղաւթս մեր կատարենք եւ այսպէս ասենք. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Աստուածաբանիս.

Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ:

Բարսեղ ասէ.

ՁԱստուած խաչեալ տեսանելով, եւ զնոյն ընդ աւագակսն:

Նորին.

Քահանայ առանց բեւեռի խաչ մի՛ իշխեսցէ աւրինել եւ զուարակաւք պայծառացուցէ:

[Նորին Իգնատիոսի, որ եւ աստուածազգեացն. ասաց]

Երկիր պագանէ հոգիս իմ խաչին Քրիստոսի, որ է գայթակղութիւն անհաւատիցն:

Նորին.

Որ զխաչելութիւն ամաւթ համարի, եղիցի քեզ որպէս զհակառակորդսն:

Յոհանու Ոսկեբերան ասաց յԵսայուն մեկնութենէն.

Թէ հարցանէ ոք ընդ իս եւ ասէ, թէ. Ջի՞նչ մեծ արար սքանչելիք Քրիստոս, ես թողից զարարածոց լինելութիւն եւ զյարութիւն մեռելոցն եւ զայլ զարմանալի գործ սքանչելացն, զոր արար Քրիստոս, եւ զմեծն քան զամենայն ասեմք. Ապտակեցաւ վասն իմ եւ թուք յերեսս ընկալաւ եւ խաչեցաւ. եւ այս՝ Աստուծոյ գործ է եւ ոչ մարդոյ:

Կիրղի Երուսաղէմայ հայրապետի.

Մի՛ ամաւթ համարեսցուք զխաչն Քրիստոսի. թէպէտ եւ ոք ծածկէ, դու ի վեր հան յայտնապէս եւ ի վերայ ճակատոյդ նշանակեսջիր:

Եպիփանու Կիպրացոյ.

Արդ, դո՛ւ, ո՜վ խաչ, որ եւ՛ Քրիստոսի, եւ՛ մեզ պարծանք:

Նորին.

Սովաւ Քրիստոս ծանուցաւ մեզ, զի սովաւ ակն ունիմք ապրել յանսպառ տանջանացն:

Դաւթի փիլիսոփայի.

Արդ, որ ետ զանձն՝ ապաքէն սովա՛ւ եդ, եւ ի սմին եդ՝ եւ որ ի սմին եդ նո՛յն տակաւին ի սմին է, եւ ի սմանէ ոչ մեկնի երբեք եւ ոչ հեռացի. ապա ուրեմն զաւրութիւն Աստուծոյ է սա:

Ի Հաւատոյ բանէն Դըւնայ ժողովոյն

Ժամանեաց համբաւ ժողովոյն Քաղկեդոնի ի Հայք, եւ ընթերցան զսահմանեալ հաւատն ի նոցանէ եւ ժողով արարեալ ի սկիզբան թուականութեան Հայոց եւ բազում ճառ հաւաքեալ յառաջնոցն եւ ի սրբոցն եւ կարգեցին ընդդէմ Քաղկեդոնի: Կարգեցին եւ զերիս խաչեցարն յերիս սրբասացութիւնս

կցորդիւ, ընդդէմ նոցա բաժանմանց գՔրիստոսի միաւորեալ բնութիւնն՝ զի մի՛ մարդապաշտ լիցուք, այլ անապական արեամբն Քրիստոսի եղիցուք փրկեալք այսպիսի ասելովս. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: Ջի թէպէտ եւ մա՛րդ տեսաք զնա, այլ Աստուած էր. եւ թէպէտ ի տկարութիւն կամաւ խոնարհեցաւ, այլ հզաւր էր. եւ թէպէտ եւ զմահ կրեաց կամաւ, այլ անմահ էր:

[Ի հաւատոյ թղթն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի Անտիոքայ պատրիարքին.]

Արդ, Եսայի զսրբասացութիւն սերովբէիցն ի վերայ Որդոյ լուաւ եւ ասաց, եւ վկայէ Յոհաննէս աւետարանիչն, զոր ասէ. Եսայի]ի ետես զփառսն նորա եւ խաւսեցաւ բազում ինչ վասն նորա: Զնա տեսաք ի վերջինս աւուրս խաչեալ, եւ զնոյն սրբասացութիւնս նմա երգեմք:

Ներսէսի միջնոյ Հայոց կաթողիկոսի երրորդի՝ ի սրբոյն Գրիգորէ.

Արդ զնիւթական բնութիւնս զաւրացոյց Աստուած յոր ինչ կամեցաւ երեւեալ. նոյնպէս եւ զբնութիւն Կուսին զաւրացոյց տանել զԱստուածութիւն իւր, այսպէս եւ զփայտ խաչին զաւրացոյց, զի տարաւ զանբաւն Աստուած ճշմարտապէս առաւել քան զմորենին, եւ զդրախտն, եւ զքերաւբէսն, որում եւ սերաւբէքն եկրպագեցին եւ պաշտեցին զնա որպէս ստոյգ բարձրելոյ Աստուծոյ. նոյնպէս եւ Կոյսն կամաւ երկրպագեց ի խաչին, զի Աստուած Բանն մարմնով չարչարեցաւ ի վերայ նորա:

Պատասխանի.

Պարսաւանք չէ՞ յամենայն աւուր ասել զխաչեցարն:

Կոմիտաս Հայոց կաթողիկոս ասէ.

Արդ, զոր աւրինակ որդի թագաւորի երթայ ի վերայ ծառայի իւրոյ, որ բռնացեալ ունէր ի կապանս զիշխանս նորա, յաղթեաց նմա եւ հանէ զգերեալսն ի նմանէ եւ ինքն արեամբ թաթափեալ լինի. եւ ազատեալքն յամենայն աւր կան առաջի նորա եւ ասեն, որ վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ եւ հանէր զմեզ ի կապանաց, ողորմեա՛ մեզ: Արդ, ասա՛ նախատի՞նս համարի զայս որդի թագաւորին իւրոյ, թէ՞ պատիւ:

Պատասխանի.

Պատիւ է գանն, թէ ստոյգ արեամբն փրկեցան:

Կոմիտաս ասէ.

Զնոյն եւ մեք ասեմք առ Քրիստոս, որ փրկեաց զմեզ արեամբն իւրով ի վերայ խաչին:

Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի

Արդ, Կիւրեղ Աղեքսանդրացու ի ժողովն Եփեսոսի կարգէ ընդդէմ Նեստորի. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, որ ցուցանէ կարգաւ ստոյգ մարդեղութեան Բանին Աստուծոյ, եւ զկամաւոր խաչելութիւն նորա եւ հրեշտակք զնոյն կատարեցին ձայնիւ, զոր այժմ բազում ազգ ունին՝ երգեն:

Ի հաւատոյ թղթն Խոսրովի Հայոց կաթողիկոսի.

Արդ, տունն Հայոց զսրբասացութիւն սերովբէիցն ի վերայ Որդոյ առնուն, վասն զի պատուեն զՈրդին՝ որպէս զԱռաքիչն նորա ըստ այնմ, թէ. Որ զիս ընդունի, զառաքիչն իմ ընդունի: Իսկ եթէ անարգանք են ի սրբասացութիւնս յիշել զխաչեցարն, որ ի վերայ Որդոյ առնեն, ապա ի բաց բարձեք զպատարագ խաչին զոր դնէք ի վերայ սեղանոյն ի տաճարին Տեառն, եւ նովաւ արհնեցէք զանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Իսկ մեզ՝ պարծանաց անուն է խաչն ուսեալք ի հրեշտակաց, որ ասէին առ կանայսն մեծաւ պարծանաւք ասէ. Ջխաչելեալն խնդրէք՝ յարեաւ: Նաեւ Տէրն փառաւք իւր կոչէ զխաչն. Եւ վասն խաչին ասէ. չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ, այսինքն՝ խաչեալ: Եւ Պաւղոս՝ քնարն Հոգոյն Սրբոյ եւ բերանն Քրիստոսի ասէ. Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչ եւ թէ բանն խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն է :

Ի թղթն տեառն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի[ի], որ առ պատրիարզն Ասորոց Յովաննէս.

Արհնենք զխաչն անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ո՛չ թէ որդիս արքայութեան առնել զփայտ կամ զքար, զի այս մարդոյս միայն պարգեւեցաւ ողորմութեամբն Աստուծոյ եւ ջրով եւ զինով լուանամք զարհնակ ջրին եւ արեանն, որ ել ի կողէն Յիսուսի Քրիստոսի, եւ զմահու փայտն՝ կենաց փայտ եւ ազատութեան արար: Իսկ թէ ասես, որ ամենայն խաչածեւք արհնեցան, վասն այն բաւական է մի խաչ. ապա մի անգամ ասաց Քրիստոս՝ Այս է մարմին իմ, եղիցի քեզ ամենայն հաց՝ մարմին Քրիստոսի, եւ եղիցի քեզ ամենայն տուն՝ եկեղեցի. եւ քանզի մի անգամ ետ Քրիստոս իշխանութիւն առաքելոցն, եղիցի քեզ ամենայն մարդ եպիսկոպոս եւ քահանայ. այսպէս եղիցի քեզ ամենայն խաչածեւք՝ պաշտելիք յանտառս մայրեաց եւ ի նկարս ոսկոյ, եւ որ այլ ինչ խաչածեւք է ի կենդանիս եւ ի շէնս. ահա եղեւ քեզ որպէս կաղնին Արամազդայ: Արդ որպէս փտեալ անդամ համեմես աղիւ եւ ձիթով եւ խմորով զանապական մարմինն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յո՞ր առաքելոյ ուսար զդա, կամ յո՞ր սուրբ հայրապետէ եւ ընդ իս ասես, թէ ընդէ՞ր արհնես զխաչն:

Ի հաւատոյ թղթն Ներսէսի միջնոյ Հայոց կաթողիկոս, առ Մանի[լ] թագաւորն.

Արդ, արհնութիւն խաչի ոչ նախ ի մէնջ եղեալ է, այլ յառաջին հարցն ձերոց, զոր նախնիքն մեր

թարգմանեալ ետուն մեզ: Իսկ լուանալն նախ ջրով եւ ապա գինով ի խորհուրդ երկուց վկայից  
վտակացն, որ ել ի կողէն Յիսուսի Քրիստոսի:

Ջսոցա յառաջ քան զոր գրոցն գրեալ է կարգեցին առաքեալքն:

## [ՎԱՍՆ ԶԱՏԿԻ ՄԱՏԱՂԻ. ԶԻ ԲԱՐԻ Է ԵՒ ԶԷ ԽՈՏԱՆ]

Վկայութիւնք երկրորդ կանոնացն Ի Նիկ[ի]ոյ ընդդէմ նոցա. որք խոտեն զագապս, որ է մատաղ.

Եթե որ գարշեսցի յայնցանէ, որք հաւատով ագապս առնեն, որ է մատաղ, նզովեալ [եղիցի]:

[Նորին]՝ յետ սակաւուց.

Ո՛չ է պարտ քահանայի յագապս մասունս բառնալ եւ թշնամանել զքահանայութիւն:

Ի Գանգրայ կա[նոնա]ցն.

Որք արհամարհեն զայնոսիկ, որք հավատով ագապս առնեն եւ վասն պատուի Տեառն կոչեն զեղբարս իւրեանց եւ ոչ կամին հաւասարել, նզովեալ է:

Բարսեղի կանոնացն.

Ի յորսոց որ մատաղ մի՛ իշխեսցէ առնել, բայց միայն զաղաւնիս եւ զսուրբ թռչունս:

Նորին.

Զանասունս, որ հեղէ կամ յափշտակէ՝ մատաղ մի՛ իշխեսցէ առնել որ:

Նորին.

Զանասունս որ նուիրէ որ Տեառն, զնոյն մատուցէ, եւ եթէ յանկարծակի որոգայթի, աղ տացէ եւ աղքատաց բաշխեսցէ:

Նորին.

Արժան է գլխատակ հանգուցելոցն կատարել ի նմին ամի. եւ զմատաղն արասցեն յաւդեաց եւ ի թռչնոց ըստ է սգայութեան մարդկան կամ ըստ կարգին:

Սահակայ Պարթեւի.

Քահանայ առանց Աւետարան կարդալու մի՛ կատարեսցէ զպաշտաւն ագապացն. եւ որ նախ հաց եկեր, մի՛ կերիցէ ի մատաղէն, թէ՛ քահանայ եւ եթէ՛ աշխարհական:

[Հարցումն Աշոտոյ իշխանին վասն մատաղի: Ասէ Սահակ վարդապետն Հայոց]

Քանզի Սուրբ Գրիգոր սահմանեաց զիրաւունքն քահանային եւ եկեղեցի, յորժամ դարձան ի Տէր նոյնպէս զագապս որ յաւդեաց:

Յաղագս աղի աւրինութեան: Յոստոս երրորդեալ յԵրուսաղէմ եպիսկոպոս զկնի Յակոբայ եւ Շմաւոնի.

Սա պատմէ, թէ ի Վարդավառին զառաջին պատարագն առաքեալքն եւ սահմանեցին վասն աղի աւրինութեան, եւ փոխեցին զհինն ի նորս. նոյնպէս եւ քահանայութիւնն: Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն: Վերջ: